



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9 1891

ՍԵՊՏԵՄԲԵՐ

1891 № 9

Ն Ի Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

	Կրկն	
1 ԽՄԲ.	959	Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեան:
2 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ.	961	Հեղինէ (վկայ):
3 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ	1005	Գիշերային երգ (բանաստեղծ.):
4 " "	1007	*** (բանաստեղծութիւն):
5 ՆԱՄԱԼԵԱՆ, Ա.	1007	Մեր ինչը կը պակսի:
6 ՎՐՈՅՐ, Մ. Ա.	1020	Պարոս Հ. Աղամեան (կենսագրութ.):
7 ՇՐՈՒՄՊՅ, Գ. Ա.	1044	Հովարանութիւնը Այրապետի մ, IV:
8 ԼԵՌԵՆՅ.	1056	Բանաստեղծութիւններ:
9 ԿԻՒՊԵՆԿԵԱՆ, ԳԱԼՈՒՍ.	1061	Բաբ. ի նաւթ:
10 ՄԱՆՈՒԶՈՐԵԱՆ, Մ.	1071	Զգայերիական պատմութիւնը:
11 Ե. Գ.	1084	«Չաղարիների արչաւանքը»:
12 Յ. Ա.	1088	«Մեծապատիւ մտքացիաներ»:
13 ԲԱՐ.	1089	«Հաւատարիմ Սաղիարի»:
14 Գ. Ա.	1091	«Նգրադը եզրուր գէմ»:
15 Տ. Յ.	1092	«Եպիսկոպոսի օրը»:
16 ԼՈՒՍԻՆԻ.	1098	Ամա. քրտն. Ֆ. Վէնդրիս. — Թատրոն
17 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, Ա.	1116	Փարիսեցիութիւնը քննադատ. մէջ:
18 ՀԱՄԲԱԿ.	1123	Պանդանդակահաները լեզ. ի խնդրու մ:
19 ԽՄԲ.	1129	Խմբագրութեան կողմից:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ.

Типография М. Д. Ротинианца, на Гол. просп. соб. д. № 41.

1891



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9 1891

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

1891 № 9

ԵՐԲՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՍԻ

1891

Дозволено цензурою, Тифлисъ, 12 Августа 1891 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. со б. д. № 41.

ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՍԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

Արգէն կէս տարին մօտենում է այն օրից, երբ Հայաստանեայց Եկեղեցու Մայր Աթոռը թափուր է մնացել: Գալ 1892 թվականի մայիսի 3-ին Հայաստանեայց Եկեղեցու բոլոր թեմերի հոգևորական և թէ աշխարհական պատգամաւորները, Ս. Էջմիածնի միաբանութիւնը և Սինոդի անդամները, հաւաքւած միասին Ս. Էջմիածնում, կատարելու են կաթողիկոսական ընտրութիւնների մեծ, պատասխանատու և նւիրական գործը: Ազգը, որպէս հասկանալի է, սպասում է իւր քաղաքական և հասարակական մամուլից սորա կարծիքները թեկնածութեան համար առաջարկելիք անձնաւորութիւնների մասին: Հայկական մամուլը կոչւած է, որպէս ամեն ղեպքերում, ևս առաւել մի աջակիսի ծանրակշիւ գործում՝ ազգին օգնել իւր խորհուրդներով, որպէս զի ընտրութիւնը ընկնի ազգի թէ հոգևորական և թէ աշխարհական դասակարգերի ամենից մեծ վստահութիւնը վայելող հոգևոր անձերի վերայ: «Մուրճ» ամսագիրը սորանով իւր առաջին խօսքն է ասում կաթողիկոսական թեկնածուների նկատմամբ: Ամեն ինչ կշռադատելով, ի նկատի ունենալով Հայաստանեայց Եկեղեցու Մայր Աթոռի գերագոյն շահերը, հոգևոր դասակարգի նշանակութիւնը ազգի մէջ, աշխարհականներին ակնկալութիւնները Եկեղեցու պետից, «Մուրճ» ամսագրի խմբագրութիւնը վստահանում է սորանով իւր անկեղծ կարծիքը յայտարարել, որ դրութեան բարձրութեան վերայ կանգնած նա ճանաչում է այսօր միմիակ անձն՝ անգուղական Խրիմեան Մկրտիչ արքեպիսկոպոսին:

Հ Ե Ղ Ի Ն Է

Վ. Է Պ

Տ. ԻՆ Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն 1)

XV

Սահառունին զիտէր, որ Հեղինէն եկել է, շատ ուզում էր նրան տեսնել, բայց, այդ անյարմար համարելով, զսպում էր իրան, մինչև անգամ տանիցը չէր դուրս գալիս, թէև շատ դժւար էր նորա համար դիմադրել այդ բուռն ցանկութեանը:

Հեղինէն էլ նրանից պակաս չէր տանջւում: Նա սաստիկ զբաղւում էր տնային գործերով, յուսալով թէ ֆիզիկական աշխատանքը կը հանգստացնի նորա ալէկոծւող միտքը, բայց զուր. ինչ անում էր՝ չէր լինում, Սահառունու պատկերը մոքիցը չէր հեռանում:

Արդէն մի քանի օր էր, որ նրանք Թ-սումն էին: Հեղինէն իւր սովորական մոքերի հետ ընկած վերացել էր:

—Հեղինէ, քեզնից մի բան պէտք է խնդրեմ, սթափեցրեց նրան Թամարի անվճռական ձայնը:

Հեղինէն ուրախացաւ, որ տալը վերջապէս սկսեց խօսել, ու քաղցրութեամբ նայեց նրան:

— Ուզում եմ աշակերտուհիների հետ ձեռագործով պարապել և առհասարակ մինչև կէսօր ուսումնարանումը լինել:

— Շատ լաւ. մեզ հէնց պէտք է ձեռագործի մի լաւ վարժուհի: Ես այժմ պէտք է դնամ ուսումնարան, կուզես արի գնանք:

Ճանապարհին նրանք պատահեցին Աննա Գուրգէնեանին և Նալիա ու Սօֆիա Միհրանովաներին: Այս անգամ նրանց հետ չէր երիտասարդ Միհրանովը, որովհետև երկու շաբաթ առաջ գնացել էր Պետերբուրգ:

Աննան տեսնելով Հեղինէին յանկարծ մի տեսակ վախ զգաց: Հեղինէն այդ նկատեց:

— Աննա, հազիւ որ քեզ տեսայ: Այդ որտեղարեւք ես լինում, ինչու չես սկի մեր կողմերը դալիս:

— Ձէի իմանում, որ եկել ես, — անվճռական կերպով պատասխանեց Գուրգէնեանը աշխատելով չը նայել Հեղինէի աչքերին:

— Անիւտա, Աննա, շուտ արա, — լսեցին անհամբեր Միհրանովաների ձայները:

— Գնա, քեզ կանչում են: Այս երեկոյ արի ինձ մօտ. տես, չը մոռանաս:

Փամարը, որ նրանց խօսակցութեան ժամանակ մի քիչ հեռու կանգնել էր, այնպէս էր գոջը զցել, կարծես մի բանից վախւորած լինէր:

— Սի, Աստուած, երբ պէտք է այս վերջանայ, — սափտիկ դարդոտ ձայնով արտասանեց նա, երբ որ Հեղինէն ձեռքը դնելով նորա ուսին սթափեցրեց նրան խորը մտախոհութիւնից:

— Ի՞նչը, — վախեցած հարցրեց Հեղինէն:

— Ոչինչ... — ցնցեց Փամարը և նրանք լուռ հասան ուսումնարան:

Երեկոցեան Աննային շատ սպասելուց յետոյ Հեղինէն իւր պառաւ գալեակին ուղարկեց նորա յետեւից:

— Հազիւ հազ եկար, սպասում էիր որ անպատճառ մարդ ուղարկեմ յետեւից:

— Հիւր ունէինք, ելիղաւետա Բողղանովնան չէր թողնում գամ:

—Մի պատմիր տեսներք այդ ինչպէս է քեզ Միհրանովան աֆսոսել ¹⁾։

Գուրգէնեանը մի քիչ տատանւելուց յետոյ սկսեց պատմել, թէ ինչեր էին պատահել Հեղինէի Ք-սից հեռանալուց յետոյ։

Այդ ժամանակ ներս մտաւ Թօմասը։ Նա սկզբումը շփոթւեց, բայց շուտով յաղթեց շփոթութեանը, թափանցող հայեացք զցեց Գուրգէնեանի վրայ ու լուռ նստեց նորա դէմուդէմը։

Մի քանի կցկոտուր և աննշան հարցեր տալուց յետոյ, որոնց շփոթւած Գուրգէնեանը նոյնպէս կցկոտուր պատասխաններ տուեց, Թօմասը մնաք բարեւ ասաց ու գնաց։

—Կեղծելու անընդունակ եմ, իսկ նա դեռ անկեղծ բացատրութեան տրամադիր չէ, — չարացած մտածում էր նա իջնելով սանդուղքներովը։

Հեղինէն համոզւեց, որ Թօմասի ու Աննայի մէջ սև կատու է անցկացել, բայց վճռեց հարց ու փորձ չ'անել զորա մասին Աննային, մինչև որ նա ինքը առիթ տար խօսելու։ Նա զիտէր, որ այդ շատ փափուկ հարց է և խնայում էր Գուրգէնեանին։ Արիշ բան էր նորա յարաբերութիւնը Միհրանովայի հետ։ Այդ հարցի մասին լռելու հիմք չ'կար և Հեղինէն սկսեց համոզել Աննային, որ դուրս գալ Միհրանովանց տանից։

— Իմ մտքումն էլ կայ այդ, միայն յարմար առթիւ եմ ապաստում, — պատասխանեց Գուրգէնեանը։

Նրա սիրտը արդէն սկսել էր կասկած ընկնել, թէ Միհրանովան անբարեխիղճ կերպով է վերաբերում իրան։ Քանի զնում աւելի յաճախ էր սկսում նա չիշել Պետրոսեանցի՝ վաղուց մոռացւած՝ խորհրդաւոր ակնարկութիւնները։

Միհրանովան ոչ միայն առաջւայ պէս չէր փաշտալում նրան, այլ և օրէցօր աւելի ու աւելի արհամարհաբար էր սկսում վարել նորա հետ և շատ անգամ իւր քաղցր յոյսերի դերև ելնելուց դառնացած արտի մօզձը նորա զլխին էր թափում։

— Զէ, ինչպէս տեսնում եմ, Պետրոսեանցի ձիշտ էր տառւմ, սա

¹⁾ Աֆսոսել էր նշանակի կախարդել, թռփել։ Ասում են նոյնպէս «օձին աֆսոսել»։

ինձ վրայ յոյսեր է ունեցել, հաւատացած լինելով, որ Ուբարովը ինձ կը թողնի իւր բոլոր հարստութիւնը: Հիմա որ տեսնում է, թէ յոյսը զուր է եղել, էլ աւելորդ է համարում ինձ մարդի տեղ դնել: Այժմ ես նորա համար ծանր բեռ եմ դարձել, էհ ոչինչ, թող ապահով կենայ, ես էլ նրան ծանրութիւն չեմ պատճառիլ...

Այսպէս էր մտածում Գուրգէնեանը և շուտով վերջնականապէս վճռեց զուրս դալ Միհրանովայի տանից: Այդ շատ հեշտ էր, որովհետեւ Միհրանովան էլ այդ ժամանակ գտել էր մի ֆրանսուհի, որ համաձայնում էր վարձել Աննայից աւելի ձեռնտու պայմաններով:

Աննան տեղափոխեց իւր մօրաքոյրներից մէկի տունը: Պետրոսեանցին այդ շատ ուրախացրեց. նա մտքումը շնորհակալութիւն էր անում Հեղինէին, համոզւած լինելով, որ Աննան նորա ազգեցութեամբն է այդպէս վարել:

Հէնց նոյն օրը, որ Աննան տեղափոխեց մօրաքրոջ տունը, Պետրոսեանցը գնաց նորա մօտ:

— Ի՞նչ էք ուզում անել Ուբարովի ձեզ թողած տասը հազարը, — հարցրեց նա օրիորդին:

— Հա, բոլորովին մոռացել էի: Ի հարկէ պէտք է բաժանել եղբայրներիս մէջ. այդ նրանց միջոց կը տայ լաւ կրթութիւն ստանալու: Կէս ժամ անցած Պետրոսեանցը ուրախ-ուրախ ֆիաք բարեւասաց օրիորդին խոստանալով դալ նորա մօտ հետեւեալ օրը:

Աննան մտերմաբար ճանապարհ զրեց նրան մինչև սանդուղքները:

— Բայց ինչ շուտ փոխել է, կարծես կախարդել էին խեղճին այն անիծած տանը:

Հեղինէն տունը կարգի բերելուց յետոյ սկսեց աւելի յաճախ այցելել ուսումնարանը, ուր նա շատ անգամ ժամերով մնում էր: Բայց ոչ տանու գործերը, ոչ ուսումնարանի պարապմունքները չէին կարողանում խեղդել նորա սրտում այն նոր զգացմունքը, որ ոչ մի րոպէ հանդիստ չէր տալիս նրան: Անընդհատ ներքին կռիւը պարզ կերպով արտափայլում էր նորա գունաթափ դէմքի վրայ:

Մի օր երբ նա տխուր-արտում նստած իւր սենեակում մտքի հետ էր ընկել, Ամիրանովը սկսեց անհամբերութեամբ դուռը թըխ-թըխկացնել: Հեղինէն արգելել էր նրան իւր սենեակը մտնել:

—Ի՞նչ էք ուզում:

—Կոմսուհին ու Ելիզաբետա Բոգդանովնան եկել են քեզ մօտ:

—Ասէ՛ք, որ տկար եմ, չեմ կարող ընդունել:

—Ի սէր Աստուծոյ, խնդրում եմ, դուրս արի, — համարեա արտասւելով աղաչում էր Ամիրանովը, բայց կինը իւր ասածին հաստատ մնաց և չ'ընդունեց հիւրերին:

Նոյն օրը յարմար բոլէ գտնելով Ամիրանովն ասաց կնոջը, որ հիւրերը շատ տեղի մնացին, չը նայելով որ ինքը շատ էր աշխատել համոզել, որ կինը հիւանդ է:

—Ինչ այդ չի հետաքրքրում, — սառը-սառը պատասխանեց Հեղինէն:

—Ինչպէս թէ չի հետաքրքրում, — բարկացած նկատեց Եփեմիան, որ ներկայ էր նրանց խօսակցութեանը:

—Եթէ դու այդպէս արհամարհաբար վերաբերես քաղաքավարութեան կանոններին, հասարակութեան աչքում անկիրթ կերես, — քաղցրութեամբ ասաց Ամիրանովը:

Արի էգուց նրանց մօտ այցելութեան գնա, երևի արդէն հանգստացած կը լինես ճանապարհից, — շողմքոր ձայնով աւելցրեց նա:

—Ես արդէն ասել եմ, որ ոչ մի տեղ չեմ գնալ:

—Ախր ինչու չը պէտք է գնաս: Խաչը, ամաչում եմ մի տեղ գնամ, տեսնողը քո մասին է հարցնում, չեմ իմանում թէ ինչ պատասխանեմ:

—Հարցնում են թող հարցնեն, այդ իրանց բանն է, իսկ ես ուզում եմ նրանց մոռանալ:

—Ի՛նչ, — կոպիտ կերպով բացականչեց համբերութիւնը հատած Ամիրանովը. ինչ է պատահել քեզ: Բոլորովին անտանելի մարդ ես դարձել:

Հեղինէն ոչինչ չը պատասխանեց ու երեսը շուռ տուց միւս կողմը:

—Ճիշտ որ, Հեղինէ, լաւ կը լինի որ գնաք: Ասում եմ աղախնին, որ ձեր այցելութեան հազուստը պատրաստի, — մէջ ընկաւ Եփեմիան:

—Զուր նեղութիւն մի կրէք:

Զանգը խփեցին: Քամարն էր:

—Մոռացե՞լ ես, Հեղինէ, որ քեզ այսօր ուսումնարանումը սպասում են,—շուտ-շուտ վրայ տւեց Թամարը:

—Սխ, հա, այսօր նիստ կայ տարեկան հաշիւը կազմելու համար: Գնանք, Թամար:

Նրանք ուղում էին գնալ, բայց Ամիրանովը՝ բարկացած՝ քոյրերին ձեռքով նշան արեց, որ սենեակից դուրս գան, ու Հեղինէի առաջը կտրեց:

—Դու իմ բարութիւնը ի չարն ես գործ դնում: Քանի ամիս է համբերութեամբ տանում եմ քո կապրիզները, վերջապէս այստեղս է հասել, էլ չեմ կարող համբերել: Դու այնտեղը կը հասցնես, որ, կ'արգելեմ քեզ ոտք դնել այդ վիմար ուսումնարանը:

—Դուք ամենեին իրաւունք չունէք ինձ այդ արգելելու:

—Լաւ, կը տեսնենք, տիկին Հեղինէ:

Հեղինէն շտապով գնաց իւր սենեակը, իսկ Ամիրանովը սաստիկ չարացած սկսեց արագ-արագ քայլել սենեակում: Նա զղջում էր, որ չը կարողացաւ բարկութիւնը զսպել, բայց միւս կողմից մեղաւոր էր համարում կնոջը, որ չափը անցնում է:

—Օ՛ի, Տէր Աստուած, չեմ կարողանում դիմանալ այս անտանելի դրութեանը, ոյժիցս վեր է այդ,—չշջում էր Հեղինէն կռացած երեխայի օրօրոցի վրայ:

Նա վերցրեց երեխային օրօրոցից, պինդ սեղմեց կրծքին ու դուրս եկաւ պատշգամբը:

—Կեանքս դժոխք է դարձել: Մի անգամ որ կարողանայի խեղդել զգացմունքս, ոչինչ, բայց չեմ կարողանում, պէտք է միշտ կոււեմ հետը, միշտ զսպեմ ինձ: Ուշ ու միտքս նորա հետ է, կարծես մի անդիմադրելի ոյժ քաշում է ինձ դէպի նա, կամքս անգոր է: Ձէ, պէտք է տեսնեմ նորա հետ, պէտք է խօսեմ նորա հետ: Այո, ես կը խօսեմ Քէորգի հետ և կ'ասեմ նրան, որ առանց նրան կեանքը ինձ համար կեանք չի, անտանելի դժոխք է, կ'ասեմ, որ ես նորա հետ թէկուզ աշխարհքի ծայրը կ'երթամ, ամեն բան յանձն կ'առնեմ,—ինքն իրան խօսում էր Հեղինէն տխուր հայեացքը յառած կացուս երեխայի ժպտող դէմքի վրայ:

Սխ, հրեշտակս, հէնց իմանաս հասկանում ես, թէ խեղճ մայրիկդ ինչ է մտածում, ու ուրախանում ես: Հապա, սիրունս, լաւ

խմացիր, որ եթէ մարդս քեզ լոկ կեանք է տւել, Գէորգը քեզ կը տայ այն ամենը, որով քաղցրանում, ազնւանում ու լսեմանում է կեանքը: Մէկը քեզ մարմին է տւել, միւսը հոգիդ կը զարգացնի և այլալիսով քեզ համար աւելի օրինաւոր հայր կը լինի, որովհետեւ հոգին բարձր է մարմնից:

Բայց լա՛ւ եմ երեակայութեանս զօռ տալիս, — տխուր ժպիտով շշնջեց Հեղինէն:

Այդ ժպիտը յանկարծ տեղի աւեց զայրոյթի արտայայտութեան և նա ինքն իրան ասաց:

Ի՛նչ եմ ցնորաձի պէս զառանցում: Ձէ որ օրէնքը, ոյժը աղամարդկանց կողմն է. ի՛նչ կարող եմ անել ես իմ կին տեղալս: Երեխայիս ինձ չեն տալ, նա կը մնայ հօր մօտ, հօրիցը պէտք է կախւած լինի նորա դաստիարակութիւնը: Կարո՞ղ եմ ես թոյլ տալ, որ երեխաս կրթւի այնպիսի մարդու ազդեցութեան տակ, որի մասին ես սաստիկ ստոր կարծիք ունեմ: Ոչ, այդ միտքը բաւական է, որ ես միշտ տանջւեմ և ոչ մի բոպէ հանգիստ չ'ունենամ... Ստուած իմ, ինչ անեմ, որ ջուրն ընկնեմ... Ձէ, աւելի լաւ է տանջւեմ, խորովւեմ այս դժոխքի մէջ ու երեխայիս հետ լինեմ. իմ կողմից աններելի ջանքանք կը լինի թողնել խեղճ երեխայիս այդ ստոր արարածի հսկողութեան տակ: Մի բան որ ինձ համար բախտաւորութիւն չը կայ, մնամ՝ պէտք է տանջւեմ, հեռանամ՝ էլի պէտք է տանջւեմ ու դեռ երեխայիս էլ անբախտացնեմ. աւելի լաւ է մնամ և միայն ես անբախտանամ:

Այսպէս իւր սե օրն էր լալիս Հեղինէն և արտասուքի կաթիլները զլորւում թափւում էին դրկի երեխայի երեսին...

— Գնում ենք ուսումնարան թէ չէ, — սթափեցրեց նրան մտախոհութիւնից Թամարի ձայնը:

— Ախ, մուացել էի, ներիր, հոգիս, այսքան ժամանակ քեզ սպասել տեցի:

Մի քառորդ ժամից յետոյ նրանք արդէն փողոցումն էին:

— Թոյլ տւէք ինձ ուղեկցել ձեզ, — լսեց նրանց յետևից Ասուհու ուրախ ձայնը:

Հեղինէն լուռ զլուխ տւեց նրան:

Նարունակեցին ձանապարհը: Մի քիչ առաջ զնալուց յետոյ

Հեղինէն առաջարկեց ճանապարհը մի քիչ ծռել, գնալ Եւրոպա հիւրանոցի մօտով: Նա սաստիկ ուզում էր տեսնել Սահառունուն և յոյս ունէր, որ զուցէ ճանապարհին պատահէին նորա հետ:

— Բայց, տիկին Հեղինէ, այդպիսով ճանապարհը շատ կ'երկարի, իսկ դուք այսօր մի քիչ տկար էք երևում:

— Ոչինչ, աւելի լաւ կը լինի, մի քիչ օդ կը ծծեմ,— մտաւորոր պատասխանեց Հեղինէն:

Ասունին ոչինչ չ'ասաց: Նա էլ, նայելով Հեղինէի դարդոտ դէմքին, տխուր տրամադրութեան մէջ ընկաւ: Նա դէպի Հեղինէն հասարակ յարգանքից աւելի բարձր զգացմունք էր տածում և վաղուց էր նկատել, որ նա տանջւում է, բայց հասկանալով, որ սիրտը այնպիսի քնքոյշ և նւիրական լարեր ունի, որոնց ոչ մի կողմնակի մարդ չը պէտք է ձեռք տայ, զսպում էր իրան և չէր հարցնում Հեղինէից, թէ ինչու է նա այդպէս տանջւում:

Եւրոպա հիւրանոցի մօտով անցնելիս Հեղինէն սկսեց անհամբերութեամբ նայել հիւրանոցի պատուհաններին: Յանկարծ պատուհաններից մէկը բացւեց և նորա հայեացքը պատահեց Սահառունուն հայեացքին:

Հեղինէն մի քանի րոպէ կանգ առաւ՝ աչքերը յառած Սահառունուն վրայ: Ինչպէս կը թռչէր, կը բարձրանար վերև նորա մօտ, եթէ կարելի լինէր:

— Ինչ է պատահել Գէօրգի Ալէքսանդրովիչին, հօ հիւանդ չէ,— անհանգստութեամբ զիմեց նա Ասունուն:

— Հա, տաքացնում է:

— Ո՛րքան փոխւել է:

— Ինձ թւում է, որ ինչ—որ մի հոգս նրան սաստիկ անհանգստացնում է: Մի բան է միայն ինձ զարմացնում, որ այժմ նորա պարապմունքները աւելի յաջող են գնում քան երբ և իցէ:

— Նա էլ ինձ պէս ուզում է սաստիկ աշխատելով խեղդել սրտի զգացմունքը,— անցաւ Հեղինէի մտքովը և նա երկմտաբար շարժեց գլուխը:

Իսկ Սահառունին, որ Հեղինէին Պետտիգօրսկից վերադառնալուց յետոյ չէր տեսել, անթարթ նայում էր նրան:

Հեղինէն վաղուց հեռացել գնացել էր, էլ չէր երևում, բայց

նա շարունակում էր մտադրող նայել փողոցը, մինչև որ սառը, խոնաւ քամին սարսուռ գցեց նորա մարմինը: Այն ժամանակ միայն նա պատուհանը փակեց ու ընկաւ բազկաթոռի մէջ: Տաքութիւնը փոխւեց դողի:

— Խեղճ կին, ինչպէս փոխւել է այսքան կարճ ժամանակում— մտածեց Սահառունին:— Ինչպէս բախտաւոր կարող էինք լինել մենք, եթէ որ... էհ, աշխարհքի բաները այդպէս է... յուսահատ կերպով թափ տւեց նա ձեռքը:— Մեր ճակատագիրն է կուռլ և տանջւել: Այո, տանջւել ու կուռլ,— մի քանի անգամ բարձրաձայն կրկնեց Սահառունին:

Երկար ժամանակ մնաց նա այդպէս տխուր մտածմունքների մէջ ընկած: Վաղուց մուծն ընկել էր, բայց նորա մտքովն էլ չէր անցնում, որ պէտք է ճրագ վառել, վերջապէս նա սկսեց սթափւել իւր խոր մտածմունքներից, հրամայեց լամպը տան ու սկսեց պարապել, բայց բոլորովին անցաջող, — ոչինչ չէր դուրս գալիս:

Միայն Սահառունին չէր, որ մտածում էր Հեղինէի մասին, Եփեմիայի միտքն էլ զբաղւած էր Հեղինէով: Այն ժամանակ երբ որ Սահառունին, մտքով վերացած, նստած էր բազկաթոռում, Եփեմիան եղբոր հետ խօսում էր իւր հարսի մասին: Նա վաղուց կասկածում էր, որ իւր հարսի ու Սահառունու մէջ մի բան պէտք է լինի և միայն յարմար առթի էր սպասում այդ կասկածը եղբորը հաղորդելու համար:

— Ձեր տունը խռովութիւն գցողը Սահառունին է,— խորհրդաւոր կերպով սկսեց նա, Սահառունին որ չը լինէր՝ կինդ քեզ հետ միշտ հաշտ կ'ապրէր: Քանի քանի անգամ ակնարկութեամբ հասկացրել եմ քեզ այդ, բայց դու իմ խօսքերս սկի բանի տեղ չէիր դնում: Տես, զգոյշ կաց, կինդ Սահառունու գերին է դարձել:

— Լաչաք կա՞յ գլխիդ ական, որ բամբասանք չ'անես— չը լսես, օրդ օր չի լինիլ,— ասաց Ամիրանովը, աշխատելով սառնասիրտ ձեւանալ:

— Դու գիտես. ես որ իմ ասելիքս ասացի՝ Քո քէյն է. ուղում ես կնկանդ իրաւունք տուր մէկի տեղ տասը մարդ սիրի: Եհ, գիտեմ, հիմիկա՞յ ժամանակները քրոջը մարդու տեղ դնող չկա՞յ. բայց դէ չի լինում, սիրտ է՝ ցաւում է, մարդ չի դիմանում՝ խօսում է:

Լաւ, ծիծաղիր վրաս, ասա որ Եփեմիան ասէկօսէ շատ է սիրում մի օր կը գայ, այսօրուայ խօսքերս միտդ կը բերես, կ'ասես թէ՛ քրոջդ գլխումն էլ խելք է եղել:

—Լաւ, լաւ, Եփեմիա, էլ ինչ ես տաքանում, հաւատում եմ... հանգստացրեց Ամիրանովը քրոջը:

Հաւատում եմ... ես ինքս էլ վաղուց կասկածում եմ... աւելցրեց նա ու, բարկացած թափ տալով ձեռքը, գնաց իւր առանձնասենեակը:

Քրոջ խօսքերը նրան խորը մտահոգութեան մէջ զցեցին: Որքան աւելի էր սկսում նա մտաբերել զանազան դէպքեր իրանց կեանքից այնքան աւելի էր համոզւում, որ քոյրը ճիշտ է ասում:

Սահառունին առաջ ամեն օր գալիս էր մեզ մօտ, իսկ այժմ աշխատում է չը պատահել մեզ հետ. երբեւէ է, խիղճը մաքուր չէ: Այո, Եփեմիան ճիշտ է ասում... մտայնող կերպով արտասանեց Ամիրանովը:

Նորա դէմքը հեռզհեռէ աւելի ու աւելի մնայլ արտայայտութիւն էր ստանում:

Ինձ ասա, ինձ, կոյր էի ինչ է, որ ոչինչ չէի նկատում և որ, հաւատալով նրանց անպայման ազնւութեանը, թողնցի որ այդպէս մտերմանան: Անամօթ Սահառունի, քեզ այդ էժան չի նստիլ:

Ամիրանովը ինքն իրան ուտում էր նախանձից:

Բայց զուցէ և սխալւում եմ, — աշխատում էր նա հանգստացնել իրան. պէտք է Հեղինէին փորձել, նա կեղծել չի կարողանում, զօնէ մինչև այժմ չէր կարողանում:

—Մի բան ինձ զարմացնում է, հոգիս, — յարմար առիթ գտնելով դիմեց նա Հեղինէին, անցաջող կերպով աշխատելով ծածկել վրդովմունքը, — մի ամիս կը լինի, որ եկել ենք Պետտիդօրսկից ու այսքան ժամանակ է Սահառունին մի անդամ էլ է չի եկել մեզ մօտ: Ինչով պէտք է բացատրել այդ:

—Ձեռք խմանում, — հազիւ լսելի ձայնով ասաց Հեղինէն ու ցնցւեց:

Ամիրանովը ուշադրութեամբ դիտում էր նրան:

—Եզուց ուզում եմ մի քանի մարդկանց ճաշի հրաւիրել, շատ

ուրախ կը լինէի եթէ Սահառունին էլ գար: Տոմսակ չե՞ս գրիլ որ գայ:
Հեղինէն սաստիկ ցնցւեց ու զունաթափւեց:

— Դու... գիտես...

Նա ուզում էր փախչել սենեակից, բայց չը կարողացաւ և ու-
ժասպառ ընկաւ առաջին պատահած աթոռի վրայ:

Նա վճռեց ամեն բան յայտնել մարդուն, բայց լեզուն բռնւեց,
չը կարողացաւ խօսել:

— Այժմ ամեն բան պարզ է, — մտածեց Ամիրանովը և սարսնեց:

Սիրան ուզում էր պատուել, արիւնը գլուխը խփեց, բայց նա սա-
տիկ ձիգ գործ դրեց և զսպեց իրան: Կնոջը ոչինչ չ'ասաց, զնաց
իւր առանձնասենեակը և, իւր մշտական սովորութեան հակառակ,
ամբողջ երեկոյ տանը մնաց:

Հազար ու մի մտածմունքներ ալէկոծում էին նորա միտքը:
Նա երկար մտածում էր, թէ ինչպէս վարւի այսուհետև կնոջ հետ:

— Նա այնպիսի բնաւորութիւններից է, որոնց հետ համբերու-
թեամբ ու լռութեամբ աւելի բան կարելի է անել քան խիստ միջոց-
ներով, — վճռեց Ամիրանովը և ըստ երևոյթին, մի քիչ հանգստացաւ:

XVI

Սահառունին աշխատում էր չը պատահել Ամիրանովների հետ,
բայց ճաշի հրաւերը ստանալուց յետոյ էլ անկարելի էր այդ: Վա-
ղիկաւիազից յետոյ Ամիրանովը ու Սահառունին դեռ իրար չէին պա-
տահել: Առաջին տեսակցութիւնը Ամիրանովի համար վճռական նշա-
նակութիւն պէտք է ունենար իւր կասկածների վերաբերութեամբ:
Նա խորին ուշադրութեամբ դիտում էր կնոջ ամեն մի շարժումը,
ամեն մի հայեացքը և վերջնականապէս համոզւեց, որ իւր կաս-
կածները կնոջ դէպի Սահառունին տաճած զգացմունքի մասին բո-
լորովին ճիշտ էին: Այդ սաստիկ մտահոգութեան մէջ գցեց Ամիրանովին:

Մեղաւորը ես եմ. ես չը պէտք է թողնէի որ նրանք այդքան
մտերմանան իրար հետ, չը պէտք է կուրորէն հաւատալի կնոջ,
մանաւանդ որ շատ լաւ գիտէի, որ նրանք սաստիկ համակրում են
իրար: Այդպիսի անհոգութիւն աններելի էր ինձ համար, — յանդի-
մանում էր ինքն իրան Ամիրանովը՝ տանջւելով նախանձից:

Նախանձը բաւական չէր՝ մի նոր հոգս էլ աւելացաւ, որ համարեա նոյնչափ վրդովեց Ամիրանովին որքան և նախանձը: Նորա ականջովն հասան քաղաքումը պտտող լուրեր, թէ նորա կինը ուզում է գիշերօթիկ ուսումնարան բանալ:

Նա սկզբում ուշադրութիւն չէր դարձնում այդ լուրերի վրայ, կարծելով որ այդ միայն ասէկոսէներ են, բայց մի օր դիւանատանը նոյն լուրը հաղորդեցին նրան իւր երկու լաւ ծանօթները՝ պնդելով որ այդ հաստատ բան է: Ել չը հաւատալ անկարելի էր: Ամիրանովը սաստիկ վրդովեած սովորական ժամանակից շուտ վերադարձաւ տուն և ուղղակի գնաց կնոջ մօտ:

—Այս ինչ լուր է պտտում քաղաքում, Հեղինէ: Ամենքն էլ ասում են, որ դու ինչ որ պանսիօն ես ուզում բանալ: Առաջ բանի տեղ չէի դնում, բայց երբ որ Ելիզաւետա Բոգդանովնան էլ նոյն բանն ասաց, երբ որ վերջապէս պաշտօնակիցներս հաստատեցին այդ, ես էլ չէի կարող ուշադրութիւն չը դարձնել ու սաստիկ վրդովեցի:

—Շատ զուր, — սառը-սառը ընդհատեց նորա խօսքը Հեղինէն:

—Ուրեմն ճիշտ են ասում:

—Այո:

—Երազ ես տեսել ինչ է: Այդ էր պակաս: Հօ չես դժուար: Ուզում ես ինձ խախտի ծիծաղատեղ դարձնել, ուզում ես ինձ մի մատ մեղր շինել քաղաքացոյց բերնում: Ով է տեսել, որ ինձ պէս հարուստ մարդու կինը իւր աշխատանքով փող վաստակի: Փառք Աստուծոյ, ոչ ոք դեռ ինձ ժլատ մարդ չի համարել, ուզում ես որ այդ փառքին էլ արժանանամ:

Ե՛հ, լաւ, այդ բոլորը մի կողմը թողնենք. այդպիսի մտադրութիւն որ ունէիր, ինձ ինչու ոչինչ չէիր ասում:

—Շատ հասկանալի պատճառով, — վախենում էի հակառակէք մտադրութեանս, — մի քիչ վախվախելով պատասխանեց Հեղինէն:

—Իսկ այժմ, կարծում ես, իրաւունք չ'ունեմ քեզ արգելելու այդ:

—Ես վաղուց մտադիր էի ձեզ յայտնել այդ և միայն չարմար առիթ...

—Ես իմ թշնամին չեմ. այն էլ բաւական էր, տիկին, ինչ որ քաշեցի ձեր ձեռքից, — կատաղած ընդհատեց նորա խօսքը Ամիրանովը՝ առանց լսելու թէ նա ինչ էր ասում: Կը տեսնենք այժմ...

ես ձեզ կ'ապացուցանեմ, որ իմ տանը ես կատարեալ տէր եմ, որ ես ոչ ոքի թոյլ չեմ տալ իմ անունը խաղտառակել... լսո՞ւմ էք, թոյլ չեմ տալ:

Ամիրանովը էլ չէր կարողանում զսպել բարկութիւնը: Իսկ Հեղինէին այդ սպառնալիքները փոխանակ վախեցնելու աւելի սիրտ ու վճռականութիւն էին տալիս: Ճիշտ է նա զիտէր, որ առանց մարդու համաձայնութեան նորա համար դժւար կը լինի իւր բաղաձանքին հասնել, բայց այդ թոպէին նա առանձին զւարճութիւն էր զգում իւր առածը պնդելում:

— Լսում եմ, բայց իմացած կացէք, որ իմ վճիռը անդրդւելի է, — շեշտելով արտասանեց Հեղինէն արհամարհական հայեացք գցելով մարդու վրայ:

Այդ ժամանակ կողքի սենեակից լացի ձայն եկաւ. երեխան էր լալիս:

Հեղինէի դէմքը այլալեւց:

— Եթէ մէկ էլ պանսիօնի կամ դասերի անուն ես տւել, երեխայիդ ձեռքից կը խլեմ ու կը տամ մի վարձկան կնոջ որ պահի: Նա թոյլ չեմ տալ, որ իմ որդին մօրիցը օրինակ առնի և առանց ջարդանքի ու արհամարհանքով վերաբերւի հօրը: Դու էլ լաւ իմացիր, որ իմ վճիռն էլ անդրդւելի է:

— Ախ, Աստուած, Աստուած, — հառաչելով բացականչեց Հեղինէն ու երկու ձեռքով բռնելով գլուխը երեսն ի վայր ընկաւ բարձի վրայ:

Այդ թոպէին միայն նա բոլորովին պարզ կերպով հասկացաւ, թէ ինչ անդիմադրելի իշխանութիւն ունի իւր վրայ մարդը:

Մի քանի թոպէ նրանք լուռ մնացին: Դժւար է խօսքով նկարագրել թէ ինչ քաշեց Հեղինէն այդ մի քանի թոպէում:

— Դուք ինքներդ տեսնում էք, — վերջապէս սկսեց խօսել Հեղինէն հազիւ զսպելով լացը և այնպիսի ձայնով, որ արտայայտում էր կատարեալ յուսահատութիւն, — դուք տեսնում էք... որ ինձ համար անտանելի է ապրել ձեզ հետ: Խնդրում եմ, աղաչում եմ ձեզ, եթէ ձեր սրտում մնացել է կարեկցութեան զոնէ մի նշոյլ, թոյլ տւէք ինձ երեխայիս հետ գնալ մի տեղ, հեռանալ այստեղից և մոռացէք, որ ես կամ աշխարհիս երեսին:

Այդ խօսքերը իրանք իրանց գուրս թռան Հեղինէի բերնից: Մի

քիչ յետոյ նա ինքն էլ զարմանում էր, թէ ինչպէս կարող էր ինքը այդպէս մի անմիտ պահանջ յայտնել:

Ամիրանովը, ըստ երևութին, զգացւեց և սկսեց զղջալ, որ չէր զսպել բարկութիւնը:

— Գիտեմ, թէ ով է քեզ այդպիսի մոքեր թելադրել, — մի քիչ լսելուց յետոյ սըւսըւացրեց նա ատամները արանքից:

Երբ որ նա այդ խօսքերն արտասանում էր Հեղինէն սենեակիցը արդէն դուրս էր եկել:

Իւր ննջարանումը փակւած խեղճ կինը բարձրաձայն լալիս էր: Երկար ժամանակ արտասուքը դետի նման թափում էր նորա աչքերից և նա չէր կարողանում հանգստանալ: Լացից նորա զլուխը սկսեց սաստիկ ցաւել և նա համարեա ամբողջ օրը մնաց պառկած անկողնում: Խրիկնադէմին նա վերկացաւ բոլորովին ուժասպառ ու իջաւ պարտէզը մի քիչ կազդուրւելու յոյսով: Պարտէզումն էր և դայեակը երեսայի հետ: Նա առաւ դայեակի ձեռքից երեսային, մի քիչ լուղացրեց, գորովանքով համբուրեց նրան ու, յետ տալով դայեակին, ասաց.

— Այստեղ սկսում է մի քիչ ցրտել, տար նեքս:

— Դու էլ որ տուն գնաս լաւ կանես: Կը մըսես, առանց այն էլ այսօր քէֆ չունես: Ինչ ես դարդ անում, ջահէլ օրդ սեւացնում: Գնանք մի քիչ բան կեր, այսօր բերանդ ոչինչ չես առել, — համոզում էր Հեղինէին բարի պառաւը:

— Ախորժակ սկի չունեմ, նանի, դու վերկաց դնա, ես այստեղ շատ չեմ մնալ, — թող ձայնով պատասխանեց Հեղինէին:

— Արտիցս արիւն է կաթում, որ քեզ մտիկ եմ տալիս, — խորը հոգոց քաշեց պառաւը և կարեկցաբար նայեց Հեղինէին, որին իւր ձեռները վրայ էր մեծացրել:

Այդպէս ախ ու վախ անելով դայեակը փաթաթեց երեսային հաստ վերմակի մէջ ու տարաւ նեքս: Մի քանի րոպէ անցած նա վերադարձաւ պարտէզը հետը բերելով Հեղինէի համար մի բարձ ու ռոնների տակը դցելու մի փոքրիկ գորգ:

— Հիմա հանգիստ կը նստես, ռոններիդ համար էլ տաք կը լինի:

— Շնորհակալ եմ, նանի:

Այդպէս երկար մնաց Հեղինէն, յետոյ դնաց նեքս և ու ամբողջ

գիշերը անցկացրեց մտատանջութեան ու անհանգիստ քնի մէջ:

Հետեւեալ առաւօտը նա նամակ գրեց Սահառունուն: Նամակում նա նկարագրում էր իւր անմխիթար դրութիւնը: Ահա վերջին խօսքերը. «Ձեռ կարող երեւակայել, Գէորգ, թէ որքան ցանկանում եմ ես գոնէ մի ժամ անցկացնել քեզ հետ: Ինձ թւում է թէ այդ ինձ ոյժ կը տար կռիւը շարունակելու համար: Գիտեմ, որ քեզ համար շատ ծանր կը լինի գալ մեզ մօտ ու պատահել մեզ հետ և այդ պատճառով չեմ խնդրում, որ գաս: Կարող էիր երեկոյեան գալ մեզ մօտ, որովհետեւ մարդս երեկոները երբեք տանը չի լինում, բայց այդ էլ չեմ ուզում: Ես ու մարդս միայն ճաշի ժամանակ ենք տեսնուում իրար հետ: Բայց, Աստուած իմ, որքան երկար է տևում այդ մի ժամը. երբեմն այն աստիճան անտանելի է թւում ինձ այդ ժամանակամիջոցը, որ ասում եմ թէ տկար եմ ու գնում եմ իմ սննեակը: Կարծեմ մարդուս համար էլ սկսում է անտանելի դառնալ մեր յարաբերութիւնը. նա երբեմն մի քանի օրով ինձ բոլորովին հանգիստ է թողնում, էլ չի ձանձրացնում ինձ խնդրելով որ հիւր ընդունեմ կամ հետը հիւր գնամ, և եթէ չը վախենար ծառաների բամբասանքից՝ ինձ կ'ազատէր ճաշին հետը նստելու պարտականութիւնից, քանի որ նկատում է, որ ես ճաշին առհասարակ ձեռ էլ չեմ տալիս: Ախ, ինչու պէտք է մարդ սոխալած լինի զաղտնիք պահել, խաբել ուրիշին.— զաղտնիքն ու խաբէութիւնը թունաւորում են մարդու կեանքը: Կը հաւատաս, Գէորգ, բնաւորութիւնս նկատելի կերպով փշանում է.— երբեք ես այնքան դիւրագրգիռ չեմ եղել ինչպէս այժմ. այդ բաւական չէ, երբեմն ես մինչև անգամ շարահոգի եմ դառնում: Ձեմ խմանում ինչ կը դառնամ վերջը, եթէ այս դրութիւնս երկար տևի: Խիղճս ինձ հանգիստ չի տալիս. ես սպրում եմ մարդուս հաշուով, կրում եմ նորա անունը, հասարակութիւնը ինձ պատուում ու յարգում է իբրև նորա ամուսնուն, մինչդեռ ես իսկապէս ինձ նորա ամուսինը չեմ համարում. այդ իմ կողմից անազնութիւն է: Բայց ինչ անեմ, ասա, ինչ անեմ, խելք դիր գլուխ... Ներիր, Գէորգ, գիտեմ, որ այս նամակս քեզ կը տխրեցնի, բայց սիրտս շատ է լցւել, ուզում է տրաքել. դարդս ինձ կ'ուտի, կը սպանի, եթէ գոնէ քեզ էլ է չասեմ, սիրտս հովացնեմ: Մնաս բարև, չէ, չէ, ցտեսութիւն: Քո Հեղինէ:

Նամակը գրելուց յետոյ Հեղինէի սիրտը մի քիչ կարծես թեթեւացաւ, բայց մի քիչ անցած նա սկսեց զոջալ և եթէ ձեռքումը ճար լինէր յետ կը դարձնէր զայեակին, որի ձեռքով ուղարկել էր նամակը:

— Զէ, ուշ է, մաածեց նա, երևի այժմ Գէորգը արդէն կարողմ է: Ախ, ի՞նչ յիմարութիւն էր, որ ես արեցի:

— Հը, տւեցիր, — անհանգիստ սրտով հարցրեց Հեղինէն զայեակին, երբ որ նա վերադարձաւ:

— Զէ, տանը չէր, — կմկմաց պառաւը, — իսկ դու հրամայեցիր... Աննկատելի կերպով սենեակը մտաւ Եփեմիան:

— Լաւ է, լաւ, — ուրախացաւ Հեղինէն ու նամակը ձղեց, կտոր — կտոր արեց:

Դայեակը շւարած նայեց նրան ու դուրս եկաւ: Զանգը խփեցին: Եփեմիան ձեռ ու ոտ արեց ու շտապով գնաց ընդունարանը:

— Հեղինէ, — լսեց նրա ձայնը, — դուրս եկէք, ձեզ մօտ հիւրեր են եկել:

— Ասէք, որ տանը չեմ:

— Ինչպէս թէ տանը չէք: Նղբայրս առանց այն էլ ձեր պատճառով օրը տասը անգամ կարմրում է:

Պատասխանի տեղ Հեղինէն շրթունքները արհամարհաբար ոլորեց ու վնաց, փսկւեց իւր սենեակում:

— Ի հարկէ, ինչ ասել կ'ուզի, որ սիրականի հետ ժամանակ անցկացնելը կամ նամակագրութիւն ունենալը աւելի դուր կը գայ քան հասակաւոր կանանց հիւր ընդունելը, — մոմութացրեց Եփեմիան ատամները իրար սղմած:

Նա անհամբերութեամբ սպասում էր եղբօրը, որ նորա մօտ հարսի վրայ յարձակելով կարողանար սիրտը հանգստացնել: Շատ չ'անցած նա եկաւ: Նղբայր ու քոյր երկար ժամանակ քչփչում էին: Յանկարծ ներս մտաւ Քամարը: Նրանք լռեցին:

— Հեղինէն ո՞ւր է:

— Ինչի համար ես հարցնում, — հարցրեց Ամիրանովը:

— Մի ծանօթ տիկին խնդրեց, որ այս նամակը տամ Հեղինէին: Կարծեմ, խնդրում է որ դաս տայ իւր երկու փոքրիկ աղջիկներին:

— Ի՞նչ, զեռ նա ձեռք չի քաշել այդ տուտուց բաներից: Եւ

դու համարձակում ես նրան օգնել այդպիսի խայտառակ գործում, — յարձակեց քրոջ վրայ Ամիրանովը:

— Ես ինչ եմ արել, որ համարձակեմ կամ չը համարձակեմ: Որ ինձ հանդիստ թողնես, լաւ կ'անես, — անսովոր համարձակութեամբ պատասխանեց Քամարը ու մի քանի քայլ յետ—յետ գնաց:

— Տուր այս բոլորս ինձ այդ նամակը, — կատաղած զոռաց Ամիրանովը:

— Ձեմ կարող տալ. ում որ պատկանում է, նրան պէտք է հասնի:

Եւ Քամարը ծրարը պինդ սեղմեց ձեռքումը:

— Ինչպէս ես համարձակում այդպէս վարել եղբորդ հետ: Ինչպէս ես մոռանում նորա լաւութիւնները: Ախ, ինչ ասեմ, մի տեսնեմ, նորա երախտիքը աչքերդ բռնի, որ իմանամ թէ վերելումն էլ Աստուած կայ, որ ապերախտներին պատժում է, — սկսեց զոռզոռալ Եփեմիան՝ բռունցքները սեղմած:

Քամարը ականջները բռնեց ու դուրս գնաց սենեակից:

Հեղինէն շատ փորձեր անելուց յետոյ բոլորովին համոզեց, որ ոչ քաղցրութեամբ ոչ էլ կռուով չի կարող ստանալ մարդու համաձայնութիւնը պանսիօն բռնալու կամ մասնաւոր դասերով պարապելու համար:

Ամիրանովը, կնոջ հետ հաշտելու սաստիկ պահանջ զգալով, աշխատում էր որքան կարելի է քաղցրութեամբ, մեղմ կերպով համոզել նրան, ապացուցանել որ ինքը համաձայնութիւն տալ չի կարող:

— Ես շատ լաւ եմ հասկանում, թէ ինչքան գովելի է քո ձգտումը դէպի աշխատաւոր կեանքը, — ասաց նա մի օր կնոջը, — Լ սրտանց ուրախ կը լինէի, եթէ դու մի որ Լ է բարեգործական դրպրոցում ձրի դասեր տայիր, բայց քո ուզածդ ես անբարեխղճութիւն եմ համարում, որովհետեւ դու զրանով կը խլես ուսուցչութեամբ ապրուստ վաստակող կանանց բերնից նրանց կտոր հացը:

Նկատելով, որ իւր վերջին պատճառաբանութեանը, որի վրայ նա շատ մեծ յօյս ունէր, Հեղինէն կասկածանքով վերաբերեց, նա շարունակեց, — ինչպէս տեսնում եմ, դու չես ուզում իմ հաշուով ապրել, որովհետեւ ինձ չես սիրում: Թող Աստուած զիտենայ, թէ դու որքան վիրաւորում ես ինձ զրանով: Քեզ հանգստացնելու համար ես քո

օժիտիցդ հազար մանէթ կտամ քեզ. սրանից յետոյ քո փողերդ ծախսիր:

Տեսնելով, որ այդ առաջարկութիւնն էլ մեծ տպաւորութիւն չը գործեց կնոջ վրայ, նա աւելցրեց ողորւածի ձայնով, — յոյսս միայն ժամանակի վրայ է, մի ժամանակ անկասկած կը համոզուես, որ ոչ ոք և ոչ մի ժամանակ քեզ այնպէս չի սիրել ինչպէս ես:

Ամիրանովի դէմքը վառւում էր: Հեղինէն նորա դէմքի վրայ պարզ կարդում էր նախանձի արտայայտութիւն և գիտէր, որ միայն հպարտութիւնն է ստիպում մարդուն ծածկել այդ զգացմունքը: Նա ուզում էր յայտնել մարդուն իւր գաղտնիքը, բայց զգում էր, որ այդ իւր ուժիցը վեր է:

— Օ՛հ, Աստուած, ինչ ծանր բան է սրտումը գաղտնիք ունենալը, — մենակ մնալով յուսահատութեամբ բացականչեց Հեղինէն և սկսեց մտածել, թէ ինչ անի որ զուրս գալ իւր անտանիւի դուրսից, բայց ոչինչ չէր կարողանում վճռել, կարծես, ուղեղը կորցրել էր իւր դատելու ընդունակութիւնը:

Դուռը կամաց ձեռնեցին. Հեղինէն սթափուեց մտախոհութիւնից: Նա վեր կացաւ ու բաց արեց դուռը:

— Ախ, Քամար, դո՛ւ ես:

Այդ ասելով նա ուշադրութեամբ նայեց տալի երեսին և այնպէս զարմացաւ՝ կարծես առաջին անգամն էր նկատում նորա անսովոր նւագութիւնն ու զուստութիւնը:

— Ներիր, Հեղինէ, երեւի քնած էիր:

— Զէ, ընդհակառակը շատ ուրախ եմ, որ եկել ես: Մի քիչ մօտիկ նստիր: Ասել եմ, կազմարարութիւն ես սովորում, որ յետոյ մեր ուսումնարանի երեխաներին սովորեցնես այդ արհեստը, ձի՞շտ է:

— ձի՞շտ է: Շատ լաւ արհեստ է:

— Ինչպէս երեւում է, Քամար, դու ամբողջ օրը ուսումնարանում աշխատելով շատ ես յոգնում:

— Ինչո՞ւ է քեզ այդպէս թւում:

— Գոյն չի մնացել երեսիդ... կարծես տկար լինես... բայց ոչինչ, մի վախենալ, հեշտ կը կազդուրւես, եթէ սովորութիւն դարձնես քեզ համար ամեն օր մաքուր օդում զբօսնել:

— Ե՛հ, այդ չէ պատճառը, Հեղինէ ջան... եթէ իմանայիր...

Այդ խօսքի վրայ թամարը կանգ առաւ և ալալում չորս կողմը նայելուց յետոյ յանկարծ աչքերը յատեց մի կէտի վրայ, կարծես նորա աչքին մի սարսափելի ուրական երևեց:

—Թող, մի չիշեցնիլ,— շշնջում էին նորա գունաթափ շըրթունքները:

Հեղինէն ապշած նայում էր թամարի վրայ և սիրտ չէր անում հարց առաջարկել նրան:

Նա Պետրիգորսկից վերադառնալու հէնց առաջին օրից զարմանում էր նկատելով թամարի մէջ կատարւած փոփոխութիւնը: Թամարը առաջւայ թամարը չէր, — նա երբեմն հանգած աչքերով սուերի նման լուռ ու մունջ սենեակի մի անկիւնից միւսն էր գնում գալիս, երբեմն էլ յանկարծ վայրենի կերպով փայլող հայեացքով կանգ էր առնում սենեակի մէջ տեղում, ձեռները թափահարում ու ինչ-որ անկապ խօսքեր շշնջում ինքն իրան: Երևում էր, որ մի ինչ-որ միտք, զարհուրելի միտք տանջում էր նրան:

— Լսել եմ, որ մեր ուսումնարանին սպիտակեղէն կարելու մեծ պատուէր են տւել: Ինչ ես կարծում, կը կարողանան մեր աշակերտուհիները բոլորը ժամանակին հասցնել, — հարցրեց Հեղինէն աշխատելով ուրիշ հարցով զրաւել տալի միտքը:

— Ի հարկէ. ես յոյս ունեմ, որ մենք այդ պատուէրը շատ շուտով կը վերջացնենք: Ախ, թէ Աստուծոն սիրում ես, թող որ ես ամբողջ օրը ուսումնարանումը անցնեմ, այնտեղ ես մոռանում եմ... այսինքն... այնտեղ ես շատ ուրախ եմ զգում ինձ, — աւելցրեց նա նկատելով իւր սխալը:

Եւ իսկապէս, երեխաների հետ ժամանակ անցկացնելը շատ լաւ էր ազդում թամարի վրայ: Նրանց անմեղութիւնն ու պարզասրտութիւնը կարծես նորա ալեկոծւած հոգուն հանգիստ ու խաղաղութիւն էին ներշնչում, իսկ երբեմն՝ և մի անորոշ ցանկութիւն ազատւելու ինչ-որ մի բանից, որ նրան սաստիկ ճնշում ու տանջում էր:

XVII

Եկաւ հոկտեմբեր ամիսը իւր հրաշալի օրերով: Ամիրանովների ընտանեկան կեանքում ոչինչ չէր փոխւել: Ամիրանովը սկսել էր սովորել կնոջ խիստ ու սառն վարմունքին, բայց ի հարկէ դարձեալ

ամեն ջանք դործ էր զնում այդ տեսակ յարաբերութեանը վերջ տալու: Իսկ Հեղինէն աշխատում էր տեսնել Սահառունու հետ:

Մի օր Հեղինէն սովորաբար զբաղւած էր Սահառունու վրայ մտածելով:

— Ախ, դոնէ նորա ընկերներից մէկն ու մէկին պատահէի, նորա մասին մանրամասն տեղեկութիւններ հարցնէի, — մտածում էր նա:

Այդպէս նստել-մտածելով բան չէր զուրս գալ: Հեղինէն պատուաւոր տանից դուրս գալ: Դեռ իրանց սանդուղների վրայ էր, որ պատահեց Ասունուն:

— Հազիւ-հազ, Ալէքսանդր Վասիլիչ, մեզ մտքներիդ գցեցիք, ինչքան ժամանակ է չէք երևում, — ուրախ-ուրախ ողջունեց նրան Հեղինէն և, իսկոյն իւր վերարկուն ու զլխարկը հանելով, հրաւիրեց նրան ընդունարանը:

Նորա բոլոր շարժումներներից պարզ երևում էր, որ հիւանդոտ անհամբերութեամբ ուզում է ինչ-որ մի բան իմանալ. նա իսկոյն հարցրեց:

— Լսել եմ, որ Գէօրգի Ալէքսանդրովիչը այս օրերս գնում է արտասահման, ճիշտ է:

— Այո. նա վաղուց անհամբերութեամբ սպասում է այն օրին, երբ կը կարողանայ ձանապարհ ընկնել դէպի արտասահման:

— Ես այդ վաղուց գիտեմ, բայց չէի կարծում, թէ նա այդպէս շուտով կը կարողանայ պատրաստութիւններ տեսնել ձանապարհ ընկնելու:

Նրեկոն աննկատելի կերպով անցաւ. — ամբողջ ժամանակը նրանք խօսում էին Սահառունու մասին: Հեղինէն հասկանում էր, որ իւր ու Սահառունու յարաբերութիւնները մասամբ յայտնի են Ասունուն և այդ պատճառով շատ էլ չէր քաշւում նրան Սահառունու մասին հարց ու փորձ անելուց:

Ասունու գնալուց յետոյ Հեղինէն վհատութեան մէջ ընկաւ: Թէև Սահառունին չէր գալիս նրանց մօտ, բայց Հեղինէն գոնէ գիտէր, որ նա իրանից հեռու չի, — այդ էլ բաւական էր նորա համար: Վերջապէս ելեւ նա Թ-սումը մնար, նրանք կարող էին թէև ուշուշ, բայց էլի պատահել, տեսնուել, խօսել: Իսկ ամբողջ, — նա գնում է և Հեղինէն պէտք է այդ միտիթարութիւնիցն էլ զրկւի:

— Յանկարծ չը վերկենայ ու առանց ինձ հետ մնաս-բարեւ անե-

լու գնաց: Նրանից այդպէս բան կարելի է տպասել,—մտածեց Հեղինէն:

Այդ միտքը այն աստիճան տանջւում էր խեղճին, որ նա միւս օրը ճաշից յետոյ գնաց Սահառունու մօտ:

Նրբ որ Հեղինէն ներս մտաւ, Սահառունու դէմքը այնպէս փայլեց երջանկութեան արտայայտութեամբ, կարծես արեգակի ձառագայթ էր, որ ներս թափանցեց և լուսաւորեց նորա սենեակի մնայլը:

Հեղինէն դէն դեցեց երեսից հաստ քօղը (վուալ) և վազեց դէպի Սահառունին, որ նստած էր բազկաթոռի վերայ: Երկուսի կրծքիցն էլ դուրս թռաւ ուրախութեան ճիւղ:

—Հեղինէ, դո՞ւ ես,—բացականչեց Սահառունին՝ չը հաւատալով իւր աչքերին: Ինչպէս պատահեց, որ եկար այստեղ:

—Ասուած գիտէ, Քէորգ, թէ որքան պահեցի ինձ, որքան զսպեցի, բայց լսեցի որ շուտով գնալու ես, էլ չը կարողացայ դիմանալ, եկայ քեզ հետ մնաս բարեւ անելու... գուցէ ընդ միշտ...

Հեղինէի ձայնը դողաց:

—Ենորհակալ եմ, հրեշտակս, դու ինձ բախտաւորացրիր զալովդ,—յուզւած արտասանեց Սահառունին, համբոյրներ դրօշմելով նորա ձեռներին: Քո ներկայութեամբ ես կարծես վերածնեցի, բոլորովին ուրիշ մարդ դարձայ:

Հեղինէն պատմեց նրան իւր սրտի դարդերը:

—Խմացիր, Քէորգ, որ եթէ ես ստիպւած լինեմ մարդուս հետ միասին ապրել, հաշտ կեանք վարել, այդ միայն արտաքուստ կը լինի, իսկ ներքուստ մեր ընտանիքում մշտական կռիւ կը լինի, որից ես չաղթող դուրս կը գամ եթէ որ այդ կռիւը բոլորովին չը մաշի իմ կեանքս: Հաշտութիւն մեր մէջ երբէք չի կարող կայանալ:

— Ինչու ես աշխատում ինձ հաւատացնել, Հեղինէ, ես քեզ չեմ ճանաչում ի՞նչ է,—ոգևորւած ասաց Սահառունին և բռնեց նորա ձեռքը:

Հեղինէն զլուխը դրեց նորա կրծքին: Այդ բոպէն նրանց մուռնալ ուեց այն բոլոր տանջանքները, որ նրանք քաշել էին իրանց երկարատև անջատման ժամանակ:

Միջոնցքից ինչ-որ ոսնածայն լսեց: Երկուսն էլ ցնցւեցին:

—Աւրիմն ե՞րբ ես գնում, Քէորգ,—երկար լուսթիւնից յետոյ ազատ շունչ քաշելով հարցրեց Հեղինէն:

—Մի շաբաթից յետոյ, հոգիս:

—Ախ, Ասուած, ինչ պէտք է լինի իմ օրս, — յուսահատուած բացականչեց Հեղինէն:

Սահառունին սկսեց մխիթարել նրան:

Նրանք, որ մինչև այդ ժամանակ ուրախ և երջանիկ էին, այժմ տխուր նայում էին իրար:

—Ախ, Գէորգ, ինչ կը լինէր, որ ես էլ կարողանայի քեզ հետ գնալ արտասահման և այնտեղ մասնակցել աշխատանքներու: Քեզ հետ որ լինէի, մէջս նոր-նոր ոյժեր կը ծաղէին, իսկ այժմ... Ո՞ւր և ի՞նչ օգուտ կայ իմ գոյութիւնիցս: Զէ, էէ, աւելի լաւ է մարդ չ'ապրի քան բուսական կեանք վարի ու օր օրի յետևից քաշ տայ իւր խղճալի գոյութիւնը:

Սահառունին ոչինչ չը կարողացաւ պատասխանել, բայց Հեղինէի վրայ այնպիսի հայեացք գցեց, որ թէ զղջումն թէ բուռն զգացմունք և թէ ցաւակցութիւն էր արտայայտում. այդ հայեացքը կարծես ասում էր, — սրտիցս արիւն է կաթում, հոգիս տանջւում է:

Խորին լռութիւնը ընդհատեց պատի ժամացոյցը վեց անգամ խփելով:

— Օհո, արդէն ժամի վեցն է, — անհանգստութեամբ նկատեց Սահառունին:

— Ինչու վախեցա՞ր, հօ մարդու չե՞ս սպասում:

— Այո, սիրելիս, ինձ մօտ պէտք է երկու հոգի գան, որոնք խոստացել էին ժամի հինգ ու կէսին ինձ մօտ լինել:

— Որ այդպէս է, մնաս բարև:

— Մնաս բարև, հոգիս, որքան կարող ես սիրտդ ուրախ ու հանգիստ պահիր: Ել ինձ մօտ չը գաս. դու չես ճանաչում մեր Թ-սեցոյց, չես իմանում թէ ինչ զրպարտութիւններ կ'սկսեն տարածել քո մասին: Ես ինքս կը գամ քեզ մօտ մնաս բարև անելու:

Սենեակից դուրս գալու ժամանակը միայն նկատեց Հեղինէն, թէ որքան տանջանք պատճառեց ինքը Սահառունուն իւր այցելութեամբ: Նորա աչքերը արտասուակալեցին, բայց նա իրան պահեց և սանդուխներից վազէվազ իջնելով կռք բռնեց ու գնաց տուն:

Իրանց տան դռան առաջ նա պատահեց Ասունուն:

— Հէնց նոր ձեզ մօտ էի, տիկին Հեղինէ: Ինձ յանձնարարած

է ձեզ խնդրել, որ վաղը գնաք Միհրանովենց տունը, նրանք երեկոյթ ունենն։

—Ինչո՞ւ որ,— զարմացաւ Հեղինէն։— Դուք գիտէք, որ ես համարեա ոչ ոքի մօտ չեմ գնում։

— Դուք պէտք է գնաք նրան խնդրելու, որ մեր ուսումնարանի օգտին ներկայացում կամ նւագահանդէս սարքի։ Դուք էք հիմնել ուսումնարանը, տիկին Հեղինէ, դուք էլ պէտք է աշխատէք պահպանել։

— Բայց յաջողութիւն կ'ունենամ։

— Օ, գրա մասին միամիտ կացէք, ես երաշխաւոր եմ, որ դուք մերժումն չէք ստանալ։ Ելիզաւետա Բօգդանովնան Նադեալի ծննդի օրը չի մերժիլ՝ ինչ էլ խնդրելու լինէք։

Ասունին, որ աշխատում էր հիւր ուղարկել Հեղինէին գլխաւորապէս այն ցանկութեամբ, որ նրա սիրտը մի քիչ բացւի, այնպէս խնդրում, թախանձում էր առաջ բերելով ուսումնարանի դրութիւնը և ապացուցանելով, որ Ելիզաւետա Բօգդանովնան կը կատարի նրա խնդիրքը, որ Հեղինէն ստիպւած եղաւ զիջել և հաճախութիւն տալ։

Ասունուն գնալուց յետոյ Հեղինէն մտաւ իւր սենեակը և տեսաւ իւր գրասեղանի վրայ մի նամակ իւր մօրաքրոջ որդի Վրթանէսեանից։ Նիկողայոսի նամակները, որոնք լիքն էին լինում համարձակ, ազնիւ և գործնական կեանքի աղաւաղիչ ազդեցութեանը զեռ չ'ենթարկւած հայեացքներով միշտ ոգևորիչ ազդեցութիւն էին ունենում Հեղինէի վրայ։

Չը նայելով որ Ամիրանովը ամեն կերպ աշխատում էր ծածկել օտարներից իւր ընտանիքում ծագած երկպառակութիւնը, բայց էլի քաղաքում հազար ու մի ասէկօսէներ էին պտտում նորա ու իւր կնոջ յարաբերութիւնների մասին։

Եփեմիան ինչքան աշխատում էր իրան զսպել եղբօր ընտանեկան գաղտնիքը լոյս չը զցելու համար, չէր լինում։— Նա չէր կարողանում յաղթել իրան, չէր կարողանում պահել իւր լիզուն, որ կարծես բամբասելու համար էր տրւած նրան, և նա իբրեւ սաստիկ գաղտ-

նիք յայտնեց իւր ընկերուհիներինց երկու — երեքին իւր եղբօր ընտանիքում ծագած երկպառակութիւնը:

—Այդ էլ ձեր գովական Ելէնա Պաւլովնան, որին երկինք էիք հասցնում, — դարձաւ Միհրանովան իւր երեկոյթի ժամանակ իրան շրջապատող մի խումբ երիտասարդներին:

Մի քանիսը շողոքորթութեամբ հաստատեցին գեներալուհու նկատողութիւնը, իսկ մի քանիսը սկսեցին տաք կերպով պաշտպանել Ամիրանովային:

Այդ ժամանակ Ելիզաւետա Բօգդանովնայի ուշադրութիւնը իւր վրայ գրաւեց Նադեան, որ մտաւ սենեակը տխուր ու թթւած դէմքով:

—Ինչ է պատահել քեզ, հոգիս, ինչու ես այդպէս տխրել, — անհանգստացած հարցրեց նա՝ մօտենալով աղջկանը և բռնելով նորա ծնօտից:

—Թողէք ինձ, անհամբերութեամբ մերժեց մօր փաղաքշանքը Նադեան:

Աղօլթիը այսօր չի եկել, այդ ի՞նչ է նշանակում: Ես կ'երթամ սենեակս ու էլ դուրս չեմ գալ, հիւրերին ասէք, որ յանկարծ հիւանդացայ:

Այդ խօսքերն ասելիս՝ օրիորդի գեղեցիկ սև աչքերը արտասուակալեցին:

—Ձի կարելի, սիրունս, այսօր քո ծննդի օրն է, ինչ կ'ասեն հիւրերը, արդէն քեզ տեսան:

—Ինձ ի՞նչ, թէ տեսան:

—Ինչո՞ւ ես այդպէս յուսահատում: Դեռ շուտ է, կարելի է դեռ փեսացուդ գայ, — կարեկցաբար արտասանեց Միհրանովան՝ բռնելով աղջկայ ձեռքը:

—Թողէք ինձ, խնդրեմ, — հպարտ — հպարտ պատասխանեց Նադեան: Դուք էք մեղաւորը, դուք այնպէս սիրով չէք վարւում Աղօլթի հետ ինչպէս պէտքն է:

—Ե՛ս չեմ սիրով վարւում նորա հետ, հոգիս: Հապա մի իրան հարցրու տես ինչքան փող է վերցրել ինձանից:

—Դուք էլ որ ինչի վրայ խօսէք վերջը կը գաք կը կանգնէք փողի վրայ, — բարկացած բացականչեց աղջիկը ու վազէվազ գնաց իւր սենեակը:

Ելիզաւետա Բօգդանովնան անհանգիստ սրտով նայեց նորա յետեւից: Նա իւր աղջկայ համար Տրունիցկուն շատ էլ ցանկալի փեսացու չէր համարում, բայց չէր կարողանում հակառակել Նադեալի ցանկութեանը. —նա նորա ամենասիրելի աղջիկն էր:

—Սօֆիա, — ձայն տւեց նա իւր փոքր աղջկանը, որ ներս մտաւ մի կապոց տետրակ ու գիրք ձեռքին:

Ասա տեսնենք, ո՞ւր էիր մինչև այժմ, — խստութեամբ հարցրեց նա՝ մի կողմ քաշելով նրան:

—Դուք միշտ մոռանում էք, մայրիկ, որ ամեն չորիք չաբթի օր մենք գրականական երեկոյ ունենք, — ազդու կերպով պատասխանեց Սօֆիան:

—Քանի անգամ քեզ խնդրել եմ, որ տանից դուրս գալիս ինձ իմաց տաս:

—Այդ ինչ պահանջ է, մայրիկ. ես հօ պարտական չեմ ձեզ հաշիւ տալ ամեն մի վարմունքիս համար: Երբ պէ՞տք է համոզւեք վերջապէս, որ ես ինձ թոյլ չեմ տալ ոչ մի պախարակելի քայլ անել, — արտասանեց Սօֆիան նեղացած սրտով ու այնպէս բարձրաձայն, որ բոլոր շրջապատողները կարող էին լսել:

—Լաւ, լաւ, քո լեզւի հախիցը ոչ ոք չի կարող գալ, — բարկացած ձեռը թափ տւեց մայրը, որ վաղուց սովորել էր իւր աղջիկների յանդուգն խօսքերին:

Բարեբախտաբար այդ ժամանակ բարձրատոհման հիւրեր եկան և նա, թողնելով աղջկանը, մտաւ իւր տանտիկնային ղերի մէջ:

Շատ չ'անցած, երբ որ բոլորը տաք — տաք իրար հետ խօսում էին, ներս մտան Ամիրանովները, որոնք իրանց վրայ դարձրին բոլորի ուշադրութիւնը:

—Ինչո՞ւ էք այգսկէս, հօ հիւանդ չէք: Ինչու էք այգքան բարակել: Ինչու տանից սկի դուրս չէք գալիս, — հարց հարցի յետեւից կարկուտի նման թափեցին Հեղինէի զլխին:

Նա հազիւ էր կարողանում բոլոր հարցերին պատասխանել և մտածում էր, — ինչպէս անեմ, որ շուտով դուրս պրծնեմ այստեղից:

Յանկարծ բոլորը քաշւեցին նորա մօտից:

—Ախ, Ելէնա Պաւլովնա, որքան բախտաւոր եմ՝ զգում ինձ, որ ձեզ տեսնում եմ: Վերջապէս հորիզոնի տակ այսքան ժամանակ

Թագնւած .աստղը նորից երևեց և իւր շուրջը ամեն բան լուսաւորեց, — սաստիկ սիրալիր կերպով ողջունեց նրան կոմսը:

Հեղինէն շատ սառը կերպով պատասխանեց կոմսի ողջոյնին:

Ամիրանովը, որ դիտում էր կնոջը, բարկութիւնիցը շրթունքները կրծոտում էր:

Ձէ, աւելի լաւ է տանը նստի, — մտածեց նա ու մօտենալով նրան, հարցրեց:

— Հը, հոգիս, այժմ աւելի լաւ չե՞ս զգում քեզ:

— Ձէ, ուզում եմ շուտով գնալ տուն:

Միհրանովան իւր մետաքսէ շորը խշխշացնելով անսպասելի կերպով բուսաւ նրանց մօտ:

— Ինչ էք ասում, սիրելիս, ինչ ժամանակ է տուն գնալու: Եթէ իմանալիք, թէ որքան ուրախ են բոլորը, որ դուք եկել էք: Ճիշտ չե՞մ ասում, կոմս: Մնացէք, սիրելիս, — Թախանձելով խնդրում էր նա և, բռնելով նորա երկու ձեռքիցը, նստացրեց նրան բազմոցի վրայ:

Հեղինէն այդպիսով ընկաւ կոմսի ու Ելիզաւետա Բօգդանովնայի մէջ: Ինչ արած՝ պէտք է նստէր թէև այդ հարևանութիւնը նրա սրտովը չէր:

Յարմար ըոպէ գտնելով Հեղինէն խնդրեց Միհրանովային, որ ուսումնարանի օգտին նւագահանդէս սարքի և, համաձայնութիւն ստանալով, վերկացաւ որ գնաց: Միհրանովան շատ աշխատեց նրան պահել ընթրիքի, իմանալով որ այդ մեծ զւարճութիւն կը պատճառի կոմսին, բացց նա չը համաձայնեց:

— Ես Ելէնա Պաւլովնային այն պայմանովն եմ թողնում գնաց, որ դուք, Միխայիլ Պետրովիչ, յետոյ վերադառնաք մեզ մօտ:

Հասկանում էք, — աղաչելով շնջաց նա Ամիրանովին, — դուք պէտք է պրէք երանս խաղաք կոմսի հետ. ի սէր Աստուծոյ, եկէք: Ամիրանովը խոստացաւ կատարել նորա ցանկութիւնը:

— Նւագահանդէսը ղլուխ է դալիս, Սէքսանդր Վասիլիչ, — դիմեց Հեղինէն Ասունուն՝ նորա կողքովն անցնելիս:

Ասունին հասցրեց նրան մինչև սրահը:

Որքան սխալւում էի ես, կարծելով թէ հասարակութեան միջ նորա տիրութիւնը անց կը կենաց. ընդհակառակը հասարակութիւնը

նորա վերայ ճնշող տպաւորութիւն է գործում: Որքա՛ն տխուր ու զուճատ է այսօր,—մտածում էր Ասունին, որ ամբողջ այդ երեկոյ յիտում էր նրան:

Ամիրանովների գնալուց յետոյ բոլոր անկիւններում սկսեցին քչփշալ նրանց մասին:

—Ինչ հիանալի մարդ է Միխայիլ Պետրովիչը,—բամբասանքները բաց արեց Միհրանովան:

Իսկ ինչ կնոջ ձեռք է ընկել, Աստուած թշնամու չը պատահեցնի:

—Ես հէնց սկզբիցը այդ կնոջը չը կարողացայ սիրել:

—Բայց ինչ պատճառն մարդ է Ամիրանովը:

—Նէ արի ու մի տրաքւիր. այդպէս շնորհիւ մարդու հետ այնպէս է վարւում, այնպէս է քրքրւում՝ կարծես թագաւորի աղջիկ լինի:

Ամենքի ուշադրութիւնը գրաւեց Տրունիցկին, որ այդ բոլորին մտաւ դաշիձը: Նա Ռ-սի բոլոր սալօններում թագաւորելու սովոր մարդու համարձակութեամբ մօտեցաւ Հեղինէի մասին բամբասանքներ անելով՝ զբաղւած կանանց խմբին:

—Ճիշտ է, ճիշտ է, նորա փէշերին ծունր դնել չի կարելի. ես երէկ մի հետաքրքրական բան իմացայ,—խորհրդաւոր կերպով արտասանեց նա՝ ձեռքումը պտտացնելով շապօ-կլաքը:

—Ինչ էք իմացել, պատմեցէք մենք էլ իմանանք,—թախանձում էր Միհրանովան, որ ամբողջապէս լսողութիւն էր դարձել:

—Նաո շնորհակալ եմ, պարոն, որ բոլոր հիւրերից յետոյ էք գալիս,—յանդիմանօրէն ողջունեց Տրունիցկուն Նադեան՝ վազէվազ մօտենալով նրան:

Մինչև այդ ժամանակ նա սենեակից դուրս չէր եկել:

Տրունիցկին ներողութիւն խնդրեց, յայտնելով որ ուշացել էր, որովհետև պէտք է ճանապարհ զցէր իւր ընկերներին մէկին:

—Նէ, Ադուլֆ Անդրէիչ, սկսէք, մենք լսում ենք:

—Համբերութիւն ունեցէք, Ելիզաւետա Բոգդանովնա: Ես երէկ երեկոյ պատահմամբ հանդիպեցի տիկին Ամիրանովային մի հիւրանոցի միջանցքում: Չը նայելով որ նա երեսը ծածկել էր հաստ քողով, բայց նորա դէմքի ղեղեցիկ ձուածն շրջագիծը և թաւիչա-

նման սև աչքերը չէին կարող չը գրաւել ինձ նման կանացի գեղեցկութեան նուրբ գնահատողի ուշադրութիւնը:

—Լաւ, գիտեմք, շատ էլ մի գովէք նորա գեղեցկութիւնը, — ընդհատեց Տրունիցկու խօսքը՝ նազեան՝ սաստիկ նեղացած: Մի մօտիկից տեսնէիք նրան, — այնպէս նւազ ու գունատ է կարծես գերեզմանիցը վեր քաշած լինի:

—Ե՛հ, լաւ, բանը դրանումը չի, — անհամբերութեամբ լռեցրին նրան հասակաւոր կանայք, որոնք հետաքրքրութիւնից քիչ էր մնում հոգիները տալին:

—Խորհրդաւոր տիկինը, — շարունակեց Տրունիցկին, — չորս կողմը ուշադրութեամբ նայելուց յետոյ, որ չը լինի թէ ծանօթներից մէկին պատահի, համարեա վազէվազ ցած իջաւ սանդուղներից: Ինձ այդ բանը շատ հետաքրքրեց և ես իսկոյն իմացայ, թէ բանն ինչումն է: Ինձ ցոյց տւեցին այն սենեակը, որտեղից դուրս էր եկել այդ խորհրդաւոր տիկինը: Մի քիչ յետոյ ի՞նչ եմ տեսնում, — այդ սենեակի պատուհանից դուրս է նայում մի գունատ, ջղային դէմք. նայում եմ, ի՞նչ էք կարծում՝ ո՞վ է, — պարոն Սահառունին է, հա՛, հա՛, հա՛:

Այ ձեզ հանելուկ, քաջ էք վճռեցէք:

Ել բացականչութիւններ էր որ ամեն կողմից լսում էին, մեկնութիւններ էր որ ամեն մարդ տալիս էր:

Իայց շատ չ'անցած Ամիրանովը վերադարձաւ: Առժամանակ այդ ասէկոսէներին վերջ տրւեց:

Ընթրիքից յետոյ, երբ կանայք դուրս եկան սեղանատնից, Տրունիցկին տեսնելով որ իւր ամուրի ընկերներից մի քանիսը նստած մի սեղանի շուրջը կոնծաբանութիւնը շարունակում են, ինքն էլ միացաւ նրանց խմբին:

Ամիրանովը տարաւ ճանապարհ գցեց կոմսին ու վերադառնալով նստեց այդ խմբից մի քիչ հեռու:

—Ափսոս, պարոններ, որ ես այդպիսի սխալ գաղափար էի կազմել Ելէնա Պաւլովնայի մասին, — ոգևորւած սկսեց խօսել Տրունիցկին, որի գլուխը արդէն տաքացել էր զինուց: — Եթէ ես իմանայի, թէ նա այդքան բարի է, ո՞ր չիմարը կը թողնէր, որ նա չոր-չոփ Սահառունու ձեռքն ընկնի:

— Կամաց, Աղօլֆ, աջ կողմդ նայիր, մարդը դռան կողքին նստած է, — նկատեց նրան ընկերներից մէկը:

— Միլենոյնն է, այսօր որ չ'իմանայ, էգուց կ'իմանայ, — աւելի բարձր ձայնով շարունակեց կիսահարբած Տրուհիցկին:

Եթէ նա սկսել է այցելել այն պարոնին, կը նշանակի բանը պրծած է... իսկ ի՛նչ կրակոտ կնիկ է, հատը չը կայ, ես իմ հոգիս: Ի՛նչ աչքեր են, մարդուա խորովում թողնում են, իսկ մէջքը, շրթունքները, տեղն ու տեղը կեա՛նք են, կեա՛նք:

Ամիրանովը էլ չը կարողացաւ լսել շարունակութիւնը: Արիւնը տւեց զլուխը, բուզը ուզում էր խեղդուել: Նա վեր թռաւ նստած տեղիցը ու առանց միաս բարեւ ասելու տանտիկնոջը համարեա վազ տալով դուրս եկաւ սրահը:

Թէև մինչև այդ ժամանակ էլ Ամիրանովը նախանձում էր կնոջը Սահառունու վերաբերմամբ, բայց, քանի որ այդ կասկածը միայն իւր սրտումն էր, մի կերպ դիմանում էր դարդին՝ յուսալով, որ մի ժամանակ կը կարողանայ նորից գրաւել իւր կնոջ սիրտը, բայց այժմ, երբ նա իմացաւ, որ Սահառունու ու իւր կնոջ յարաբերութիւնները ասէկօսէնների ու ծիծաղի բանատեղ են դարձել, նա այնքան կատաղեց, որ ուզում էր կտոր-կտոր անել թէ կնոջը և թէ Սահառունուն:

Տուն հասնելով Ամիրանովը ուղղակի գնաց դէպի կնոջ սենեակը և ուզում էր նրան զարթեցնել, բայց ննջարանի դուռը կողպւած էր: Նա սկսեց կառաղած ման գալ սենեակից-սենեակ և մտածել, թէ ինչ անի՝ սպասի թէ զարթեցնի կնոջը: Վերջապէս նա նորից մօտեցաւ կնոջ ննջարանի դռանը ու զուաց գերեզմանային ձայնով:

— Բաց արա է՛:

Դայեակը վախւորած վեր թռաւ ու խնդն բաց արեց դուռը:

Հեղինէն դեռ շորերը չէր հանել և բոլորովին քնած չէր, այլ պառկած նիրհում էր: Երբ որ Ամիրանովը անշարժ կանգնած իւր դաժան հայեացքը սևեռեց նորա վերայ, նա սթափւեց և մի տեսակ բնազդմամբ, սրտի վկայութեամբ հասկացաւ, որ իւր և մարդու վճռական բացատրութեան րոպէն հասել է:

Ամիրանովը նշան արեց դայեակին, որ դուրս գնայ: Պառաւը չէր ուզում գնալ, բայց Հեղինէն կրկնեց մարդու պատուէրը:

Վաչեակը դուռը չետեիցը յետ դրեց թէ չէ, Ամիրանովը բռունցքները սեղմած սկսեց յանդիմանութիւնների կարկուտ տեղալ չնոյ գլխին:

— Ինչու չես խօսում, ինչու չես արդարացնում քեզ: Առութիւնդ ինձ կատաղեցնում է: Աւրեմն ճիշտ է, որ դու գնացել ես նորա մօտ:

Հեղինէն երեսը դարձրած զէպի լուսամուտը անգիտակցաբար հայեացքը ման էր ածում խաւար տարածութեան մէջ:

— Ինձ ոչինչ չի մնում, — վերջապէս ճիգ գործ դնելով իւր վերայ արտասանեց նա, — ոչինչ չեմ կարող ասել ձեզ, որովհետեւ... այդ խօսքի վրայ նորա ձայնը դողաց... որովհետեւ... քեզ ամեն բան արդէն յայտնի է:

Նա երեսը ծածկեց ձեռներով ու ընկաւ բարձի վերայ:

Իսկ Ամիրանովը կապտեց, լեղակ կտրեց ու նախանձից աչրւող սրտով գոռաց:

— Խարդախ, լիրբ մարդ է քո Սահառունին: Նա թունաւորեց իմ կեանքը: Աէ, ես չեմ թողնիլ որ նա այդ մարտի: Նա...

— Առաջինը ես եմ յայտնել սէրս, — ընդհատեց մարդու գոռոցը Հեղինէն թոյլ ձայնով, — ինձ ինչ ուզում ես արա, բայց նրան... նրան հտնգիստ թող:

— Ի՛նչ: Ի՞նչ ուզում ես, որ ես անտարբերութեամբ վերաբերեմ կնոջս գլխահան անող զզուելի ու ստոր արարածին: Հասկացիր թէ այստեղս ինչ է կատարւում:

Նա ձեռքով ցոյց տւեց կուրծքը:

Նկատելով քո զգայուն ու թոյլ երակը, այդ անարդ Սահառունին օձի սէս մօտեցաւ քեզ: Կարծում ես, ես չէի իմանում, թէ ով էր մեր ընտանիքում տիրող մշտական երկպառակութեան պատճառը. չէ, ես գիտէի, շատ լաւ գիտէի, բայց քեզ այնքան յարգում էի, որ մինչև այժմ լռում էի:

Իսկ դուք, տիկին, ահա թէ ինչ հիանալի կերպով օգուեցիք իմ մարդավարութիւնիցս:

Տեսնենք, թէ ինչ դուրս կը գայ սրանից, — երգիծական և չար ծիծաղով ծիծաղեց Ամիրանովը և դուռը պինդ յետ դնելով դուրս գնաց սենեակից:

Հեղինէի ամբողջ մարմինը դողաց. նրան թւեց թէ պատերը,

պատուհանները և սենեակում եղած բոլոր առարկաները ձայնակցում էին այդ զարհուրելի ծիծաղին ու սպառնալով գիտում էին նորա անել գրութիւնը: Որքան աշխատում էր նա քնել, էէր լինում,— այդ շարագուշակ, զարգանդ ազդող ծիծաղը հալածում էր նրան ամբողջ գիշերը:

XVIII

Միւս առաւօտ Հեղինէն վերկացաւ անկողնից սաստիկ գլխացաւով, բայց այնու ամենայնիւ նա աւելի կազդուրւած էր զգում իրան: Գիշերւայ բացատրութիւնը շատ ծանր էր Հեղինէի համար, բայց նա ազատեց նրան երկար ժամանակ նրան ձնշող զաղտնիքից և կարծես թեթեւացրեց նորա սիրտը:

Սակայն միւս կողմից նրան սարսափեցնում էր մարդու սպառնալիքը: Ամիրանովի ու Սահառունու մէջ կարող էր ծանր ընդհարումն տեղի ունենալ և նա հիւանդոտ անհամբերութեամբ սպասում էր այդ ընդհարումի ելքին: Հեղինէի վախը աւելի ևս սաստկացաւ, երբ որ Ամիրանովը, իւր մշտական սովորութեան հակառակ, ձաշին տուն չ'եկաւ:

Բայց ահա ժամի հինգին մօտ զանգը խփեցին: Հեղինէն ցնցւեց:

— Դո՞ւ ես, Աննա, — սառը-սառը բարեւեց նա Գուրգէնեանին:

Մօտ երկու շաբաթ կը լինէր, որ Գուրգէնեանը նրանց մօտ չ'էր եղել և այդ պատճառով նա սաստիկ շարեց այդպիսի ընդունելութիւն գտնելով:

Բայց չէ, նա պատճառ ունի ինձնից տոգոհ լինելու, — մտածեց Աննան և, կոտրւելով, քթի տակին վնսփնթացրեց:

— Ներիր, Հեղինէ, ես՝ կարծեմ՝ շատ անժամանակ եմ եկել... Կարող եմ մի ուրիշ ժամանակ...

— Ինչեր ես ասում, հոգիս, մի քիչ նստիր խօսենք. դու էլ հօտար չ'ես, որ քեզնից քաշւենք: Այսօր մի քիչ տկար եմ, բայց ոչինչ, շուտով կ'անցնի, ուշադրութիւն մի դարձնիլ:

Այդ խօսքերը կցկոտւր ու շուտախօսութեամբ արտասանելով, Հեղինէն առաւ Գուրգէնեանի ձեռքից զլիարկը և նստեց սենեակի սովետամութ անկիւնում, այնպէս որ Աննան չ'էր կարող նկատել նորա դէմքի արտայայտութիւնը:

Այդ առաջին անգամն էր, որ Հեղինէն ու Աննան իրարից կարծես քաշուում էին:

Ակտում էին խօսել, բայց շուտով լռում էին. յետոյ նորից էին սկսում խօսել և մի ուրիշ բանի մասին, բայց էլի լռում էին: Խօսակցութիւնը չէր յաջողում: Վերջապէս Աննան գնաց Հեղինէի կողքին նստեց և իւր սովորական աշխուժութեամբ բռնեց նորա ձեռքը ու ասաց.

—Հեղինէ, հոգիս, ներիր, ես այնքան մեղաւոր չեմ, որքան քեզ թւում է: Ես չեմ հանգստանալ, մինչև որ չը փարատեմ քո բոլոր կասկածները իմ վերաբերմամբ:

Խօսք կը տա՞ս լսել:

—Ինչ կը սազի մի որ և է մարդու դատաւորը լինել,— դառնութեամբ մտածեց Հեղինէն և ոչինչ չ'ասաց:

Բայց օրիորդը այնպիսի թախանձագին հայեացքով նայում էր նրան, որ նա ակամայ գլխով արեց նրան ու հազիւ լսելի ձայնով արտասանեց,—ասա, հոգիս:

—Ես վաղուց ուզում էի քեզ հետ խօսել, ես շատ առաջ քեզ ամեն բան կը խոստովանէի, սկսեց Աննան յուզւած,—բայց կը հաւատա՞ս, ես ինքս լաւ չէի հասկանում, թէ ինչու՞մն է բանը:

Մի փոքր լռութիւնից յետոյ նա սկսեց մանրամասնօրէն պատմել, թէ ինչը ստիպեց նրան թողնել ուսումնարանը, յետոյ, կարմրելով և պինդ սեղմելով Հեղինէի ձեռքը, նա սկսեց խօսել այն ժամանակի մասին, երբ ինքը գրաււելով Միհրանովայի զինուորական որդովը սկսել էր Միհրանովներին ու նրանց անցկացրած կեանքին բոլորովին ուրիշ, ամեն բան վարդի գոյնով տեսնող, աչքով նայել և միւս կողմից հեռզհեռ մոռացութեան տալ այն ամենը, ինչ որ այնքան թանկ էր առաջ իւր համար:

Զր թաղցրեց Հեղինէից Աննան և այն, թէ ինչպէս նորա մօքիցը մինչև անգամ իւր համար աննկատելի կերպով զուրա էին գալիս հին ծանօթների պատկերները, թէ ինչպէս երեք ամիս տեղող անջատումից յետոյ առաջին անգամը նրանց տեսնելիս ինքը փոխանակ ուրախութիւն զգալու խղճահարութիւն էր զգացել և թէ ինչպէս այդ անախորժ զգացմունքին չենթարկուելու համար նա աշխատում էր խուսափել նրանցից, չը հանդիպել նրանց հետ:

—Ախ, Հեղինէ, ամաչելով պէտք է խոստովանւեմ, որ այդ

երեք ամիսը ինձ համար մի վաղանցուկ երազի նման անցավ: Բայց յետոյ, յետոյ աչքերս բացւեցին և ես տեսայ, թէ որքան մեծ էր իմ սխալը և որքան ստոր են նրանք համեմատելով քո, Թոմասի և ուրիշների հետ: Ախ, եթէ իմանայիր, Հեղինէ, որքան ցաւ է պատճառել սրտիս այդ մի անզգոյշ քայլս:

— Հաւատում եմ, հաւատում, սիրելիս: Ո՞վ չի սխալւում ջահէլ ժամանակը:

Մի թեթեւ, հազիւ-հազ նկատելի, բայց ոչ-բարի ծիծաղ էր խաղում Հեղինէի շրթունքների վրայ, երբ որ այդ խօսքերը խորը հոգոցի հետ դուրս թռան նորա բերանից:

Փառք տուր Աստծուն, Աննա, որ քո սխալը այնպիսի սխալ է, որ շատ հեշտութեամբ կարելի է ուղղել, — չափազանց նւազ ձայնով աւելցրեց նա:

Բայց անկեղծ ասա ինձ, դեռ սիրում ես Թոմասին թէ չէ:

— Ես նրան առաջնայ պէս սիրում ու յարգում եմ:

— Հասկա էլ ինչու ես նրանից խուսափում:

— Որովհետեւ նրան... այն աստիճանի ազնիւ... եմ համարում... որ...

— Ուրեմն դու դեռ ևս զրաււած ես այն զինւորականով:

— Ձէ, չի կարելի ասել թէ զրաււած եմ. մի ուրիշ բան եմ զգում, որ բացատրել ես ինքս էլ չեմ կարող... Ձէ, ես հաւատացած եմ, որ նրան չեմ սիրում, բայց այնպիսի բույքներ են լինում, թէև շատ հազւադէպ, երբ յիշողութեանս մէջ նորա պատկերը զարթնելով յուզում է ինձ և երբ ինձ թւում է, թէ նա բոլորովին չի կորցրել իւր նշանակութիւնը իմ աչքումս... Ես կամենում եմ, ես աշխատում եմ մոռանալ նրան... Բայց դեռ ևս չեմ կարողանում իմ մէջ բոլորովին մեռցնել այդ զգացմունքը...

Աննան դժւարանում էր իւր մտքերը պարզ արտայայտել և հետզհետէ աւելի ու աւելի կարմրում էր, բայց Հեղինէն ազատեց նրան այդ դժւար, շփոթւած դրութիւնից:

— Ես հասկանում եմ, թէ ինչ ես զգում, սիրելիս: Մինչև իսկական ու լուրջ սիրով սիրելը մարդուս սիրտը մի քանի անգամ սխալւում է, խաբւում է և շատ անգամ մարդս ինքն էլ չի կարողանում որոշել, թէ ինչ է կատարւում իւր սրտումը:

Գուրգէնեանը մի քիչ հանդստացաւ ու կատարեալ վստահութեամբ նայեց Հեղինէին:

— Հէնց այդպիսի անորոշ զգացմունքի խաղալիք լինելս է պատճառը, որ ես յանցանք եմ համարում իմ կողմից նորոգել եմ առաջնայ յարաբերութիւններս Թովմակի հետ այն բարեկամութիւնից ու հաւատից յետոյ, որով ես ու նա իրար վերաբերում էինք: Ինձ ճշտում է նորա ներկայութիւնը, ինձ թւում է թէ իմ ամեն մի շարժածքը նրան ասում է, որ ես դաւաճան եմ... մի խօսքով ես ինձ վատ եմ զգում, ես տանջւում եմ նորա ներկայութեամբ...

Միտքս լաւ չեմ կարողանում արտայայտել, չեմ իմանում հասկանում ես թէ չէ, թէ ինչ եմ ուզում ասել:

— Ես այժմ հասկանում եմ, թէ ինչու ես այդպէս վարւում, քո հայեացքդ շատ ազնիւ հայեացք է, — քաջալերեց նրան Հեղինէն:

Այ մաքուր բնասորութիւն, վախենում է ամենափոքր կեղծիքից, — անցաւ Հեղինէի մտքովը, — իսկ ես...

Անկեղծ բացատրութիւնից յետոյ Աննայի տրամադրութիւնը սկսեց քիչ-քիչ փոխւել, նորա շփոթութիւնը, անհանգստութիւնը շուտով անցաւ և նորա դէմքի վրայ երևեց առաջնայ ուրախ ու հանգիստ արտայայտութիւնը:

— Իսկ երաժշտութեան հետ ինչպէս ես, էլի պարապում ես թէ չէ: Ես վաղուց է քո ածելը չեմ լսել:

— Կ'ուզե՞ս հիմա ածեմ: Մի ժամանակ քիչ էր մնում թողնէի երաժշտութեամբ պարապելս, բայց այժմ էլի սկսել եմ պարապել ու մինչև անգամ ուզում եմ երաժշտութեան ուսուցիչ վարձել:

Այդ ասելով Աննան վաղեց դահլիճը, մի ակնթարթում բաց արեց դաշնամուրը ու սկսեց ածել՝ արագ-արագ թռչելով եղանակից-եղանակ:

Նա այնպիսի յափշտակութեամբ էր ածում, որ չը լսեց ոչ զանգահարութիւնը, ոչ էլ զանգահարութիւնից յետոյ կողքի սենեակից եկող ոտնաձայնը:

Հեղինէն յոգնածութիւն արտայայտող դէմքով թեք ընկած կուշտի վրայ մտքամոլոր ականջ էր դնում ածելուն, երբ որ ծանր ու անշնորհ քայլածքով ընդունարանը մտաւ Թովմակը զզզուած մտքերով, սովորականից աւելի գունատ դէմքով, առաջնայ

բարի ու հանգիստ արտայայտութեան տեղ ամենքի դէմ մի անորոշ տժգոհութեան արտայայտութիւն առաջած աչքերով, մի խօսքով այնպէս կերպարանքով, որ ամբողջապէս կրում էր վաղաժամանակ հիասթափութեան կնիք:

Հեղինէն մի քիչ բարձրացաւ թեք ընկած տեղիցը ու նշան արեց, որ նա նստի իւր դէմնողէմը: Այդ բոլէին նա ամեն բան կը տար, որ իւր միայնակութիւնը չը վրդովէին:

—Լսեցի որ դուք մի քիչ տկար էք, տիկին Հեղինէ, և եթէ ես այս երեկոյ Պետերբուրգ ղնալու չը լինէի ձեզ անհանգիստ չէի անիլ իմ այցելութեամբ:

—Ի՞նչ, դուք զնո՞ւմ էք. ինչո՞ւ,—անգիտակցաբար հարցնում էր Հեղինէն:

—Շատ քաշ եկայ այստեղ: Թ-սից բոլորովին զզւել եմ: Այստեղի կեանքը շատ անբովանդակ ու դատարկ կեանք է: Մենք առանց այն էլ մեծաբնութիւն մարդիկ չենք, այսպիսի մթնոլորտում էլ որ երկար ապրում ենք հօ բոլորովին փոքրոգիանում ենք:

Հեղինէի հարցին, թէ ինչ է մտադիր անելու Պետերբուրգում, Թոմաւը մանրամասն բացատրեց, թէ ինչով պէտք է պարապի ինքը այնտեղ և ասաց, որ իւր վերջնական նպատակն է բնագիտութեան պրոֆէսոր դառնալ:

Թէև Հեղինէն սաստիկ զբաղւած էր իւր սեպհական դարձումը, բայց էլի այդ լսելով ակամայ յիշեց Սննային ու խեղճն եկաւ նորա վերայ:

—Ածելուցը հասկանում էք, թէ ով է ածում, Դաւիդ Աբրա-միչ,—յանկարծ հարցրեց Հեղինէն:

—Այո,—արտասանեց կամ, աւելի ձիշտն ասենք, շրթունք-ները շարժեց Թոմաւը:

—Եւ դուք ասում էք, որ ձեզ ոչինչ չի կապում Թ-սի հետ:

—Ոչինչ,—դժարութեամբ արտասանեց նա՝ մտքամոլոր կերպով ականջ ղնելով Սննայի ածած եղանակին, որ «Մովսէս» օպե-րայիցն էր և նորա սիրած եղանակներից մէկն էր:

Թոմաւի դէմքի վրայ երևեց տանջանքի արտայայտութիւն, բայց նա շուտով իրան զսպեց և երևակայութեամբ տեղափոխեց անցեալ ժամանակները:

— Իսկ եթէ ես ձեզ ասեմ, Դաւիդ Աբրամիչ, որ ձեր այստեղից հեռանալը մեծ ցաւ կը պատճառուի ձեր ծանօթներից մի քանիսին:

Ինչպէս տեսնում եմ, իմ ասածս ձեզ զարմացնում է, — երկար լռութիւնից յետոյ աւելացրից Հեղինէն և ուշադրութեամբ նայեց նրան:

— Ներեցէք, ես լաւ չը լսեցի ձեր ասածը, — սառնութեամբ արտասանեց Թոմաւը թափ տալով կլիխ մագերը, — բայց որովհետեւ, ինչպէս ինձ թւեց, դուք աչքի առաջ ունէիք գեղեցիկ սեփու, թող տէք ինձ ասել, որ ես արդէն վաղուց սովորել եմ չը զարմանալ կանանց զգացմունքների ու վարմունքների վերայ և նրանց բոլոր խօսքերը վայրկեանում ու անհետ կերպով կորչող բան համարել:

— Լաւ, լաւ, ճանաչում ենք ձեզ: Նեղացած էք, նորա համար էք այդպէս ասում: Դուք իսկապէս աւելի բարի էք քան ցանկանում էք թւալ:

— Ինչու համար է այդ չիմար բարութիւնը, — անհամբերութեամբ պատասխանեց Թոմաւը: Այս աշխարհումս միշտ չարը յաղթում է բարուն, հետեաբար... բայց ինչու եմ աւելորդ տեղը խօսում: Թէ բարին և թէ չարը, երկուսն էլ փոփոխական են ու վաղանցուկ, իսկ հաւատալ պէտք է միայն այն բանին, որ յաւիտենական է:

Այդ բոլէին լսեցին Շօպէնի polonaise-ի հրաշալի գեղգեղանքները և բոլորովին զբաւեցին Թոմաւի ուշադրութիւնը: Նա լսել էր այդ polonaise-ը օրիորդի հետ ծանօթանալու առաջին երեկոն:

Շատ ժամանակ էր, որ Աննան այդպէս ոգևորւած սկի չէր ածել, շատ ժամանակ էր, որ նորա մատները այդքան քաղցրաձայն չէին խօսեցրել դաշնամուրը:

Հեղինէն զնաց դէպի դահլիճը Աննային կանչելու: Թոմաւը հասկացաւ նորա մտադրութիւնը:

— Թողէք ածի, ի սէր Սատուծոյ, — աղաչելով ասաց նա և Հեղինէին ղօռով նստացրեց բազմոցի վրայ:

Մի խանդարէք, ոգևորւել է: Նա երբէք այդպիսի հրաշալի նւագածութիւն չեմ լսել:

— Միթէ դուք կ'երթաք առանց մնաս բարեւ ասելու Աննային:

— Նա ինձ վաղուց է մնաս բարեւ ասել, տիկին Հեղինէ:

Երևում էր, որ այդ խօսքերն արտասանելու համար Թոմաւը ահագին ծիւղ դործ դրեց իւր վերայ:

Դաշնամուրի ձայնը կտրւեց: Թոմաւը վեր կացաւ որ գնայ, բայց այդ ժամանակ դռան մէջ երևաց Աննան: Նորա դէմքը կարմրել էր, աչքերը վառւում էին ոգևորութեան կրակով և նա այդ րոպէին չափազանց զրաւիչ էր:

—Ախ, — յանկարծ դուրս թուաւ նորա բերնից և նորա մասամբ վախւորւած, մասամբ սիրալիր հայեացքը կանգ առաւ Թոմաւի վերայ:

Մնաք բարեւ, ցանկանում եմ ձեզ բախտաւորութիւն և առողջութիւն, ես գնում եմ Պետերբուրգ, — գլխարկը վերցնելով փնփրնթացրեց Թոմաւը առամիները իրար հուպ տւած:

—Երկա՞ր ժամանակով էք գնում, — հարցրեց Աննան նկատելի կերպով այլալուելով, և նորա ձայնը զողաց:

—Կարծում եմ՝ ընդ միշտ:

Հեղինէն մի պատրւակ բռնելով սենեակից հեռացաւ:

Աննայի աչքերը արտասուակալեցին:

Թոմաւի սիրտը այն աստիճան դառնացած էր, որ նա չը նկատեց այդ արտասուքը. նա բերանը բաց արեց Աննային նախատելու համար, բայց յանդիմանութեան խօսքերը հանգան նորա շրթունքների մէջ, — նա այնքան սիրում էր օրիորդին, որ չը կարողացաւ նրան այդ հարւածը հասցնել:

—Միթէ սիրտներդ չի ցաւում, որ հեռանում էք հայրենիքից, սաստիկ նւազ ձայնով արտասանեց Աննան:

—Իմ սիրտս երբէք և ոչ մի բանի վրայ չի ցաւում, — սառնութեամբ պատասխանեց Թոմաւը: Նս դեռ ուրախ եմ, որ իմ հեռանալովս մի քանիսին ազատում եմ ինձ հետ հանդիպելու անախորժ պատահումներից:

Թոմաւը շատ էր աշխատում արտաքուստ հանգիստ երևալ, բայց այնու ամենայնիւ խորին վիշտ հնչեց նորա վերջին խօսքերում:

Նրանք երկուսն էլ կարծես այնպիսի տրամադրութեան մէջ էին, որ, եթէ նրանցից մէկն ու մէկը մտերմական մի խօսք ասէր, իսկոյն կը հաշուէին նրանք, բայց դժբախտաբար ոչ մէկի բերնիցն էլ դուրս չը թռաւ այդ մտերմական խօսքը:

Աննան մի բան սկսեց ասել, բայց ձայնը խեղդւեց, և նա, գլուխը կախ գցած, դուրս փախաւ սենեակից:

— Օ՛հ, Աստուած իմ, խելքդ չիր գլուխս, թէ ինչ անեմ այժմ, — յուսահատութեամբ շնչաց խեղճ աղջիկը, ընկնելով առաս-ջին պատահած աթոռի վրայ, և սկսեց լալ:

Խեղճը զգաց, թէ ինչ էր կորցնում ինքը Թոմակից զրկւելով. զգաց որ էլ չի գտնի Թոմակի սրտի նման սիրող ու անձնանէր սիրտ: Միայն այժմ, երբ նա զրկւում էր այդ սիրող սրտից, նա հասկացաւ, թէ որքան սաստիկ սիրում էր ինքը Թոմակին, միայն այժմ նա տեսաւ, թէ որքան թոյլ էր իւր զգացմունքը դէպի Միհրանովը և որքան սխալւում էր ինքը, որ այնքան մեծ նշանակու-թիւն էր տալիս այդ զգացմունքին:

Մի քանի անգամ փորձեց Աննան մօտենալ դռանը ու ասել Թոմակին, որ ների իրան, որ ինքը աշխարհումս ոչ ոքի աչնպէս չի սիրում ինչպէս նրան, բայց հէնց որ մօտենում էր դռանը էլ համարձակութիւնը կորչում էր: Նա վախենում էր, որ Թոմակը մերժի իւր խնդիրքն ու սէրը:

Նա համոզւեց, որ նորա աշխատանքը զուր կը լինի, որ նրան չի լսի նա, որին նա սիրում էր հոգով-սրտով և նւաղած սրտով ականջը մօտեցրեց դռանը:

— Ախ, Աստուած, գնում է: Զէ, ես չեմ թողնիլ, որ այսպէս վերջանայ, ես կը հասնեմ նորա յետեւից փողոցում:

Աննան արագ-արագ հագաւ գլխարկն ու վերաբերուն և սաստիկ յուզւած վազէվազ դուրս եկաւ սրահը:

Նա տեսաւ, որ Թոմակը շտապով իջնում է սանդուղներովը, և բերանը բաց արեց որ կանչի նրան, բայց մինչև նորա ձայն տալը Թոմակը նստեց կառքը, որ սպասում էր նրան դռանը, և սլացաւ:

— Ամեն բան կորաւ ինձ համար. իմ յիմար անվճռականու-թիւնն է մեղաւոր, — յուսահատութեամբ արտասանեց նա և, երկու ձեռքովը ծածկելով երեսը, գլուխը դէմ տեց սառը պատին:

Ոչ մի ժամանակ Աննան այնքան տոգոհ չէր եղել ինքն իրա-նից իւր վախկոտ ու թոյլ բնավորութեան համար, ինչպէս այդ երեկոյ:

Ե՛հ, շուտով տուն գնամ, բաւական է ինչքան նեղութիւն:

տեցի Հեղինէին. նա էլ, ինչպէս երևում է, իւր դարդն ունի,—
մտածեց նա:

—Ինչի համար ես դարդ անում, աչքիս լոյսը,—մտախոհում
թիւնից սթափեցրեց նրան պառաւ դայեակի խռպոտ ձայնը:

—Դո՛ւ ես, Նանի, խնդրեմ ինձ կառքով տուն. հասցրու:

—Աչքիս վրայ, աղջիկ—պարոն:

—Ես քեզ նեղութիւն չէի տալ, բայց չեմ ուզում մենակ տուն
գնամ, մօրաքոյրս կը նեղանայ, իսկ իմ յետեից դեռ ուշ մարդ
կ'ուղարկեն:

—Ինչ նեղութիւն է այդ որ, քեզ մատաղ:

—Աննային ման եմ գալիս չեմ գտնում, չէք իմանում որտեղ
է,—մի քառորդ ժամ անցած հարցնում էր ծառաներին Հեղինէն՝
սենեակից սենեակ ման գալով ու փնտռելով Աննային:

—Աղջիկ—պարոնը լացակրկնած տուն գնաց,—խորամանկ ծի-
ծաղով պատասխանեց աղախինը:

—Ո՞ւմ հետ:

—Դայեակի:

Այդ ժամանակ միայն պարզ հասկացաւ Հեղինէն, թէ ինչ կռիւ
էր կատարւում Աննայի հոգում և սկսեց աւելի լուրջ կերպով վերա-
բերւել մի կէս ժամ առաջ իւր սենեակում պատահած դէպքին:

Հեղինէն զգում էր, թէ և անորոշ կերպով, որ ինքը կարող էր
և դեռ կարող է բախտաւորեցնել Թոմասին ու Աննային: Բայց նա
այն աստիճան խորասուզւած էր իւր անել դրութեան գիտակցու-
թեան մէջ, որ ուղեղը շատ անկանոն էր բանում և ոչ մի կողմնակի
մտքով զբաղւել չէր կարողանում:

Իսկ Աննան փակւած իւր սենեակում մինչև առաւօտ անդադար
լաց էր լինում:

Շատ օրեր անցան Թոմասի գնալուց յետոյ, բայց էլի Աննան
չէր կարողանում մոռանալ իւր դարդը և նորասրտում օրէցօր սասու-
կանում էր սերը դէպի Թոմասը: Գիրք էր կարդում թէ երաժշտու-
թեամբ պարագում՝ նա միշտ աշխատում էր յարմարել Թոմասի
ճաշակին, ցանկանալով դրանով քաւել իւր յանցանքը նորա վերա-
բերմամբ:

Նա մի քանի անգամ փորձեց նամակ գրել Թոմասին, բայց

ամեն անգամ պատռում, կտոր-կտոր էր անում գրածը և միշտ կըրկնում էր, — ամեն բան կորաւ, նա ընդ միշտ հեռացաւ և մեղաւորը ես եմ իմ անվճռականութեամբ:

XIX

Դառն էր Ամիրանովի կեանքը. նրան թւում էր, թէ ամբողջ քաղաքը երեխայից բռնած մինչև ծեր ու պառաւը նորա ընտանեկան զաղտնիքովն է զբաղւած և ծիծաղատեղ է դարձրել նրան:

Ծանօթներին պատահելիս նրան թւում էր, թէ ահա որտեղ որ է խօսքը կը բերեն Հեղինէի ու Սահառունու վրայ. մէկի երեսին նայելիս, նա պարզ կարդում էր ծաղր ու շարաինդացութիւն: Մի խօսքով այդ հոգսը հալածում էր նրան ամեն քայլափոխում:

Այդ դրութիւնը խանգարում էր թէ նրա պարապմունքներին և թէ ծանօթների հետ ազատ յարաբերութիւն ունենալուն:

— Մարդուս կեանքի հանգիստ ընթացքը խանգարելուց էլ վատ բան չկայ, — սաստիկ զայրացած մտածում էր Ամիրանովը, որ միշտ շատ թանկ էր գնահատում ժամանակը:

Եւ ո՞վ է այդ բոլորի պատճառը: Ընկերս, որին ես կատարեալ վստահութեամբ էի վերաբերում: Այդպէս էլ լիբբ արարած:

Լինում էին այնպիսի րոպէներ, երբ Ամիրանովը սաստիկ ուզում էր մենակ երես առ երես մնալ իւր ախոյեանի հետ և, բացատրութիւն պահանջելուց յետոյ, կտոր-կտոր անել նրան: Եւ նա գուցէ այդպէս էլ անէր, եթէ որ հակառակորդը Սահառունին չը լինէր, այլ մի ուրիշը, բայց ինչպէս կարող էր նա այդպէս վարել Սահառունու հետ, որին նա միշտ յարգանքով էր վերաբերել և որին նա ամենեւին լիբբ մարդ չէր համարում, թէև աշխատում էր իրան համոզել, թէ նա իսկապէս լիբբ է:

Լինում էին և այնպիսի րոպէներ, երբ նա ինքն իրան էր մեղադրում ամեն բանում: Նա համոզւում էր, որ մեծ սխալ էր իւր կողմից, որ ոտով գլխով իւր պաշտօնական ասպարէզին անձնատուր լինելով ամենեւին չէր աշխատել յարմարել կնոջը և որ չափազանց թեթեամբութիւն էր Հեղինէին այն կանանցից համարելը, որոնք վաղ թէ ուշ անպատճառ ենթարկւում են իրանց մարդկանց ազդեցութեանը:

Այո, ես կարող էի թող չը տալ, որ նրանք այդքան մտերմանային, բայց չ'արեցի, — օրը մի քսան անգամ անցնում էր նորա մոտովը:

Տեսնես էլի տեսնում են իրար հետ թէ չէ, և արդեօք որ աստիճանի մօտիկ են նրանց յարաբերութիւնները, — հարցնում էր ինքն իրան Ամիրանովը տանջւելով նախանձից:

Այդպիսի տրամադրութեան մէջ անցկացրեց Ամիրանովը մօտ մի շաբաթ: Մի շաբաթ անցած նա մի տեղ պատահեց Սահառունուն և այնպիսի կատաղութիւն զգաց, որ ինքն էլ առաջ չէր կարող երևակայել:

Զէ, ես չեմ կարող տեսնել այդ մարդուն. մենք չենք կարող մնալ միւսնոյն քաղաքում, մեզնից մէկը պէտք է հեռանայ այստեղից, — ասաց նա ինքն իրան և շատ տատանւելուց յետոյ վճռեց տխարակութեամբ հասկացնել Ասունուն, որ նա խորհուրդ տայ իւր բարեկամին բոլորովին կտրել յարաբերութիւնները նորա (Ամիրանովի) ընտանիքի հետ: Լսելով Ասունուց, որ Սահառունին միւս օրը արտասահման է գնում, Ամիրանովը հանգստացաւ: Նա յոյս ուներ, որ նորա հեռանալուց յետոյ, կը կարողանայ վերականգնել իւր ընտանիքում առաջնայ խաղաղութիւնն ու հաշտութիւնը:

Սահառունին Ամիրանովի հետ ամեն անգամ պատահելիս աւելի ու աւելի էր համոզւում, որ իւր ու Հեղինէի յարաբերութիւնները նրան յայտնի են, և աւելի ու աւելի սաստիկ էր տանջւում խղճի խայթոցներով: Մի կողմից նրան տանջում էր այն միտքը, որ ինքը յանցանք է գործել իւր ընկերոջ դէմ, միւս կողմից նրան տանջում էր սէրը դէպի Հեղինէն և այն հոգսը, որ նրան պատճառում էր Հեղինէի անել զրութիւնը: Այդ բոլորը իրար էր խառնւում և այնպէս սաստիկ ալէկոծում էր նորա սիրտը հազար ու մի դառն զգացմունքներով, որ նրան երբեմն թւում էր, թէ ինքը խելքը կորցնում է:

Երբեմն նա արդարացումն էր գտնում իւր վարմունքին, երբեմն էլ յանցաւոր էր համարում իրան թէ Ամիրանովի թէ Հեղինէի դէմ և որքան աշխատում էր սառը դատողութեամբ վճռել այդ հարցը,

չէր կարողանում,—արիւնը տալիս էր գլուխը և նա կորցնում էր իւր մտքերի թելը:

Վերջապէս հասաւ Սահառունու գնալու օրը: Ինչ անէր, գնար թէ չը գնար վերջին հրաժեշտը տալու: Հեղինէին՝ Սիրտը սասաիկ ուզում էր գնալ, մի անգամ էլ տեսնել այդ սիրելի էակին, մի անգամ էլ խօսել նորա հետ, բայց նա վախենում էր պատահի Ամիրանովի հետ և շատ տատանւելուց յետոյ վերջապէս վճռեց առանց Հեղինէին մնաս բարև ասելու հեռանալ Թ-սից, թէև սիրտը ճմլւում էր ցաւից, երբ որ մտածում էր, որ էլ երկար ժամանակ, գուցէ և երբէք, չի տեսնւի նորա հետ: Նա միայն նրանով էր մխիթարւում, որ Ասունին խոստացել էր նրան խնամք տանել Հեղինէի վրայ և որքան կարելի է մանրամասն տեղեկութիւններ հաղորդել նրան Հեղինէի մասին:

Իսկ Հեղինէն, որին Ասունին յայտնել էր, թէ որ օրը պէտք է ճանապարհ ընկնէր Սահառունին, առաւօտանից նստած փողոցին նայող պատուհանի մօտ, աչքը ջուր կորած սպասում էր նրան:

Գուցէ նա չը կարողանայ դիմանալ ու գալ ինձ հետ մնաս բարև անելու կամ թէ կամաւ կառքը մեր տան՝ առաջովը քշել տայ,— մտածում էր Հեղինէն ուշադրութեամբ նայելով մօտեցող կառքերին:

Յանկարծ լուեց փոստի կառքի զանգակի ձայն և մի քիչ յետոյ երևաց եռաձի կառքը՝ Սահառունին մէջին: Հեղինէն մի ակնթարթում թռաւ, բարձրացաւ պատուհանի վրայ, բաց արեց օդանցքը (фортонка) ու ձեռք զուրս հանելով նշան արեց կառապանին, որ կանգնեցնի կառքը և այնպիսի աղաչող հայեացքով նայեց Սահառունուն, որ նա էլ չը կարողացաւ դիմանալ և զուրս թռաւ կառքից:

Հեղինէն իջաւ, փողոցի զուռը բաց արեց և բռնեց նորա երկու ձեռքը:

—Այդպէս հա՞, Գէորգ, ուզում էիր գնալ առանց ինձ հետ մնաս բարև անելու:

—Հոգիս, հաւատացիր, որ այդ շատ ծանր էր ինձ համար, բայց չիշիր, որ դու ինքդ պահանջեցիր, որ ես առանց քեզ հետ տեսնւելու գնամ:

—Ճիշտ ես ասում, ես խնդրեցի, որ մեզ մօտ չը գաս... գիտե՞ս... բայց, չէ, չի ուզիլ, չը թունաւորենք վերջին րոպէները...

հա, նա տանը չի, գնանք վերև, — տենդացին ջուղմունքով ասում էր Հեղինէն քաշ տալով նրան իւր յետևից:

— Երէկ ամբողջ երեկոյ թո պատուհանների տակը թափառում էի, որ գոնէ ատերդ տեսնէի, բայց...

— Գէորգ, — ոգևորւած ընդհատեց Հեղինէն նորա խօսքը, — մի բան եմ խնդրում քեզանից, որ միշտ հաստատ հաւատացած լինես, թէ ես քեզ սիրում եմ և ոչ մի բոպէ չը թողնես, որ կասկած զարթնի սրտումդ: Ախ, որքան բախտաւոր կարող էինք լինել մենք, բայց ինչ արած, որ մարդիկ չարահոգի են, մեզ բաժանում են իրարից, — աննկարագրելի թախծութեամբ աւելցրեց նա և մեղմութեամբ ընկաւ Սահառունու կրծքին, կարծես ամբողջ աշխարհի դեմ պաշտպանութիւն և բոլոր քաշած նեղութիւններին ու դարդերին սփոփանք էր փնտռում նորա կրծքումը:

— Սիրող պինդ պահիր, Հեղինէ, դու ես իմ միակ ուրախութիւնս, դու ես իմ կեանքս, — յափշտակւած ասաց Սահառունին ու գրկեց նրան:

Ծանր է ինձ համար քեզնից բաժանելը, բայց ես համոզւած եմ, որ քո սէրը ինձ սիրտ ու ոյժ կը տայ ամեն մի ազնիւ գործի համար. քո սէրդ կը լինի իմ փառքը, իմ ոգևորութիւնս և իմ պահապան հրեշտակս:

— Ախ, Գէորգ, քո գնալովը ես զրկւում եմ բախտաւոր կեանք վարելու վերջին յոյսից, — յուսահատութեամբ արտասանեց Հեղինէն՝ ձեռները դնելով նորա ուսերին: Ասածուն է յայտնի, թէ արդեօք մէկ էլ երբ և իցէ կ'արժանանա՞նք իրար տեսութեան:

Արտասուքը դէմ առաւ Հեղինէի բզկն և նա չը կարողացաւ խօսքը շարունակել:

Սահառունին վաղուց էր նկատել, որ Հեղինէի առողջութիւնը օրէցօր քայքայւում է: Այժմ նա կսկծահար սրտով նայեց նորա չափազանց լղարած ու զեղնած երեսին: Նա ուզում էր խեղճ կնոջը մի մխիթարական խօսք ասել, բայց իւր սիրտն էլ այնքան դառնացած էր, որ ոչինչ մխիթարական բան չէր գտնում ասելու:

Մի քանի անգամ կրկնող սաստիկ զանգահարութիւնը վերջ դրեց նրանց տեսակցութեանը:

— Կառապանը կը լինի, երևի համբերութիւնն հատել է ինձ

սպասելով, — նկատեց Սահառունին: Ժամանակ է գնալու: Դէ, մնաս բարեւ, հողիս, լաւ սահպանիր քեզ, իմացիր, որ քո յուսահատութիւնը ինձ կը սպանի, — աղաչանքով դիմեց նա Հեղինէին, ջերմ համբոյրներ դրօշմելով նորա ձեռներին:

— Գնաս բարեւ, Գէորգ, բարի ճանապարհ: Աստուած քեզ բախտաւորութիւն տայ, — բացականչեց Հեղինէն, ջղաձգաբար բռնելով նորա ձեռքը, և նրանց շրթունքները միաստունեցին հրաժեշտի համբոյրով:

Երբ որ Սահառունին նստում էր կառքը, Հեղինէն կանգնած տեղիցը իրան առաջ գցեց, կարծես ուզում էր յետևիցը գնալ...

Սաստիկ ներքին կուից ու յուզմունքից ուժասպառ եղած, նա հաղիւ-հազ քաշ գալով հասաւ իւր սենեակը և թուլացած ընկաւ բազմոցի վրայ:

(Կը շարունակւի)

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԳ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

I

Խորին գիշեր էր, և օրար աշխարհ
Ծածկւած էր անդորր, լըռիկ խաւարով,
Եւ խաղաղ քնում նիրհում էր անտառ,
Ուժասպառ անտառն, հանգիստ անվերդով:
Յանկարծ հեռու անտառային խորքերից
Լըռուլթեան մէջ բըլբուլի ձայն բարձրացաւ,
Շեշտակի ձայն, մի դալկալիկ ոգելից,
Եւ էլ իսկոյն մարեցաւ:
Նորից հընչեց... Ինչպէս վրտակ կարկաջուն,
Գեղգեղելով թափւում էին հընչիւններն,
Որ գիւթելով շարժում էին իմ հոգում
Բոլոր դողդոջ իւր լարերն:

Բայց տհա զարմանք: Նա, որի վերան
Բախտի արեւ է մըշտապէս փայլել,
Որ արթուն թէ քուն՝ ծաղկաբոյր դարնան
Վարդեայ փընջեր է միմիայն տեսել,
Այնպէս էր կարծում թէ սիրահարւած
Բըլբուլիկն է այն սիրուհու գըրկում
Մոռացած աշխարհ, անհոգ, ըզմայլւած
Երջանիկ սիրոյ երգեր նըւագում:

Բայց նա...

Նա, որի վերայ խռոված աշխարհ

Միշտ անհաշտ և խեթ աչքով է նայել,

Որ մըշտահալած, միայնակ, թըշուռ

Պայծառ, երջանիկ մի օր չէ տեսել,

Մըմընջում էր նա.

Ո՛չ, ո՛չ, երբ չէ այն, այլ կոծ, հեկեկանք.

Աքթեալ սոխակը ողբում է նորան,

Որից յետ այլ և ըս չունի գին իւր կեանք,

Որից զըրկած է այժմ յաւիտեան:

Ո՛չ. սիրոյ ձայնը չէր կարող հընչել

Այնքան տըխրագին,

Սիրոյ նըւագից չէր կարող լըցւել

Այսպէս իմ հոգին...

Մոսկւա. 1888 թ. Հոկտեմբերի 2.

II

Երևացիր, օ՛ մուսա, և իմ պաղած արիւնն
 Դու ջերմացրո՛ւ կըրկին քո երկնային շընչով.
 Այս իմ մըթին և նեղ և աղքատիկ անկիւնն
 Լուսաւորէր դարձեալ պայծառ ու ջերմ լուսով:
 Թո՛ղ ես ըզգամ դարձեալ, որ գեռ սպրում եմ ես,
 Որ էլ թըմրում չեմ ես, ինչպէս դալուկ մի բոյս
 Մի գետնափսր խըցում... օ՛ աղաչում եմ ես
 Ինձ ուղարկիր, օ՛ մուսա, հուր, եռանդ, վառ յոյս:
 Ինձ վերըստին զինիր ճըշմարտութեան խօսքով
 Եւ հընոցի միջով դու անցկացրու նորան.
 Թո՛ղ իմ բարբառն դառնայ, ինչպէս նիզակ, կորով,
 Որդարութեան համար երկաթապատ վահան:

Նորից խօս կեանքում,— և խառնեցին կրկին
 Անմեղութիւն, կեղծիք, բարի և չար տարրեր.
 Եւ կըրքերի ուժեղ, գոռ յորձանքի միջին
 Շըփոթւեցին դարձեալ հառաչ և յիշոցներ...
 Թո՛ղ գիմակներն նեխւած և փառամոլ մարդկանց
 Ես պատառեմ ձըգեմ ժողովըրդի աչքին,
 Որ նա դատէ նոցա և դըրոշմով անանց
 Անարգ սև մուր կընքէ նոցա զազիր գէմքին:
 Թո՛ղ բարձրաձայն գոչեմ— և արձագանք ինձ տան
 Երիտասարդ, ազնիւ, առողջ ու թարմ ոյժեր.
 Դատաւորի ձայնով նոքա վըճիւ կարգան,
 Եւ սարսափեն գըծուծ և փառամոլ սըրտեր...
 Դէ, շո՛ւտ արա, օ՛ մո՛ւսա, թըռիւր գէպ ինձ շուտով
 Եւ իմ հոգին վառիւր դու երկնային կայծով:

ՄԵՐ ԻՆՉՐ ԿԸ ՊԱԿՍԻ

(ԿԵԱՆՔԻ ԳԾԵՐ)

Ա. ՆԱՄԱԼԵԱՆԻ

I

Գիւղացի Սողոմոնը խելքը գլխին, բայց փոքր ինչ թարս բնութեան տէր և ժլատ մարդ էր: Նորա հարեանները նորա հետ գործ բռնելուց իսպառ ձանձրանում էին:

Ինչ մի գիւղական ընդհանուր գործ սկսելու լինէին, ամենքը գիտէին, որ Սողոմոնի հետ երկայն խօսակցութիւն պէտք է ունենային: Նորան համոզել անկարելի էր, որովհետև նա չէր ուզում համոզել: Լսում էր, լսում ասողին, համոզողին և վերջումը էլի իւր ասածը կրկնում:

Գիւղացիները էին մոռանում նորա վարմունքը, գիւղում մի առու դուրս բերելու ժամանակ: Առուն շատ հարկաւոր էր գիւղի համար, որովհետև ամառւայ կէսին արտերը չորանում էին և ջրի պակասութիւն էր դգացւում: Սողոմոնը առու դուրս բերելուն արգելքներ էր դնում, գործը ծանրացնում էր, ձեռնարկութիւնը վաղաժամ էր անւանում, վարպետներին չէր հաւանում: Նորա վարձատրութեան զինը գիւղի համար անկարելի էր համարում և վերջապէս հէնց առի կարեւորութիւնը համարեա չէր ընդունում: Իսկ երբ գիւղացիները չը լսեցին, իրանց ուղածը արեցին, առուն դուրս բերին և ջուրը սկսեց առատ հոսել դէպ արտերը, Սողոմոնը ամենից շատ ազմուկ հանողներինքը դուրս եկաւ. սկսեց զանգատուել, որ իրան

ջուր քիչ է հասնում, որ նորա հարևանները ջուր են գողանում նորանից...

Սողոմոնին սրտանց յարգում էին նորա հարևանները. բայց նորանից մի տեսակ քաշւում էին, որովհետեւ նա զիտէր ամեն զործում մի բան խառնել: Նորա հասակակիցները իրանց վրէժը նորանից առնում էին՝ ժամանակին այս ու այն դէպքում նորան չարչարելով կամ երբեմն, որչափ կարելին էր, նորա հետ հանաք ծիծաղի գցելով:

Սողոմոնը այժմ փոխւած է և բոլորովին ուրիշ մարդ է դարձել: Նորա կեանքում մի դէպք պատահեց, որ նորա վերան շատ էր ազդել: Ես իմ պատմութիւնս մի քիչ հեռուից եմ սկսում:

Սողոմոնը փոքր ինչ շինութիւն ունէր անելու. պէտք է մեծացնէր գոմը: Բոլոր հարկաւոր գործիքները ունէր, բացի թիակից: Դեռ աշնանը նա պէտք էր զգացել նոր թիակի. բայց չէր գնել, որովհետեւ թիակ ծախող Վարդանը նորա սրտին զիպել էր: Վարդանի հետ նորա վէճը միշտ եղել է ու եղել զեռ վաղ երիտասարդութիւնից և նա նորան չի զիջել երբեք: Վարդանն էլ հանաքով թէ անհանաք Սողոմոնին նեղացնում էր: Վարդանը աշնան իւր Բօրչալու գնացած ժամանակը գնում է մի յիսուն հատ թիակ և բերում իրանց գիւղը ծախելու: Գիւղացիները դալիս են, սկսում գնել. դալիս է Վարդանի մօտ և Սողոմոնը:

—Վարդան ջան, թիակ ունի՞ս:

—Ունիմ, Սողոմոն ջան, տես, աչքիդ առաջիկ է:

—Քանիսո՞վ ես տալիս:

—Քեզ երեսուն կոպէկով, ասում է Վարդանը, առանձին կերպով շեշտելով քեզի վերայ:

—Իսկ ուրիշներին քանիսո՞վ, մի տեսակ զարմանքով հարցնում է Սողոմոնը, առաջուց տեղեկութիւն ունենալով գնի մասին:

—Ուրիշներին երեսուն կոպէկ:

—Մի՞թէ միւսնոյնը չէ, հարցնում է շարած Սողոմոնը:

—Ինչպէս զիտես, պատասխանում է սառն կերպով Վարդանը:

Այդտեղ Սողոմոնը հասկանում է ծաղրը, բարկանում է սրտումը. բայց որպէս զի իւր պարտութիւնը ցոյց չը տայ, ասում է Վարդանին կիսահանաքով:

—Մակուի խանը եթէ իմանար, թէ քեզ պէս սուր խօսացող մարդ կայ, հազարներ չէր խնայիլ, քեզ իրա մօտ կը կանչէր ծառայութեան:

Սողոմոնը ի հարկէ թիակ չի գնում և հին թիակով մի կերպ անց է կացնում ձմեռը:

Այժմ նա իսկապէս պէտք էր զգում լաւ, նոր թիակի նա լսեց, որ մօտակայ գիւղումը մի գիւղացու մօտ ծախուլ թիակներ կան երեսուն հինգ կոպէկով:

Անաս չը կայ, մտածում էր Սողոմոնը, երեսուն հինգ կոպէկ կարելի է տալ, որովհետեւ գլխաւոր վաճառքի ժամանակը անցել է, բաց նորան ասող եղաւ, որ նորա հարեան համազիւղացի Գրիգորի մօտ էլ կայ մի աւելորդ թի, որ կը ծախի: Սողոմոնը գնաց Գրիգորի մօտ:

—Գրիգո՛ր, ծախու թիակ ունի՞ս:

—Ծախո՞ւ. ինչպէս ասեմ. մի թիակ ունիմ չը բանեցրած, եթէ քեզ հարկաւոր է կը ծախեմ:

—Քանիսո՞վ:

—Երկու աբասով:

—Ի՞նչ խաբար է. ա՛ռ՝ գինը վեց շահի էր. դու էլ վեց շահով առած կը լինես:

—Ես եղբայր առեաւորական չեմ, ինքս էլ աշխատանք չեմ ուղում դրանից. լացց մտածում եմ, որ եթէ յանկարծ հարկաւորս եկաւ, կարելի է ինքս քառասուն կոպէկով էլ չը գտնեմ:

—Ես քեզ համար կը ճարեմ աւելի աժան, աշխատեց հանգստացնել նորան Սողոմոնը:

—Կարո՞ղ ես, հէնց հիմի ճարիր էլի:

—Մօտիկ գիւղումը, Սերոբի ձեռքին մի տասն թիակ կայ, ծախում է երեսուն հինգով, երբ հարկաւորդ լինի կը գտնես:

—Եղբա՛յր, տեղն էլ գիտես, դեղն էլ: Որ այդպէս է իմ թիակը ծախու չէ. ես կարծում էի դու անճար ես մնացել. իմն էի քեզ գիջում:

II

Սողոմոնը վճռեց գնալ մօտակայ գիւղը Սերոբի մօտ և այնտեղից գնել թիակը: Սողոմոնի կինը իմանալով որ մարդը Սերոբի մօտ է գնում կրկնեց իւր վաղուցուայ կարիքի մասին:

—Ա մարդ, տաշտ է հարկաւոր, քանի՞ անգամ քեզ ասել եմ:

—Մի կերպ կառավարելի, փող չունիմ տաշտի համար:

—Հարկաւոր է, քեզ ասում եմ, կաթի ժամանակը գալիս է, ամենքին էլ պէտք է, փոխ առնել չեմ կարող ոչովից:

—Ես քեզ համար կը գտնեմ, ծաղրով պատասխանեց Սողոմոնը:

—Ե՛հ, մի խաչտառակիլ մեզ թէ Աստուած կը սիրես. ասաց բարկանալով կիներ և մտաւ ներսի սենեակը:

Սողոմոնը գնաց Սերոբի մօտ և գնեց թիակը երեսուն հինգ կոպէկով: Տաշտի մասին նա տատանւում էր, գնի թէ չը գնի:

—Սերոբ, ինչ ես ասում, գնեմ թէ չը գնեմ:

—Դու ինքդ գիտես, եղբայր, ես ինչ ասեմ:

—Իսկն ասած հարկաւոր է:

—Դէ գնի՛ր:

—Բայց ասում եմ մի կերպ կառավարւենք:

—Ուրեմն մի գնիլ:

—Բայց չեմ էլ ուզում ուրիշին դիմելու կարօտութիւն քաշեմ:

—Դէ մի տաշտ է, հօ մի մեծ բան է, գնի՛ր էլի, հարկաւոր բան է, աւելորդ կը լինի, քո տանը կը մնայ, հօ չի կորչում:

—Տե՛ս Սերոբ, աշնանը թիակ չը կարողացայ գնեմ—մի կերպ կառավարւեցի, ձմեռս լուսացրի:

—Եղբայր, քո բանն է, ես քո հաշիւները չեմ իմանալ, ինչպէս ուզում ես արա: Շատ էլ աղքատներիցը չեմ, որ ասեմ փող չունիս:

—Չէ, չեմ առնիլ, կորեց Սողոմոնը:

—Դէհ, մի առնիլ: Վերջապէս գիւղը մօտ է, երբ ուզենաս կարող ես գալ, կամ մարդ ուղարկել:

Սողոմոնը ձեռն առաւ թիակը, տնողեց այս ու այն կողմից, և յետոյ մի փոքր մտածմունքից յետոյ զստնալով Սերոբին ասաց.

—Թէ ասում եմ տաշտը հէնց առնե՛մ:

—Մի կերպ կառավարելի էլի. բայց ծանօթ լինելով Սողոմոնի բնութեանը Սերոբը քիչ մնաց որ ծիծաղը դաչ Սողոմոնի այդ հարցմունքից. բայց իրան զսպեց, խորամանկութեամբ պատասխանեց.

—Ի՛նչպէս կառավարւենք, կաթը փուելու ժամանակը գալիս է, հօ չենք կարող սերը պակասցնել մի տաշտի պատճառով. ինչքան իւղ կը կորչի. մի քանի տաշտի զին կը հանի:

—Դէ՛հ, իւզը քո տանն է մնում, հօ չի փախչում, իւզը մօշնակում չը լինի, պանրի բղուղի մէջ լինի, պանիրդ համեղ լինի:

—Զէ՛, չէ, Սերոբ, ասածդ հաշիւ չէ, խելքի մօտիկ բան չէ, տաշտ հարկաւոր է. ես քեզ բան եմ ասում. դեռ ով գիտէ այս տարի կաթը, Ասածու ողորմութիւնից շատ էլ լինի, ես ասում եմ, որ մի քանի տաշտ առնեմ:

—Ասաւած տաշ, որ կաթ շատ լինի. դէ տաշտերն էլ չեն փախչում առայժմ, խանութումն են. ունեմ մի քսանհինգ հատ. դեռ մտածելու ժամանակ կայ:

—Եթէ յանկարծ, փոքր ինչ երկիւղով ասաց Սողոմոնը, բոլորը վերայ թափւեն ու տաշտեր տանեն:

—Նրբ որ երեքը մնացած լինի, ես քեզ իմաց կը տամ:

—Զէ՛, եղբայր երկուսը հիմա հետս վեր կառնեմ. կը տանեմ, սա ինձ բաւական է:

—Դէ՛հ, ջոկիր Սողոմոն, քո ձեռքովդ:

Սողոմոնը երկայն դէս ու դէն արաւ, մանրամասն տնդդեց տաշտերը ընտրեց երկուսը:

—Սերո՛բ:

—Ի՞նչ, ես ուղում:

—Ի՞նչ խելքով եմ երկուսը առնում. կինս մէկի մասին էր խօսում. երեւի աւելի հարկաւոր չէր, որ չ'ասաց:

—Ես էլ ասում եմ, մէկը առ. միւսն էլ յետոյ կ'առնես:

—Ո՛ր, չ'մնա՞:

—Կաթը մածուն կը շինես. պանրի տեղ մածուն լինի, ինչ վնաս:

—Զէ՛, Սերոբ. երկուսն եմ վեր առնում. վճռեցի:

—Քո կամքն է. ինչպէս սիրտդ ուղում է:

Սերոբը յայտնի էր իբրեւ վերջնական գնով վաճառք անող. ուստի նորա հետ սակարկութիւն անող չէր լինում: Գիտէր այդ և Սողոմոնը. բայց իրան հանդստացնելու համար.

—Սերո՛բ, էլ դնի մասին չենք խօսալ. պակսացնելուն պակասացրու:

—Սողոմոն՛ն, սովորութքս դիտես. ուրեմն, էլ այդ բանի մասին չը խօսանք զուր տեղը:

Սողոմոնը տաւ թխակի և երկու տաշտի գինը և հեռացաւ:

III

Սողոմոնը ճանապարհ ընկաւ թէ չէ, սկսեց մի սաստիկ փութորիկ: Մի քանի ժամանակից յետոյ երկինքը բոլորովին ծածկեց սև ամպերով և սկսեց որոտալ:

Սողոմոնը չը նայելով, որ տաք էր հագնուել, քամու սաստկութիւնից սարսուռ զգաց: Դեռ դարնան սկիզբներն էր, նոր էր ձիւնը անհետացել երկրի վերայից, մօտակայ լեռների գլխին ձիւնի հետքերը դեռ տեսանելի էին: Օրայ տաքութիւնը խաբուսիկ էր, երբ արեւը մայր էր մտնում, կամ ծածկւում էր ամպերի ետեւ-խսկոյն ձմեռայ շնորհքը երևում էր. — իսկ այժմ արևի բացակայութեանը աւելացել էր և սուր քամին:

Նշանակի յանկարծակի փոփոխութիւնից Սողոմոնը փոքր ինչ վախեցաւ. բայց որովհետև գիւղը շատ հեռու էր, ուստի չը կորեց յոյսը գիւղ հասնելու մինչև անձրևի սկսելը: Ամպերը շարունակում էին կատաղի որոտալ. ամպերի թանձրութիւնից օրը այնպէս մթնեց, որ արդէն երեկոյ էր դարձել: Սողոմոնին այնպէս թւեց, որ արդէն անձրևի կաթիլները դիպչում էին երեսին. բայց որովհետև շատ էր տաքացել արագ գնալուց և իւր բեռնից, ուստի չէր կարողանում իսկութիւնը իմանալ:

Ահա անձրևի կաթիլները մեծացան և թւով բազմացան: Գիւղը դեռ հեռու է, պէտք է պատսպարւելու տեղ գտնել: Սողոմոնը մտածեց, որ իւր առաջին երեացող ճանապարհից դուրս փոքրիկ բլուրը կարող է յարմար տեղ յարմարւել, որովհետև բլուրի գլխին մի ժայռ էր դուրս պրծած, որի տակ փոքր ինչ գոգաձև տարածութիւն կար: Բայց անձրևը դեռ սաստիկ չէր և Սողոմոնը յոյս ունէր առանց կանդ առնելու գիւղ մտնել. ուստի ճանապարհից չը շեղւեց: Բարեբաղդաբար անձրևը հանդարտեց և Սողոմոնի յոյսը վերանորոգեց:

Կարճ միջոցից յետոյ սակայն սկսեց ձիւնի սպիտակ կորկոտ թափուել երկնքից. մի քանի վայրկեանի մէջ կորկոտը փոխարկեց սաստիկ կարկուտի, որի հատիկները քանի գնացին աւելացան: Սողոմոնը սկսեց սարսափել. ոտները ուղղեց դէպի բլուրը. բայց կարկուտը այնպէս սաստիկ սկսեց նորան թակել, որ նա բոլորովին շարւեց: Տաշտերը դրել էր գլխին և ձեռքերով պահել: Կարկուտը մեծ

ուժով թափուում էր տաշտի վերայ մի զարհուրելի գուռոցով և կոտորատում էր Սողոմոնի մատները: Մէկ մտածեց բաց թողնել տաշտերը որպէս զի ձեռքերը ազատի կարկուտի ծեծից. միւս կողմից տեսաւ, որ բլուրը արդէն մօտ էր: Ահա, ահա, քիչ է մնում, որ ձեռքերը բաց ընկնեն: Մի քանի քայլ և նա բլուրի մօտն է: Ահա և յոյսը, որին նա ապաւինել էր. լանկարծ նորա աչքին երևաց կայծակի մի մեծ հրեղէն շերտ, որ երկնքից դէպի նա ուղղւեց, կարծես անցնելով նորա խորքը: Սաստիկ սարսափից նա ձեռքերը բաց թողեց և ընկաւ ժայռի ոտքը: Մի քանի վայրկեանից յետոյ լսեց մի խլացնող պայթիւն, որից յետոյ Սողոմոնը ինքն իրան մեռած էր համարում:

Սողոմոնի ականջը խլացել էր և նա ոչինչ չէր լսում. նա ինքն իրան հարց էր տալիս. մեռած է թէ կենդանի և դեռ չէր կարողանում վճռել նորան:

— Տէր Աստուած, դու ինձ օգնիր, մոքումը արտասանեց նա: Դու ինձ ոտքի կանգնեցրու. իմ տունը մի քանդիլ. Սո՛ւրբ Քէորդ, քեզ երեք ուլ եմ խոստանում:

Սողոմոնին այնպէս թւեց, թէ աւելի ևս թուլանում է. նա աշխատեց խաշակնքել, բայց տեսաւ, որ ձեռքը չի շարժւում:

— Ո՛վ Երկնային, ինձ մի կորցնիլ, ի՛մ անձս ինձ պարզեիր, կը տամ քեզ ինչ կարող եմ. մի երինջ էլ քեզ մատաղ:

Անցան մի քանի րոպէներ. Սողոմոնի խլութիւնը սկսեց անհետանալ, նա սկսեց որոշել անձրևի ձայնը և քաջալերեց: Սկսեց աւելի համարձակ կերպով շարժել մարմնի անդամները և տեսաւ, որ կարողանում է շարժել: Նորա միտքը չէր եկել մինչև այդ ժամանակը աչքերը բացել. այժմ նա փորձեց աչքերը բանալու և ապրելու յոյսը վերադարձաւ բոլորովին: Նա վճռեց վերկենալու:

Այժմ նկատեց նա, որ նա ընկած է քարերի վերայ, որոնց ներքին մասը արդէն ջրի մէջ էր: Նայեց շուրջը—տեսաւ, որ կարկուտը դադարել է և գալիս է մանր անձրև: Տաշտերը և թիակը չէին երևում: Նա ցնցւեց. աշխատեց մտաբերել թէ երբ է նրանց ձեռքից թողել և մերձաւորապէս մտաբերեց: Ոտքի կանգնեց և տեսաւ, որ տաշտի մէկը բոլորովին, իսկ թիակի մի փոքրիկ կտորը, կայծակից փչացել են և ընկել նորանից մի տասն քայլ հեռու: Անվնաս

մնացած տաշտը ուղիղ դրած էր գետնին, կարծես մէկը կամաւ նորան դրած լինի աջնտեղ և լքցւել էր ջրով:

Սողոմոնը մօտեցաւ թիակին, որ վեր առնի, տեսաւ, որ մատները փետացած են և չեն կարողանում բռնել. սկսեց փոքր ինչ հարել մատները և հասաւ նպատակին:

Անձրեւը զադարեց: Սողոմոնը առաւ թիակը և տաշտը և ճանապարհ ընկաւ գիւղ, ուր նորա կինը անհամբեր և երկմիտ սպասում էր նորան: Սողոմոնը երկայն ոչինչ չը կարողացաւ պատմել կնոջը, շորերը փոխեց, երկու կում օղի կուլ տւեց և պառկեց քնելու:

IV

Սողոմոնը չը յայտնեց իւր կնոջը միւս տաշտի գնելը և նորանից զրկւելը: Նա ծածկեց նոյնպէս իւր խոստացած մատաղների անունը. խուլ կերպով միայն ասաց, որ նորա կեանքը վտանգի մէջ էր և նա սրտումը ուխտեց մի որ և է մատաղ անել:

Կինը կը մոռանար մատաղի մասին նորա ասածը, եթէ ամեն բան աջնուհետեւ գնար առաջւայ կարգով: Նա տեսաւ, որ Սողոմոնը ինչ որ այդ օրանից չի դրսուում, մէկ-մէկ ջերմացնում է և մի տեսակ տխրութիւն է զգում: Վերջապէս նա մի երեկոյ դիմեց Սողոմոնին:

—Ս' մարդ, ի՞նչ է եղել քեզ. մէկ հասկացող մարդու ցոյց տուր քեզ:

—Ի՞նչ հիւանդութիւն ունեմ, որ ինչ ցոյց տամ: Որ ցաւ էլ ունենայի, ում պէտք է ցոյց տայի:

—Մի ուխտ գնա, մի մատաղ արա:

Սողոմոնը ցնցւեց. նորա խկապէս բոլոր մտածմունքը մատաղն էր. բայց չէր վճռում ինքը իւր նախաձեռնութիւնով իրազործել այդ բանը: Կնոջ առաջարկութեանը նա շատ ուրախացաւ:

—Հա՛, մատաղ, հասկանում եմ. բայց մատաղ արած ժամանակը պէտք է կարգին բան անենք, որ թէ վերև ընդունելի լինի, թէ ինքներս էլ տեսնենք, որ մեզնից մի բան կտրել ենք:

Կինը զարմացաւ իւր մարդու այդպէս հեշտ համաձայնելուն վերայ և սկզբումը կարծեց թէ նա հանաք է անում, ուստի չը հաւատալով նորա ասածին նկատեց:

—Մատաղը-մատաղ է, միայն թէ նա ջերմեռանդ սրտից լինի:

—Ձէ՛, կնիկ, եթէ շատ ես ջերմեռանդ, քեզանից մի բան աւելի կտրիր. ա՛յ դա կը լինի իսկապէս մատաղ:

Կինը նայեց Սողոմոնի երեսին և տեսնելով, որ նա բոլորովին լուրջ է խօսում, շատ ուրախացաւ: Նա, շատ անգամ մտածել էր մատաղների մասին և լռել. նա մի քանի անգամ ծածուկ իւզ, բուրդ ու ցորեն էր բաժին հանել Ասուածածնի պատկերի համար և չէր յայտնել մարդուն. այժմ նա լսելով Սողոմոնի խօսքերը մի ցնծութեան մէջ էր:

—Ես ասում եմ մատաղ անենք մեր...—ասաց Սողոմոնը ու կանգնեց. ա՛յ կնիկ, որ ասեմ չե՞ս զարմանալ:

—Ինչ որ սրտումդ տուն է տւել, պէտք է տաս, որ...

—Ես էլ հէնց այդ եմ ասում է՛:

—Ասուած ընդունելի անի, մեռնենք նորա զօրութիւնին:

—Ես ասում եմ մատաղ անեմ մեր կարմիր երինջը:

—Ասրմի՞ր երինջը. հարցրեց զարմանքով կինը:

—Ինչ է, մեղքդ է՞ դալիս, խնայում ես: Ի հարկէ խնայելու է, բայց իսկական մատաղն էլ հէնց այս տեսակն է:

Կինը լռեց. նա չէր սպասում իւր մարդուց այդ տեսակ զոհ: Կարմիր երինջը սիրելի կենդանի էր, մեծամարմին, գեր, գեղեցիկ: Կինը չէր հաւատում իւր մարդուն, լաւ տեսնում էր, որ մի փոփոխութիւն է կատարւել իւր մարդու մէջ:

—Ասում եմ Համբարձումի օրը մատաղներս անենք և յետոյ մեր գիւղական գործերին դիպենք. շարունակում էր Սողոմոնը:

—Ի հարկէ, եթէ անելու ենք, էլ ինչ յետաձգենք:

—Ձէ՛, չենք յետաձգիլ:

Սողոմոնի մատաղի ձայն ընկաւ գիւղը: Ո՛չ ոք չէր սպասում Սողոմոնից այդպէս մեծ զոհի: Բայց և այնպէս մատաղը կատարւեց. մորթւեց և բաժանւեց առատ ձեռքով:

Սողոմոնը չափոսաց իւր կորուստը: Նա զըրկւեց երնջից մի տեսակ պտորաստականութեամբ և բաւականութեամբ: Նա կաշին էլ իրան չը սեփականացրեց. այլ ծախեց և գոյացած գումարը յանձնեց եկեղեցուն: Նորա հարեւանները, որ զարմացել էին Սողոմոնի

առատաձեռնութեան վերայ, աւելի ևս զարմացան, երբ լսեցին հետեւեալը:

—Սողոմոն, լաւ մատաղ տւիր, հիմի կարող ես մի քանի ժամանակ նոր մատաղի մասին հոգս չ'անել. նկատեց նորան մէկը:

—Ձէ, եղբայր, ես դեռ սրտիս բոլոր կարօտը չեմ հանել. ուխտս չեմ վերջացրել:

Սողոմոնը այդ ասաց առանց պարծենալու, այլ բոլորովին լուրջ և երկիւղած կերպով:

V

Մատաղ անելուց յետոյ անցաւ մի երեք շաբաթ: Գիւղացիները իրանց անասունները ուղարկել էին ամարանոց: Խոտը առատ էր, կաթը շատ: Սողոմոնի կինը տաշտի պակասութիւն էր զգում. նա այժմ իրան նախատում էր, թէ նա ինչու քաշւեց իւր մարդուց և չը պատուիրեց մի քանի տաշտեր գնել:

Երբ որ Սողոմոնը շաբաթ երեկոյ գիւղական գործերը վերջացնելուց յետոյ գնաց սարը կնոջ մօտ, ինքը իւր աչքով տեսաւ ամանի պակասութիւնը:

—Տաշտներս պակաս է. ի՞նչ անենք, հարցրաւ նա կնոջից խորհուրդի ձեռով:

—Ի՞նչ անենք. ես ի՞նչ գիտեմ: Նա քեզ ուզում էի ասեմ, որ Սերոբից մի քանի տաշտ առնես. բայց քաշւեցի:

—Դու չասացիր, իսկ ես մոռցեցի և Սերոբից երկու տաշտ էի գնել տուն բերելու, բայց բաղդը նորան ձեռքիցս առաւ:

—Ի՞նչ է պատահել, մինչև այժմ չեմ լսել քեզնից:

Սողոմոնը, որ մինչև այդ օրը չէր պատմել կնոջ իւր գլխին եկածը, բոլորը մի առ մի բացեց իւր կնոջը առաջ: Կինը լսում էր սարսափով: Երբ որ Սողոմոնը վերջացրեց իւր պատմութիւնը կինը յուզւած ձայնով ասաց:

—Ե՛հ, բան չկայ. մի կերպ կը կառավարւենք: Մի երկու անգամ թարմ կաթից անքաշ պանիր կը պատրաստենք. մի քանի անգամ մածուն կը մերենք, կաթի համար տեղ կը բացուի:

Լսելով երեք մատաղացու ուլերի խոստումը, կինը խնայեց իւր

սրտում և չը-կարողացաւ ոչինչ ասել իւր մարդուն, որ կարծես սպասում էր մի որ և է նկատողութեան:

— Ես համարեա այն աշխարհքից եմ յետ դարձել, աւելացրաւ Սողոմոնը կարծես իրան արդարացնելու մտքով:

— Փա՛ռք Ամենակալին. ինչ որ խոստացել ես, ճիշդ կերպով կատարիր: Մենք սուրբերի հետ վէճ մանողներ չենք. կը տանք խոստացածներս:

Մինչև աշուն՝ ժամանակ շատ կար— և Սողոմոնը յաճախ կանգ էր առնում իւր մտքում իւր խոստացած մատաղների վերայ: Նա ի հարկէ մատաղը անելու էր. յետ դառնալու, չը կատարելու մասին չէր կարող ոչ մի խօսք լինել: Բայց նա մտածում էր այն բանի վերայ թէ առհասարակ, եթէ մարդ իրանից սկսի մի բաժին հանել եկեղեցուն, աղքատին, կարօտեալին ինչ զրկանք կունենայ, «նորա ի՞նչը կը պակսի»:

Այդ մտածմունքները կամաց-կամաց համոզեցին նորան, որ ամեն մարդ կարող է մի զոհաբերութիւն անել-նայած իւր կարողութեան: Սուրբ Գէորգի տօնին նա ուխտ գնաց և հեռու տեղից եկած մի վարդապետի խրատի ներկայ եղաւ: Վարդապետը խօսում էր ոչ պատարագի ժամանակ, այլ եկեղեցու բակում, ուխտաւորների շրջանում: Նա քարոզում էր ուսումի նշանակութեան մասին. նա ցոյց է տալիս, որ ամեն տեղ կարելի է բարի գործ կատարել, եթէ մարդիկ բարի ցանկութիւն ունենան:

Սողոմոնը իւր կեանքում այդ տեսակ խրատներ շատ էր լսել. բայց երբէք նոցա նշանակութիւն չէր տւել: Այժմ, որովհետև ինքը սաստիկ զբաղւած էր այդ տեսակ մտքերով, շատ խոր ուշադրութեամբ սկսեց կէտ առ կէտ հետեւել վարդապետի խօսքերին և զարմանում էր, որ վարդապետը այդպէս նուրբ կերպով ըմբռնել է բոլոր խնդիրը:

Սուրբ Գէորգի տօնից դառնալուց յետոյ Սողոմոնի մէջ կատարած փոփոխութիւնը արդէն շատ նկատելի դարձաւ շրջապատողների համար: Սողոմոնը, որ ինքը կը փախչէր հասարակական գործերից, որպէս զի ինքը ծախսի տակ չ'ընկնի, այժմ ինքն էր սկսել ուսումնարանի, կարօտեալների խնամելու, եկեղեցու շքեղութեան մասին ակնարկներ անելու: Բայց ամենից շատ նա զարմացրաւ իւր կնոջը,

երբ սկսեց աշունքւոյ պաշարից մաս վեր առնել բարի գործերի համար:

—Ա՛ կնիկ. այս իւղից մի քանի զրկալ յետ դնենք, այս ցորենից մի երկու չափ, այս կոտւատից այս գաւաթը, այս բրդից այս կտորը... այդ կտորներից մենք չենք աղքատանալ. բայց ուրիշին կը կշտացնենք, կը հագցնենք, կը լուսաւորենք:

Կինը, որ մինչև այժմ կատարում էր իւր մարդու նոր սկսած գերը զարմացաւ և սկսեց վախենալ. Առաջ մարդն էր նորան կանգնացնում, այժմ նա փորձեց մարդուն նկատելու:

—Մենք էլ, ա մարդ, շատ հարուստներից չենք. մենք էլ կարօտեալից մի քիչ միայն բարձր ենք:

Սողոմոնը ծիծաղեց և հանգիստ կերպով ասաց.

—Ես հիմի ինձ աւելի հարուստ և բաղդաւոր եմ համարում, քան առաջ, երբ պինդ բռնած կանգնած էի բրդի վերջին թէլն էլ: Բացի դա մէկ մտածիր. ինքդ պէտք է օգնես ուրիշին, որ քո նեղութեան մէջ էլ քեզ օգնեն: Այժմ մեր տւածից մեր ի՞նչ կը պակսի, բայց նա չի կորչիլ:

Սողոմոնի ուղեղը սկսել էր շարժւել այդ ուղղութեամբ. ուստի նա զարմանալի ճարտարութեամբ սկսեց բացատրել բարեգործութեան նշանակութիւնը:

ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ

(Մի համառօտ հայեացք նորա կեանքի եւ գործունէութեան վերայ)

Ա. Մ. ՎՐՈՅՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա.

Ազամեանի բնաւորութեան զլիսաւոր դժերը.—Նորա կեանքը ծանօթ-
ների և բարեկամների շրջանում.—Իւր ընկերների հետ.—Մի քանի խօսք
մինչև այժմ տպւած նորա կենսագրութիւնների մասին:

Բ.

Պ. Ազամեան Կ. Պօլսում.—Նոր-Նախիջևանում.—Կովկասում և նորա
ունեցած ներգործութիւնը Ազամեանի խաղի նկատմամբ.—Ազամեան Ռու-
սաստանում.—Վերջին ացեղութիւն 'ի Պօլիս և Զմիւռնիա.—Հիւանդու-
թիւն և վերջին օրեր:

Գ.

Պ. Ազամեանի հաջացքը դերասնական արւեստի մասին.—Իւր
զլիսաւոր դերերը.—Ի՞նչ արեց Ազամեան հաջ բեմի համար.—Ազամեան
իր բանաստեղծ և նկարիչ.—Ի՞նչ էր սիրում Ազամեան.—Մեր մասնաւոր
կարծիքը նորա մասին ընդհանրապէս:

Ձեռք առնելով գրիչ, մենք կատարեւապէս զգում ենք գրւելու նիւթի
լրջութիւնը և թատրօնական աղագաղ տարեգրի համար սորա ունենալիք
նշանակութիւնը: Մո՞ք կրկնում ենք, կատարեւապէս կշռած ենք այն
պատասխանաւութեան ծանրութիւնը, որ սորանով առնում ենք մեր

վերաջ' ներկալի և ապագալի առաջ, և ադ պատճառով վերին աստիճանի զգուշ ենք վարեւելու մեր չափոնելիք կարծիքներում: Մենք չէինք համարձակել կարծիքներ չափոնել, եթէ խորապէս համոզւած չը լինէինք մեր ասելիքներին, և չը սխալեւելու համար մեր զգուշութեան գլխաւոր պատճառը այն է, որ Պետրոս Աղամեանին մենք դատում ենք այն մեծ հանճարները կարգին՝ որ դարեւր հազիւ կը ծնանեն:

Ա.

Աղամեանի բնաւորութեան գլխաւոր գծերը:—Նորա կեանքը ծանօթները և բարեկամները շրջանում:—Ուր ընկերները հետ:—Մի քանի խօսք մինչև այժմ տուած նորա կենսադրութիւնների մասին:

Աղամեանի բնաւորութեան գլխաւոր գծերը:—Ընթերցողը կարող է բոլորովին վստահ լինել, որ մենք զանազան դրաւոր կամ բերանացի ցուցմունքների չենք զիմում Աղամեանի բնաւորութեան գլխաւոր գծերը նկարագրելիս, ալ զրի ենք առնում այն բոլորը, որ նկատած ենք նորա մէջ, մեր հնգամեայ բարեկամութեան և ընկերութեան միջոցին: Մենք առանց նախապաշարման հետեւել ենք նորա բնաւորութեան զանազան երևոյթներին, նորան ուսումնասիրելու համար. որովհետեւ առանց ուսումնասիրելու նորա բնաւորութիւնը ոչ թէ նորա հետ մշտական ընկերակցութիւն ալ նոյն իսկ բարեկամութիւն դժւար էր անել: Այս ասում ենք նորա համար, որովհետեւ նա այնքան տարօրինակ բնաւորութեան տէր մարդ էր, որքան և արտաքու կարգի տաղանդաւոր դերասան: Աստազի բարկութեան հետ զառան հիշութիւնը, սէգ հպարտութեան հետ վերին աստիճանի խոնարհութիւնը, անհաշիւ շուալութեան հետ կոպէկի հաշիւները, օձի խորամանկութեան հետ աղանոյ միամտութիւնը, որոնց շատ երկար կարելի է թւել, այս բոլոր բնաւորական հակասութիւնները միացած էին նորանում: Նա փոփոխամիտ էր այնչափ՝ որչափ և հաստատամիտ: Շատ լաճախ կարելի էր տեսնել, որ ալսօրեայ սիրածը էգուց ատում է, ալսօրեայ համակրածին էգուց հակակրում, բայց կը լինէին և դէպքեր, որ հակառակ իւր վերայ եղած ուղղակի կամ անուղղակի ազդեցութիւնների, նորան չէր կարելի ոչ մի կերպով չեզել իւր համոզմունքից կամ մտադրութիւնից: Շատ անգամ պատահում էին դէպքեր որ նա հաւատադածին հաւատում էր անպաշտան, իսկ չը վստահածին չէր հաւատում, թէև շատ փաստեր և ապացոյցներ լինէին իւր առաջ վստահելու կամ հաւատալու: Բայց նա սիրում էր առհասարակ իւր մօտիկ շրջապատողներին հաւատալ, նա սիրում էր մարդկալին բնաւորութեան ոչ թէ լուր ալ բացարձակապէս լաւ կողմերը տեսնել, և նորա սոյս բնաւորութիւնն էր պատճառ որ

Նա շատ չաճախ գործիք էր դառնում իւր շրջապատողների ձեռքին, որոնք ի չարն էին գործադրում նորա բարեմտութիւնը: Նա չէր սիրում երբէք առանց ընկերոջ կամ բարեկամի մնալ. նա կը սիրէր ընկեր ունենալ չըրջագաւթեան, սեղանի և ճանապարհորդութեան ժամանակ. աչ զգացումը նորանում աչն աստիճան դարգացած էր որ ճանապարհորդութեան ժամանակ երբ իրան դուրեկան մէկին պատահէր նա երկար կը թախանձէր որ առժամանակ թողնէ իւր սլարապմունքը և անպատակ ճանապարհորդէ իրան հետ, որ բնականաբար ոչ ոք չանձն չէր առնէր: Այդ բնութիւնից տաղանդով և ձիրքերով օժտւած արեւստագէտը իւր պահանջներով շատ անգամ կը դառնար իբրև մի փոքրիկ մանուկ՝ որ կը պահանջէր զուլի մէջ ցոլացող լուսինը, որին աչ անկարելի պահանջից լետ կանգնեցնելու համար պէտք է անպատճառ չոլել կամ խարել:

Իւր վառ երեակալութեան պատճառաւ շատ աննշան դէպքեր կը մեծանալին, կը կաղմաւորվէին և իրան երկար մտատանջութիւնների և հոգեկան տանջանքների պատճառ կը դառնալին: Նա լուիկ կը հեծէր, կը գանգատւէր բազդից և կեանքից, իւր փառքը իրան դժբաղդութիւն կը համարէր իսկ դափնիները փուշ: Նրբ Տփլիսում 1886 թ. առաջին անգամ ներկալացրեց Օթէլլօ, ներկայացումը վերջանալուց լետոջ հիացած ամբոխը խռնւած բնմի գոների առաջ չէր գիտեր ինչպէս լալանել իւր հիացումը, աչն միջոցին Ադամեան, մի քանի րոպէ առաջաչ աչ անարկու Մաւրիտանացին իւր առանձնասենեակում ընկած սեղանի վերաչ լալիտ էր և հեծկլտում: Ի՞նչ էր պատճառը... ոչ ոք գիտէր, բայց ինքը աւարկում էր թէ երբէք հանգիստ չունէր:

Նա շատ դիւրադրգիւ էր, աչնքան շուտ բորբոքւում էր, որքան և շուտ հանգում. բայց շատ անգամ կը լինէին դէպքեր, չնչին, անկարևոր պատահմունքներ, որոնց վերաչ նա օրերով կը մտածէր և կը խոկար: Ահա աչպիտի դէպքերում նա խակոն կը լալտէր մօտիկ ծանօթներին իւր միտքը զբաղեցնող խնդիրը և սիրաը հանգարտեցնելու համար կը սպասէր նոցանից սիտիանք և միտիթարանք:

Նւալի աղջկիները մասնաւոր համակրանք էին զղում դէպի նա, որին պատասխանում էր մեծ արեւստագէտը ոչ անտարբեր:

Իսկ թէ ինչպէս էր նա վարւում իւր թշնամիների կամ իրան մետուել ջանացողների դէմ, քաղում ենք իւր մի բարեկամին 1887 թ. սեպտ. 9-ին Թէոդոսիայից գրած նամակից հետեւալը. «Ս. ին ընդհակառակն խնդրեմ որ ներէք և մինչև անգամ եթէ կարելի է օգնէք իրեն... ամեն մարդ իրաւունք ունի իւր ապրուստը ճարելու, և եթէ դորա համար գործածած միջոցները կոպիտ կամ անլալել լինեն, պէտք է նորա առած գատտիարակութիւնը աչքի առաջ ունենալով նոնպէս և կեանքին հանգամանքները՝ ներել նորան, և եթէ կարելի է չորդորելով ուղղել: Ի՞նչ արած սիրելիս, աչժմ ես առաւել հաստատւած եմ աչ սկզբունքին մէջ, ներել

քուրորին հանգամանքները քննելով, ոչ ոք չի ուզում իւր մեղքին մեղաւոր չէ. գաղղիացի մի փիլիսոփայ ասում է. «tout comprendre c'est tout pardonner», ամենայն ինչ հասկանալով ամենին ներել, մէկին չլսանելով միւսին չ'օգնել»:



Նորա կեանքը ծանօթներին և բարեկամներին չըջանում.—Նրեակապել Աղամեանից աւելի մի ընկերական մարդ, բնութեան աղքատ շնորհքներով օծուած, շատ դժւար է: Բնկերական չըջանում նորա հետ նստել, խօսել կատակել արժէր: Նա սրախօս էր, կատակաղ և սիրում էր երկար խօսել երբ նիւթն էր զեղարւեստը և սպիրիտիզմը, որին հոգւով մարմնով վերջերս անձնատուր էր եղած: Յաճախ խօսում էր նաև բանաստեղծութեան, աստեղագիտութեան և բժշկութեան մասին: Նա սիրում էր ալն անձանց որոնք ո՛ր և է գաղափար կամ ճաշակ ունէին վերաբերւածներին մասին: Ուրիշ ինչ բանի վերաջ որ խօսէին, նա ահամալից կը լսէր քաջ բոլորովին ուշադրութիւն չէր դարձնէր: Իւր ծանօթներին և բարեկամներին համար շատ հաճելի էին ալն ժամերը որը կ'անցկացնէին Աղամեանի տեսակցութիւնը վազելելով: Միաջնակութիւնը նորա համար անտանելի էր: Նա կընդունէր և սէր ցոյց կուտար ալն ամենքին որոնք կ'ալցելէին իրան, առանց խտրութեան վիճակի և կոչման: Բայց իւր տեսնւած մարդկանց բոլորին չէր կարելի անւանել բարեկամ, նա բոլորի հետ անկեղծ չէր: Մեր հնգամեալ ընկերակցութեան միջոցին ևս մի անձի տեսալ միայն որին Աղամեան կոչում էր իւր միակ բարեկամ և որին անպալման հաւատում էր: Կա Աղէքսանդր Ստեփանեանցն է որի անունն ու չիշատակ պահեց մինչև մահւան անկողնում:



Իւր ընկերներին հետ.—Աղամեան իբր դերասան, իւր կենաց օրերի մեծ ժամը, արհեստի բերմամբ անց էր կացնում իւր ընկերների հետ: Նա մի առանձին թեթևութիւն էր զգում երբ բարձր beau mond-ից իջնում էր իւր ընկերների շրջանը, որոնց մէջ նա պէտք չուներ ձևակերպութիւնների: Աղամեան սիրում էր իւր ընկերների հետ խօսել գլխաւորապէս դերասանական արհեստի մասին: Նա որ շարունակ կարդում էր թատրոնական գործի վերաբերեալ ամեն նորագոյն գրածք, կուղէր մասնակից անել իւր ընկերներին ևս իրա կարդացածին: Բայց նա ստիպւած էր շատ անգամ դառնութեամբ վիշել որ իւր դերասան ընկերների մէջ ալն աստիճան անդարդոցածներ կալին, որ ոչ թէ զեղարւեստի մասին մի ընդունւած ձևարարութիւն հասկանալու, ալ մի ընտիր նախադասութիւն

անգամ ըմբռնելու և բացատրելու շատ անգամ անկարող կը գտնէին: Թող որ շատերը գեղարուեստի և իրանց կատարած պաշտօնի նկատմամբ տարրական տեղեկութիւններին անգամ զուրկ էին: Նա չարաւնակ կը փրփրէր իւր ընկերներին ճաշակ վարդաքնոյ և գեղարուեստի վերաբերեալ գրաւորներ կարդալ:

Աղամեան իւր ընկերակից գերասանների մեծի և փոքրի հետ հաւասար սիրով և մոտրմութեամբ կը վարէր:

Շատ չաճախ երբ ո՛ր և է պատճառով նեղածնար իւր ընկերներից մէկի վերաջ, և ապա զգար իւր սխալանքը, ամենալն խոնարհութեամբ կը մօտենար, կը խոստովանէր իւր սխալած լինելը, ներումն կը խնդրէր, միտլ բանիւ սոյլ վերաւորեած սիրտը սիրաշահելու համար ոչ մի միջոց չէր խնայէր:

*
* *

Մի քանի խօսք մինչև աչժմ տպւած նորա կենսադրութիւնն երբ մասսին:—Ձը նալելով որ թէ մի քանի ռուս թերթեր, ինչպէս և հոգերէն հրատարակութիւններ, մինեղն ժամանակ «քոսն և հնգամալ բեմական գործունէութիւն Պ. Հ. Աղամեանի» տետրակը հրատարակել են հռչակաւոր արեւտագէտի կենսագրութիւնները, բայց առանց բացառութեան բոլորն էլ շատ համառօտ են և լի սխալ ու անճիշդ տեղեկութիւններով: Աղամեան շատ անփութ է եղած իւր ճիշդ ինքնակենսագրութիւնը կազմելու և եղածների պակասութիւնները ու սխալները ուղղելու: Հետեալար կարելի է բացարձակապէս ասել թէ՛ Աղամեան մինչ օրս կենսագրութիւն չունի: Աղամեանի ճշգրիտ և մանրամասն կենսագրութիւնը անհրաժեշտ է: Նա սովորական տաղանդներից չէ որ ինքն իրան ծաղկի, ուռճանալ և անլիշտակ անցնի մեր միջից: Նորա կենսագրութիւնը անհրաժեշտ է և իբր դասալիրք կարող է ծառայել նրանց՝ որոնք կամենում են բեմին ծառայել: Աղամեանի մանրամասն կենսագրութիւնը անհրաժեշտ է հալ թատրօնի ապագայ տարեգրին, որովհետև պատմագրողը հասնելով մինչև Աղամեանի բեմի վերաջ հանդէս գալը՝ ակամալ կանգ պիտի առնէ, նա երկար պիտի խօսի թատրօնական ալն հոկալ վերանորոգչի մասին, որ չեղափոխեց մինչև ալն ժամանակ հալ բեմի վերաջ տիրաջ անգղն ուղղութիւնը: Աղամեանի կենսագրութիւնը անհրաժեշտ է և ալլ պէտք է գրել իւր ծննդալալում, Ա. Պօլսում, նորա ազգականներից, ընկերներից, միտլ բանիւ նրան մօտիկ չրջապատողներից նորա կեանքի և գործունէութեան սկզբնաւորութեան վերաբերեալ բոլոր նիւթերը հաւտրելով վերաստուգելուց չետոլ՝ հրատարակութեան տալով: Ալն ժամանակ կարող ենք հաւտացած լինել որ Աղամեանի կենսագրութիւնը գրած է:

Նորա տպած կենսագրութիւնները քննադատել ամբողջապէս՝ դա մեզ չատ հեռու կը տանէր. մենք կը բաւականանանք մի երկու տեղեր միայն շինելով, որոնց անձգութիւնը ակներև է։ Ա. Աղամեան երբէք չէր կարող զինուորական ծառայութեան մէջ մտած լինել Տաճկաստանում, քանի որ զինուորական ծառայութեան զոները փակ են քրիստոնէից համար. (զինուորական բարձրագոյն սպառակողտի գերմանացի փաշաները վերջին տարիներս կոչեցան պաշտօնի բացառապէս, պահելով իրանց գերմանական հպատակութիւնը)։ Քրիստոնեաները միմիայն կարող են լինել զինուորական բժիշկ, վիրաբույժ կամ զեղադրածներ, բայց Աղամեանի կենսագրութիւնը չիշում են միմիայն զինուորական ծառայութեան մասին՝ որ սխալ է։ Բացի զրանից Աղամեանի նման երկչու, թույլ և վառ երեսակապութեան տէր մարդը զժամը թէ լանձնառու լինէր զինուորական ասպարէզում իւր ուժերը փորձելու ¹⁾։ Բ. Աղամեանի կենսագրութեան մէջ հազիւ չիշում է իւր գլխաւոր քաջակերպի և մեկենասի հանդ. Յակոբ Բէյ Պալեանի անունը։ Այդ անունը ոսկի օղակներով հիւսում է Աղամեանի ատիճանադար զարգանալու պատմութեան հետ։ Նա տեսնելով Աղամեանի խաղը, Չրաղանի ²⁾ ալդ հանձարաւոր ճարտարապետը, խմայաւ որ իւր առաջ կանգնած է եղակի տաղանդներից մինը, եղակի աչնպէս՝ ինչպէս ինքը։

Պէտք է Կ. Պօլսում բաւականի ապրած լինել զգալու համար թէ ինչ կամքի ուժ և զեղարեւոտի սէր պէտք է ունենալ որ մի քիչ, արքունի գլխաւոր ճարտարապետ, թատրոնական խմբի ղեկին կանգնելու չափ խոնարհի։ Նա ոչ միայն ալ խմբին հովանաւորեց, ալ և կառուցեց Օրթա զինդի բարեսէր ընկերութեան զեղեցիկ թատրոնը։ Նորա մասին ի միջի ալլոց պատմում են հետեւեալը։ Այդ զեղարեւոտական բարձր ճաշակի տէր անձը, աչն աստիճան զբաւեցեալ Աղամեանի զեղարեւոտական ընդունակութիւններով, որ գիշեր ցերեկ իւր մօտ էր պահում։ Աղամեան անհաշիւ միտում էր. առաւօտեան զարթնում և տեսնում էր որ աներկոյթ մի ձեռք լցրել է իւր գրպանը ոսկի գրամներով։ Յաջորդ գիշեր զարձեալ զատարկ էր գրպանը, բայց նոյն աներկոյթ ձեռքը նորից էր լցրած. և

¹⁾ Հանգուցեալ Հռչակաւոր Երզնթեան Զ. Պարսեան, Կ. Պօլսում Աղամեանի ներկայացրած «Աթէլլո»-ից յետոյ գրում էր իւր «Խիւրում»։

Աղամեան մ'ունինք, որ իւր Հաշույն համար կը մուտն և կը վերադառնալէ ամեն կիւրակէ։ Աս ալ տղաիկ տղացոյց մ'է թէ Հայերն ունին զիւրապնութիւն... Թատրարեմի վրայ, թէ չեն փախեալ մահէն և թէ նախապէս ապահովութիւն տրել իրենց թէ քանի մը վայրկեանէ յետոյ նորէն պիտի կենդանանան։ Ահա բաւ լոյսաւան զոր կը քաղեմ զիւրապնական ներկայացումներէ։

«Թատրարեմի» գրեալ Աղամեանն ալ անշուշտ մեզ նման տղաւորան մահաւանդունեղէն է որ վառեալ մ' իսկ մերթիւրէ կը վախնայ, իսկ թատրարեմի վրայ առիւծ կը դառնայ։

²⁾ Հրաշակեալ պալատ Բօսթօրի ամուսն։

ալուպէս լաջորդարար: Զ. Պալեանի իշխանական ձեռքն էր ալդ: Գ. Աղա-
մեանի բեմական ընդունակութիւններն զարդանալուն պատճառ եղան
երկու տաղանդաւոր դերասաններ որ ալն ժամանակ լալտնի էին իբր լաւ
դրամատիք դերեր կատարողներ: Դոքա են Լքչեան և Թ. Ֆասուլեան: Այս
մասին մեզ թէն պակասում են մանրամասնութիւններ, բայց ալքանք
կասենք որ ինչպէս պողովատը սրում է դանակը, ալնպէս էլ տաղանդը
ողևորում է ընդունակութիւններին (ալսինքն մի տաղանդաւոր դերասան
ողևորում է նրանց որոնք օժտւած են ընդունակութիւններով): Մենք
զիտենք որ ինչպէս Լքչեան նույնպէս և Ֆասուլեան հին դպրոցի հե-
տևող էին, նմանապէս Աղամեան նոր սկսելիս, բայց նորանց խաղը մեծ
ներդրութիւն էր ունենում նորատի դերասանի վերաջ, քանի որ նոյն
բեմի հրաշք էր տողորում: Անցաւ ժամանակ. Աղամեան աւելի մեծ կոչումն
ունէր. նա զգաց հին դպրոցի սխալները. ինքնաշխատութեամբ ուղղեց և
կազմակերպեց իւրը:

Սոքա մշակելի հարուստ նիւթեր ևն Աղամեանի կենսագրութեան,
միննոյն ժամանակ կարևոր էջեր՝ հալ թատրոնի զարգացման պատմութեան
համար:

Բացի Յակոբ Բէլ Պալեանից, արժանահաւատ անձինքներից լսած
ենք իբրև Աղամեանին նիւթապէս և բարուպէս օգնող անձն՝ Պ. Նշան
Օտեանի մասին: Թէն Աղամեանի կենսագիրները լսում են այս անձի
նկատմամբ, բայց մեծ արևատաղէալ իւր 1880 թ. Տիխիսում տպւած բա-
նաստեղծութիւնների հատորի առաջին տողերում «առ երգք իմ» վերնա-
գրով ոտանաւորի մէջ ասում է.

Զինչ արեղակն ի շողն ալդուն

Հողի ծաղկանց տալ կիսամեռ

Զեր ալ ակար նշխարներուն

Կեանք տաւ Օտեան պաշտպանս ու տէր:

Հետաքրքիր է իմանալ, Աղամեանի համար ալսչափ նշանակութիւն
ունեցող մի անձն, նորա կեանքի և գործունէութեան վերաջ ինչ ներդրու-
թութիւն է ունեցած:

Բ.

Աղամեան Կ. Պօլսում:—Նոր-Նախիջևանում:—Աղամեան Կովկասում և նորա ունե-
ցած ներդրութիւնը Աղամեանի խաղի նկատմամբ:—Աղամեան Ռուսաստանում:—
Վերջին տպելութիւն ի Կ. Պօլս և Զմիւռնիա:—Վերջին օրեր:

Աղամեան Կ. Պօլսում:—Նախախնամութիւնը Աղամեանի ծնն-
դախալը բնորէլ էր արևելքի չքեղ մալքաբաղաքը: Նորա մանկութեան և
պատանեկութեան առաջին տարիների վերաբերիալ նիւթերը թողնելով
ապաղալ կենսագրողին՝ մի քանի խօսք միայն կ'ասենք նորա նախկին

Թատրոնական տարիներու մասին: Աղամեան 16—17 տարեկան հասակում պէտք է որ բեմ դուրս եկած լինի: Իւր համակրելի դէմքով, հնչիւն, զգայուն ձայնով և մաքուր արտասանութեամբ խոկոյն իւր վերաջ ուշադրութիւն դարձնել տւեց: Տեսնում էին ալս տղայի վերաջ մի բան, որ սովորական տեսնածներից տարբեր էր, նա մի տեսակ մաղնիս ունէր իւր մէջ՝ որ հանդիտականի հալեացքը աւիամայ դէպի ինքն էր ձգում: Մի փոքր ապացոյց ասածիս: Տարիքիս բոլորովին անհամապատասխան ժամանակից սկսեցի Թատրոն լաճախել. ութ տարեկան էի միայն: Բոսֆորի ասիական ափի Ակիւտար քաղաքամասի Բաղլար-բաշիի Թատրոնը, ուր խաղում էր Վարդուկեանի փառաւոր խումբը, ուր մասնակցում էր և մեր Աղամեանը, ներկայացւում էր Էօփէն-Սիւի հուշակաւոր «Թաւիառական հրէան»: Այդ պիէսան որ իւր մէջ պարունակում է բաղմամբիւ դժար, ծանր բնաւորական դերեր, ալդ պիէսայի ներկայացումը կրկնում ենք մի ապացոյց է ալն ժամանակաւ խմբի մեծ և ընտիր ուժերից կազմած լինելուն. և թէ չեմ սխալում, խումբը կազմւած էր 35—40 զլխաւոր և երկրորդական դերասանուհի և դերասաններից: Աղամեան ալդ խմբում կատարում էր երիտասարդ-սիրահարի դերեր: Իսկ իմ տեսած «Թաւիառական հրէայ»-ում կատարում էր Գաբրիէլ միսիօնար-քահանայի դերը: Պիէսան ունէր իւր մէջ և մի շքեղ կենդանի պատկեր ուր ամբողջ զարծող անձինքը ներկայանում էին իրանց դերերի զլխաւոր տեսարաններում: Այդ կենդանի պատկերում ներկայացւում էր ի միջի ալլոց Գաբրիէլ քահանայի (կարծեմ) վալրենիներից խաչւելը: Աստաղի ամբողջ Քրիստոսի պաշտօնէի վերաջ լարձակւած ուղում է քրիստոսական մահ տալ նրան, իսկ քահանան անձնատուր եղած խաչողներին, իւր երկնագոյն աչքերը երկինք ամբարձած, կարծէք մեծ վարդապետի վերջին ներողական խօսքերն է արտաբերում լուեկայն: Այդ առաջին անգամն էր որ տեսնում էի մեծ արեւոտաղէտն. մանուկ հասակում, անկարող դատելու կամ ըմբռնելու, բալց չը գիտեմ ինչ անբնական սլաքներ, որ մահաւան պատրաստուողի աչքերից կ'արձակւէին՝ բերին զամեցին սրտումս ալդ գիշերւանից «Աղամեան» անունը: Ուրքեր էին, ինչ խաղացին մնացեալները, որոշ ոչինչ չեմ վիշում, բայց Գաբրիէլ քահանայից և «Աղամեան» անունից, Նա երկար չը մնաց ալդ խմբում: Նա առհասարակ Ա. Պօլսում մի քանի տարիներ շարունակ չէ խաղացել ալ՝ ընդհատմամբ: Շատ անգամ մի փոքրիկ տոգոհութիւն կամ մի չնչին պատճառ առիթ էր լինում որ բեմի ալդ անսգիւտ զարդը ձգէ և հեռանալ: Ի՞նչ էր և ի՞նչ կարող էր դառնալ Աղամեան՝ ալդ մասին ալն ժամանակաւ լրագրութիւնը համարեա լուում է. միայն գրում էին «գեղեցիկ խաղաց», «աղէկ դերասան է», «աղւոր ձևեր ունի» և ալն. նորա և առհասարակ Թատրոնի մասին քննադատութիւններ սորանից աւելի բան չէին գրում: Իւր ընկերակից դերասանները անշուշտ կը տեսնէին ալդ փոքրիկ մարմնոյն և մեծ զանկին մէջ մի արտաքու կարգի տաղանդ կալ թագնւած:

բաւց միթէ նախանձը կը թողատորէր նոյն աչք բանը խոստովանելու. ընկերական նախանձ՝ որ ընդունակութիւններին բնոյց հաւածող զլիաւոր տարրն է: Խմբի կառավարչին էլ ձեռնառ չէր Աղամանի գերազանց ընդունակութիւնների խոստովանութիւնը: Այն ժամանակ ստիպւած ոլտի լինէր աչք տղաչին ամենքից շատ ուժիկ տալ: Բաւց թատրոն բաժանող միջակ զարգացման տէր հասարակութիւնը Աղամանի մասին տւել էր արդէն իւր վճիռը. «Աղաման շատ աղւոր կը խաղաչ կոր»:

Աղաման խնդրանքս ցուցակադրած և ինձ լանձնած էր մեծ թէ փոքր ալն բոլոր պիւտանների և դերերի անունները՝ որոնց ներկայացրել է. բաւց դժբաղդարար մի անակնկալ յէպքի բերմամբ կորաւ աչք հետաքրքիր ցանկը, բաւց աւսբանը կարող ենք ասել թէ նա խաղացած է մեծ և փոքր 300-ից աւելի զանազան դերեր. կոմեդիաներում, դրամաներում և ողբերգութիւններում:

Այս մասում մեր խօսքը վերջացնելուց առաջ աւելորդ չենք համարիր 1867 թ. յունար 14 թիւ 106 «Փամանակ»¹⁾ թերթից հետեւալ կտորը դուրս բերել, որպէս զի ընթերցողը ըմբռնէ թէ մամուլը, հասարակութեան կարծիքի առաջնորդը ինչ հասկացողութիւն ունէր բնմի նկատմամբ:

«Առանձար Ամատունի

«Անցեալ չարաթ երեկոյ Արեւիկան թատրոնին մէջ առաջին անգամ ներկայացում տրեցաւ Առանձար Ամատունի անունով թատերգութիւն մը որ մեծարդու Յ. Սվաճեանի հեղինակութիւնն է, թատրոնը մեծ բազմութեամբ լցւած էր և ներկայացումն ալ խորին տպաւորութիւն ըրաւ. հանգիստեանց վրայ»:

«Առանձար Ամատունի Յաղկերտի ժամանակ Քաջաջ անուն իշխանի մը մտանութեամբ դերի կիշնալ պարտից ձեռք և կը բանաւարելի Յաղկերտի կիներ (°) զալն ազատել կուզէ և անոր հետ կենակցիլ. Առանձար իւր աղատարարին դէմ ապերախտ չը գտնուելու առաքինութեան հետ՝ իւր Աստուծոյն, հայրենեանցը և ընտանեացը սիրտն ալ չը զրմելու արիւթիւնը կուենեալ, հրաման կը ստանալ թաղուհիէն (°) իւր հայրենիքը զառնալու: Քաջաջ Առանձարի 8 տարեկան որդին իւր քով պահած կը սնուցանէր, Առանձարի կիներ իւր որդոյն երեսը տեսնելու համար մուրացիկ շրջելով Քաջաջի դուռը կը դեղերի. Քաջաջ կիմանալ Առանձարի կնոջ ուր ըլլալը և կ'երթալ զանի բռնարարելու, չը լաջողած կը դառնալ, բաւց վրէժխնդրութեան չար ողւով բռնաբարւած կը համբաւէ: Առանձարի որդին իւր մօրը կը ծանօթանալ, բաւց դէչ համբաւոյն համար կը մերթէ զալն: Քաջաջ ուրիշ անգամ ալ նոյն փորձը կ'ընէ և Առանձարի կնոջ գտնւած տեղը

1) Խմբագիրն էր Ս. Փափաղեանց:

կերթալ և առանձին կը գտնէ զայն. կինը մեծ ընդդիմութիւն կը ցուցնէ, որդին որ կը լրտեսէր մայրը (մօրը) վրայ կը հասնի ('): Քաջաջ կը փախչի: Մթութեան մէջ Քաջաջ կը հանդիպի Առանձարին՝ որ Պարսկաստանէն կը գառնար. Քաջաջ աղքատ Ամասունի մը ձեռնալով Առանձարի համակրութիւնը կը ստանայ: Առանձար իւր ընտանեաց վրայ սեղեկութիւն կը հարցնէ, Քաջաջ խիստ գէշ կերպով կը նկարագրէ կնոջ բարքը, մինչև անգամ իւր ութամեայ զաւակն ալ սպանւած կը ցուցնէ, Առանձար կը շփոթէ, հուզիւ հաւատալ, բայց Քաջաջ կը հաստատէ ցուրտ անտարբերութեամբ մը և կնոջ գտնւած տունը կը զեկուցանէ: Առանձար կերթալ գիշեր ատեն կը մտնէ պատուհանէն ներս, իւր սիրելի թիկնապաշն ալ հետը, որ ի միտին քանտարկւած և անոր հետ աղատուած էր, կը տեսնէ իւր կինը, կը ճանաչէ, անոր հետ ալ Երիտասարդ մը որ կը ննջեն: Առանձար սուրը կը քաշէ, մայրը կ'արթննալ, «տղաս» աղաղակելով կը բռնէ սողան: Առանձար կը շփոթի, և կը լուզւի. խուռն ժողովուրդ ուրախութեան աւետիս կը բերեն թէ Քաջաջի վրայ աշտարակ (°) մը փլչելով զինքը խորտակած տեսեր են և թէ ալդ զառն վիճակին մէջ կը միտթարւի եղեր որ նոյն միջոցին Առանձար ալ առանց գիտնալու իւր կինը և որդին պիտի սպաննէ՝ որով ինք վրէժն առած կըլլայ: Առանձար կը սթափի, խափւած ըլլալը կիմանալ և միտթարութեամբ կ'ողջագուրի իւր կինը և որդին»:

«Այս համառօտ պատմութենէս՝ որ ամեն մասերով ամբողջ չը կրնար համարուիլ, կ'երեւալ թէ թատրերգութիւնը ինչ կապակցութիւն, զարձածք (°) հետաքրքրաշարժ տեսարաններ (°) լուզմունք տուող և արգահատիչ պատկերներ ունի (°) ասոնց հետ նաև աւելցուր գեղեցիկ լեզու, իմպատալից խօսքերը, (չէ թէ անհեթեթ բացազանչութիւններ) (°) ճշմարիտ աստուածապաշտութեան, հալըհնասիրութեան և ընտանեասիրութեան վրայ զմալլելի բացատրութիւնները որոնք բոլոր հանդիսականները պո՛հ ըրին, և սաստիկ ու ստէյլ ծափահարութեամբ ընդունեցին և զնոյն ինքն հեղինակը կրկին անգամ ի տես հրաշխեցին: Այսպիսի թատրերգութիւն մը իւր տեսակին մէջ առաջին անգամ է (°) որ կերեալ ազգային հեղինակութեանց թատերաբեմին վրայ, իր լուսանք որ ուրիշ անգամ ալ կը ներկայացւի սոյն թատրերգութիւնը, և դերասաններէն ոմանք այն անգամ աւելի աղէկ սերտած կըլլան իրենց մասը»: 1867. լունվարի 14. թիւ 106. «Ժամանակ»:

Ալդ միջոցներին Ս. Փափաղեանի նման մի խմբագրից սրանից աւելի չնորհրով քննադատական լօղւած չէր կարելի սպասել: Զարմանալին այն է թէ ալդ անբովանդակ, աննպատակ և ոչինչ բնականութիւն հունեցող գրւածքին ինչ խօսքերով գովարանել են: Հովւի հասկացողութեան չափը եթէ այս լինի հասկանալի է թէ հօտինը ինչ կը լինի: Շատ բնական է որ այս տեսակի դորմելի խմբագիրներ ոչ թէ թատրօնին կամ դերասա-

նին չեն կարող ուղղութիւն տալ, ալ եղածն էլ կը փչացեն՝ անզխտակ-
յաբար դովարանելով կամ պարսաւելով: Ահա ալս տեսակ հողի վերալ էր
դարգանում մեր ապագալ զարմացման առարկան, Պետրոս Աղամեան:

Հետաքրքիր է նաև ալստեղ լիչել նոյն թւականի լիչեալ թերթի
11 մարտ 110 թւոյն մէջի լուրը. մարտի 7-ին երեքշաբթի օր Նստումի
թատրոնում ներկայացրել են Վարդանանց ողբերգութիւնը հեղ. Աէգէֆճեանի
ի ներկայութեան անթիւ բաղմութեան, նոյն հանդիսի խօսքերով «չատերը»
կը հաւատտէին թէ ալս տարի և ոչ մէկ թատրոնի մէջ և ոչ մէկ ներ-
կայացման անչափ բաղմութեան եղած է»: Յիշեալ ներկայացման ժամա-
նակ Վարդանալ որդու դերը կատարել է մեր Աղամեանը:

*
*
*

Ն ո Ր Ն ա խ ի ջ և ա ն ու մ.— Կ. Պօլսի հալ-դերասանական խումբը որ
բացի հալերէնից ալն ժամանակներ կը ներկայացնէր երբեմն նաև թուր-
քերէն (իսկ ալ մի միայն թուրքերէն) մենաշնորհ (monopol) էր Յակոբ
Վարդովեանի: Բացի նրանից ոչ ոք իրաւունք չունէր հալերէն կամ թուր-
քերէն ներկայացումներ տալու: Այդ էր պատճառը որ Կ. Պօլսում թատրոնի
ամենածաղկած ժամանակներն անգամ խումբը մի տեղ էր խաղում, որ
քաղաքի դիրքին շատ անւարմար է: Թէև դերասանները լաճախ հարստա-
հարուստ էին Վարդովեանից, բայց ստիպւած էին շատ զրկանքների համ-
բերել, որովհետև օրէնքը նրանց ձեռք ու ոտքը չղթալած էր: Եւ ալդ էր
պատճառ որ մինչև 50 հոգուց բաղկացած դերասանական խումբը, որի
մէջ կալին Ֆատուհեանի, Ռշտուռու, Նալեանի, Պէնեանի, Թրեանցի
պէս ովեր մնում էր հաւաքւած, առանց ցրւելու: Խմբին ամենքից ազա-
տասէր և անհանդարտ անդամը Թ. Ֆատուհեանն էր, որ միննոյն ժա-
մանակ խմբի գլխաւոր դրամատիք ուլմն էր: Օրէնքի չլու հպատակւողներից
չէր նաև Աղամեան: Թող որ նա երբէք չէր համաձայնում և չէր խաղում
թուրքերէն: Այս կողմից նա խմբի միակ բացառութիւնն էր: Շատ անգամ-
ներ մի փոքրիկ սլատառ՝ և ալ ևս Աղամեան չ'կար խմբում: Վարդովեանի
խմբում աւելանում էր զժգոհութիւնները: Ֆատուհեանն մռնչում էր իբրեւ
մի չղթալած աւիւն, և վերջապէս հնարքը գտաւ իւր չղթաները փչրելու:
Նա ծանօթ էր Ռուսաստանի և Կովկասի հալաբնակ կենդրոններին, և
արդէն կատարած էր իւր կնոջ հետ մի դերասանական ճանապարհորդու-
թիւն. Վարդովեանից զժգոհ դերասաններից կաղմեց իւր խումբը և ճանա-
պարհ ընկաւ դէպի Նոր-Նախիջևան իբր զուտ հալախօս քաղաք 1869-ին:
Նոյն խմբումն էր գտանւում և Աղամեան՝ առաջին սիրահար դերերի հա-
մար: Նախիջևանում Աղամեան տիրապետում էր բնմին, համակրութիւն և
զնահատութիւն դէպի երիտասարդ տաղանդը հետզհետէ աւելանում էր:
Աղամեան աղտուղ համոզւեց որ «աղէկ կը խաղալ կոր»-ից աւելի մի բան

կալ իւր մէջ. նա տեսաւ որ բացի իւր ասորած աշխարհից մի ալ աշխարհ՝ կալ և իւր տեսած հորիզոնից ուրիշ հորիզոն:

Բայց ալդ ամենը երկար չը տեսց, մի քանի ամիս և ներկայացումները վերջացան: Խումբի մի մասը վերադարձաւ Պօլլիս մի մասն էլ մնաց ադնտեղ ճանապարհածախս չ'ունենալու պատճառաւ: Ալդ ակամայ լանտարիկաձեւերի թւին էր պատկանում նաև Աղամեան: Նոյն խմբումն էր և կատակերգակ դերասան Թրեանց (Թուրեան) որ խմբի ցրեկուց չետող առժամանակ հրաժեշտ տալով բեմին ձեռք էր առել ներկարարի վրձինը՝ ասաց ողբերգութիւն. «եկուր ինձ մօտ, Աղամեան, վրձինս քեզ էլ կ'ապրեցնէ ինձ էլ, Աստուծոյ պարգևածից քեզ էլ բաժին կը հանենք»: զրութիւնը կրկնակական էր, և հարկ չկար խնդիրքը կրկնել տալու: Աղամեան ապաստանեցաւ Թրեանցի մօտ: Ալդ ժամանակ իբր զգեստ նորա վերայ մնացած էր իւր թատրոնական ֆրակը... Բաւական օրեր Աղամեան Թրեանցի տանը բանտարկւած մնալուց չետող ձեռք բերեց ճանապարհածախս և ուղևորեց Կ. Պօլլիս:

*
* *

Աղամեան Կովկասում և նորա ունեցած ներդրածութիւնը Աղամեանի խաղի նկատմամբ.—Աղամեան իւր Նոր. Նախիջնան ուղևորելուց ճիշտ 10 տարի չետող՝ 1879-ին Տփլիսում կազմւած թատրոնական մասնաժողովի կողմից հրաւիրեցաւ Կովկաս: Ալդ տասնտարեալ միջոցին որ նա շատ քիչ անգամ խաղացած էր՝ չէր արել ոչ մի մասնաւոր լառաջագիմութիւն. նա չէր խաղում գլխաւորաբար հալերէն ներկայացումների հազագիւտ դառնալու պատճառաւ: Հետևաբար 79 թ. մեր տեսած՝ Աղամեանը համարեա 69 թ. Աղամեանն էր: Բայց ալդպէս չ'եղաւ Կովկասում: Լրագրութիւնը ամբողջ էջեր էր նւիրում թատրոնին, թէև իւր խորհուրդներով և քննադատութիւններով երբեմն մոլորեցնում էր դերասաններին, բայց թատրոնի և մասնաւորաբար Աղամեանի խաղի նկատմամբ նորա ունեցած ներդրածութիւնը անուրանալի է: Տփլիսի հալ հատարակութիւնը, որի ճաշակը բաւականի զարգացած էր օտարազգի դերասանների խաղի ներքոյ, չէր կարողանում իւր ծարաւը լագեցնել տեղական հալ-դերասանական խմբի ներկայացումներից, որոնց մէջ գեղարւեստական համարեա ոչինչ չկար: Ալդ ներկայացումները թէև մասամբ դահացնում էին ժողովրդեան միջին կամ ստորին դասակարգի պահանջները, բայց զարգացած, տեսած հատարակութիւնը կամ հալոց ներկայացումներին ոտք չէր դնում և կամ գալիս էր ծարաւ, վերադառնում էր պապական: Տփլիսի թատր. մասնաժողովը լաւ ըմբռնել էր, և ալդ էր պատճառը, որ հասարակութեան գեղարւեստական ճաշակին գոհացում տալու համար իւր աչքերը՝ զարձրեց զէպի արեմուտք՝ Կ. Պօլլիս:

Բարձրացաւ «Աէր առանց համարման» ներկայացման վարագործը և հասարակութեան աչքերին ներկայացաւ ալն՝ որի մասին մինչև ալն ժամանակ զազափար չուէնէր: Բացի շնորհալի, գեղարուեստական խաղից՝ հաջ լեզուն հնչում էր բեմից մի բոլորովին անծանօթ քաղցրութեամբ և ներդաշնակութեամբ, նա զիւթում էր լսելիքը, նա իրրև կակղեցուցիչ սպեղանի թափւում էր մայրենի լեզուի համար անտարբեր և քարացած սրտերի վերաջ և նրանց փափկացնում: Հասարակութիւնը այդ գիշեր դուրս եկաւ թատրոնից բոլորովին կախարդւած: Այդ օրւանից հասարակութեան կարծիքը դէպի հաջ թատրոնը բոլորովին բարեփոխւած էր: Նա շոշափելի փաստեր էր տեսնում ալն կարծիքին թէ՛ մայրենի լեզուով կարելի է ունենալ թատրոն, լսել համամարդկային զազափարներ, և գոհացնել գեղարուեստական ճաշակ: Թէև այդ օրւանից ժողովուրդը աւելի պահանջող դարձաւ, քաջ այդ իւր կատարեալ գիտակցութեան արդիւնքն էր: Այս երևոյթը, դէպի առաջ առնւած այս քալը, շատերի համար, ոչ միայն վեաստկար, այլ չարագուշակ և կործանիչ էր: Այս ալն բուեն էին ասում, որոնք հաջ թատրոնը միմիայն իրանց սեփականելու չաւանդութիւնն ունէին: Նորանց կարծիքով ժողովրդեան աչքը չը պէտք էր բաց անել՝ ցոյց տալով նրան թատրոնը՝ բուն իսկ իւր կոչման մէջ: Պէտք էր խակ ու փթած մրգով կերակրել նրանց՝ որոնք հասածի և ընտիրի մասին զազափար չ'ունէին:

Բայց աւելորդ էր վրդովւիլը. թատրոնական գործին զուլի կանգնողները պէտք է գոհացնեն մի զարգացած հասարակութեան թատրոնական ճաշակը: Ահա գործի քոյր զաղտնիքը՝ որ աչտուհետև միշտ պիտի լաջողի լիւրի կատարելով, իսկ ապարդիւն ու անլաջող պիտի մնալ չը կատարելով:

Աղամեան իւր ընկերներով մեծապէս գործակցեցաւ հասարակութեան գեղարուեստական ճաշակի զարգանալուն. քաջ նա անպտուղ ծառ չէր, որ միայն իւր տերեւներով պարծի և սուերով բաւականանալ: Նա օգնեց և օգտւեցաւ. սովորեց և սովորեցաւ. ինքը քանի անդամներ պատկառանքով խոտովանել է թէ որքան օգտւած է Տփլիսի թերթերի քննադատութիւններից, և մասնաւորաբար Տփլիսը որքան իւր չառաջադիմութեան պատճառ է եղած՝ գնահատելով, առաջ մղելով և բարձրացնելով իրան: Բայց Աղամեան ինքը իւր մէջ ունէր չառաջադիմելու բոլոր տարիքը, դուրս համար կարօտում էր մի մղիչ ուժի և այդ դտաւ նա թատրոնասէր Տփլիսի սեղւոց մէջ: Նորա քալերը խոշնդոտի առաջ չէին կանգնէր. նորա հալեացքը սեղմ հորիզոն չէին սիրէր և իւր մտքի թռիչքը սլանում էր միշտ բարձր բարձր: Իւր լեզուագիտութիւնն էլ օգնում էր չառաջադիմութեանը: Նա քաջի մալիկների լեզուից դրում—կարդում էր ֆրանսերէն, լատիներէն, խալիբէն և վերջերս էլ ռուսերէն¹⁾, բացի Գրիբօէդովի և ալ մի քանի

¹⁾ Աղամեանի ռուսերէն արտասանութիւնը թէև մաքուր չէր, բայց նա, մասնաւորաբար իւր Ռեալաստան ճամբորդած ժամանակ լաւ սովորած էր այդ լեզուն:

զգարնի հեղինակներէից նա Տփլիսում մօտիկ ծանօթացաւ Շէքսպիրի հետ՝ որ իւր ապագայ փառքի պատկը պիտի լինէր։ Նա ըմբռնեց իւր կոչումը, և սկսաւ ամենալոյս ուշադրութեամբ հետեւել մեծ բանաստեղծի ստեղծագործութիւններին ուսումնասիրութեանը։ Նա անդգալի կերպով բալց հաստատ քաղերով լառաջ էր դիմում։ Նորա համբաւը մամուլի միջոցաւ տարածեցաւ թէ Վոլկանի ամեն կողմը և թէ Ռուսաստան։ 1880 թւականին մի փոքրիկ խմբով նա ճանապարհորդեց Ախալցխա, Ախալքալաք և Աղէք։ սանդրապօլ, ամեն տեղ իւր տաղանդի վերալ հիացողներ աւելացնելով։ 1881 ին ևս անցեից Վանձակ և Շուշի, սրտեղից թռաւ, գնաց Ռուսաստան՝ իւր համար պատրաստած դափնիքը հնձելու։

*
*
*

Ազամեան Ռուսաստանում։— Տփլիսը Ազամեանի համար եղաւ այն՝ ինչ որ միջնակարգ դպրոց աւարտողի համար է համալսարանը։ Նա իւր կարողութեան մասին կատարեալ գիտակցութիւն ունէր և այդ պատճառաւ ներկայացաւ աւելի բարձր, մալրաքաղաքի հասարակութեան քննադատութեանը։ Տփլիսեցիք ամեն կերպ քաջալերեցին նորան այդ քաղը անելու։ Աս դժուար և մտածելու կէտ էր։ Ազամեան ուսն հասարակութեան առաջ պիտի ներկայացնէր հալերէն լիզուով։ Ռուսներ պիտի համաձայնէին մի քանի ժամեր նստել թատրոնում և չարունակ լսել մի անծանօթ լիզու՝ որի մասին մինչև այն օր ոչ մի նոյաստաւոր դադարիար չունէին։ Բայց ով որ տեսել է բեմի վերալ այդ հսկալ հանձարին՝ նա համոզած է որ նորան հասկանալու համար պէտք չէ լիզու գիտենալ, նորա ղէմքը և աչքերը ամեն ինչ կը հասկացնեն, ամեն ինչ կը բացատրեն։ Ոչինչ հեղինակութիւն չէր կարող աջակցի գովեստով խօսել տալ մեր լեզուի հնչումներին գեղեցկութեան և հարթութեան նկատմամբ, ինչպէս ալ եղաւ Ազամեանի քերնից հալ լիզուն արտասանելով։ Դեռ չը լսած, ծիծաղողներ, ծաղրողներ անչափ էին։ «Հալ լիզա՞ւ...» հարցնում էին դարմացած մարդիկ տեսնելով «Համլէտ»-ի և «Օթելլո»-ի չալտարարութիւններ։ Բայց երբ վարագոյլը բարձրանում էր և բեմի հերոսը սկսում էր իւր առաջին խօսքերը արտասանել՝ ծաղրն ու ծիծաղը դարմանքի և դարմանքը հիացմունքի էր փոխւում։ «Ոչ թէ մտքով էք զգում նրան, ոչ թէ այն գիտակցութեամբ որ նա ընտիր դերասան է, ստում է „Одесск. Телеграфъ“ թերթի լոյսածագիրը, այլ մի ուրիշ, անխմանալի զգացումով՝ որ կը պարտաւորեցնէ ձեզ կուլ տալ արցունքն, սիրել ալ օտար ղէմքը և ալ օտար լիզուն»։

Թարգմանում էր նրանից բանաստեղծութիւններ։ Կարդում և հասկանում էր բոլոր էջերի նախաբանները և զբոսում էր նամակներ նոյն լեզուով։

1883 թ. Մոսկւայի ուսանողներից հրաւիրւելով կը գնաւ և զուրա-
կուզաւ «Համէտ»-ի գերում. նոյն թւին գնաց նաև Նիժնի-Նովգորոդ:
1884 ին սկսում է խաղալ Պետերբուրգում: «Նովոստ»-ի, «Նովոէ վրէմիա»,
«Իսկուստօ» և այլ թերթեր միաձայն հռչակում են Աղամեանի գերազանց
տաղանդը: Նոյն տարւաւ լուսինին Աղամեան զնում է Աստրախան, Ռոս-
տով, Խարկով, և այլն և 1885 թւի մալիսին Կիեւ կրկին և կրկին ան-
գամներ ալցելելով Պետերբուրգ և Մոսկւա: 1886 ին Բաքու և ալնտեղից
գերաաանական խմբից հրաւիրւեցաւ Տփլիս: Աղամեանի փառքը Տփլի-
սից էր սկսւել. նա թէև չէր սիրում նորան շրջապատող լերկ բլուրները
և սահմանափակ հորիւրներ, բայց սիրում էր իբր երկրորդ հայրենիք. նորա
սիրաւ տրոփում էր քաղաք մտնելիս: Սկսաւ խաղալ նա իւր նոր տոկո-
ծագործութիւնները. «Թեղի», «Ուրիշ Ահօստա» և կատարելագործեալ
«Համէտ»-ը մէկ մէկ նորութիւններ էին որ նա ցոյց էր տալիս մեզ. դարձեալ
նոյն ոգևորութիւնը, դարձեալ նոյն խանդաղատանքը դէպի նա: Վերջապ-
նելով Տփլիսի ներկայացումները և իւր ներկայութեամբ ծնունդ տալով
86—87 տարւալ թատրոնական սէզօնին, ամառւաւ ամիսները ճամբորդեց
Տփլիսի հալ գերասանների խմբով Վլադիկակազ, Մոզդոկ, Պետալպոլսկ,
Եկատերինոգոր, Թէոդոսիա և ալնտեղից Տփլիս՝ ձմեռւալ ներկայացում-
ների համար: Նոյն ներկայացումների շարքում ներկայացրեց առաջին ան-
գամ «Վիր Արքայի» դերը, որին վերջերս անչափ սիրում էր՝ մինչև զիշեր-
ները նորանով զառանցելու ատարձան: 1887 ին Բաթումից մեկնեցաւ
Թէոդոսիա, Սիմֆէրոպոլ, Օդէսա, Քիշնեւ, Պոլտաւա, Մոսկւա, Կապան և
ալնտեղից իւր ծննդավայրը՝ Կ. Պօլիս:

Այս բոլոր ուղևորութիւնների ժամանակ 1883 թւից մինչև 1888 թ.
Աղամեան իւր բոլոր անցած տեղեր թողեց իւր տաղանդի և ընդունակու-
թիւնների վերալ հիացողների ամբաւ բազմութիւն: Ոսկեղէն, արծաթեղէն,
ընծաներ, ուղերձներ համալսարաններից, անթիւ փունջեր ու պսակներ
թափւում էին իւր ոտքերի առաջ: Բոլոր թերթեր զարմանքով խօսում
էին ալս արտակարգ հալ տաղանդի վերալ: Շատերն էլ խօսք կամ բառ-
չէին գտնում իրանց սքանչացումը արտապատելու: Նորա խաղը քննադա-
տեցին Ռուսաստանի բոլոր թատրոնական քննադատները, որոնց խօսքի
նշանակութիւնը և արհեստի նկատմամբ ունեցած հմտութիւնը և գեղադի-
տական ճաշակը ընդունւած է հասարակութեան բոլոր զասակարգերից,
Աղամեանին դասեցին մեծ տաղանդների շարքը և աւագութեան աթոռը
տւին հալ արեւստագէտին: Նորա փառքը ալնչափ մեծացաւ, որ մինչև
զարմանք ազդեց իւր հայրենակից Պսլսեցիներին: Նոքա ալն վաճառակա-
նին էին նմանում, որ իւր անդին զոհարը չնչին գնով ծախելուց չնոս
միալն հասկանում է նորա արժէքը:

Վերջին աչքելու թիւն ի Կ. Պօլս և Զմիւռնիա — 1888 թվականի օգոստոսին, Աղամեան վերադարձաւ իւր հայրենիքը իննամեայ պանդխտութիւնից վտույ, պանդխտութիւն՝ որ առիթ տալով նրան կատարելագործել իւր արւեստը, փառքի ամենարարձր աստիճաններին հասցրել և դաժնիներով զարդարել էր իւր ճակատը: Լրագիրները համակրանքով ողջունեցին մեծ արւեստագէտի վերադարձը, չոյս չաւանելով որ շուտով հաջ շամբէտը կարժանանան բեմի վերաջ տեսներու:

Կազմեցաւ մի խումբ դերասանների և «Օթելլօ»-ով Աղամեան սկսեց իւր ներկայացումները: Հաջք և օտարազգիք խռնած էին «Ֆրանսիական նոր թատրօն»-ի սրահում և հիւնդում էին Աղամեանի խաղով: Կ. Պօլսում Օթելլօն հինգ անգամ կրկնեց: Կօրրադօ, Ուրիէլ Ակօստա, Քիւն, միմեանց լաջորդեցին աղջեցնելով հասարակութեան: Յոյները համաձայնեցին Աղամեանի հետ Օթելլօ խաղալ, ինչորելով որ ինքը իւր դերը հայրենի արտատանէ, իսկ խումբը լսւնարէն: Յոյների նման գոռող ազգի կողմից աչս զիջողութիւնը նշան է Աղամեանի բարձր հանճարին որի առաջ ամեն զլուխ խոնարհում էր կամաջ ակամաջ:

Աւելորդ չէ լինել «Կօրրադօ» ներկայացման ժամանակ տեղի ունեցած մի դէպք: Վերջին արարւածին, Կօրրադօի սարսափելի զոհարեցումիւն ժամուն, երբ նա տառապում է օրհատականի տանջանքով, օր. Աղնիւ, որ Էմմայի դերն էր խաղում (տասը տարւաջ դրամատիքական դերասանուհի) երբ տեսաւ Կօրրադօի ցաւերը, տեսաւ որ աչգ մարդը որից առաջ վախում էր իսկ վերջերը համակրում, իրանից երկու քալ հեռու անջնջանում է, վալը ընկաւ ուշագնաց: Վարադուրը իջաւ: Շատ կենդանի կերպով պատկերանում է աչքիս խեղճ Աղամեանի շփոթմունքը: Ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում թատերասրահի կողմը, որ թնդում էր անվերջանալի ծախահարութիւններով: Ամենքի ուշադրութիւնը օր. Աղնիւի վերաջ էր: Աղամեան ինքը գրկած անբարբառ դերասանուհուն, բոլոր ձալնով «բժիշկ բերէք» «օղը կօլօն» «ամէր» գոչում էր: Տասը վալրկեանից հազիւ ուշքի եկաւ դերասանուհին՝ ուխտելով որ աչ ևս Էմմայի դերը չի կատարէ:

Նոյն թվականի դեկտ. 30-ին կատարւեց նոյն թատրոնում հուշակաւոր ողբերգուի 25 ամեաջ բեմական գործունէութեան յօբելիանը: Դա Կ. Պօլսում կատարող առաջին յօբելիանի հանդէսն էր: Կօրա համար կազմեցաւ առանձին մասնաժողով, որի անդամների անունը երաչխաւորէ թէ Աղամեանի տաղանդը ինչ աղղկցութիւն էր ունեցել իւր հայրենակիցների վերաջ: Աչգ անունները, փոքրաթիւ բացառութեամբ, ոչ թատրոնական գործի մէջ մտել էին, և ոչ էլ կը համաձայնէին մտնել, բալց Աղամեանի տաղանդը, որով դերասանական արւեստը աչնչափ բարձրացած էր, շատ հրաջքներ կարող էր գործել: Յօբելիանի մասնաժողովի անդամներն էին պ. պ. Ներսէս Ներսիսեան. Կ. Սիւսեան, Մինաս Չերազ. Միքայէլ Փորթուքալ, Ասպիտ Զուեղ, Գ. Ապուլլան. Թովմաս Թէրզեան, Սրա-

պիօն Հէքիմեան, և Վատիկեան: Հակառակ մի քանի բարեկամների խորհուրդների, Աղամեան շտապեց իւր լօբելեանի կատարումը, միջոց չը տալով որ գոնէ երկու ամիս լաւտարարւի, որով Աովկաս և Ռուստատան, Աղամեանի հանձարին հիացող աչք երկիրները չը կարողացան պատշաճաւոր կերպով մասնակցել լօբելեանին, որով անչափ պիտի աւելանար աչք հանդիսի շքեղութիւնը ¹⁾:

Յղան մարդիկ, որոնք նախանձից զրդւած, մի դերասանի լօբելեանի կատարելու չը լուած տօնախմբութեան վերաջ սկսան զարմանալ: Աչք մարդոց հասկացնելու համար օտարների մէջ Աղամեանի վաղելած փառքը, հարկ եղաւ «քսան և հինգ ամիալ բնական զործունէութիւն Պ. Հ. Աղամեանի» անունով մի բրօշիւր հրատարակել (պ. Տօնապետեան) որը բացի համառօտ կենսագրութիւնից պարունակում էր Ռուսաստանի նշանաւոր թերթերի Աղամեանի մասին գրածներից հատածներ: Բայց զորանով ոչ թէ չար լեզուները լռեցին, այլ աչք բրօշիւրը մի տեսակ ղէնք եղաւ նրանց ձեռքում, որովհետեւ սկսեցին միամիտներին հաւատացնել թէ «իրանք լաւ գիտէին, որ Ռուսաստանի թերթում Աղամեանի մասին ազգային բաներ գրած չկալ և թէ զրանք չինծու են»: Նոյն իսկ իւր արեւոտակից ընկերներից շատերը հաւատացնում էին թէ «ինչ նրա բանն է Օթէլլօ խաղալ...» անա որ աստիճան նախանձը կուրացնում է մարդոց:

Աղամեան Կ. Պօլսում, բեմի վերաջ երեւալով, մամուլի մէջ մի նորութիւն եւ մտցնելու աւիթ տաւ: Մեր խօսքը մինչև այն ժամանակ համարեա Կ. Պօլսեցւոց անծանօթ մի շարք լուրջ քննադատութիւնների մասին է, որ Աղամեանի ներկայացումների մասին պարբերաբար հրատարակում էր: Աչք քննադատութիւններում քսան տարի առաջ կրկնող «աղւոր կը խաղալ կոր» ից աւելի աչքի ընկնող կէտեր կար:

Հակառակ մեծ ջանքերի Աղամեան Կ. Պօլսում չը կարողացաւ ներկայացնել «Հաւիէտ» և «Լիր Արքայ» ողբերգութիւնները: Որովհետեւ տեղական գրաքննութիւնը արգիլեց առարկելով աչք ողբերգութիւնների գործող անձինքների մէջ թագաւորների գոյութիւնը. և որովհետեւ Ստամբուլում մի թագաւոր կալ, հետեւեալ չէ կարելի թողատրեզ երկրորդ թագաւորի գոյութիւնը՝ թէկուզ աչք թագաւորը բեմի վերաջ լինի:

1) Աղամեանի յօբելեանին մի դէպք պատահեցաւ, որ նորան բաւական վիշտ և բարկութիւն պատճառեց: Պատիկ խնդիրն էր այդ: Յօբելեանին սրահ էր տրւած 170 զորուշ արժողութեամբ (մօտ 14 բուրլի) և այդ գումարը մոցրել էին ծախսերի ըաժնում: Եւ խիստէս զարբանալու կամ վշտանալու աւելի էր սա: Բայց այդ անողնեւը, կամ աւելի ճիշդը անողը (մենք հաստատ զիտե՛նք որ յօբելեանի մասնաժողովի անդամներն էին ոչ բոլորը, զոնէ մեծ մասը անտեղեակ էին այս դէպքին) ժամանակին մի փոքրիկ վէճի պատճառաւ Աղամեանից նկատեցած լինելով, սորանով կամուրջ էր իւր վրէժը լուծել: Արդարեւ Աղամեանի նման մի գերասանից վրէժ լուծելու շատ ոտոր, անալիւի և անտատարեր մըջոյ՝ որի արտուր մնուեց մի ամբողջ անսով հատարակութեան պատիւը:

1889 թվականի դարձան Ադամեան տեղական երիտասարդութիւնից հրաւիրեցաւ Զմիռնիա. հետոյ հետեւ ներկայացրեց իւր գլխաւոր ընկերատուարը ինչպէս և «Համէտ» բացի «Լիւր Արքայ»-ից: Հասարակութեան բոլոր դասակարգերը եռանդուն ընդունելութիւն արեցին: Մանաւանդ իւր տեսակում միակն էր մանկական պարտէզի ծաղիկների մեծ արեւստագէտին արած ընդունելութիւնը: Նորա շնորհակալութիւն չափանցին մի ուղերձով՝ որ աչդ մեծ դերասանը կամեցաւ փոքրիկների ընկերակցութիւնը վաղելել: Նրոցին, խաղացին, արտասանեցին և նրան մի ծաղկափունջ մատուցանելով անունը ստորագրել տւեցին աչդերուների տետրակում: Սա երբէք Ադամեանին աչնպէս զարթ տրամադրութեան մէջ չէի տեսել, ինչպէս Զմիռնիայի մանկական պարտէզում անցկացրած ժամերի միջոցին: Նա մանուկներին բաժնեց իւր պատկերներից և չաքարիզէն:

Իւր ի նպատակ արւաղ «Համէտ» ներկայացմանը ի միջի աչդոց պտակ տւեց հիւրանոցի ծառան, որ պաշտօնավոր մի Սերբ սպառ էր:

Նորա կտրորի հիւանդութիւն ունենալու լուրը թէ և Պօլսում եղած ժամանակ տարածւած էր ¹⁾, բայց ինքը չատ չնչին բան էր կարծում, որին չափազանց նշանակութիւն էին տալիս, բայց նա իւր աչս կարծիքը ունենալով հանդերձ լրջօրէն հետևում էր հիւանդութեան բժշկութեան: Նորան իւր աչս կարծիքում աշխատում էին համոզել բոլոր բարեկամները: Նիթէ նա խմանար աչդ հիւանդութեան չափազանց վտանգը, էլ աչնուհետեւ նորա մտածմունքը հաշիւ իսկ կարող էր նրան գերեզման իջեցնել:

«Օթէլլօ» փորձելիս նա զանգատում էր իւր ձախի թուլութիւնից, և ապա սկսում էր բնական կերպով գոռալ, ներկայացնելով Օթէլլօի աչն տեսարանը երբ նա մահճից վեր թռած զալիս է Մօնթանօի և Կառուիօի մենամարտութիւնը ընդհատելու: Հակառակ նորա պնդելուն հս ոչինչ ձախի տկարութիւն չէի նշմարում: Բայց երբ ներկայացրուց «Քին»-ը, որին

1) Ադամեանի կտրորի հիւանդութիւնը առաջին անգամ յայտնուել էր 1888 թ. ձմրան Կօստանթնուքում, բայց շուտով անց էր կացել: Նոյնը կրկնուեց Կ. Պօլսում յաջորդ տարւայ դարձան երբ ինքը սկիտի մասնակցէր բարեգործական նպատակով Բեռլինում տրուող մի հանգիստ: Վաղօրոք արդէն յայտարարւած էր այդ հանդիսին Ադամեանի մասնակցութիւնը: Խուսառած ամբողջ սպասում էր նորա դուռը գալուն, բայց չը կար Ադամեան: Վերջապէս երեւցաւ. ամեն ոք սրեց իւր լսելիքը:

«Հարցրին մի անգամ Մեծն Նապօլէօնին, ովտեց խօսել Ադամեան տկար ձայնով, թէ ի՞նչ է պէտք կանոնաւոր պատերազմ մղելու համար:

— «Նրեք գլխաւոր բան, պատասխանեց Նապօլէօն, առաջին դրամ, երկրորդ դրամ, երրորդ դրամ»:

«Իսկ ես հարցնում եմ՝ Զեզ, զիտէք ինչ է հարկաւոր գերասանին իւր սաշտօնը իրձի մօտ կատարելու համար, նոյնպէս երեք բան, առաջին ձայն, երկրորդ ձայն, երրորդ ձայն»:

Վարագողը ընկաւ: Ադամեանի խոսքերին հետեւեց բոլուն ծախահարութիւն:

— «Վեղծում է» ասում էին հանդիսականներէց շատեր:

Նա անճաման էր խաղում, երևում էր որ նա բեմի վերաջ տանջում է. ամեն րօպէ սպասում էի որ ձալնը պիտի ընդհատուի: Նա համարեա չէր խաղում, ալ խօսում էր կամաց, բոլոր ուժը պահելով վերջին արարւածի խելագարութեան տեսարանին: Բալց դուր էր ամեն ջանք, հիւանդութիւնը կատարելապէս տիրում էր նրան: Փոխանակ մշակած, ներդաշնակ ձալնի լսում էր խուլ հնչիւններ: Այդ երեկոյեան նման ձախորդ խաղ առաջին անգամ էի տեսնում որ Ադամեան խաղաց: Իջաւ վարագոյրը: Ադամեան չուսահատած գէն շարտեց սուրբ, որով սպառնում էր լօրդ Մէն-վիլին, գլուխը սկսեց խփել պատերին և փետել մաղերը: Նա ալ ես իւր անձի տէրը չէր: Ադամեան, ինչպէս և ամեն մի ճշմարիտ տաղանդաւոր դերասան, քաջ զգում էր իւր խաղի բոլոր թուլութիւնը և անպաշտօնութիւնը: Երբ հանդարտեցնելու համար մտալ իւր սենեակը, ընկաւ կրծքիս վերայ, լալիս էր բարձրաձալն և կրկնում. «Ներայր Վրոյր, ի՞նչ պիտի ընես ես... ի՞նչ պիտի լինի իմ պատիւս, իմ անունս, իմ ասլոստու...»: «Պառչի՛նչ բան է», «կանց կենալ», «կը բժշկուի» և այլն. ալս սովորական բառերը աչքքան արտասանել էինք, որ բոլորովին կորցրին իրանց նշանակութիւնը. նա հետզհետէ իմանում էր իւր հիւանդութեան բոլոր ծանրութիւնը:

Միևնույն ձախորդութեամբ և բնական դրամալով վերջացաւ «Կօրրադօ» դրաման. Նոյն լացն ու ողբը, նոյն սպանիչ չուսահատութիւնը: Նա զգում էր որ հիւանդութեան ժանիքը սեղմած իւր կոկորդին, քարշում է, ուզում է գլորել իրան փառքի աչք բարձրութիւնից՝ որտեղ կանդնած է ինքը:

Ադամեանի զեղեցիկ խաղը իւր ընտիր ընկերատաւարում վերջին անգամ տեսնելը Զմիւռնիային վիճակած էր: Ադամեան վերջին անգամ արտասանում էր ալդ քաղաքում Օթելլօ, Քին, Կօրրադօ, և իւր նպաստ վերջին ներկայացումը, վերջին Համլէտը: Նա հետզհետէ հրամեշտ էր տալիս աչք անմահ ստեղծագործութիւններին, որոնց աչքքան զեղարեւտօրէն և բնական կերպով պատկերացնում էր, և որոնք սպառեցին իւր անցին կեանքը:

Զմիւռնիայից Աթէնքի չուսաց լրագիրներին թղթակիցները արդէն լուր էին հաղորդել թէ հուշակաւոր հալ ողբերգու Ադամեան ալցելելու է Աթէնք, որտեղից մտադիր էր շարունակել իւր ճանապարհը դէպի Եւրոպայի մայրաքաղաքները բալց հիւանդութեան ծանրութիւնը ստիպեց չուստիլ Կ. Պօլիս վերադառնալ:

Ոչ աչքքան ուրախ էր Ադամեան երբ չոգենաւ նստեց. կարծես զգում էր որ դէպի մահ է դիմում, գնում է իւր ծննդավայրը երկու տարի էլ ատանջելու, մեռնելու և թաղուելու:

Կ. Պօլիս վերադառնալուց լիտու խաղաց մի-երկու երկրորդական դրամաներում, որոնց վերջինն էր «Սէր առանց համարման»: Աչք պիէսան, որը Տիխիսում բացաւ նորան փառքի դռները, նոյն պիէսան փակեց նորա գերատունական փառաւոր դործունէութիւնը:

*
* *

Հիւանդութիւնն և վերջին օրերը—1889 թ. չունիսին Ադամեան Կ. Պօլիս դառնալով, համարեա միշտ զբաղւած էր կոկորդը տանջող հիւանդութեամբ. նորա ձայնը որ երբեմն կտրւում էր և երբեմն բացւում բոլորովին կտրւած էր: Իսկ նույն թւականի ձմրան իւր ցաւերի վերաջ աւերացաւ լօղացաւ ևս, աչնպէս որ նա անկողնում ստիպւած բւլորովին անշարժ պէսք է պառկէր, մի փոքրիկ շարժում և կը տանջւէր աննկարագրելի ցաւերով: Թէ ինչ խոտապահանջ և նեղսիրտ էր Ադամեան իւր հիւանդութեան միջոցին, ալդ քաջ գիտեն նրանք, որ մօտիկ ծանօթ են եղած հանգուցեալ արեւոտագէտին: Մի չնչին սխալ, մի ծուռ քալ կամ մի աւելորդ բառ բաւական էր նրան վրդովելու: Իւր ամենաթեթիւ տկարութեան ժամանակ պատահողն անգամ անկարելի էր որ չը վիշէր Մօլլէրի «Ներակալական հիւանդը», անմիջապէս բժիշկներով ինքն իրան կը չրջապատէր, և ղեղահատերի կամ ղեղափոշիների ընդունելութեան ժամերը բոլորներով և վարկեհաններով էր գործադրում: Վերջի լօղացաւի մասին իրան հետ անձամբ խօսելիս նա ներկայացնելով իրանց տան Յակոբ անունով ծառան՝ մեծ շնորհակալութիւն և երախտիք լալտեց իւր վերաջ ունեցած խնամքի համար ¹⁾: Դեռ 1890 թւականի գարնան, բացի իւր կտրւած ձայնից ոչինչ հիւանդութեան նշան չէր երևում նորա վերաջ: Գէմքը մի փոքր նիհարած էր, իսկ ծնօտը պատած մի փոքրիկ սիրուն միրուքով: Վերջին տեսութեանս միջոցին գոչեց.

—Նրանի քեզ, որ Տփլիս ես գնում,

—Գնանք միասին, այ. Ադամեան:

—Ո՛չ, դու գնա, առաջիկալ գարնան էլ ևս ճանապարհ կընկնեմ:

Գարնան վերջանալուն հետ իւր արգասաւոր կեանքն էլ ցամքեցաւ, իւր սրտակից Աղէք. Ստեփանեանցի գրած նամակներում շարունակ լինում է բժշկելու համար գարնան խալիա գնալու մտադրութիւնը: Չը նպելով հիւանդութեան ճնշման տակ օրից օր տկարանալուն՝ նա մինչև վերջ պառկեց իւր բժշկելու լոցը. նա զարհուրում, դողում էր մահից: Սովորական խօսակցութիւնների մէջ նա լաճախ խօսում էր իւր ծերութեան մասին, որի սանդուղքների վերաջ շուտով ոտք էր դնելու:

—Ես չը պիտի լինեմ աչն ծերունիներից, որոնք իրանց դէմքի վերաջ և աւօրեալ կեանքում ցոյց են տալիս որ ընկճւում են տարիների բնական տակ. ևս պիտի լինեմ առողջ, կալտաւ և աշխույժ:

¹⁾ Ադամեան առհասարակ առանձին սէր ցոյց կուտար դէպի իւր ծառաները: Նա զովելով նոցա կը ներկայացնէր իւր բարեկամներին: Յակոբի նման զովեստով կը խօսէր իւր շուշեցի Պօղոս ծառայի և Ղազար Մամուկեանի մասին: Վերջինս որ Մողղոքից վերցրեց 1886 թ. շարունակ երկու տարի մօտն էր:

Այս խօսքերը ասելուց լետող իբր կենդանի օրինակ աշխուժ ծերութեան ցոյց էր տալիս փողոցից անցնող մի առույզ և կալտառ ծերունի: Շատ անգամ էլ մատիտով նկարում էր թէ ինքը ծերութեան ժամանակ ինչ ղէմքի փոփոխութիւն պիտի կրէ:

Բայց զգաց որ տան մէջ իւր բժշկութիւնը, եթէ ոչ անկարելի, գոնէ զժւար է: Բօսֆօրի վերին մասում, Պէօլիւք-դէրէում, ուր երկու ժամումն է գնում շողենաւը, մեծ զժւարութիւն է բժշկենքի երթեկութիւնը, ուստի լսելով բարեկամների խորհուրդին՝ որոշեց գնալ հիւանդանոց, և իբր իրան ծանօթ աղգութեան ընտրեց ուստաց հիւանդանոցը, որի գլխաւոր կառավարիչները, ծանօթ մեծ արւեստագէտի իրանց հայրենիքում վաշխած փառքին ու համբաւին՝ առանձին ուշադրութիւն զարձրին նորա վերայ:

Որպէս զի Ադամեանի վիճակի վերայ աւելի մօտիկ տեղեկանանք, աւելորդ չէ մէջ բերել նորա երկու նամակները, մէկը ամբողջապէս, իսկ միւսի մի մասը՝ որ վերաբերում է իւր հիւանդութեան վիճակին: Այդ նամակները ուղղւած են Տփլիսի միակ բարեկամին, որին հանդուցեալը իւր «Հօրաղիօ»-ն էր կոչում, և որը բարեսիրաբար լանձնեց մեզ հրատարակութեան:

«19 լուեւար. 1891 թ. Կ. Պ. Պէօլիւք-տէրէ.

Պատեական և սիրելիդ իմ Սանդրօ.

«Ներէ ինձ, որ ալոքան ուշ բարեմաղթում եմ քեզ Նոր-Տարին, բայց բաւական է որ ՚ի սրտէ կը ցանկամ քեզ համար լաւագոյն և բարեբաւտիկ օրեր, ուրեմն փոքր ինչ ուշանալը չի վնասեր. արդէն դա մի սովորութիւն են արած մարդիկ միմեանց բարեմաղթութիւնների անել նոր տարւալ աւթիւ և ալդ բարեմաղթութեանց մէջ աւելի լեզուներն են խօսում քան սրտերը: Ինձ որ մնալ ոչ միայն կը ցանկամ քեզ համար ամեն նոր տարին բարեբաւտիկ, ալ մինչև անգամ կենացդ ամեն նոր օրերը, բերելով քեզ նոր ուրախութիւն և նոր չաջողութիւններ, բայց պիտի ասես թէ զժբաղ-զաբար ալնպէս չէ լինում, սակայն փութ չէ, դու քո վշտաց մէջ հաւատան, աւելի սիրելի ես Աստուծոյ քան շատեր իրանց բուբլիների գէղին մէջ: Մի մոռնար Քրիստոսի ասածը. «ամբարշտաց չաջողեցի ի վերայ երկրի»: Մի մեծ խտալացի բանաստեղծ Իրիսովիպ Տանդէ Ալիկի է ու ի ասում է թէ «հաղար հաճուք մի վիշտ չեն արժէր» քիչ չառ համբերութեամբ տարւած վիշտը մեզ Աստուծոյ է մօտեցնում: Նոքա որ մեծ վշտեր ունին, երջանիկ են մի փոքր ուրախութեամբ էլ: Աստուած աւելի որոշ կը տեսնէ նրանց՝ որոնք որ անտես են թողւած մարդիկներից, սակայն ով-կիանոսի մէջ մարդարիտը, ժառերի ծոցին մէջ թաղւած աղամանդը ծածկւած են թէպէտ մարդերից, բայց որոշ կը փալլին ստեղծողին աշացն լանդիման: Ինչպէս զու, իմ թանկագին հերոսս, որ ծածկւած ես աղքատութեանդ քողին տակ, բայց լիչէ որ կալ մի աչք քեզ տեսնող և այդ

աչքից պիտի ծագէ մի օր հոգուդ լոյս և մխիթարութիւն և այս իմ ասածները փորձով զիտեմ: Գուռ ուրախացիր որ ունիս հոգւոյ և սրտի հարըստութիւն և ցաւէ նոցա վերաջ որք աղքատ են աչն կողմից, զի ալդ է ճշմարիտ աղքատութիւնը»:

«Ինչպէս որ երևում է Կոխի զրութիւնը անւաջող են գտնում բժիշկները և դեռ չեն համարձակում բացարձակ կերպով ներարկել հիւանդներին, որովհետև փոխանակ բժշկելու կամ սպանում է և կամ մի նոր տարօրինակ հիւանդութիւն է լսուաջ բերում: Ուստի իմ բժիշկն էլ չէ ուղում իմ վրաջ փորձել, զորա փոխարէն տալիս է մի դեղ, որից ընդունում եմ օրը 6 չափ գլալ, մեծ նեղութեամբ և որի մէջ քրէօզօթ կալ, և որ սաստիկ ալրում է կոկորդս և բերանս: Սակաւն ինչպէս երևում է սորանից օգուտ պիտի տեսնեմ, որովհետև վէրքը փոքր ինչ մեղմացած է թւում: Սակաւն սաստիկ ձմեռն ու ցուրաւ որ տիրում են ալստեղ՝ դանդաղեցնում է իմ բժշկութիւնը: Նրեակալէ, ես որ սիրում էի նստել, խօսել բարեկամացս ընկերութեան մէջ, ալժամ ոչ ընկերութիւն ունիմ մօտս, և ոչ ձաւն. թէ լեզուս միաջն չարժեղ կամենամ՝ սաստիկ ցաւ կզգամ, վերջապէս կեանքս անցնում է առանձինն, տխուր, միօրինակ, անձաւն և անդրամ...»

«Մեծ է լոյսս և հաւատքս առ Աստուած, որով կարողանում եմ զիմանալ իմ ալս ցաւալի վիճակին, և լուսալ որ մի օր պիտի կարողանամ զրկել և համբուրել դքեղ կրկին»:

«22 փետրւար, 1891 թ. Կ. Պ. Բերա, Նշան-թաշ».

«Հիմալ, որ գտնւում եմ ուռսաց սուրբ Նիկողայոսեան հիւանդանոցում, շատ աւելի լաւ եմ զգում ինձ: Օրը երեք անգամ ընդունում եմ բժիշկների ալցելուցութիւնը, մանաւանդ բուն իմ մասնագէտ բժիշկս, Միխաիլ Ստիպովիչ Պլէսկով, լիովին լոյս է տալիս բժշկել ինձ. արդէն ամենօրեալ կատարած վիրաբուժական գործողութիւններից մեղմացել է կոկորդիս ցաւը, փառք Աստուծոյ...»

«Սրտիդ խուովութիւնը թող ալ ևս հանդարտի, կարծեմ որ պիտի կարողանամ կրկին տեսնել, գրկել դքեղ»:

Չը նախելով իւր արտակարգ համբերութեան, որով նա ընդունում էր իւր վերաջ կատարած անտանելի վերաբուժական ¹⁾ գործողութիւնները և արւած դեղերը, հիւանդութիւնը հետզհետեւ սաստկանում էր: Բաւական չէր կոկորդի տանջանքը, թոքախտն էլ միւս կողմից աւերում էր նորա մարմինը: Տեսնելով նորա հիւանդութեան ծանր կերպարանք ստանալը ապրիլի կէսին փոխադրեցին նրան կրկին Պէօլիք-դէրէ: Ազդեղից Ադա-

¹⁾ Վերաբուժական գործողութիւնները կատարւում էին Ադամեանի Խոլոր-դում դուռն եկած ուսուցիչները դալելու կամ կտրելով ոչնչացնելու համար, որ մի կողմից նորից էլ գոյանում:

մեան իւր վերջին երկու նամակները զրկեց 'ի Վովկաս, մէկը իւր բարեկամին, միւսը «Մշակ»-ում տպւելու՝ շնորհակալութեան համար. ապա մասին իւր բարեկամին գրում է թէ ալդ նամակը հաղիւ կարողացել է երեք օրում գրել:

Թէև օրից օր տկարանում և մօտենում էր գերեզմանին, բայց նա մինչև վերջին րոպէն չափանի ոչինչ չասաց իւր մահաւան մասին: «Կո օդափոխութեան պիտի դնայի, ասում էր հիւանդը մահանից մի քանի օր առաջ, մինչդեռ սենեակէն դուրս չեմ կարող ելլել... քուրիկ, եթէ ռուսիոյ բարեկամներս գիտենան թէ ես օդափոխութեան կը փախաքիմ, վարկեան մը զիս հոս չեն ձգեր»:

Պէշկիթաշեան գրում էր իւր մահաւան անկողնից թէ «երկար տեւցաւ ողբերգութիւնը, արդեօք երբ պիտի իջնէ վերջին վարագոյրը»: Բայց Աղամեան որքան էլ մտածէր, աշխատում էր ալ մտածութիւնը վաճել իւր ուղեղից. նա իբրեւ մահից զարհուրող մարդ՝ չը համարձակեցաւ իւր մտածութիւնը գրի առնել, կամ մինչև իսկ իւր մահաւան կարելիութեան մասին երկու խօսք ասել: Կեռ հիւանդութիւնից մի քանի օր առաջ թախանձելով հարցնում էր իւր բժշկին թէ պիտի կարողանալ բժշկուել: Աղամեան, որ ինքն իրան համարեա բժիշկներին էր լանձնած և լռիկ կատարում էր նոցա անտանելի հրամանները, և որոնց վերաջ նա անչափ հաւատք ունէր, վերջերս բոլորովին մերժել էր ալ սարսափելի գործողութիւնները, որոնք առ ոչինչ համարելով կրկնակի հիւանդութիւններով տառապող թշուառ հիւանդի վիճակը, ուզում էին իրանց փորձերը շարունակել նորա դիակի վերաջ անգամ:

Թէև լուսիսի 2-ն էր, մահաւան նախորդ օրը բայց Աղամեանի ապրելու լոյսը դեռ վառ էր:

— Տիրիւկա քուրիկ ²⁾. մի վախճար, ասում էր հիւանդը հաղիւ լսելի ձայնով իւր լուսահատ քրոջը, ես քեզի համար աղէկ պիտի ըլլամ... քնանալ կուզեմ...

— Մի նեղւիր, քնացիր:

— Քնանալ... երբէք, երբէք... դու քովս նստիր. եթէ քնանամ հեռացիր:

Աղամեան իւր պառկած տեղում չատ ցածախ արտասանում էր Համլէտ, Օթելլօ և Նիլ ողբերգութիւններից. թռչում, սլանում էր հոգւով դէպի թատերաբեմ, հագնւում և երևում էր իրան անհամբեր սպասող հասարակութեան, ընդունում էր նոցա պատկները, և իւր երևութիւնը ողջունւում էր որոտացող ծափահարութեամբ:

Աղամեան իւր մահճի մէջ առաւել զգաց թէ որքան մարդիկ կան

²⁾ Վերջին ժամերում Աղամեանի խօսքերը դուրս բերւած են իւր քեռայր ոյ. Բաշճեանի նամակից:

կողկասում և Ռուսաստանում իւր վերաջ մտածող և որքան սրտեր թռթռում են իրա համար: Նա կարելի եղած շնորհակալութիւնը ցայտնեց իւր կրկնակի նամակներով, և իւր մօտիկ բարեկամների անունները շարունակ լուում էին իւր բերանից:

Չարաբատիկ օրեր էին լուսանում Ադամեանի սրտակիցների և զնահատողների համար: մեծ զերասանը չափազանց զբաղւած էր մտքով և քուրը նկատելով նորա այդ մտածողութիւնը հարցրեց.

— Ի՞նչ կալ որ աղչափ կը խորհիս:

— Ոչինչ, եթէ գիտե՞նաս Տիւրիւկն թէ ինչ կը խորհիմ, զո՞հ չես ըլլար: Նա իւր մահաւն կարելիութեան մասին էր խորհում:

Վերջին օրւայ վերջին ժամերն էին, Մովսէս գերապաւծառ կը կարգար իւր աղօթքները, բայց հիւանդը հազիւ կը լսէր դրանց, նա մտքով սլանում էր, հոգւով փոխադրում էր մի ալ աշխարհ. «այն անքնելի աշխարհը, որտեղից ոչ մի ճանապարհորդ չէ վերադարձել»: Նա հանգստացրուց խռոված գերապաւծառին և զրկեց բռնեց իւր հօրեղբորորդու ձեռքը, նախից նրան հանգած աչքերով, ուղում էր խօսել, բայց լուեցաւ միայն խուսուտ հաղագներ և... մեռած էր:

(կը շարունակուի)

ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Գ. Ա. ՇՐՈՒՄՊՅԻ

Ֆրանսիայի Համալսարանից

(Շարունակութիւն 1)

Մեր նախորդ յօդաձևերում մենք աշխատեցինք գծագրել Արևելեան կենդանի լեզուների զարգի Հայկական ամբիոնի պատմութիւնը: Այդ դասաւանդութիւնը, այո՛, գեղեցիկ հետաւանքներ արտադրեց. բայց նա աւելի լաւերը կ'արտադրէր, եթէ միայն նա իսկապէս կենդանի լեզուների դասաւանդութիւն լինէր, և եթէ ժամանակ առ ժամանակ ընդունակ ուսանողներին ուղարկէին Հայաստան՝ այդտեղ լեզուն տեղն ու տեղն ուսանելու համար: Ահա թէ այս առիթով ինչ է նկատում Revue politique et littéraire շաբաթաթերթի (առ 11 յունւ. 1873 թ.) խմբագրութիւնը, վերարտադրելով Դիւլլորիէի դասընթացքի առաջին դասախօսութիւնը. «Մի զարմանալի անկանոնութեան շնորհիւ, հայերէնի ամբիոնը, որի գլխաւոր՝ եթէ ոչ միակ նպատակն է դարերից ի վեր մեռած մի լեզուի դասատուութիւնը, ներմուծւած է Արևելեան՝ յատկապէս կենդանի լեզուների համար հիմնւած մի զարոցում: Հեշտ է հասկանալ, թէ ինչպէս մի այդքան շոշափելի անոմալիա խոչընդոտ է այդ դասաւանդութեան զարգանալուն: Իսկապէս նորա լաւագոյն տեղն է Collège de France զարոցը»:

Այժմ մենք կ'անցնենք այն զլխաւոր հայկաբաններին, որոնք այդ զարոցում չեն եղել՝ Ալէն-Մարտէն, Բրոսէ, Լանգլուա, Բորէ, Պրիւդո և Վատտէյրաս:

1) Տես «Մուրճ» 1891 №№ 2, 3. 7-8.

Յովհաննէս Անտոն Սէն-Մարտէն (Jean Anton Saint-Martin) ծնեց Պարիզում 1791 թւականին ¹⁾։ Նորա հայրը, որ մի վաճառական էր, նորան որոշել էր առևտրի համար, բայց մի հարուստ բանկիր հետաքրքրեց այդ երեխայով, և համաձայնութիւն ստացաւ նորան թոյլ տրել հետևել Collège de Quatres Nations դպրոցի (1802—1809) դասերին։ Այդտեղ նա մեծ յաջողութիւն ունեցաւ, և մինչև անգամ մի ողբերգութիւն յօրինեց խորագրովս Դոն-Կարլոս, և մի էպոսական պոէմա՝ Խոսրով վերնագրով, որ նա կարդացնել տւեց բանաստեղծ Գլլիլին։ Եւ որովհետև վերջինս համոզեց նորան յետ քաշել բանաստեղծութիւնից, այդ պատճառով նա անձնատուր եղաւ արևելեան լեզուներին, չուր նա շուտով դառաւ կորիֆէյներից մէկը ²⁾։ Արդէն քսան ու մէկ տարեկան հասակում նա զիտէր հայերէնը, ասորերէնը, պարսկերէնը, արաբերէնը, թուրքերէնը և մի փոքր էլ վրացերէնը։ Նա փորձեց անգամ մտնել քաղաքականութեան մէջ, և 1815-ին հրատարակեց մի բրոշիւր վերնագրովս՝ «Բացասական քաղաքականութեան շարժառիթներն»։ Ասում են որ նա դեռ 1811-ին վերջացրել էր իւր գլխաւոր գործը՝ «Հայաստանի պատմական և աշխարհագրական չիշատակարանները» (Ֆրանսերէն լեզուով ³⁾)։ Բայց այդ աշխատութիւնը լոյս ընծայեց միայն 1818—1819 թ., երկու հատորով։ Դորամասին մի քննադատութիւն գոլրս եկաւ Journal des Savants (Գիտնականների թերթ) 1818-ին և 1820-ին, Սիլվեստր դը Սասի՛ի, որին նւիրւած էր գիրքը։ Ահա գրքի նկարագիրը. առաջին հատորը բովանդակում է Մեծ-Հայաստանի նկարագրութիւնը (երես 35—178). Փոքր-Հայաստանի նկարագրութիւնը (երես 180—204). մի վիճաբանութիւն Հայաստանի զանազան անունների մասին (եր. 205—278). Հայաստանի պատմութեան համառոտութիւնը (եր. 279—404), և ժամանա-

¹⁾ Ասելի լիուլի տեղեկութիւնների համար կարելի է դիմել Վալենտին Պարիզո՛ի (Parisot) լօղւածին Միշօ՛ի Biographie universelle, նոր տպագրութիւն, հատոր XXXVII երես 367—372։ Այդ աշխատասիրութիւնը պարունակում է բաւականին մեծ թւով լօղւածներ նաև հայոց գրականութեան մասին։

²⁾ Այս խօսքերը նորա բարեկամ՝ հռչակաւոր սինոլոգ (sinologue) Աբէլ Ռէմիւլլալինն են։

³⁾ Mémoires historiques et géographiques sur l'Arménie.

կազմական ցուցակներ (եր. 404—446): Երկրորդ հատորն ունի հետևեալ զրուկները՝ Կեանքը և զբաղմունքները Ստեփաննոս Օրբելեանի, Սիւնիքի արքեպիսկոպոսի (եր. 1—15). Օրբելեանների և մի քանի ուրիշ չինական տոհմերի մասին, որոնք հաստատուել են Հայաստանում և Վրաստանում (եր. 15—57). Օրբելեանների պատմութիւնը (եր. 57—176). Ծանօթութիւններ (եր. 176—301). յիշատակարան աշն ժամանակաց մասին, երբ յօրինեց Մովսէս Խորենացուն վերագրած Աշխարհագրութիւնը (եր. 301—319). Մովսէս Խորենացուն վերագրած Աշխարհագրութիւնը (եր. 319—378). Ծանօթութիւններ (եր. 378—395). Ուղեցոյց Դւինից՝ Հայաստանի մայրաքաղաքից մինչև նոյն երկրի մի քանի ուրիշ քաղաքները և մի քանի ուրիշ վիճակները (եր. 395—398). Գրախօսի և քառասներկու ուրիշ մեծ ու հուշակաւոր գետերի մասին Ծանօթութիւն (եր. 398—407). Վարդան վարժապետի Աշխարհագրութիւնը (երես 407—454). Ծանօթութիւններ (եր. 454—472). Հայաստանի կառավարիչ Միհր Ներսէսի հրամանագրութիւնը Մեծ-Հայաստանի իշխաններին (եր. 472—476). Ծանօթութիւններ (եր. 476—479). Արևելեան Հայաստանի իշխանների նամակը Հռովմայ Պապին (եր. 479—486). Ծանօթութիւններ (եր. 486—489): Այբբենական ցուցակ աշխարհագրական անունների, որ կան երկու հատորում (եր. 489—519). Նիւթերի ցանկ: Ամեն տեղ, ուր հարկաւոր է եղել, հայերէն բնագիրը զբաղ է թրանսկրիպցիոն թարգմանութեան զիմաց:

1814 թ-ին Հնութիւնների Ընկերութիւնը (Société des antiquaires), որ յաջորդեց Կելտական Ակադեմիային (Académie celtique), Սէն-Մարտէնին իւր քարտուղար նշանակեց, և նորան յանձնեց արտասանել նոր ընկերութեան բացման ճառը: 1817-ին նա կարգացնել տւեց Արձանագրութիւնների և Գրականութեան Ակադեմիայում (Académie des Inscriptions et Belles-Lettres) մի յիշատակագիր, վերնագրած՝ Հետազոտութիւններ Մեզէնի և Խառասէնի պատմութեան և աշխարհագրութեան վերաբերեալ¹⁾, որ հրա-

¹⁾ Recherches sur l'histoire et la géographie de la Mésène et de la Chazacène. Վերջինս մի թագաւորութիւն էր Տիգրիսի և Եփրատի բերանների մէջտեղում:

տարակեց միայն իւր մահից յետոյ Ֆելիքս Լէյարդի ձեռքով, լուսաւորութեան մինիստրութեան ծախքով: 1818-ին նա ամուսնացաւ գէներալ Կաստէքսի (Casteix) այրիի հետ: 1820-ին նա փոխարինեց Ակադեմիայում եղիպտագէտ Տոշոն դ'Աննէսիին (Tôchon d'Annecy): Վերջապէս 1822-ին նա, Ռէմիւզզայի և Շէպի'ի հետ, հիմնեց Ասիական Բնկերութիւնը (Société Asiatique): Նոյն տարին նա նշանակեց փոխ-գրադարանապետ Զինարանի գրադարանի (sous-conservateur de la bibliothèque d'Arsenal), և յանձնարարութիւն ստացաւ սկսել մի նոր տպագրութիւն Շարլ Լըբո'ի Բիւզանդիայի պատմութեան (l'Histoire du Bas-Empire par Charles Lebeau), որից նա հրատարակեց տասը հատոր՝ սկսած 1824-ից մինչ 1830 թւականը ¹⁾:

Երբ հիմնեց «Ասիական Թերթը» (Journal Asiatique), Սէն-Մարտէնն այնտեղ հրատարակեց մի քանի յօդւածներ, որոնցից մէկը կը յիշատակենք զլուսաւորները՝ Նկատողութիւն Մովսէս Խորենացու կեանքի և զրւածների մասին (1823). Հայաստանի յեղափոխութիւնների մասին Արշակ II-ի ժամանակ IV-րդ դարում: Նկարագրութիւն մի ճանապարհորդութեան Եւրոպայում և Ասիանոտեան ովկիանոտում XV-րդ դարու վերջում, Մարտիրոսի, Երզնկեանի եպիսկոպոսի, զրւած իւր ձեռքով հայերէն և թարգմանւած Ֆրանսերէն (1826-ին): Սէն-Մարտէնն աշխատակցեց նաև «Ինտեսկանների Թերթին» (Journal des Savants)՝ Եւսեբիոսի ժամանակագրութեան տպագրութեան մասին հայր Աւգերեանի ձեռքով (1820-ին ²⁾). Հայաստանի նկարագրութեան մասին Ղուկաս Ինճիճեանի (1828). Սուրբ Ղազարում հրատարակած դասական հեղինակների մի ժողովածուի մասին (1828): Նուլլի ճանապարհորդութեան մասին արևելքում (1828): Սէն-Մարտէնի շնորհիւն է որ Ինսէնի գիտնական Նուլլն ուղարկեց Հայաստան Վանի արձանագրութիւններն ընդօրինակելու համար: Նա վերջացրել էր իւր դործը երբ սպանեց քուրդերից 1827-ին: Իւր կիլիշների Ֆակ-սիմիլները վերարտադրեցին «Ասիական Թերթում»:

¹⁾ Այդ գործը շարունակեց Բրուսէ և վերջացաւ 1836-ին, 21 հատոր in8.

²⁾ 1818-ին Ռատու Ռոշէտ հրատարակել էր մի քննադատութիւն Զոհրաբի հրատարակութեան:

Արձանագրութիւնների և Գրականութեան Ազդեմիային Սէն-Մարտէնը ներկայացրեց մի քանի յիշատակագրեր՝ Հեռագոտութիւններ հայոց վերջին թագաւոր Լեոնի կեանքի և արկածքների մասին (կարդացւած 1825 թ.). Թագաւորական գրադարանի ձեռագիրների քաղաածներում հատոր 11 նա տպել տւեց մի նկատողութիւն Հայոց թագաւոր Լեոն II-ի կողմից Ձենովացիներին 1288-ին տւած հրովարտակի կամ մենաշնորհի մասին:

Յուլիսի յեղափոխութիւնը (1830-ին) կորցնել տւեց Սէն-Մարտէնին իւր տեղը Զինարանի գրադարանում, որովհետև նա մի տարաբախտ մտքով նորից խառնեց քաղաքականութեան մէջ թելադրելով Universel թերթի մի քանի յօդւածները: Նա ուզեց ունենալ պրոֆէսորի տեղ Կոլլէժ դը Ֆրանս բարձր դպրոցում, բայց մերժուած ստացաւ, չը նայած Արձանագրութիւնների և Գրականութեան Ազդեմիայի պրոֆէսորների յանձնարարականներին: Նա մեռաւ խուլերայից 1832 թ-ին, յուլիսի 16-ին: Նորա բարեկամ Ռէմուսէ (Rémusat) մի ամիս առաջ արդէն բռնել էր նորա տեղը:

Մեզ մնում է միայն այստեղ առաջ բերել նորա յետմահւան հրատարակութիւնները: Սոքա են՝ 1) Հայոց պատմութիւն Յովհաննէս VI-րդ կաթողիկոսի (835—925 թ.), թարգմանած Ֆրանսերէն, Պարիզ 1841 թ.: Այս գրքին կցւած է մի ծանօթութիւն Յովհաննէս VI-ի մասին Ֆէլիքս Լէյարդի, որ սակայն հայերէն չը գիտէր: (Դորա քննադատութիւնը տւեց Ֆէլիքս Նէւ դը Լոււէն—Félix Nève de Louvain—Universe catholique թերթում 1843 թ.): 2) Հառւածներ Արշակունեաց պատմութիւնից, Պարիզ, 1840 թ. (Ֆրանսերէն լեզուով): Առաջին հատորի առաջին մասն է՝ Պարսկաստանի և Հայաստանի Արշակունիների սկզբնաւորութիւնը, երկրորդ մասն է՝ Պարսկաստանի Արշակունիները: Երկրորդ հատորում զետեղւած են յիշատակագիրներ, ծառեր և ծանօթութիւններ: Խարսէնի մասին և Վարդանի առակների մասին մինք արդէն յիշատակութիւն արինք. նոքա հրատարակեցին 1825 թ. Զոհրաբի օգնութեամբ Ասիական Բնկերութեան համար. (տես դորա մասին Սիլւեստրը Սասսիի քննադատութիւնը Գիտնականների թերթ, 1826 թ.):

Արձանագրութիւնների Ազդեմիայում Սէն-Մարտէնին փոխարինեց գիտնական սինօլոգ Ստանիսլա ժիւլիէն (Stanislas Julien):

Բարոն զը Սասի կարգաց գովեստի ճառը 1836 թ.-ի օգոստոսի 5-ի նիստում (որ արտատպւեց *Recherches sur la Mésène* և այլն զրքում երես VІІ—XXIII): «Նա բաւական բան շինեց, աւաց նա, որպէս զի նորա անունը պատուով անցնէ ասպագային, և որպէս զի մեր յաջորդները բաժանեն այն ցաւակցութիւնը, որ նորա կորուստը մեզ ներշնչեց: Այս ճառից յետոյ Եւգենիոս Բիւրնուֆի, Ասիական Ընկերութեան անունից այս կերպ խօսեց. «Այն բազմաթիւ տեղեկութիւնների հետ, որոնց շտեմարանը նորա զարմանալի յիշողութիւնն էր, Աէն-Մարտէնը միացնում էր մի այնպիսի անաչառութիւն և բարի հաւատ ուրիշների գրեւծների գնահատութեան նկատմամբ, որ խրախուսում էր ամեն աշխատանք և զովասանում ամեն մի ջանք: Ոչ մի գիտնական նորա չափ բարութեամբ չէր ընդունում երիտասարդներին, որոնք իրանց նւիրում էին նոյն գիտութիւններին. ոչ ոք իրան չէր մոռանում այնքան լիակատար կերպով, երբ հարկաւոր էր գիտութեանը ծառայել»:

Աէն-Մարտէնի գործը շարունակեց Բրոսսէն, որի գլխաւոր արժանիքը սակայն այն էր որ նա հիմք դրեց վրացերէնի ուսումնասիրութեանը Եւրոպայում: Նորա կենսագրութիւնը գիտութեանն անընդհատ ծառայելու մի պատմութիւն է:

Մարի Ֆէլիսիոէ Բրոսսէ (*Brosset*) ծնեց 1802 թ. փետր. 5-ին, Պարիզում, ուր նորա հայրը վաճառական էր: Նա իւր առաջին կրթութիւնն ստացաւ Սրլէանի փոքրիկ սէմինարիայում, իսկ միջնակարգ ուսումը Պարիզում: 1818 թ.-ին նա մտաւ Մոնրուփի ժեզուիտների մօտ: Երկու տարի անցած՝ նա վերադարձաւ Պարիզ, ուր իրան պահում էր մասնաւոր դասերով: 1821-ին նա ստացաւ բակալւարի (միջնակարգ դպրոցն աւարտածի) աստիճանը: Այդ ժամանակ նա լաւ զիտէր յունարէնը, սովորել էր եբրայերէնը և մի փոքր էլ արաբերէնը: Նա սկսել էր արդէն մերձանալ չինարէնին, մանջույերէնին և տիբէտերէնին. 1822-ին հիմնաւ Ասիական Ընկերութիւնը գրդեց նորան թողնել հոգեւորական կենսութեացը և յամատել չինարէնի ուսումնասիրութեան մէջ: Երեք տարի յետոյ նա այրեց բոլոր հաւաքած նիւթերը՝ հայերէնին և վրացերէնին նւիրելու համար: Այդ աւարկանների համար նորան ճաշակ տւել էր Աէն-Մարտէնը և Եւգենիոս վարդապետի մի փոքրիկ ոսերէն գրեւծքը՝

«Պատկեր Վրաստանի, Թարգմանած գերմաներէն Ֆրէդերիկոս Շմիդտի ձեռքով, Ռիզա, 1804 թ. 1826-ին նա ամուսնացաւ, բայց պաշտօն չունենալով՝ նա աղքատութեան մէջ ընկաւ: 1830-ին նա ներկայացրեց մի յիշատակարան՝ ցոյց տալու համար Վրաստանի հետազօտութեան և Եջմիածնի վանքում մնալու հարկաւորութիւնը: Յուլիսի յեղափոխութիւնը խորոակեց նորա յոյսերը, և վրացերէնի պրոֆէսորութեան տեղը, որ նա հայցում էր, մերժեց նրան: 1834-ին նա նորոգեց իւր խնդիրքը, և ներկայացրեց իւր առաջարկը մինիստր Գիգօին նոյնպէս առանց յաջողութիւն գտնելու: Նորա կինը վախճանւած էր, բայց նա նորից ամուսնացաւ 1831 թ.-ին, և տեսնելով իրան թշուառութեան մէջ, նա ստիպւած էր ընդունել թագաւորական տպարանում աւագ գրաշարի տեղ: Նորա աշխատութիւններն ու եռանդը սակայն դրաւել էին իւր վրայ Սանկտ-Պետերբուրգի Վիտութիւնների Ակադէմիայի ուշադրութիւնը, որ նորան ընտրեց իւր անդամ՝ 1836-ին, և որ հրաւիրեց նորան այնուհետեւ գալ ու մնալ Ռուսիայի մայրաքաղաքում: Նա ընդունեց, բայց այդ ժամանակահատից սկսած իւր գործունէութեան պտուղները պատկանում իւր նոր հայրենիքին: 1838-ին նա գնաց Մոսկւա, այցելեց Լազարեան ձեմարանը, որի անդամ դառաւ նա հինգ տարուց յետոյ: 1845 թ.-ին Բրոսսէն ուղևորեց Եւրոպայի հարաւը և մի քանի օր անցկացրեց Վինետկի սուրբ Ղազարի Մխիթարեանների մօտ, ուր նա բարեկամութիւն հաստատեց հայր Ղեոնդ Ալիշանի հետ: 1847—48-ին նա վերջապէս կարողացաւ իրագործել իւր դիտաւորութիւնը՝ այցելել Վրաստանը և Հայաստանը: Պետերբուրգ վերադառնալով նա ամբողջապէս անձնատուր արաւ իրան ուսումնասիրութիւնների: 1863-ին նա մի ճանապարհորդութիւն արաւ Ֆրանսիայում, 1867-ին նա ուզեց նորից տեսնել Ս. Ղազարի վանքը, բայց խոլերան նորան կանգնացրեց Վիեննայում: 1869-ին նա նորից այցելեց Ֆրանսիա, որպէս նաև 1880 թ.-ին, որ նորա կեանքի վերջին տարին էր. նա մեռաւ նոյն թուականի սեպտեմբերի 3-ին Շատելլըրօ՞ում, Պուատիէի մօտ:

Պրն. Լորան Բրոսսէ՝ նորա որդին, հրատարակեց Պետերբուրգում 1887-ին իւր հօր զրւածքների ցուցակը բովանդակութիւններով հանդերձ: Այդ զրւածքների թիւը հասնում է մօտ 300-ի, որոնք

դրեթէ բոլորը վերաբերում են Վրաստանին և Հայաստանին: Պարզ է որ մենք պէտք է նոցանից միայն ամենագլխաւորները յիշենք այստեղ: Առաջին տեղում մենք պէտք է յիշենք նորա սքանչելի «Զեկուցումներ մի հնախօսական ճանապարհորդութեան մասին, կատարած 1847—8 թ.-ին, հովանաւորութեամբ իշխան Վորոնցովի» Կովկասի փոխարքայի, մի ատլասով 45 նկարներից բաղկացած, Ս. Պետերբուրգ, 1851 թ., և նորա աշխատասիրութիւնը, խորագրած՝ Անիի ավերակները, մայրաքաղաք Հայաստանի Բագրատունեաց թագաւորների ներքոյ X և XI-րդ դարերում: Ս. Պետերբուրգ 1858—1861, մի ատլասով: (Երկու գրքերն էլ Ֆրանսերէն լեզուով դրած): Զեկուցումների առաջին տետրից յիշենք մանաւանդ նորա ղեկուցումը Էջմիածնի գրադարանի և հայկական հնութիւնների մասին (եր. 1—130):

Որպէս Դիւլլորիէն և Լանգլուան, նոյնը և Բրոսէն միտք չղացաւ հայկական պատմագիրների մի ժողովածու կազմել, որից նա մի հատոր հրատարակեց 1874-ին. նորա բովանդակութիւնն էր՝ Ֆրանսերէն թարգմանութիւնը Թովմաս Արծրունու (X-րդ դար), այն է Արծրունիների՝ Վասպուրականի իշխանների պատմութիւնը. թարգմանութիւնը Առաքել Դաւրիժեցու (XV-րդ դար), այն է՝ զիրք պատմութեան 1602-ից մինչ 1664 թ., այսինքն Պարսից պատերազմները տաճիկների դէմ (բնագիրը տպւած է Ամստերդամ, Տէր-Ոսկանի ձեռքով 1669 թ.-ին). թարգմանութիւն Յովհաննէս Զարեցու (?), XV-րդ դար Աղւանի պատմութիւնը: Երկրորդ հատորի մէջ, որ լոյս տեսաւ 1876-ին, մտնում են՝ Զաքարայ սարկաւազ (XV-րդ դար) Պատմական յիշատակարան: Նսայի Հասան-Ջալալեանց (XV-րդ դար), Աղւանի պատմութիւնը. Դաւիթ բէկի պատմութիւնը (XV-րդ դար ?), Էջմիածնի բնագրի հրատարակութիւն, 1877, թարգմանած աշխարհաբար, Թիֆլիս, 1881). Աբրահամ Կրէտացի ¹⁾ (XV-րդ դար), Նազիր Նահի պատմութիւնը. Սամուէլ Անեցի (XII-րդ դար), Ժամանակագրական աղիւսակներ: Զաքարայից, Առաքելից և մանաւանդ Աբրահամից թարգմանելը շատ դժւար էր այն բաղմամբիւ պարսկական և

¹⁾ Վանահայր Ռոդոստօի, Սե ծովում:

տաճկական բառերի շնորհիւ, որ դորժ են ածում այդ պատմագիրները: Բրոսսէն, բացի այդ, հրատարակեց 1870-ին Ֆրանսերէն լեզուով՝ երկու հայկական պատմագիրներ—*Կիրակոս Գանձակեցի* (XVI-րդ դար), պատմութիւն Սուրբ Գրիգոր Լուսաւորչի և նորա յաջորդների, և *Ուխտանէս Ուրհայեցի* (X-րդ դար), երեք բաժին պատմութիւն, որպէս նաև 1864-ին Ստեփաննոս Օրբելեան, Սիւնեաց պատմութիւն:

Լըբօ'ի Բիւզանդիացի պատմութեան մէջ, որ սկսել էր հրատարակել Սէն-Մարտէնը, հատոր XXII (1834) երես 449—481, նա տպագրեց մի համառօտութիւն պատմութեան Մոնղոլների արշաւանքների կենդրոնական Ասիայում XIII-րդ դարում: Վերջապէս Պետերբուրգի գիտութիւնների Ակադեմիայի «Յիշատակարանները» պարունակում են Բրոսսէի խմբագրած բազմաթիւ կենսագրական, ժամանակագրական, լեզւաբանական և այլ յօդածներ:

Վերջացնելու համար քաղենք իւր որդու Բիբլիօգրաֆիայից հետևեալ տեղը՝ «Հարկաւոր են համարել յիշեցնել, թէ Բրոսսէն ոչ պատմաբան էր ոչ լեզւագէտ: Բոլորովին հեռու լինելով չք վաստակած տիտղոսներ սեպհականացնելու թուլութիւնից, Բրոսսէն երբեք աւակնութիւն չի ունեցել լինելու ոչ մէկը և ոչ միւսը, բառիս բուն նշանակութեամբ: Որպէս վերացական ուսումնասիրութիւնների կրքոտ սիրող, որպէս անդադար և համբերութեամբ որոնող, նա գոհացել է աշխատանքի մի ամբողջ կեանք նւիրել՝ պատմութեանը փաստեր հայթաղթելու, պատմական հետազօտութիւնների ճանապարհը հարթելու և լեզւաբանութիւնը սորա պահանջներին ծառայեցնելու: Այժմ մեզ է մնում օգտւել այդ թանկագին ժառանգութիւնից: Մենք այժմ անցնում ենք մի այլ հայկաբանին, որ պակաս հռչակաւոր չէ:

Վիկտոր Լանգլուա (Langlois) ծնւեց Դիեպում 1829 թ. մարտի 20-ին: Նա հետևից Քարտերի Դպրոցի և Արևելեան կենդանի լեզուների դպրոցում և յանձնարարութիւն ստացաւ կայսր Նապոլէօն III-ից 1852—3 թ. ճանապարհորդելու և հետազօտելու Կիլիկիան և Փոքր-Հայքը: Նա իւր հետ բերաւ այրած հողից ֆիզիկոսներ, որ նա հաւաքել էր Տարսոնի գերեզմանատան աւերակներում, որպէս նաև հարիւրի չափ արձանագրութիւններ (յունական, հայկ-

մայական, բիւզանդական և հայկական արձանագրութիւններ Կիլիկիայում, Պարիզ, 1854): Այդ ճանապարհորդութեան մասին մի զեկուցում տպւեց 1854-ին, բայց ամբողջ գրւածքը լոյս տեսաւ միայն 1861 թ-ին, այս խորագրով (Փրանսերէն)՝ ճանապարհորդութիւն Կիլիկիայում և Տաւրոսի լեռներում, 28 նկարներով և մի քարտեզով: Լանզլուան զբաղւեց մանաւանդ զրամագիտութիւնով (նումիզմատիկա), ժամանակագրութիւնով և հրովարտակներով (քարտ, chartes): Դրանց են վերաբերում նորա «Վրաստանի զրամագիտութիւնը միջին-դարերում, 1852, Պարիզ. Եգիպտոսի նոմերի (նահանգների) զրամագիտութիւնը հռովմայական կառավարութեան ներքոյ, 1852. Հայաստանի զրամագիտութիւնը միջին-դարերում, 1855. Հայաստանի ընդհանուր զրամագիտութիւնը, 1858. Հայաստանի զրամները հնումն, որ տպւած է Դիւյորիէի Հայկական պատմական զրադարանում, 87 երես, 6 նկարներով, 1858. Կիլիկիայի չը տպագրւած կամ քիչ յայտնի զրամներ, արտառուած զրամագիտական հանդէսից (Revue numismatique), 1854. Փորձ Վրաստանի զրամների դասաւորութեան հնուց մինչ մեր օրերը, 1860 թ., Պարիզ:

1861 թւականին Լանզլուան ուղարկւեց Իտալիա, այնտեղ ուսումնասիրելու համար Ֆրանսիայի և Հայաստանի մէջ եղած յարաբերութիւնները խաչակրաց արշաւանքների ժամանակ: Այդ առիթով նա հրատարակեց մի յիշատակագրութիւն Սուրբ Ղազար կղզու վանքի մասին, Հայաստանի համառօտ պատմութեան և զրականութեան հետ միասին, 1863 և 1869, որից դուրս եկաւ անգլիական մի թարգմանութիւն Ֆ. Նրէդերի, 1874 թ. (Այդ աշխատութիւնը երեւաց նոյնպէս «Ասիական թերթում» 1864 թ. խորագրով՝ Յիշատակարան զրականութեան մշակութեան սկզբնաւորութիւնների մասին Հայաստանում, եր. 200—223. Մխիթարեան միաբանութեան և Սուրբ Ղազարի հայոց վանքը (երես 383—397): Նոյն թւականին, 1863, նա հրատարակեց Արևելքի Տեսութեան մէջ (Revue de l'Orient) այս գրւածքը՝ Ժամանակագրութիւն Հեթումի, իշխան Կորիկոսի (seigneur de Gôrigos), չը տպւած աշխատութիւն աբեղայ Այթոնի (Aithon), հեղինակ Թաթարների պատմութեան. իսկ Ս. Ղազարում հրատարակեց՝ Դանձարան Հայաստանի քարտերի կամ Ռուբինեանց թագաւորական կանցելարիայի թղթերը (Le Trésor des

Chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roubéniens), որի մէջ ամփոփւած են Կիլիկիայի հիմնարկութիւններին վերաբերեալ բոլոր զոկումենտները ասպետական միաբանութիւններից հաստատուած խաչակրաց արշաւանքների ժամանակ և Խոալիայի հանրապետութիւններից. 242 երես:

Վիկտոր Լանգլուայի գլխաւոր արժանիքն այն է որ նա սկսեց Հայաստանի հին և նոր պատմագիրների հրատարակութիւնը, հովանաւորութեամբ Նուբար փաշայի և աշխատակցութեամբ Ս. Ղազարի Մխիթարեան ուխտի անդամների: Գորանից միայն երկու հատոր լոյս ընծայւեց: Առաջինը հրատարակեց 1867 թ.-ին և պարունակում է յունական և ասորական պատմագիրները հնուց թէ նոր թարգմանած՝ Մար-Աբաս Կատինա, Բարդէսան, Ագաթանգեղոս, Փաւստոս Բուզանդ, Ղէրուբնա Նդեսացի, Զենոբ Գլակ, Յովհան Մամիկոնեան, Սուա-Կալիսթէն, Գրիգոր Մագիստրոս (որի մասին Լանգլուան մի յօդուած հրատարակեց Վսիական թերթում 1859), Սբ. Եպիփանէս և այլն: Երկրորդ հատորը, որ հրատարակեց 1869-ին, պարունակում է հայոց պատմագիրները Վ-րդ դարու՝ Կորիւն, Մովսէս Խորենացի, Նզիշէ, Ղազար Փարպեցի, հաւաքածներով Նզիշի Կողբացուց և ժամանակագրական աղիւսակներով: Գործի հովանաւորողը՝ Նուբար փաշան, ծնւել է Զմիւրնիայում 1825-ին հայկական ընտանիքից: Նա կրթւեց Զւիցերիայում և Ֆրանսիայի Տուլուզ քաղաքում: Նզիպտոսի արտաքին գործերի մինիստրութեան մէջ քարտուղարի պաշտօն վարելուց յետ, նա ուղարկւեց Լոնդոն, 1850-ին և դառաւ Իզմայիլ փաշայի արտաքին գործերի մինիստրը 1866-ին: Իւր տիրոջ հետ նա յետ քաշւեց 1879-ին: Նորա հովանաւորութեան ներքոյ հրատարակող պատմագիրների ժողովածուն պէտք է բաղկանար հինգ հատորներից, բայց նա ընդհատեց Լանգլուայի մահւան պատճառով, 14-ն մայիսի 1869 թ.: Եւարիստ Պրիւզգոմը, որին յանձնարարւեց գործի շարունակութիւնը, մեռաւ հեռուալ տարին: Այդ ժամանակն է ահա որ Բրոսէն սկսեց այն ժողովածուն, որ մենք վերը յիշատակեցինք, և որ առաջ նշանակւած էր Լանգլուայի մասը կազմելու:

Բացի այն աշխատութիւններից որ մենք վերը յիշեցինք, Լանգլուան լոյս ընծայեց Հնախօսական հանդիսում (Revue archéologi-

que) 1859 թ.՝ Դոկումենտներ Փոքր-Հայքի Լուսինեաների 1342—1394 թ. պատմութեանը ծառայելու համար. Տուրինի Գիտութիւնների Թագաւորական ակադեմիայի Վէմուարներում 1861 թ. տպեց՝ Յիշատակարան քաղաքական և վաճառականական յարաբերութիւնների մասին Ձեռնվայի հասարակապետութեան հետ XIII և XIV-րդ դարերում. Արևելքի Տեսութեան մէջ (Revue de l'Orient) 1856 թ. տպեց՝ Հայաստանի տեղը երկրիս պատմութեան մէջ. նոյն թերթում՝ Խորհրդածութիւններ Հայաստանի յարաբերութիւնների մասին Ֆրանսիայի հետ միջին դարերում և մի յօդած՝ Պարբերական թերթերը հայերի մէջ. Revue des Deux Mondes ամսաթերթում՝ Թուրքիայի հայերը և Տաւրոսի կոտորածը: Վերջապէս նա աշխատակցեց Ս. Պետերբուրգի Ակադեմիայի Մէմուարներին (Յիշատակագրութիւն) յօդածներովս՝ «Պատմական և քննադատական մի փորձ Հայաստանի սոցիալական և քաղաքական կազմակերպութեան մասին Ռուբինեան տոհմի Թագաւորների ներքոյ, ըստ դոկումենտների որ պահպանւած են Եւրոպայի արխիւներում» (V-րդ շարք, հատոր III, 1860, № 3, երես 1—85). «Պատմականաբանութիւն Մովսէս Խորենացու պատմութեան աղբիւրների մասին» (հատոր IV, 1861, երես 293—368). «Նամակ պ. Բրոսսէին Հայաստանի Ռուբինեան տոհմի և Լուսինեան տան Թագաւորների յաջորդութեան մասին, արևելեան և արևմտեան աղբիւրների համաձայն (տես նոյնտեղ, եր. 413—428): Մի հրովարտակի մասին որ տրւած էր Հայաստանի Թագաւոր Լևոն V-ից Կիլիկիացիներին 1831 թ-ին (Իւլլետէներ Ս. Պետերբուրգի Ակադեմիայի, հատոր V, երես 375—389): Քաղաք Բարբարոսի իշխան, Հայաստանի կոնտեստաբլ Սմբատի ժամանակագրութիւնից, շարունակութիւնով նորա շարունակողի, որ պարունակում է պատմութիւնը Ռուբինեանների Կիլիկիայում հաստատւելուց մինչ այդ տոհմի հանգչելը, Թարգմանած Փրանսերէն՝ Մոսկւայում տպագրւած բնագիրներից, հրատարակութեամբ Ռսկան Գէորգեան Յովհաննիսեանցի 1856 թ.) և Պարիզի Նահապարեան հրատարակութիւններից (Հայոց պատմական դալերէյա—Galerie historique arménienne—հրատարակութեան մէջ), հատոր IV, № 6, երես 1—38:

«Ասիական թերթ» (5-րդ շարք, հատոր V, երես 257—308) նա հրատարակեց մի յօդած, խորագրով՝ Ճանապարհորդութիւն ի Սիս,

մայրաքաղաք Հայաստանի միջին դարերում: Գրքի 290—297 երեսներում նա տալիս է Սիսի վանքի 145 ձեռագրերի ցուցակը, որ նրան յաջողեց տեսնել և ուր նա գնեց № 145-երորդը, որ մեկնութեան մի կտոր է գրւած Սարգիս վարդապետից XIII-րդ դարում և որ այժմ Պարիզի Ազգային Գրադարանումն է:

Իւր մահից երկու տարի առաջ լոյս տեսաւ նորա գեղեցիկ գրւածքը՝ Պատումէյի աշխարհագրութիւնը, լուսավիմագրական վերատադրութիւն Աթոս լեռան Վատոպեդի յունական վանքի ձեռագրից, Պարիզ, 1867 թ., մեծադիր: Ներածութիւնը, խորագրով՝ «Աթոս լեռուը և իւր վանքերը», առանձին լոյս էր տեսել 1866-ին:

1868-ին նա հրատարակեց Վենետիկի Ս. Վազարի Մխիթարեանների մօտ՝ Ժամանակագրութիւն Միքայէլ Մեծի, հեղինակի XII-րդ դարու, պատրիարքի յակոբեան ասորիների, առաջին անգամ թարգմանած քահանայ Իշոկի (Ischök) հայերէն վերսիացի:

Այժմ մենք անցնում ենք Եւգենիոս Բորէ'ին: Մենք նորա անունը չը կարողացանք գտնել ոչ մի կենսագրական բառարանում, և ոչ իսկ Լարուսի բառարանում, և մենք շնորհապարտ ենք մեր տալիք տեղեկութիւնների համար Միսիսի միաբանութեան ¹⁾ ընդհանուր գլխաւոր պ. Անտոն Գիա'ին (Fiat), որ բարութիւն ունեցաւ մեզ ուղարկել տալ մի գիրք այս վերնագրով՝ Եւգենիոս Բորէ XV-րդ ընդհանուր գլխաւորը Միսիսի միաբանութեան (Eugène Boré, XII-e supérieur général de la Congrégation de la Mission). Կենսագրական տեղեկագրութիւն-քաղւածքներով նորա յիշատակարանից և նորա թղթակցութիւնից, երկրորդ տպագրութիւն, Պարիզ, 1879, 372 երես ութածաւ, պատկերով:

(Կը չարունակւի)

¹⁾ Այդ կաթողիկական միաբանութիւնը գտանւում է Պարիզ, փողոց Սևր (Sèvres), տուն № 95.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Լ Ե Ռ Ե Ն Յ Ի

* *

Ես լալիս էի. ինչո՞ւ— չը գիտեմ.
Սիրո՞յ էր նա լաց, թէ ցաւից նըսեմ...
Բայց արտասուքըս մեղմիկ շիթերով
Հանգիստ էր տալիս հոգուս իմ վրդով:

Ես խնդում էի. թւում էր, թէ կրկին
Ժպտաց երեսիս շողն արեգակին,
Բայց ճնշւած էր սիրտս՝ ասես թէ բեռից...
Ինչպէ՛ս կուզէի, ա՛հ, ես լալ նորից:

Ամպերում վառւեց կայծակը սրնթաց.
Շըլացնող լոյսը շուրջ տարածւեցաւ,
Դողաց և մարեց. օրոտը թնդաց.—
Կայծակը խըփեց՝ մի ծառ չորացաւ:

Այդպէս խտւարում իմ կեանքիս վրդով
Մէջքիս երևցաւ տեսիլ սիրավառ,
Այրեց նա սիրտըս աչքով բոցավառ,
Նորա բոլոր հիւթը ցամաքացնելով:

20 նոյեմբերի, 1890 թ.

ԱՌԱՌՈՏԵԱՆ ԱՄՏՂԸ

Լուսադէմը դեռ չէր ըսկսել
Գիշերային քողը պատռել,
Երբ, ինչպէս կայծ, յանկարծակի
Աստղը վառւեց երկնքում:
Դաշտում խաւար ու ամայի
Նա մենակ էր փայլւիլում:

Բարձունքներից եթերական
Դիտում էր նա իր շուրջն Համայն,
Խաւարի մէջ որոնելով
Լոյս, հորիզոն լայն ու բաց,
Երբ արշալոյսն նըկարւելով,
Աննկատ ելաւ նորա դիմաց:

Ժպտաց աստղը ժպտով պայծառ
Նորա տեսքիցը գեղեցկավառ.
Ժպտաց, դողաց և զոռնատւեց...
Կրկին ըռպէ... սիրական
Արշալոյսը վառւեց, կրակւեց —
Աստղը մարեց յաւիտեան:

ԵՐԿՈՒ ՏԵՍԻԼ

Իմ կեանքիս մէջ տըխրագին
Երկու պայծառ տեսիլներ
Երևեցան իմ աչքին,
Ասես երկու աստղներ:

Երկու պայծառ տեսիլներ
Եղան կեանքիս փարոսն վառ,
Մէկըն իբրև քաղցրը սէր,
Միւսըն՝ անմահ գաղափար:

Պարգևեցին նրանք Հոգւոյս
Կենդանութիւն խնդալից
Եւ արցունքներ խռովայոյզ
Քաղեցին իմ աչքերից:

Անցան տարիք: Սպառնալի
Բերին կեանքիս մըրրիկներ,
Բայց միշտ մնացին պաշտելի—
Այն երկու վառ տեսիլներ:

ԱՊԹԵՐՈՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶԻՆ

ԵՒ

ՌՈՒՍԱՅ ՆԱԻԹԸ

ԳԱՆՈՒՍՏ ԿԻԻԼՊԵՆԿԵԱՆԻ

(Շարունակութիւն 1)

II

Բաքուն, որ ապագայում մեծ քաղաք են գուշակում ռուսաց մեծու-
թեան թշնամիները, սկսել է արդէն հողի տակից դուրս գալ: Նոր քա-
ղաքը շինւել է պարսկական հին քաղաքի կողքին: Նւ իրօք, նոր շինու-
թիւնները սկզբում միայն մի քանի քալ հեռու էին հին թաղերից, բայց
ներանք արագութեամբ ընդարձակեցին մինչ ալն բլուրի ստորոտը, որ
հիմքն էր կազմում անցեալ դարերի Բաքուն: Լեռու ներանք բռնեցին բլրի
լանջերը, որին ամեն կողմից ծածկեցին: Այժմ ալն վիթխարի պարիսպ-
ները և ահագին դռները, որոնք պաշտպանում էին պարսկական մոնու-
մենտները, քանդւած են արդէն, և ոչինչ չի կարող ալ ևս դանդաղա-
ցնել ևւրոպական լուսաւորութեան մուտքը: Շուտով խաների հին պալատը,
խանի աղջկադ աշտարակը, Ֆաթմայի մզկիթը, ալդ բոլորը կ'ընկնի, կ'ան-
հետանա, տեղի տալով սովորական փողոցներին և եւրոպական ոճով շին-
ւած տներին, առանց արտիստական ճաշակով շինւած ալն միատեսակ,
քարձր, առողջ և կոմֆորտով տներին, որոնք կապւած չեն լինիլ ոչ մի
չիւտաակի հետ: Շատ գեղեցիկ էր սակալն Հալի-բեն-Իբրահիմ խանի ալդ
պալատը, որը XV-րդ դարում նորան դարձրեց թէ փառահեղ պալատ և թէ
մի ուժեղ ամրոց: Ժալուի վրայ կանգնեցրած՝ նա երկար զիմացաւ

թշնամիների շտուրմներին, չեսույ ճա ընկաւ և նորա հետ ալն պետու-
թիւնը որի պատնէջն էր ճա: 1650 թւականին Շահ-Աբբաս II նորա աւե-
րակների վրա կանգնեցրեց ալն պալատը, որ դեռ կալ և որ այսօր
ճամբորդների հիացքն է բերում. ֆրանսիացի Շարդէնը սքանչանում էր
արդէն այս քանդակների վրալ, որոնք երազել են տալիս բոցավառ
հրաշալիքների մասին, այս մեծ ջլանալին զուան առաջ, սրտեղից մտնում
են «դիւանը», որ քիօշքի ձևով է սարքած, ջլանալին սիւներով և մի հիա-
նալի պարսկական զմբէթով: Միալն թէ ալս անհամեմատելի զուլի-դոր-
ծոցները հանգիստ կերպով զիտելու համար՝ լաւ կը լինէր ականջներդ
փակէք ուղեկցի պատմածներից և չը նալել քիօշքի մէջտեղը դրած
սալաքարի վրալ: Ամենասկեպտիքական ալցեղուններն անգամ դարհուրում
են իմանալով որ ալնտեղ մի դահլիճ կար, ուր թաթար և պարսիկ խաները
զատաստան էին կարում: Թաթարների դատաստանը՝ բնաղդամը մարդուս
աչքերը որոնում են տապարը և կոճղը. գոնէ ալմի, մէջտեղի սալաքարի
տակ մնում է ալն հորը, ուր զցում էին դատադարուածներին: Պատմում
են թէ ալդ հորը միանում էր ծովի հետ. ալդ հորի մէջ ճախ զցում էին
զլուխը, չեսույ արիւնաշաղախ մարմինը, և դատաստանը վերջանում էր:

Հին մզկիթները շատ աւելի քիչ հետաքրքրական են. չիւնք սա-
կալն սուրբ-Պաթմալինը, որ, ինչպէս երևում է, կարող է բերրի դարձնել
անդաւակ կանանց և նրանց տալ ըստ ցանկութեան՝ տղալ կամ աղջիկ
երեխաներ: Կովկասում քիչ չեն սրա նման ուխտադնացութիւններ. Բա-
լերն (Bayern) գերմանացու ասելով՝ մահմեդականներ թէ քրիստոնէաներ
հալցում են սրբերից երեխաներ, մանաւանդ արու դաւակներ, որոնք
աւելի են զնահատում: Ամենահռչակաւոր աղբիւրը կամ սրբարանը սուրբ
Յակոբինն է, Մասիս լեռան վրալ. շատ են գովում ճաւ Գուռի աղբիւր-
ները՝ Ախալցխալի վիճակում, և Արադածի մի քանի ժաւուրը, ուր գնում
են կանալք և փուռում են՝ ամենատարօրինակ դրութիւններ ընդունելով:
Սրբուհուն կամ սուրբին աղօթքը չիւնցնելու համար զետնին փալտեր են
տնկում, որոնք չըջապատում են թղթի կտորներով կամ ճերմակեղէնի
կտորաւանքներով, ալն ձևով, որ կոպիտ կերպով ներկալացնեն օրօրոցը:
Ալդ օրօրոցներից մէկը Բալերնը վերցրել և զրել է Թիֆլիսի մուզէլում:

Խանի աղջկալ աշտարակը երեւի մի պարզ գիտարան էր. Ալեքսանդր
Իւլման էր որ մի անգամ ես ուզեց իրան բաւարարութիւն տալ՝ իւր
ընթերցողներին կախարդելով մի իշխանուհու պատմութիւնով, որ մի
բարձր աշտարակ է չինել տալիս միմիալն ալն նպատակով, որ նրա բարձ-
րութիւնից իրան վալր զցիւ: Նրա համար չը պէտք է Բաքուն շատ զար-
ճալի լինէր. դեռ այսօր էլ ալնտեղ ոչ թատրոն կալ, ոչ կոնցիրտներ, ոչ
կանաչեղէն, ոչ ջուր, ոչ բուսաբեր հող, որից ալ սեղերում միալն անա-
պատներն են զուրկ: Քաղաքում մի թաշկինակի մեծութեան պարտեղ չինե-
լու համար՝ նարկաւոր է եղել հողը Աստրախանից բերել տալ: Եւ Բաքում

գրեթէ անձրև չի գալիս, աչնպէս որ անձրևալին տարւալ մակերևութը շատ շատ հասնում է 0,25 միլլիմետրի. Կասպեան ծովի գոլորշիներն ամբողջապէս քաշւում են դէպի Գաղստանի դադաթները: Ջուրն աչնքան սակաւ է, նոյն իսկ տնալին գործածութեան համար, որ լուրջ առաջարկութիւն է եղել Աստրախանից ջուր բերել տալ արկղներով, որոնց մէջ Բաքուի նաւթը տանում են Վոլգայի գետաբերանը:

Այլ եւ քաղաքում ոչինչ չունենալով տեսնելու, բացի բաֆինադներից, որոնց մասին առիթ կ'ունենամ լետոյ խօսելու, երկու օրից լետ եւ աչն թողի, որ Ապշերոնն ուսումնասիրեմ: Պ. պ. Ծովեան (Ծովեանով) եղբարները, որոնց արհեստանոցը Բաթումում արդիւնաբերում է օրական 4,000 նաւթի արկղ, չնորհ արին իմ կարգադրութեան ներքոյ դնելու մի ֆաէտոն. բացի դրանից նրանք ինձ երկու ուղեկիցներ տւին՝ մէկն ինձ ուղեցոյց լինելու, միւսը մեզ պաշտպանելու համար՝ մեր ճամբորդութեան գիշերաչին մասում:

Երբ եղանակը լաւ է, տաքութիւնը տանելի է եւ քամին բաւականաչափ մեղմ է, ճամբորդութիւնը բաւականին ախորժելի է նոյն իսկ կանաչին եւ ուրախ տեսարաններին սովոր եւրոպացուն: Եւ իրօք, գետինը միատեսակ մոխրագոյն է կամ սպիտակ, կէս աւազ եւ կէս աղ: Հորիզոնի վրա գործարանների բուխարիները կամաց կամաց անհետանում են ճանապարհի վրա, իրարից հեռու ցրւած են պարսկական գիւղեր, Մեչէզի-Եզնա, Խիլլի, որոնց գորգերը խորագրացի կերպով հուշակած են ամբողջ Արեւելքում, եւ այլ գիւղեր, ուր պահպանւած են դեռ Խորասանի բոլոր սովորութիւնները. կանաչ բանում են, տղամարդիկ ոչինչ չեն շինում եւ թողնում են թաթարներին (թուրքեր?) գործարանների (բաֆինադների) գործը՝ Աստուծո ամբողջ օրը բարբաջելու համար եւ կամ լսելու աչն հին հեքիաթները, որոնց նմուշները մենք ունինք «Հազար ու մի գիշեր»-ի մէջ:

Ամենավատ ճանապարհով, որ մերթ քարքարոտ եւ մերթ աւաղոտ է, մերթ լուսահատացնելու չափ չոր եւ մերթ ծծւած նաւթով եւ կերոսինով, մենք հասնում ենք հուշակած Կրակի (Ատեժկա) կամ Սուրախանէի դաշտը. նոյնքան ամաչի, որքան եւ Ապշերոնի մնացած տեղերը. նա պահպանում է սակաւն մազդէութեան անմահ չիպտակները եւ իւր նաւթի աղբիւրները, եւ իւր բնական կրակի բոցերը, որոնք թէ գեղեցիկ են գիշերաւ սուերների մէջ եւ թէ օգտակար են հողի հարստութիւնները շահագործելու համար: Իհն ալսօր էլ, ալդ վառարանների տեսարանը գիշեր ժամանակ ճամբորդին խորը զգացնել է տալիս: Իէհ ալժմ փորձեցէք երևակայել Կովկասի առաջին բնակիչների կրօնական ոգևորութիւնը, նրանց հիացմունքը, նրանց սարսափը, նրանց հաւատի խոստովանութիւնը Ծաղրագոյն Խակի ամենակարողութեան համար, որին նրանք պաշտում էին Նորա գոլութեան վիթխարի արտադրութիւնների ղիմաց: Եթէ ներկայումս քիմիկոսը չափշտակւում է, ինչ պէտք է լինէր Հոմերոսի ժամանակաւիցների հաւատը

ու սարսափը: Եւ ահա թէ ինչու Կրակի տաճարը կառուցել էր այս դաշտի վրայ, ուր դարերի ընթացքում գալիս էին բաղմունքեամբ Զրադաշտի աղանդաւորները: Աւագ, ինչ կ'ասէին Նրանք այժմ, տեսնելով որ սրբազան Կրակի բոցերը գործ են ածում Նաւթի մի գործարանի լուսաւորութեան համար և որ իրանց եռապատիկ սուրբ տաճարն իսկ՝ թաքցրած է և փակւած գործարանի նոյն իսկ շրջապարսպի մէջ!

Մինչ այժմ, գոնէ, Կոկորեի գործարանը ոտնակոխ չէր արել տաճարի պարիսպները. բայց որքան էլ փոքրիկ լինի սրբարանը, խանգարիչ համարեց նա, և Նրա կործանումն արդէն վճուած բան է. թերևս այս ժամին այդ արդէն կատարւած է: Նրբ ինձ թուլ տուեց ալցեիւլ այդքան պատկառելի մոնումենտը, առաջ ինձ անցկացրին մի նեղ կորիդորով, և ահա շուտով ևս գտնւեցաւ մի տարօրինակ տեսքով բակի մէջ. մէջտեղում բարձրանում է մի գմբէթ, որ պահւում է չորս հաւասար անկիւնաւոր սիւներով, որոնց միջի խորշերը ճանապարհ էին տալիս բռնկող զազին: Այսպիսով ստացւում էին չորս բնական բոցեր: Զորս հրեսից մէկի վրայ ամրացրած է մի երկաթէ երեքժանի, միւսները ծածկւած են հնդկական արձանադրութիւններով: Վերջապէս չորս սիւները միացրած են իրար հետ: Զորս քալով մտնում էք սրբարանը, որի մէջտեղում փորւած է մի ընդունարան քառանկիւնի ձևով: Բակի շուրջը կան փոքրիկ խուցեր միանգամայն նոյն ձևի՝ մի գմբէթ, որի կենտրոնում մի զանգակ է կախ արած, չեռող երկու ոտաչափ մի պատ. պատից դէնը, աջ կողմում, մի տեսակ տաճար է երեք աստիճաններով, քարաչէն, արձանադրութիւններով ծածկւած և վերջապէս աշտանակներից տեսնւում է հողի բնական կրակը: Շինութեան ընդհանրութիւնը կրում է որոշ կերպով հնդկական ճարտարապետութեան կնիքը: Ռուսաց թագաւորի գալու ժամանակ 1888-ին՝ Նորան Նորոգեցին, և նա սոսաւ հին պաշտամունքը կատարելիս պարսի երեք քահանաների (մոգերի) ձեռքով, որոնք Հնդկաստանից էին եկել: Ցաւալի է որ մոգերն արդէն անցեալ դարուց դէս սկսել են իրանց տաճարի մէջ ներմուծել Նւրոպալից եկած գոյնաւոր ծիծաղելի նկարներ, որոնց նոյնքան ջերմեռանդութեամբ պաշտում են հաւատացողները, որքան Զրադաշտի լաւիտեանական կրակին են պաշտում. և թէ աստուածը չը տուէ ոչինչ՝ տուրիստը չի կարող չապշել և չը զարմանալ:

Սուրախանէն իւր երկու հազար տարիների հուշակը միայն կրակապաշտ գերբների մօտ չէ որ կորցրիլ է. Նրա գործարանական բարգաւաճումը նմանապէս սկսել է իջնել լաղթելով Բալխանէի կողմից. և Կոկորեի գործարանը վերջինն է ալդտեղ մնում, որպէս և առաջինն էր մի ժամանակ: Պարսկական գիւղ Բիւլբիւլէ և Նաւթի մի քանի բնական լճերը միակն են բաժանում ալդ երկու միացող դաշտերը, և ահա շուտով հասնում ենք Կովկասի Նաւթալին արդիւնաբերութեան կենտրոնը:

Բալխանի բերրութիւնը եղակի է աշխարհքում. 1833-ից դէս

տարեկան արտադրութիւնը 10,000 տոննից բարձրացել է մինչ 2,700,000 տոնն (մի տոննը=62 պուղ), չարունակ աճելով, մինչդեռ Պենսիլւանիայի մնում է միևնույնը. բացի դրանից, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների նաւթի աղբւրները տարածւում են մի միլիոն քառակուսի կիլո-մետրի վրայ, մինչդեռ Կոլկասում Ապչերոնեան թերակղզին ըմբռնում է ընդամենը հազիւ 2,000 քառակուսի կիլոմետր ¹⁾, տալով զրեթէ կէսը այն քառակուսիեան, ինչ տալիս է Ամերիկան: Ի՞նչ կը լինի, երբ աւելի կատարելագործւած գործիքներով նաւթի չահագործութիւնը կը տարածւի Թուրքիստանի 500,000 քառակուսի կիլոմետր տարածութեան վրայ, Մուղանի և Դաղստանի վրայ, Կուբանի, Ղրիմի և Կովկասի ամբողջ լեռնաշղթայի վրայ ²⁾: Բալախանում բանող հորերն անքան առատ են, որ մի քանիսը նրանցից մի քանի օրում տեւել են հում նաւթ աւելի քան 16 միլիոն կիլոգրամ. հում նաւթի չադրանի բարձրութիւնը հաւնում է մինչ 80 կամ 90 մետր. ես ինքս ոտից ցղուի թրջւցի նաւթի անձրեով, որ բարեբաղդաբար նոյնքան անվնաս էր, որքան նա նուրբ էր:

Բալախանից հում նաւթի արդիւնաբերութիւնը տարածւում է աստիճանաբար դէպի Սաբունչիի բարձրաւանդակը. այժմ Սաբունչիից աւելի է արտադրում Բաղով հրանդանը, որի առաւելութիւնն այն է, որ ծովի ափին է (Բաքուից 4 կիլոմետր հեռու), մինչդեռ Բալախանէն մօտաւորապէս 50 մետր լանդութիւն ունի: Այսպիսով ամբողջ թերակղզին չահագործւում է բոլոր ուղղութիւններով՝ Բալախանէն հիւսիսում, Բաղովը հարաւում: Ես տեսաւ Բաղովում մի հոր, որ օրական միլիոնաւոր պուղ նաւթ

¹⁾ Ապչերոնեան թերակղզին, ասում է պ. Լուդւիգ Կորէլ, չափում է մօտ 2,000 քառակուսի կիլոմետր (մի կիլոմետրը մի վերստից վերջը լինէ պակաս է, և հաւատար 1,400 արշէնի): Այդ տարածութիւնից շահագործւում է միայն 400 քառակուսի կիլոմետր: 1832-ից մինչ 1880 թւականին այդ՝ համեմատապէս սահմանափակ մասը աւել է 240 միլիոն պուղ նաւթ (որ նոյնն է թէ 3 միլիոն 850 կադոր տոնն). եթէ այդ քանակութիւնը հաւասար կերպով տեւելու լինենք ամբողջ թերակղզու վրայ, կը ստանանք 45 սանտիմետր հաստութիւն: Դրանից պէտք է եղբակացնել որ այն ինչ մեղ շատ է թւում, դեռ ոչինչ է՝ համեմատած Բաքուի նաւթային հորերի սակ ամբարած գանձերի հետ:

²⁾ Մեզ համար անկասկած է, որ պ. Ալւայէնիւնը բաւականաչափ ստանա-սիրտ տոն չի բանեցնում Բաքուի և Ամերիկայի նաւթային հարստութիւններէ համեմատական գնահատութեան մէջ, միշտ աշխատելով փրանսիական ամապըն համար նշանակած և նրանում տալած յօդւածում աւելի մեծ նշանակութիւն տալ ռուսական նաւթին ի վնաս ամերիկական նաւթի: Քաղսքական շոյլինիզմը մի կողմ՝ պէտք է խոստովանել, որ չը նայած Բաքուի նաւթի արդէն համաշխարհային հաւաքիւն, նրա տարեկան արտադրութիւնը Ամերիկայի նաւթի արտադրութեան կիսից էլ պակաս է. իսկ միւս կողմից դեռ ամենեւին հաստատ չէ և հիմք էլ չկայ զոնէ մօտ սպաւային նկատմամբ զբախան յոյսեր դնել պ. Ալւայէնիւնից յիշած Ռուսիայի միւս անդերի վրայ:

է եղել արտադրելիս և որ իմ ժամանակ ղեռ տալիս էր 200,000 մինչ 300,000 պուղ. բնակիչները, որոնք վախեցած էին աւելի քան սթանչացած, վախենում էին մի նոր տեսակի հեղեղից և մանաւանդ հրդէհից, որ կարող էր մի քանի օրում ոչնչացնել ալս բոլոր հարստութիւնները և բոլոր հարեան աղբիւրների գանձերը: Եւ իրօք այդ աղէտը պատահեց մի քանի ամիս լետու: Պարոն՝ Փաղիւնը՝ սեպհականատէրը զխտութեան տարեգրերի մէջ այդ եղակի հոյր, տենաւ շաղրւանը լալիւլիս մինչ 250 ոտնաչափ բարձրութիւն, և աւագը զալիս հասնում է եղել մինչ Բաքուի փողոցները: Դժբաղդարար, հորի 18 ամուսն զուգութեան ընթացքում, նաւթի մեծագոյն մասը իջուր կորաւ: Դրութեալի հորից, որ անդուգական էր թւում (1883-ին), թաղիւնի հորը զերազանցեց. և ղեռ ով զիտէ թէ ինչ ապագայ է խոստանում այդ տարօրինակ թերակղզին:

Պարզ է որ սեպհականատէրերը չեն ուղում շատ աղգալիսի հորեր ունենալ. նաւթը չէր կարող ժողովւած լինել և կը կորչէր Աստալից ծովում. ալն նաւթը, որ մնում է օդում, չուտով անպէտք է դառնում լուսառորութեան համար, եթէ ոչ վառելու համար. և, ընդհանրապէս, ամեն մի հոր, որի զարկերը (չաղրւանը) չեն կանոնաւորւած, մնում է անօգուտ: Փորձել են ուղղութիւն տալ՝ գործիքներ չինել. օրինակ հորերի վրայ կանգնեցնում են ալպէս կոչւած վիշկաներ (ВЫШКА), որ կարող է սալութեան զարկերը պահպանել 20՝ կամ 30 մետր բարձրութեան վրայ: Բայց չը նալած բոլոր զգուշ միջոցներին, որ գործ են դրած վիշկաները չինելիս, զարկի ուժը, կարծր ջրածուխների հարւածները, աւաղի և գաղերի բուռն շփումները շատ անգամ քանդում են բոլոր աշխատութիւնները: Բալխանում ինձ ցուց տեղին երկաթէ երկու տախտակներ 10 սանտիմետր հաստութեամբ, որոնք շատ քիչ ժամանակում ծակծակել էին աւագով: Ամենից առաջ դատուող գաղերն ալպալիսի ջրածուխներ են (hydrocarbures), ինչպիսիք են գաղերը ճահիճների ($C^2 H^4$), էթանի ($C^2 H^6$), պրօպանի ($C^3 H^8$), որոնց շուցները շատ հեռուից լուում են և որոնք օդի թթւածնի հետ միասին կազմում են շատ վտանգաւոր բնաւորութիւն ունեցող պալթող խառնուրդներ:

Պէտք է նկատել, որ գաղալին արտադրութիւնները և հեղուկալին զարկերն աւելի բուռն են լինում գարնանը, որովհետեւ ձմեռը նաւթի չահագործութիւնը դանդաղում է՝ գետալին նաւապնացութեան ընդհատման պատճառով: Որ այդ ստիպւած դադարի ժամանակ նաւթը չը կորչի, սեպհականատէրերը շատ անգամ փակում են իրանց հորերը երկաթէ շատ հաստ տախտակներով, որ կալ պակներ են կոչւում և ամուր խողովակներով, որոնց միջոցով ըստ ցանկութեան կարելի է հեղուկը բաց թողնել: Ասկալն գետնի տակից լուում են խուլ և երկար ձողեր, երբեմն նաեւ պալթիւններ, որպէս թէ վառօդից. ահա հէնց այդ ժամանակ վիշկաները տատանւում են, վերքաչւում և երբեմն էլ ուժով գետին զլորւում, մինչդեռ

գետինը տեղ տեղ փլչում է և ծածկում հորը, որ այդ բոլորի պատճառն էր եղել:

Այդքան խրատներ առանց արդիւնքի չեն անցնում, բայց էլի գործիքները դեռ հեռաւորապէս անդամ չեն հասել ամերիկականին: Շահագործութեան եղանակներն ընդհանրապէս դեռ շատ պակասաւոր են. գործարանների խողովակները վատ են սարքւած և դեռ էլի շատ նաւթ է կորչում: Պարսն Մարսինը սնանկութեան մի զարմանալի դէպք է պատմում, որ պատահել է Բաքում, ուր սնանկացածի հորը օրական միլիոնաւոր կիլոգրամ նաւթ էր տալիս. բանն ալն է, որ հորը շատ շատ էր տալիս, որպէս զի կարելի լինէր նրանից մի կաթիլ ժողովել. և ահա այդպիսի մի հոր, որ Ամերիկայում հարստութիւն կը լինէր, Բաքում սնանկութեան պատճառ է դառնում: Ռուսաց մամուլը լաճախ բողոքել է մի սխտեմի պահպանման դէմ, որի շնորհիւ գտնւած նաւթի կէսը կորչում է և աղբալիսով աղբալին հարստութիւնը վատնում: Նորէլ եղբայրները, որոնք ծագումով չեղացի են, գրեթէ միակն են, որ շատ էլ փոս չեն մնացել Ամերիկայի գործարանատէրերից: Միւս կողմից անհամաձայնութիւնը տիրապէս իշխում է նաւթահորերի սեպհականատէրերի մէջ, և սակաւ չեն ալնալիսները, որոնք կրակիլ են տալիս հարեանների հորերը կամ պարագաները: Յուսանք սակալն որ ժամանակը կ'անցապտացնի ալս բոլոր ստերները և որ շուտով Կովկասի նաւթը չաղթանակը կը տանէ, որպէս և արժանի է՝ Ասիայի և Պենսիլւանիայի իւր բոլոր մրցողների վրայ:

Այժմ ահա Բաքւի մի քանի հռչակաւոր հորերի պատմութիւնը. 1873 թւին, մի գերմանացի ինժեներ, որ վճռել էր աւելի խորը փորել Բալխանի մի հոր, որ սպառւած էր երեսում, 90 մետր խորութեան վերայ կորցրեց նաւթի հետքը. այդ խորութեան վրայ բլլում էին միայն բազմաքանակ գազեր: 100 մետր խորութեան վրայ հանդիպեցին ժառուս գետնի, որ բարեբաղդաբար շատ չէր հաստ, ալնպէս որ աշխատանքը շարունակելու համար բաւական էր միայն մի մարդ: Երբ յուլէապէս դուրս էին բերում շաղափը (le trépan) զննելու համար, նաւթի մի թեթեւաբիւր երեւաց, որին հետեւց մի զօրեղ գազալին հոսանք՝ ստորերկրեալ պալթիւններով և երկրի տատանումով, և սպա նորից նաւթի զարկ փռւաջացաւ: Ինժեները հորի վրայ զրեց մի քանի սանտիմետրանոց հաստ կալպակ. բայց միևնոջն գիշերը նաւթն ալնքան զօրեղ խփեց, որ կալպակը կոտրատուեց և հեռու դէն չարտուեց, և ահա տեսան որ բարձրացաւ մի ահագին մուգ սխն, որ քսան և չորս ժամում տալիս էր մօտ 2,800 հեկտոլիտր (մի հեկտոլիտրը = հարիւր լիտր), արսավիժումը տեսց երեսուն օր, բայց տիրանալ նրան անհնարին է եղել, և բոլոր նաւթը փչացել է: Այդ առիթով նկատողութիւն արեցին, թէ որքան ուժեղ է նաւթի հարւածը, նուէրան փոքր է նրա սպեցիֆիքական քաշը:

1877 թւին Սրբեկեան եղբայրներն ունէին 66 մետր խորութեան մի

հոր, որի տրամադրիծը (ղիամեար) 27 սանտիմետր էր. տէրերը հորը ծածկել տւեցին մի շատ հաստ և ծանր կալպակով. բայց հեղուկն անքան մեծ ուժով խփեց, որ, չը կարողանալով ծակել կալպակը, կողքերից դուրս վիժեց և կէս ժամում լքցրեց 2000 հեկտոլիտր պարունակութեամբ մի րեզերուար, որը լքցնելուց լետ նաւթը հոսեց դէպի դաշտերը: Հորի օրական արտադրութիւնը գնահատեց 50,000 հեկտոլիտր, իսկ ընդամենը մօտ 2 միլիօն հեկտոլիտր նաւթ կորաւ աւաղների մէջ: Ահա թէ ինչու սովորութիւն ընկաւ հորը չըջապատել քարէ շինութիւններով մինչ մի լաւանի խորութիւն, որ նման դէպք չը կրկնուի:

Յաճախ է պատահում, որ մի արտադրիժող հոր մի քանի ամսից լետող դառնում է սովորական հոր. 1877-ին ալդ պատահեց Միրզոբեւ եղբայրներին պատկանող 110 մետր խորութեան մի հորի հետ, և որ, սկզբում տալով օրական 4,000 հեկտոլիտր, շարունակեց սովորական չափսով եօթ տարաւ ընթացքում: Նոյնպէս 1879-ին Կասպեան ընկերութիւնը գնեց պ. Մնացականեանցի 2000 ֆրանկի համեստ գումարով մի հոր, որ օրական տալիս է եղել մօտ 27,000 հեկտոլիտր. և ալդ հորը նւազացրեց իւր արտադրութիւնը միայն չորս ամիս լետող: Միևնոյն ընկերութիւնը դրանից մի տարի ասօջ ունեցել է մի հոր, որ տալիս էր 8,000 հեկտոլիտր: Այդպէս արտադրիժող հորերը միշտ աննպաստաւոր են. նաւթը կորչում է կամ ծախում շատ էժան գնով, երբեմն մի տոննը մի ֆրանկով, իսկ հարկաններն էլ չաճախ ստացած վնասների համար վարձատրութիւն են պահանջում:

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներում երբեք չի լինում ալդպիսի դէպք, նախ որովհետեւ աղբիւրներն անտեղ շատ աւելի քիչ են արտադրում. լաւանի է որ Գրուժբան միայն մի օրում նոյնքան էր արտադրում, որքան Միացեալ-Նահանգների բոլոր 25,000 հորերը. — և երկրորդ, որովհետեւ ամերիկական շահագործութիւնը հրաշալի կերպով է կազմակերպւած: Այնտեղ նաւթի ոչ մի կաթիլը չի կորչում. ջրածխացած գազերը գործ են ածւում մետաղագործութեան (մետալուրգիա) մէջ, մինչդեռ ալն 100,000 խորանարդ (կուբական) մետր գազերը, որ ամեն օր պատւում են Բաքւի 500 հորերից, կորած են և ազատ թռչում են միջնորտի մէջ: Ամերիկայում ամեն սեպհականատէր ունի ահագին աւաղաններ, և իւր նաւթի աւելորդը նա կարող է ժամանակաւորապէս ամբարել դեռ աւելի էլ մեծ նաւթամբարների մէջ, որ շինել են աւանձին ընկերութիւններ: Ալն խողովակները, որոնք միացնում են հորերն ընդհանուր նաւթամբարներին հետ, կոչւում են pipe lines, և կոնցեսսիօներական ընկերութիւններն են՝ United pipe lines Co և Tide water pipe line Co. Նրբ մի հորատէր արդէն լքցրել է իւր աւաղանը, նա կանչել է տալիս ընկերութեան ապենտին, որ որոշում է ամբարելու նաւթի քանակութիւնը և, մի վկայագիր տալով հորատիւրջ՝ ալդ քանակութեամբ նաւթը հոսել է

տալիս դէպի ընդհանուր նաւթամբարը: Վկայագիրն իրաւունք է տալիս նրա կրողին պահանջել նշանակւած քանակութիւնը, վճարելով ամբարեւու ծախքը: Այդ վկայագիրները (certificat) ծախւում են Նեու-Իօրկի բորսայում և տեղիք են տալիս հազիւ երեակալի մեծութեան սպեկուլացիաների, քանի որ լաճախ մի միակ «Բորսայում» վաճառում են ալդ վկայագիրներով 30—40 միլիօն հեկտոլիտր: Ալդ եղանակով հորատէրը երբէք ծանրաբեռնւած չի լինում իւր նաւթով և երբէք չի որոնում, ինչպէս ալդ Բաքուում է, ազատել նրանից ինչ գնով էլ որ լինի: Օրինակ են բերում Բաքուում Օրբելով եղբայրներին, որոնք 1881 թականներին մի հոր ունէին 160 մետր խորութեամբ և 30 սանտիմետր տրամագծով և որի փորելը մի քանի տարի էր տևել: Մի շաբաթում հորը արտաւիժեց 180,000 նաւթ. տեսարանը հրաշալի էր, բայց նաւթալին գործում մարդիկ չը գլտեն թէ ինչին են պէտք ալդ տեսակի ջղալին զգացմունքները: Հեղեղից և կրակից սպառնացած հարևանները գանգատւեցին, և քանի որ հորը չէր կարող շահագործւել, Օրբելովները վճուեցին ալրել: Տխուր բան է խոստովանւել որ ամենախելացին հէնց ալդ էր: Մի ուրիշ վտանգ կաւանում է նրանում, որ փորելը վերջացնելու բոլորից 3—4 ժամ շարունակ երբեմն քարեր են տեղում ներքեից, որոնք, եթէ դուրս չեն ձգւում, մնում են հորի մէջ, ալնպէս որ հարկ է լինում նորից փորել:

Նորէլ եղբայրները մի քանի հորեր են ունեցել, որոնք արժանի են որ դնեն մեր վերը լիշած հորերի շարքում. բայց պէտք է խոստովանւել որ նրանք իրանց հորերը շատ ճարպիկութեամբ են շահագործում. պ. Մարւինը գնահատել է 35 միլիօն ֆրանկի ալն նաւթը, որ 1883 թականին արտաւիժեց հուշակաւոր Գրուֆան, որ, Թաղիւնի վերը լիշատակւած հորից լետու, ամենալորդն է եղել և որի մի մասը կորաւ: Ալդ կորուստները քչացնելու համար պ. Մարւինը պահանջում է տէրութեան միջամտութիւնը և առաջարկում է բոլոր արտաւիժող հորերը դնել նրա վերահսկողութեան ներքոյ. նրա ցանկացածն է որ ալդ վերահսկողութիւնը միայն ժամանակաւոր լինի և վերացնւի հէնց որ Նորէլ եղբայրների նման գործարանատէրեր ընդունակ կը լինեն առանց վերահսկողութեան լաւ շահագործել արտաւիժող հորերը:

Ալն բոլորի համար ինչ վերաբերում է արտաւիժող հորերին, մենք չղում ենք ընթերցողներին պ. Գուլիշամբարովի աշխատութիւններին և պ. Մարւինի գրքին՝ Յաւիտենական կրակի աշխարհի մասին (The region of the Eternal Fire). Ժամանակ է որ խօսենք ծովորական հորերի մասին, որոնք աւելի քիչ գրաւիչ են աչքի համար, բայց աւելի օգտաւէտ են քան արտաւիժող հորերը: Սրանց չեն շահագործում ջրհաններով ինչպէս Միացեալ Նահանգներում, գետնի աւազոտ լինելուն պատճառով, ալ լաւ կանանում են նրանով, որ դօրծ են ածում խողովակներ, որոնք կախւած են երկար սլարաններից, որոնք շարժւում են շոգիով. ալդ խողովակների մի-

ջին ումն է 300 մինչ 400 կիլոգրամ ճաւթ: Սովորական հորերը տնում են աւելի երկար քան միւսները, և նրանց արտադրութիւնն ահագին է, քանի որ նրանցից ստացւում է օրական մօտ 160,000 կիլոգրամ:

Կան հորեր, որոնք միաժամանակ ճան աղի ջուր են տալիս. այդ դէպքում փորելու բոլոր աշխատանքները կորած են լինում: Նաւթի հետքերը, որ երևում են հորը քանդելիս՝ երբեմն խարուսիկ են լինում. կամ պատահում է որ մի ձեռնարկող, չը գտնելով ճաւթը, լուսահատւած ծախում է հորը ուրիշին շատ ցածր գնով, իսկ առնողը՝ մի քանի մետր փորելով, գտնում է լորդահոս աղբիւր. դա Բալլովի հորի դէպքն է, ուր ճաիրան սպանեց լսելով իւր լաջորդի լաւ բաղդը: Ահա ալդպէս է որ ալնպիսի արկածներ, որոնց նմաններին վկայ են լինում Մօնակօի լաճախողները, կարող են կատարւել ճան ամենակարծր և ամենից քիչ սքանչալից երկրում. ոսկին հոտ չունի նոյն իսկ ոչ Ապշերոնի թերակղզում, ճաւթի օրհնւած երկրում:

Արտավիժող և սովորական հորերից դուրս կան հորեր, որոնք ընդհատուող կամ փոխիսւող արտավիժումն ունին: Փոխիսւթիւններն առաջ են գալիս շատ կարճ միջոցներում: Վերջապէս Բալլովի ծովածոցում գտնւ են երկու ստործովեայ աղբիւրներ, որոնք իրար շատ հարեան են. նրանք իրանց գոլութիւնը ղգացնել են տալիս շատ թուլ եռումով: Նրանց շահադործումը երկի շատ դժւար կը լինի և չի փորձւած. նրանք ծառայում են միայն կասպից ծովի մակերևութը լուսաւորելու, շնորհիւ ալն ալրուող գազերի, որ բղխում են նրանցից: Այդ մի հրաշալի տեսարան է տեսնել ծովի մակերևութը ակոսող բոցերը, նման արեւստական հրաւառութեան, որին Զրաղաշտը կ'երկրպագէր և որին ապագայի արհեստը թերեւ կը շահագործէ և կը կլանէ սրպէս ամեն ուրիշ բան:

Ինձ մնում է աւելացնել փորելու և հորերը սարքելու մասին մի քանի տեխնիկական մանրամասներ, որոնց ճշտութիւնը ես գրեթէ ամեն անգամ ստուգել եմ: Հորերի խորութիւնը շատ տարբեր է, և գրեթէ հաստատւած է որ ճաւթի ալ և ալ աղբիւրները իրարից բոլորովին անկախ են. օրինակ մի արտավիժող հորի կողքին փորում են 300 մետր խորութեամբ և ոչինչ չեն գտնում. մի փոքր հեռու՝ 200 մետր բաւական են աղբիւր գտնելու համար: Ամենամեծ (մաքսիմում) խորութիւնը Բալխասնում 360 մետր է, ամենափոքրը՝ (մինիմում) 60 մետր¹⁾. այս մինիմումը

1) Ահա 1889 թւականի համար Բաքուի Հորերի վիճակագրութիւնը.

Հորերի ելիւն:	Խորութիւնը մետրով:	Տարեկան արդար- քութիւնը գոնէ բոլ (գոնէն 62 1/2 պոնտ):	Ամբողջ ար- դիւնդը:
29	60-ից մինչ 105 մետր	4,212	122,256 տոնն:
54	105 » 160 »	6,792	366,768 »

գերազանցում է 15 տարի առաջ եղած հորերի խորութեան մաքսիմումին: Դրանից եզրակացնում են թէ գերազանց հորերը ստացւած են, զա ճիշդ է, բայց ոչ անհանդատացնող, որովհետեւ Միացեալ-Նահանգներում նոցա միջին խորութիւնն է 500—600 մետր: Բալլովի հրանդանում, ուր աւելի նոր են սկսել շահագործելը, հորերն աւելի քիչ են խոր: Զարմանալի է, որ այդ խորութիւններից դուրս բերած հեղուկի ջերմութիւնը զգալի չափով բարձր չէ միջնորտարի ջերմութիւնից ¹⁾: Այս երևութի մէջ պէտք է տեսնել հեղուկի մասնաւոր մէջ բռնւած գազերի գոլորչիների յրտացնող ազդեցութիւնը:

Մի հոր փորելու համար հողը վերցնում են մինչ 10 մետր խորութիւն, 3 կամ 4 մետր տրամագծով: Այդ տասը մետր փոսերն ամրացնւում են քարէ շինութիւններով: Փորելը լետու շարունակում են շողէ զուրով: Աւելի խորը գնալով, փորւածքն ամրացնում են, հորի ներսը մտցնելով մետաղեալ քառանկիւնի խողովակներ 20 սանաչափ երկարութեամբ: Այդ խողովակների երկար շարքով կազմւած ցիլինդրը կազմում է հէնց հորը լնքը: Խողովակների տրամագիծը, որ սկզբում 30-ից մինչ 40 սանտիմետր է, կամաց-կամաց նւազում է, աչնպէս որ իրար միջով անցնել կարողանան: Հէնց որ հասան մի որոշ խորութեան, անպաւսման հարկաւոր է լինում դնել նոր խողովակ, որովհետեւ դա միակ միջոցն է փլչելու գէմ: Փորելը պարզ կերպով է կատարւում, դուրը բարձրացնում են 4 կամ 5 մետր և թողնում են որ ծանր կերպով կրկին վայր ընկնի: Երկու-երեք անգամ վերսկսում են նոյնը, լետու հողը դուրս են կրում և աչնպէս շարունակ:

Մի հոր փորելը նստում է 18,000-ից մինչ 30,000 բուբլի: Հարիւր սաժէն խորութիւնից աւելին ամեն մի սաժէն փորելը թանկանում է 10 բուբլիով: օրինակ, եթէ 100-երորդ սաժէնից մինչ 105-երորդը ամեն մի սաժէն նստում է 140 բուբլի, հետեւեալները մինչ 110-երորդը կը նստեն ամեն մի սաժէնը 150 բուբլի: Վեց ամիս է քաշւում 250-ից մինչ 300

70	160	»	210	»	10,000	700,000	»
37	210	»	230	»	10,260	380,000	»
28	230	»	255	»	13,000	367,768	»
23	255	»	270	»	26,300	605,000	»
8	270	»	285	»	12,300	190,000	»
9	285	»	305	»	14,000	130,000	»
2	305	»	340	»	5,000	10,000	»
1	340	»	345	»	1,216	1,216	»

Ընդամենը . . . 2,780,000 տոնն:

¹⁾ Ուրի յանկարծակի փոփոխութիւնները Բաքուի շրջանում յաճախ աշաղին ընդարձակումն են յառաջ բերում խողովակների մէջ: Սովորական ընդարձակումն է 1 սանաչափ 1,400-ի վրայ:

մետր խորութեամբ հոր փորելը մի մեքենայով 14 անգլիական ձիերի ուժով և մի գուրով 800—900 կիլոգրամ (50—58 պուղ) ծանրութեամբ Դինամիտը դեռ գործածութեան մէջ չէ, որպէս Ամերիկայում՝ մի անգամ արդէն սպառւած հորը նորոգելու համար։ Այդ ամերիկական գնդապետ Րոբէրտսն էր որ 1862 թւականին առաջին անգամ միտք չղաղաւ հին և նոր աղբիւրների մէջտեղ ընկած ժալոտտ գետինը դինամիտով փշրել։

(Կը շարունակւի)։

ԶԻԻՑԵՐԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ

(Զւիցերիայի 600-ամեայ տօնի առիթով)

ՄԿՐՏ. ՄԱՆՈՒԶԱՐԵԱՆԻ

Ի նկատի ունենալով այն մեծ բարգաւաճումը, որին կարողացել է հասնել Զւիցերիան քաղաքակրթութեան գրեթէ բոլոր ճիւղերում և այն մեծ համակրանքը, որ նա վայելում է ամբողջ աշխարհում, օգտուում ենք այդ երկրի դաշնակցութեան 600-ամեայ տօնախմբութեան առիթից, ներկայացնելու համար «Մարձ»-ի ընթերցողների առաջ այդ զարմանալի երկրի քաղաքական կազմակերպութիւնը: Տօնը կատարւեց օգոստոսի 2-ին ամենամեծ շուքով, և նա արձագանք դտաւ ամբողջ աշխարհի մամուլի մէջ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Հասարակական իրաւունքը ¹⁾ որոշում է երկու տեսակ դաշնակցութիւն. Գաշնակից պետութիւն (L'état fédératif) և Պետութիւնների դաշնակցութիւն (La confédération des états):

I. Գաշնակից պետութիւն ասելով, պէտք է հասկանալ քաղաքական այն կազմակերպութիւնը, դաշնակցական այն ձևը, որի բաղկացուցիչ իւրաքանչիւր պետութիւնը, առանձին առաժ, ունի իւր ներքին ինքնօրինութիւնը (autonomie): Նա կարող է անկախօրէն կառավարել երկիրը, հարկ

¹⁾ Հասարակական իրաւունքը գործ էմ ածում Droit public բառի մաքուր, որը աւաքեան կաղմում է այլ և այլ պետութիւնները իրար և նոցա ու անհատներին մէջ եղած յարաբերութիւնները: Գորան բաժանում են 2 ճիւղի. a) Հասարակական իրաւունք իրաւունք (Droit public externe) կամ այլապէս միջազգային իրաւունք (Droit internationale), որը աւաքեան ախրութիւններին մէջ եղած յարաբերութիւններն է և b) Հասարակ. ներքին իրաւունք (Droit public interne) որը մասերն են կաղմում 1) սահմանադրական իրաւունք (Droit constitutionnel) և 2) վարչական իրաւունք (Dr. administratif)

հաւաքել. ունի օրէնստու, զործադիր և զատաստանական իշխանութիւն: Ներքին ալ մեծ խնդիրներում նա անկախ է, որքան ալդ թող է տալիս զաշնակից սահմանադրութիւնը վերաքննութեան ենթարկել. իսկ ինչ վերաբերում է արտաքին խնդիրներին, զաշնակցութիւնը մի անբաժան ամբողջութիւն է կազմում: Նման զաշնակցութեան զաղափար առաջին անգամ արծարծեց Ալէքսանդր Համիլտոնը, որը ընդունւեց նախ Ամերիկայի Միացեալ Նահանգներում, իսկ աշտեղից անցաւ Եւրոպա: Երկրորդ ձևի զաշնակցական կազմակերպութիւնը (Պետութիւնների զաշնակցութիւն) ալ է, որ իւրարանջիւր զաշնակից պետութիւն կատարեալ մի անկախ պետութիւն է: Նա կարող է օտար պետութիւնների հետ անկախ օրէն զաշն կապել, ունենալ ինչ ձևի վարչական եղանակ կամենում է, նոյն իսկ պատերազմ հրատարակել, հաշտութեան զաշն կապել: Այստեղ կենդրոնական մի մարմին գոյութիւն չունի, որին համեմալխաբար մասնակցեն բոլորը, իօղակցելով իրանց զերիշխանութիւնը, ինչպէս առաջին եղանակում: 1815 թին Վիեննայի կոնգրէսում, Մետերնիխի մաքի անմիտ ստեղծագործութիւնը, ալն հրէջը, որ գերմանական պետութիւնների զաշնակցութիւն էր կազմում, տիպ էր ադ ձևին, ուր Աւստրիան և Պրուսիան իրանց ձեռքն էին առել սէյմը:

Ջուրիցիական զաշնակցութիւնը ոմանք զաստորում են երկրորդ, ոմանք առաջին կարգին: Յիրաւի է որ Բոնապարտը, *acte de médiation*-ով խառնեց իւր մասը և նորա ցանկութիւնն էր երկրորդի կերպարանքը տալու, որը իւր նպատակներին աւելի համապատասխան էր, ուղեհալով թուրացնել զաշնակցութիւնը: Վիեննայի 1815-ի կոնգրէսը նոյն ձգտումն ունէր. քաղց Ջուրիցիական վաղուց անտի չի սիրում և նա տանել չի կարող, երբ օտարները իրանց քիթով ներս են խցկւում իւր ընտանեկան զործերում և ոչ իսկ կուր աչքով է նայում զիմակաւոր բարեկամի արած չնորհքներին: Առաջիմ բաւականանանք ատելու, որ 1848-ի սահմանադրութիւնով նա հակաւ է ֆեդերատիւ ձևին. իսկ 1874-ի սահմանադրութիւնից լատու, նա խառն սամկական (*mixte*) զաշնակից պետութիւն է ¹⁾:

1) Որոշում է 3 ձևի ուսմիտպետութիւն—I անմիջական, II միջնորդական կամ ներկայացուցչական և III խառն (*mixte*):

I. Անմիջական ուսմիտպետութիւնն ասում են վարչական այն տեսակ կազմակերպութեան, ուր Ժողովուրդը անձամբ վարում է իւր զերեշխանութիւնը, այսինքն վարչութիւնը պատկանում է ամենքին: Անմիջական ուսմիտպետութիւն էր օր. Աթէնքի հաստրակապետութիւնը. իսկ մեր օրերում զւիցերական մի քանի կանտոնները:

II. Միջնորդական ուսմիտպետութիւնը աւելի նոր ժամանակներին է պատկանում: Այդ ձևը ծնունդ առաւ Հիւսիսային Ամերիկայում: Այդ ձևի յատաճանալու զլիաւոր շարժառիթներն էին երկրի ընդարձակ տարածութիւնը և Ժողովրդի մեծ բազմութիւնը, որոնք քաղաքական կենտրոնից շատ հեռու սկսած

Մի կողմի թողնելով նորա քաղաքական ինչ տնտիսական ունենալը, կ'անցնեմ սահմանադրութեան: Իսկ ինչ պէտք է հասկանալ սահմանադրութիւն տալով: Մի քանի խօսքով ակապէս կարելի է բացատրել: Սահմանադրութիւնը՝ մի ժողովրդի ընդհանուր կամքի արտայայտութիւնն է, որով սահմանում են կանոններ, ապահովելու և պաշտպանելու անհատին՝ տէրութեան դէմ, տէրութիւնը՝ անհատի և անհատին՝ վարչութեան դէմ: Այժմ ակապէս է, ապա ուրեմն և նա անփոփոխ չի կարող մնալ. այլ համաձայն հասարակութեան քաղաքակրթութեան և զարգացման (évolution), սահմանադրութիւնն ևս պէտք է փոխի, ժամանակի պահանջներին համապատասխան: Գալոց սերնդի համար աւսօր մենք կարող չենք և իրաւունք էլ չ'ունենք որ և իցէ մի կանոն դնելու, որը աւսօր կարող է ժամանակի պահանջները լրացնել. իսկ ով կարող է երաշխաւորել, որ նա ապագայում մի կատարեալ արտւրդ չի լինիլ, և բացի ակապէս կարող ենք աւսօր պահանջել, որ չետազալ սերունդները են թաւրկւեն մեր կամքի արտայայտութեան. Եւ արդարեւ Զւիցերիայի դաշնակցութիւնը, մինչ ներկայ դրութեան հառնելը, երկար փոփոխութիւնների է ենթարկւել, և արտայայտւոյ նախնաւորութիւնը հարեան Ֆրանսիայում տեղացող քաղաքական ղեկավարի և տիրող պաղատարների ազդեցութեան ներքոյ:

Նրեք զլիաւոր չրջանների կարելի է բաժանել նորա պատմութիւնը.

1-ին 1291—1798 թ.

2-րդ 1798—1803 թ. և

3-րդ 1803 ից մինչ ներկայ ժամանակը:

մանակը:

Առաջին չրջանում դաշնակցութեան մասնակցում են նախնական երեք լեռնական կանտոնները՝ Շւից, Ուրի, Ունտերվալդէն, որոնք նախկին

լինելով, անկարող էին համախմբել: Այդ արդիւններից տնտեսաւ, ժողովուրդը, սահմանելով իւր ղեկը խառնութիւնը, կառավարութիւնը յանձնում է իւր ընտրած ներկայացուցիչների ժողովին: Այդ ձեւի գլխաւոր սկզբունքը կայանում է նրանում, որ ժողովուրդը կառավարում է իւր սեփական պաշտօնականներով և օրէնքներ ստանում իւր յատուկ ներկայացուցիչներից, որոնք և վերատուգում են վարչութիւնը: Պէտք է ասած, որ երկու սխառեմ կայ ընտրողութեան. 1, երբ ներկայացուցիչները ընտրում են ուղղակի ժողովրդից և 2-րդ, միջոցաւ ընտրողութիւն, երբ ժողովրդից ընտրւած երեսփոխանները իրանց քաջով ընտրում են ներկայացուցիչներին:

III Խառն mixte, աւստրապետութեան կարակալը որոշւում է աւստրալի սահմանադրական կանոնների քաջարկութիւնով: Դա միջին տեղն է ըստում միջնորդական և անմիջական աւստրապետութեան: Սր, Զւիցերիայում սահմանադրութիւնը քաջարկում է անմիջապէս ժողովրդից, որով ազգային կամքը արտայայտւում է կատարեալ իկրպով: Իսկ այդ դրութիւն չ'ունի ներկայացուցչական աւստրապետութեան մէջ, որ ներկայացուցիչներին ժողովին է յանձնում այդ իրաւունքը:

միութիւնը նորոգում են 1291 թ. մի նոր պայմանով: 1332-ից սկսած 3 միաբան կանտոններին միանում են 1332 թ.-ին Լիցէրն, 1351-ին Յիւրիխ քաղաքը, 1352 թ. Յուգ և Վլարիս, իսկ 1358-ին Բէրն քաղաքը: Միաբան կանտոններից իւրաքանչիւրը բոլորովին գերիշխան էր, թէև զաշնակցութիւնը ունէր մի տեսակ գերիշխանութիւն: Որինակ. 1443 և 1444-ին զաշնակից կանտոնները ղէնքով ստիպում են Յիւրիխին, հրաժարուելու Աւստրիայի հետ կապած պայմանից: 1481-ին կոնստանցի ժողովը վճռում է արգելիլ օտարների խառնելը իւր գործերում: Այդ ժողովից չետոյ, միանում են Ֆրիբուրգ և Սոլոթուրն, 1501-ին Բազէլ և Շաֆհաուզէն. իսկ 1513-ին Ապպենցէլ Այդ շրջանում կային աղնական հասարակապետութիւններ և ուսմական հասարակապետութիւններ: Գիւղական աշխատաւոր դասը, բացի մի քանի կանտոններից, միւսներում զուրկ էր իրաւունքներից: Փաղաքների բնակիչները իրանց ձեռքն էին հաւաքել կանտոնի վարչութիւնը և վարում առանց ժողովրդի մասնակցութեան: Մի կողմից աղը, միւս կողմից օրաւոր աճող կրօնական երկպառակութիւնները առիթ էին տալիս ժողովրդի դժգոհութեան, մինչև որ վրա է հասնում Ֆրանսիական մեծ լեզափոխութիւնը (1789 թ.-ին), որի ազդեցութեան ներքոյ չին սահմանադրութիւնը ընկնում է 1798 թ.-ին: Բազէլեան կոչւած ակտով (acte) 1808 ի սահմանադրութեան փոխարինում է 1801-ին հոկտեմբերի 25 նոր սահմանադրութիւնը, որով Զւիցերիան ստանում է «Հէլւետական մի և անբաժան հասարակապետութիւն» կոչումը: Այդ սահմանադրութիւնով ճանաչւում է ժողովրդի գերիշխանութիւնը և հաւասարութիւնը. իսկ զաշնակից կանտոնների նաճած երկիրները—Վօ (Vaud), Թիւրգովի և Թէսսին աղատւում են, միանալով զաշնակցութեան հետ հաւասար իրաւունքներով: Հաղիւ երկու տարի գոյութիւն ունենալուց չետոյ, 1803-ին, Բոնապարտը, (դեռ կոնսուլ) կազմում է acte de médiation-ով նոր սահմանադրութիւն 19 կանտոններից բաղկացած զաշնակցութեան համար: Այդ սահմանադրութիւնով ժողովուրդը զրկւում է իւր գերիշխանութիւնից: Բոնապարտի անկումից չետոյ, 1815 թ. հանդէս է գալիս Վիէննայի կոնգրէսը, իւր քաղաքական հաւասարակշռութեան սկզբունքով, նոր կազմակերպութիւն տալու Եւրոպային. (աղգերի իրաւունքները ոտնահար անելու): Նա իսկապէս զրստում է! Զւիցերիայի հոնքը զրստելու տեղ աչքն էլ է հանում հետը: Այդ կոնգրէսում Զւիցերիան ճանաչւում է եւրոպական պետութիւնների շարքում, ինչպէս անկախ պետութիւն, չէզոք զիրքով (sic!) ¹⁾ այն պայմանով, որ թող կը առջ վանքի րի ազատ գոյութիւնը և նման մի քանի

1) Դէպքերը ցոյց տւին, թէ ի՞նչ կերպ էր յարգւում նրաչէզոքութիւնը: Թող նա պատրաստ չը լինէր պաշտպանելու, այն ժամանակը կ'երեւար թէ Պրուսիան ի՞նչ կերպ կը վերաբերէր գէպին նրաչէզոքութիւնը քաղաքական հաւասարակշռութիւնը պահպանելու համար:

պալմաններ: Այդ վեհաժողովով միանում են դաշնակցութեան ժրնէւի, Նիւշատէլի և Վալէի կանտոնները: Ժողովուրդը կրկին կորցնում է իւր գերիշխանութիւնը, որին տեղի են տալիս կուսակցութիւնները և կանտոնները: Սակաւն չը նպատակէն Վիէննայի կոնգրէսի գործ զրաժ միջոցներին, թէև նա աղատեց Զւիցերիային Բոնապարտից, բայց նա կարող չէր զերծ պահել նորան ֆրանսիայում եփուող քաղաքական անցքերից և ալրող դաշտարների շարժումից: 1830-ին և 48-ին ֆրանսիայում կատարւած դէպքերը անհետեանք չ'անցան, այլ ընդհակառակը շատ խոր կերպով թողին իրանց հետքերը, բուռն կերպով արձագանք գտնելով Զւիցերիայում: Յառաջ են դալիս 1847-ին քաղաքային ներքին խռովութիւնները, որի հետեանքը եղաւ ռամկապետական սկզբունքների տարած փառաւոր լաղթանակը, իսկ դորա արդասիքը ռամկական սկզբունքների վրալ հիմնւած ու ամբողջ ազգի քւէարկութիւնով ընդունւած 1848-ի սահմանադրութիւնը: Պա, կարելի է ասել, ստեղծում է «Զւիցերական ազգութիւնը», ճանաչելով նորա գերիշխանութիւնը, որից զրկւած էր նա 1803-ի acte de médiation-ով և 1815-ի հաւասարակշռական քաղաքականութիւնով (Equilibre politique), որոնք Զւիցերիային պետութիւնների դաշնակցութեան ըէթիմին ենթարկեցին:

1848-ի սահմանադրութիւնը ճանաչում է ժողովրդի գերիշխանութիւնը, նորան մասնակից անելով՝

1. Պլէբեցիտի ¹⁾ միջոցով դաշնակցական սահմանադրութեան կազմելուն:

2. Ազգային խորհրդի միջոցով մասնակցում է օրէնստութեան. իսկ 1848-ի սահմանադրութիւնը ժողովրդի քւէարկութիւնով: Այդ սահմանադրութիւնով ժողովուրդը ստանում է նաև Բէֆէրէնդում ²⁾ (Referendum) (լօդ. 98—90. Գ. Ս.):

Այստեղից երևում է, որ Զւիցերիան խառն (mixte) ռամկական քաղաքակրպութիւն ունի, ալսինքն ալն տեսակ մի վարչական եղանակ, ուր վարչութիւնը պատկանում է ամենքին, ուր ազգի կամքը սահմանում է օրէնքներ, ասել է գոյութիւն ունի բնական իրաւունքների հաւասարութիւնը, ուրեմն և բոլոր քաղաքացիների հաւասարութիւնը. ալդտեղից հետեւում է, որ հասարակական պաշտօնները ոչ արտօնութիւն և ոչ իսկ սեպհականութիւն են ալս կամ ալն անհատի կամ խումբ անհատ-

¹⁾ Plebiscite (պլէբեցիտ) կոչւում է ընդհանուր անմիջական քուէարկութիւնը սահմանադրութեան կամ սահմանադրական օրէնքների: Խառն ռամկապետութեան յատկանիշ կողմերէց մէկն էլ պլէբեցիտն է:

²⁾ Referendum (բէֆէրէնդում) ամբողջ ազգի անմիջական քուէարկութիւնը ոչ սահմանադրական օրէնքների, որի միջոցով ժողովրդի ձայների մեծամասնութիւնով ընդունւում է կամ հերքւում օրէնքը (ոչ սահմանադրական):

ների, ալ խօսքով ազգը ինքը գերիշխան է, ալն ազգը, որը բազմակցած է տարբեր ծագում ունեցող, տարբեր լեզուներով լեր միաքը արտապատող և, եթէ ուզում էք, աւելի քան տարբեր կրօններ զաւանդ, երեք տարբեր էլէմէնտներից—գերմանացիներից, ֆրանսիացիներից և իտալացիներից: Եւ ալ տարբեր էլէմէնտները, ներկայացնում են մի անբաժան, ուժեղ և, եթէ կամենում էք՝ «մոլեռանդ» ազգութիւն—նոքա «զւիցերացի» են:

Փորձեցէք մաքուր ֆրանսերէն խօսող ժընեւացուն, կամ նիւշտուէրցուն ֆրանսիացի անւանելու, սխալմամբ թէ սօխնցուն՝ իտալացի իսկ բէրնցուն գերմանացի կոչէք, նոքա բոլորն էլ կը վիրաւորեն և շատ վատ կը վիրաւորեն. «մենք զւիցերիացի ենք, ներկեցէք, կը նկատեն ձեզ: Եւ ալ շատ հասկանալի է, քաղաքական կեանքի տարբեր խաւերը, որոնցով Զւիցերիան անցել է, ազատութեան փառաւոր չաղթանակներով լի պատմական անցեալը, ալսօր աւելի խորն են արմատացրել ալ տարբեր էլէմէնտներում «ազգութեան» գաղափարը, քան ուր և իցէ: Թէ ապէս, թէ տընպէս, նա ալսօր փոքրիկ, սակայն ուժ ունեցող գերիշխան մի ազգութիւն է, ալն իսկ ազմակերպւած մի ազգութիւն:—Տեսնենք դաշնակցութեան կազմակերպութիւնը 22 կանտոններից բաղկացած խառն ռամկապետութեան:

Իւրաքանչիւր մի կանտոնոր տէրութիւն ունի երեք իշխանութիւն (pouvoir).—օրէնսդրական, գործադիր և դատաստանական: Առաջին անգամ պետութեան ազգ երեք իշխանութիւնների բաժանումն ձևակերպեց նոր դարում Մօնտեսքիօն (Montesquieu): Հիւսիսային Ամերիկայի սամանադրութիւնը առաջինը ներս մուծեց ալ գաղափարը, իսկ ալժմ գրէթէ բոլոր ներկայացուցչական պետութիւնները ընդունել են ալ սկզբունքը—երեք իշխանութիւնների բաժանումն: Նոյնը ընդունել է, ինչ ասել կ'ուզէ, նաև Զւիցերիան: Ուրեմն դաշնակից պետութիւնը ունի երեք իշխանութիւն:

I Օրէնսդրական իշխանութիւն, որը պատկանում է դաշնակից ժողովին (assemble fédérale):

II Գործադիր իշխանութիւնը պատկանում է դաշնակից խորհրդին (conseil fédéral):

III Գատաւտանական իշխանութիւն, որը կազմում է դաշնակից ատեսանը (tribunal fédéral):

A. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ (pouvoir législatif)

Օրէնսդրական իշխանութիւնը պատկանում է, ինչպէս ասացի, դաշնակից ժողովին, որը ներկայացնում է կազմակերպւած ազգու-

թիւնը: Գաշնակից ժողովի (օրէնսդր. իշխանութեան) կազմութեան հարցը, ամենապարզ հարցերից մէկն է, նամանաւորդ գաշնակցական ձև ունեցող պետութիւններում: Այդ՝ իշխանութեան կազմութիւնիցն է կախած գաշնակիցները գերիշխանութեան հատարակութիւնը: Գաշնակից ժողովը, որը ալ երկիրներում պարլամենտ է կոչուում, լինում է կամ մի կամ երկու պալատներից բաղկացած: Ոմանք ընդունում են մի պալատից, ոմանք երկու պալատներից բաղկացած պարլամենտական սխաւեմը: Մի կողմ թողնելով առաջիմ իւրաքանչիւրի առաւելութիւնը, բաւականանամ ասելու, որ երկար ժամանակների փորձերը ցոյց են տուել, որ երկրի արդի կացութիւնով, երկու պալատներից բաղկացած պարլամենտով, կարելի է, նամանաւորդ գաշնակից պետութիւններում, պահպանել իւրաքանչիւրի գերիշխանութիւնը (soveraineté) և սեղիք չը տալ մէկը միւսին ստորադրելու: Մինչ 1848 թվականը Զւիցերիայում պարլամենտը բաղկացած էր մի պալատից, որի հետևանքն ալն էր, որ մի քանի խոշոր կանտոններ վերատեսուչների գեր էին խաղում գաշնակցութեան մէջ: Եւ այդ շատ հասկանալի է, եթէ ի նկատի ունենանք, որ մի քանի կանտոններ, ինչպէս են՝ Յիւրիխ, Սէն-Վալը, Լիւցերն, Բէրն, Վօ (Vaud) և Արդաու միասին աւելի շատ թուով ժողովուրդ ունեն քան միւս կանտոնները միասին առած, որոնցից մի քանիսը, ինչպէս ասում են՝ մէկ թիւ տարածութիւն ունեն երկու դուզ ժողովրդով ¹⁾:

1) Կանտոնները թուով 22, իսկ կիսա-կանտոններով հաշւած՝ 25:			
Ապպենցէլ (արտաքին)		21,841	ընտելէ:
Արգովի	140,4	քառակուսի կիլոմէտր	198,615 »
Բազէլ (քաղաք)	358	»	65,101 »
Բազէլ (դիւղական)	421,6	»	59,271 »
Բէրն	688,9	»	1,902,167 »
Ֆրէբուրգ	166,9	»	115,400 »
Սէն-Վալը	201,9	»	210,491 »
Ժւինէ	274,4	»	101,633 »
Վլալիս	691,2	»	34,213 »
Վըրդոն	718,5	»	93,864 »
Լիւցերն	1500,8	»	134,806 »
Նիւշատէլ	809	»	104,378 »
Ապպենցէլ (ներքին)	241,1	»	51,958 »
Շաֆհաուզէն	294,2	»	38,384 »
Շվից	908	»	51,535 »
Սօլէուր (Soleure)	783,6	»	209,920 »
Թէսսին	211,8	»	130,777 »
Թիւրգովի	388	»	99,285 »
Ունտերվալդէն (վերին)	474,4	»	15,356 »
Ուրի	108,6	»	23,694 »

Պարլամենտը մի պալատից բաղկացած լինելով, ուր իւրաքանչիւր մի կանտոն ուղարկում էր ժողովրդի թւի համեմատ ներկայացուցիչներ ¹⁾, մեծ կանտոնները պէտք է ապօրին և շատ թւով ներկայացուցիչներ, քան փոքրիկ կանտոնները, իսկ ալգ ալգայէս լինելով, պէտք է, որ հաւասարակշռութիւնը խախտէր, նամանաւանդ, երբ ներկայացուցիչները հրահանգ էին ստանում ընտրւած կանտոնից: Ալգ չարիքի առաջնաւորները համար, ժընէւի քաղաքացի ժամա ֆալիի առաջարկութեամբ ընդունւում է երկու պալատներից բաղկացած պարլամենտական սիստէմը, որը և գոյութիւն ունի ալժմ: Պարլամենտի մի պալատը կոչւում է ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ (conseil national), որը ներկայացնում է ամբողջ ազգը: միւսը ՊԵՏՈՒԹԵԱՆՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (conseil des états), որը ներկայացնում է պետութիւններին:

Երկու պալատների ներկայացուցիչներն ևս ընտրւում են ժողովրդից, 3 տարի ժամանակով: Պետութեանց խորհուրդի համար կամ անմիջապէս և կամ կանտոնական վարչութեան միջնորդութեամբ, իսկ ազգային խորհրդի անդամները անմիջապէս, առանց բացառութեան:

Իւրաքանչիւր կանտոն իրաւունք ունի միմիայն 2 ներկայացուցիչ ունենալու պետութեանց խորհրդում ²⁾, ազգային խորհրդի անդամները ընտրւում են ալժմ ևս 20,000 հոգուն մի ներկայացուցիչ: Ներկայացուցիչները թէ ալգ ալգին և թէ պետութիւնների խորհրդի ոչ մի հրահանգ ստանալ չեն կարող (լօգ. 91. Դաշնակից Սահմանադրութեան):

Ազգային խորհրդի անդամները վարձք ստանում են դաշնակցութեան գանձարանից, իսկ պետութեանց խորհրդի անդամները իւրաքանչիւրը ալն կանտոնից, ուր ընտրւած է:

Ալգ երկու պալատները միանալով կազմում են պարլամենտը (դաշնակից ժողովը), որի անդամները ղեկցերական ամբողջ ազգութեան ներ-

Վալէ	524,7	»	100,211	»
Վօ (Vaud)	3222,3	»	238,730	»
Յուգ	239,2	»	65,000	»
Յիւրիէ	172,4	»	479,101	»
Ունաէրվալդէն (ներքին)	290,5	»	11,992	»
1880 թւականի ժողովրդագրութիւնից:				

1) Քսան հազար (20,000) հոգուն մի ներկայացուցիչ: այն կանտոնները, որոնք պակաս թւով ժողովուրդ ունեն, այնու ամենայնիւ ուղարկում են մի ներկայացուցիչ:

2) Կանտոնները 22 են: Մի քանի կանտոններ բաժանւել են, օր. Բազելը-քաղաքի և գիւղական (Bâle ville et Bâle campagne), Ունտէր վալդէնը-վերին և ներքին, Սապէնցէյ արտաքին ու ներքին: Դաշնակցութիւնը ճանաչում է բաժանւած մասերին ինչպէս անկախ կանտոններ, միայն պետութեանց խորհրդում 2 ներկայացուցիչ ուղարկելու իրաւունք չ'ունեն, այլ կաւոդ են իւրաքանչիւրը մի ներկայացուցիչ ունենալ:

կապացուցիչներն են ¹⁾ և ոչ այս կամ այն կանտոնի։—Պարլամենտը իւր նիստերը սկսում է լուսիսին։ Երկու պալատները նոյն օրը նիստ ունեն։ Որեւիցէ մի օրինադիր նախ քան դաշնակից խորհրդին (գործադիր իշխանութիւն) ուղարկելը հրատարակելու համար (pour promulgation) պէտք է քննել և ձայների առակութեամբ հաւանութիւն գտնի երկու պալատներում ևս։ Վործերը վճռում են ձայների մեծամասնութեամբ, իսկ իւրաքանչիւր պալատի նիստը վաւերական է, երբ անդամների մեծամասնութիւնը ներկայ է (պետութեանց խորհուրդը 145 անդամ)։ Պալատների մէջ առաջնակարգութիւն (priorité) չկալ։ Որ պալատում մի գործ առաջ վճռուց՝ ուղարկում է միւսին, ուր ևս պէտք է հաւանութիւն գտնի։ Իսկ մինչ համաձայնութիւն չը կապանալ երկու պալատներում, գործադիր իշխանութեան չի ուղարկւում։

Պարլամենտը կարող է նաև արտաքույ կարգի նիստեր ունենալ, եթէ 5 կանտոններ այդ ցանկանում են, կամ երբ ազգային ժողովի անդամների $\frac{1}{4}$ ը և գործադիր իշխանութիւնը ցանկանում են։

Պալատներից իւրաքանչիւրը ունի մի նախագահ մի և փոխ նախագահ, որոնց ընտրում են իւրաքանչիւր պալատը իւր համար։ Նախագահը նիստերին է նախագահում և երբ ձայները հաւասար են բաժանւած՝ նա վճռող ձայն ունի։

Պարլամենտի իրաւունքները և պարտաւորութիւնները։

Գաշնակից ժողովը (պարլամենտը) միմիայն իրաւունք ունի պատերազմ հրատարակել, հաշտութեան դաշն կռել, ճանաչել օտար պետութիւններին, ինչպէս իրաւաբանական անհատներին։ Նա է ընդունում զիւլլումատիական գործակալներին և նշանակում դեսպաններին, իսկ երկրորդական հարցերում կանտոններն ևս կարող են օտար հարևան պետութիւնների հետ լարաբերութիւն ունենալ, եթէ սահմանադրութիւնը թույլ է տալիս։— Նա է միջոցներ ձեռք առնում երկրի արտաքին վտանգների առաջնաւոր և ներքին խաղաղութիւնը ու կանտոնների սահմանադրութիւնները պաշտպանելու, Վաֆն կանտոն, ինչպէս ինքնօրէն պետութիւն, կարող է իւր սահմանադրութիւնը վերաքննութեան կամ փոփոխութիւնների ենթարկել միմիայն հետեւեալ պայմաններով, որոնց խտիւ հսկում է դաշնակցութիւնը։ 1-ին, նոր սահմանադրութիւնը չը պէտք է դաշնակցական սահմանադրութեան հակասէ։ 2-րդ, պէտք է ունենալ ռաւկապետական 3-րդ, ընդունել կանտոնի ժողովրդի ընդհանուր քւէով։ 4-րդ, պարունակէ մի լօղւած, որը թույլ է տալիս սահմանադրութեան վերաքննութիւնը, եթէ կանտոնի ժողովրդի մեծամասնութիւնը այդ ցանկանում է։ Ուստի

1) Ընտրւել կարող են բոլոր գիւցերիացիք, 20 տարեկանից վեր, բացի 8 հոգեւորականներից, որոնք զրկւած են թէ ընտրելու և թէ ընտրւելու իրաւունքից։ (յօդ. 75. Գ. Սահմ)։

կանտոնը, նախքան նոր սահմանադրութիւն գործադրելը, պէտք է ներկայացնէ զաշնակից ժողովին, որի հաստատութիւնից լիտու ապա թէ կարող է գործադրուի:

Կարևոր դէպքում, եթէ վտանգներ են սպառնում սահմանադրութեանը, զաշնակից ժողովը կարող է մինչև իսկ զինուորական սլաշարման ենթարկել աչս կամ աչն կանտոնը և զէնքի միջոցով կարգը վերականգնել ¹⁾: Ինչպէս օրինակ. Նիւշատէլի իշխանականների (royalistes) փորձերը casus foederis էր զաշնակից ուժի միջամտութեան:

Ասացի, որ Գաշնակցութիւնը սլաշարմանում է երկիրը արտաքին և ներքին վտանգներից. ուրեմն կարող են թերևս մտածել, որ նորա ձեռքում է գտանում երկրի ամբողջ սլաշարմանական ուժը: Եւ սխալ են արդէս մտածողները: Գաշնակից ժողովի կարգադրութեան ներքոյ է նա, սակայն ոչ թէ գտանում է անմիջականապէս նորա ձեռքում: Պատերազմական կենտրոնացած ուժը աչնքան էլ թիթիս խնդիր է, մանաւանդ զաշնակցական պետութիւններում, որ նորա վերադ թիթիս նաչէր զւիցերային: Նա մտածում է, եթէ մշտական բանակ պահէ, աչդ շատ թանկ կը նստէ ժողովրդին և, բացի աչդ, բանակը գտանելով կենտրոնական իշխանութեան ձեռքում, ևս կարող է իշարը գործադրել, կանտոնների իրաւունքները արհամարելով, ինչպէս աչդ տեղի է ունենում աչդ տեղիւրում, իսկ թողնել, որ կանտոններից իւրաքանչիւրը իւր պատերազմական ուժերը գործադրէ, աչդ էլ աչլ շարիք կը լաւաշացնէր: Փոքրիկ կանտոնները կ'ենթարկէին մեծ կանտոններին: Ահա նա ինչ է վճում. (1807. 13. Գաշնակց. Սահմանադր.)՝ Մշտական բանակ զաշնակցութեան մէջ գոյութիւն չունի. իսկ ամեն մի կանտոն աւանձին կ'արող է 300 մարդուց աւելի ունենալ:

Ինչպէս մշտական բանակ չը կա, ուրեմն նորա պատերազմական ուժը շատ թուլ պէտք է լինի ու զինուորական արհեստը ընկած, կը մտածեն անշուշտ: Փոքրիկ բանակը շատ ու շատ ուժեղ է. իսկ աչդ նա ցուց տեց Պրուսիայի հետ ունեցած ընդհարումով և ցուց կը տա, եթէ զէպք պատահի: Չը նաչած, որ մշտական բանակ գոյութիւն չունի, աչնու ամենաչին, նորա բանակում կարող ու կանոնը, զիսցիպլինան և զինուորական մարդողութիւնները հասնում են աչն աստիճանին, որքան անհրաժեշտ է աչդ, և աչդ խոտտովանում են նոչն իսկ օտար պետութիւնների աստիճանաւորները, որոնք առիթ են ունենում ներկաչ գտնելու զւիցերական բանակի տարեկան զօրահանդէսներում: Իսկ զիտես, լարդու ընթերցող, աչդ ամենը ժողովրդին նստում է չատ չնչին մի գումար:

¹⁾ Ինչպէս աչդ նորերա տեղի ունեցաւ Թիսսին կանտոնի նկատմամբ, ուր ասպատակութիւն էր ծաղեւ:

Մի բացատրութիւն կարելի է տալ. ինչու զւիցերական ոչ մշտական փոքրիկ բանակը (մօտ 200,000) անբան ուժ ու վարժութիւն, զիսցիպլինալ ունի: Մի կողմ թողած բազմաթիւ մարմնամարզական ընկերութիւնները (մի քանի հարիւրի է հասնում), որոնք տարածւած են երկրի ներսը, մի կողմ թողած ալդ, կրկնում եմ, զւիցերական զինւորը, կամքից զուրկ մի մարդ չէ, ալ նա զինւորական ծառայութիւնը կատարում է զիտակցարար, հալընիքի սնկախութեան պաշտպան լինելու, և ոչ թէ օտար ազգերի ան կախութիւնը ոտքին տակը տալու համար. ան ինչու տարեկան մի քանի շաբաթ միմիայն դառնալով բանակում, նա ձեռք է բերում աչն, ինչ ալ ուր մի քանի տարիների ընթացքում չեն կարողանում:—Ո՞վ եղել է Զւիցերիայում, և չի տեսել թէ ինչպէս քաղաքացիները խումբ-խումբ դարձան հաւաքւում և զինւորանոց ուրախ տրամադրութեան ներքոյ, և մի քանի շաբաթ մնալով գնում են, տեղ աւելով ուրիշներին: Ո՞վ եղել է զւիցերական համալսարանում և հեռու չէ պահել իրան տեղացի ուսանողներից, մօտիկացել է, ապա անշուշտ նա զիտէ, ինչ անհամբեր սրտով սպասում են ուսանողները ամառնալին սեմինարին, երբ զինւորական ծառայութիւն պէտք է կատարեն, զինւորի օֆէսին կամ ալ աստիճանով, հալընիքի պաշտպանութեան պատրաստուելով:

Երանի աչն սպիկն, որ զիտէ պաշտպանել: Ամեն քաղաքացի 20 տարեկանից իրաւունք ունի բնորելու և պարտաւոր է զինւորական ծառայութիւն կատարել. արտօնութիւն գոյութիւն չունի (չօդ. 18 և 4. Դ. Ս.):

Պարլամէնտը նշանակում է բանակի ընդհանուր հրամանատարը և շտաբի զլխաւորը: Նա՝ (պարլամէնտը) իրաւունք ունի զինւորական ուսումնարաններ հիմնել և կրթել, արտիլլերիան նրան է վերաբերում: Պարլամէնտը ունի իւր գրամարկը, ծածկելու ծախսերը: Նորա տարեկան եկամուտը հասնում է... (չը ծիծաղես ընթերցող) 300,000—1,000,000 ֆրանկի:

Նա իրաւունք ունի մի համալսարան ու մի պօլիտեխնիկում հիմնել (չօդ. 27. Դ. Ս.): Վերջինս գտանւում է Յիւրիխում. իսկ զաշնակցական համալսարանի հարցը օրւալ հարցերի կարգումն է. Նա արդէն վճուած է, բալց դեռ ևս տառանում են ուր հիմնելու: Շատ հաւանական է, որ ֆրանսիական կանտոններից մէկում հիմնուի և ալդ ևս ժընէլ, որի համար ալդ մասին շատ աշխատում են Կարլ Ֆոխտի նման մարդիկ:

(Դ. 49. չօդ.)՝ դաշնակցութիւնը հսկում է, որ կանտոնները չ'իցէ թէ խոյս տան տարբրական ուսումը ձրի և պարտադիր կացութեանը և մի գուցէ ուսումնարաններում կրօնական էլիմէնտները մուտք գործեն:

Նա պարտադիր է կացութեանում ըլոր կանտոններին և հետեւալ միջոցներով ապահովում ալդի և անհատի իրաւունքները. 1, որ և իցէ մի կանտոնի

քաղաքացիին ազատ կարող է տեղափոխուել մի ալ կանտոն, ուր նա միւս քաղաքացիներին հետ հաւասար իրաւունքներ է վաւելում. օրէնքի առաջ խտրութիւն չկայ և ոչ մի արտօնութիւն գոյութիւն չունի Զւիլդերիալում:

2) Ոչ մի կանտոն իրաւունք չ'ունի զրկել իւր քաղաքացիներին ոչ մէկին քաղաքացիական իրաւունքից, ոչ ծագումի (droit d'origine) իրաւունքից և ոչ իսկ արտաքսել կարող է:

3) Կրօնի ազատութիւնը, խօսքի, մամուլի, հրապարակական ազատ ժողովների ազատութիւնը կատարեալ է և ոչ մի կանտոն ալ խախտել կարող չէ:

4) Ամեն քաղաքացի իրաւունք ունի խնդիրք ներկայացնելու կանտոնական և թէ դաշնակից իշխանութեան: Նա պէտք է դատուի օրինաւոր և իւր սեփական դատարանով (46—59):

5) Քաղաքական չանցանքների համար մահաւան պատիժը գոյութիւն չ'ունի (107. 65) ինչպէս և մարմնական պատիժը՝ դաշնակցութիւնը մահաւան պատիժը չէ ճանաչում ¹⁾:

Իւրաքանչիւր կանտոնի դատարանի վճիռը պարտադիր է միւս կանտոնների համար: Բացի քաղաքական լանցաւորներից, միւս լանցաւորներին կանտոնները պարտաւոր են լանձնել. եղբիւրների կարգը գոյութիւն ունենալ չի կարող և ոչ իսկ վանքեր հաստատելու իրաւունք կայ:

Նա միջոցներ է ձեռք առնում առանց հալընիքի մարդկանց բնակեցնելու և նոցա լաւաջանալու առաջն առնելու:

Երկար կը լինէր ալստեղ թւել մի առ մի իւրաքանչիւր լօղաձը ամփոփենք դաշնակից ժողովի իրաւասութեան զլիւսաւոր կէտերը:

Նրան է պատկանում օրէնքների և հրալարտակների տալ դաշնակցութեան սահմանադրութիւնը իրագործելու: Նա դաշնակցութեան պաշտօնեաների ռոճիկներն է որոշում, նոր պաշտոններ է նշանակում, (մի քանի բացառութիւնով):

Դաշնակից ժողովն է ընտրում դորժադիր իշխանութեան նախագահը, փոխ նախագահը, դաշնակից դատարանը և բանակի ընդհանուր հրամանատարը:

Զինւորական վարչութեան (շտաբի) զլիւսաւորին, զիւլլոմատիկական ազէնաներին նշանակում, օտար պետութիւնների հետ չարաբերութեան մէջ մտնում: Միջոցներ է ձեռք առնում երկրի անկախութիւնը, չէզոքութիւնը պաշտպանելու: Ապահովում է կանտոնների սահմանադրութիւնը և երկրի ներքին խաղաղութիւնը: Նա կարող է դաշնակից դատարանի դատապարտաւաններին ներումն շնորհել: Զինւորական օրէնքներ է հրատա-

¹⁾ Պէտք է նկատենք, որ 1879-ից մի քանի կանտոններ մահաւան պատիժը կրկին վերականգնեցին:

րակում, փոխառութիւն անում, փողի, կշռի չափի վերաբերեալ օրէնքների տալիս, բիւջէսը կազմում. վաւոյրի մոնօպոլը նրան է պատկանում. հաւմաթլոզների ¹⁾ վերաբերալեալ օրէնքները և օտարականների հսկելը նրանց է պատկանում, ինչպէս և ազգային առողջապահութեան վերաջնակելը և հասարակական աշխատանքները (travaux publics), կանտոնների մէջ ծագած վէճերը, եթէ քաղաքական բնաւորութիւն ունեն և ալն հարցերը, որոնց մասին պէտք է որոշել՝ կանտոնին է պատկանում թէ Դաշնակցական զործադիր իշխանութեան:

Վերջապէս դաշնակից սահմանադրութիւնը կարող է վերաքննութեան ենթարկուել: Պէտք է նկատել, որ սահմանադրութիւնը կարելի է վերաքննութեան ենթարկել, եթէ պարլամէնտի պալատներից մէկը ալդ ցանկանում է և կամ 50,000 քաղաքացիներ ալդ ցանկանում են, և ալդ վերաքննութիւնը տեղի կարող է ունենալ, երբ ալդ առաջարկութիւնը ժողովրդին է անում և եթէ ամբողջ ազգութեան մեծամասնութիւնը ալդ ցանկանում է. ապա նոր ընտրութիւններ են կատարում պարլամէնտի համար, որոնք հաւաքելով սկսում են սահմանադրութեան վերաքննութիւնը:

Իսկ քննած, փոփոխւած սահմանադրութիւնը ալն ժամանակ զործադրելի է, երբ ազգի մեծամասնութիւնը իւր քւէտով ընդունել է ալդ, և, բացի ալդ, պէտք է, որ ալդ մեծամասնութիւնը նաև կանտոնների մեծամասնութիւնը կազմէ (112—121):

Ինչպէս նկատում էք, ընթերցող, սահմանադրութիւնը իւր գոյութիւնով սահմանափակում է օրէնսդրական իշխանութեան իրաւունքները, որի չրջանակից հազիւ կարող է դուրս գալ և սահմանադրութեան հոգուն հակառակ օրէնքներ սահմանել. իսկ ալդ կոնտրոլ է անում անմիջապէս ժողովրդից իւր Պէթլիսցիտով և Վէֆէրէնդումով:

(Կը շարունակւի)

¹⁾ Հայմաթլոզներ (Heimathlose) կամ առանց Հայրենիքի մարդիկ (les gens sans patrie) կոչւում են Զւիցերլանդում նոքա, որոնց նախնիքը ինչ ինչ պառճառներով կորցրել են Համայնքի անդամ լինելու իրաւունքը. դոքա թւով մի քանի 100-ի են Հասնում:

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵԻՈՆ.—«Չալաբինների արչաւանքը» (պատկերներ
ռուս-տաճկական պատերազմի ժամանակից): Արտատպւած Մուրճ
ամսագրից: Թիֆլիս, տպարան Ռօտինեանցի, Տ-աճալ, 52 երես,
տառ № 12, գինն է 10 կոպէկ:

У страха глаза велики,—ասում է ռուսական առածը: Վախիտ մարդիկ միշտ պատրաստ են ամենահստարակ և սովորական բաների մէջ անգամ ահ ու դող տեսնել. նրանց հիւանդոտ երեակալութիւնը միշտ անցնում է կեանքի իրականութեան սահմաններից և ստեղծում է իւր համար դոնքրիշտալին աշխարհ՝ լի զաւանդան տարօրինակ, ֆանտաստիկական պատկերներով: Վախիտ մարդը երբէք չը գիտէ հասկանալ և ըմբռնել իսկական բանի էութիւնը, նա երբէք չի կարողանում սառը և հաստատուն մնալ կեանքի ամենահասարակ, նույն իսկ պրոպագանդական պաշտօնների մէջ: Վախիտութիւնը մի ծանրակշիռ հոգեկան արատ է, որի մասին, իրաւ, արժէ մտածել: Ի հարկէ եթէ հաստատութեան մէջ լինում են միտքն անհատներ, որոնք զուրկ են հոգեկան արիւթիւնից, սրունց մէջ հերոսական արիւթեան

նշույններ անգամ չեն երևում,—ալդ տեսակ անհատները միշտ լինում են ծաղրի առարկայ, միշտ ուրիշի ծիծաղը և արհամարհանքն են վաշելում: Բայց երբ վախիտութեան, թուլաստութեան ողին տարածւած է մի ամբողջ հասարակութեան մէջ, երբ մի հասարակութիւն, զանազան անտեսական և քաղաքական պատճառների ազդեցութեամբ՝ դառել է վախիտ, թուլաստիկ և շատ լուսահատուղ՝—ալս դէպքում արդէն դժւար է միայն ծաղրել և անտարբեր մնալ դէպի ալդ հասարակական երեւոյթը. ալս դէպքում հարկաւոր է և նույն իսկ արժէ մամուլի, գրականութեան միջոցով՝ հրապարակ հանել ալդ հասարակական արատը և հրապարակաւ մի կուշտ ծիծաղել ալդ արատի վերայ... Այդպէս է անում և պ. Լեոն Մանուէլեանցը իւր «Չալաբինների արչաւանքի» մէջ: Ի հարկէ իւր պատմութեան մէջ պ. Մանուէլեանցը մի

տեղ անդամ չի լինել տեղի անունը. Կապի ուլ որ եղել է Գողթման գաւառում, իսկոյն կը հասկանալ, թէ որ գիւղի մասին է խօսքը: «Չալաբիների արշաւանքը» մի երգիծաբանական գրւածք է, որի երգիծաբանութիւնը՝ պատմութեան մէջ, դրամատիկական և, նոյն իսկ, ողբերգական ձևով է արտապատկարծ: Ի՞նչ կասէք զուր ան գիւղի հասարակութեանը, որ երևակայական «Չալաբիների արշաւանքը» անոյ շատ ամբողջ մի գիւղի չի կարողանում հանդիստ քնել, ամբողջ մի գիւղի տները քունջերը մտած, չ'անոյ ու սարսափով՝ աղօթք է անում, լալիս է, իւր գլխին գալիք աղետալի կոտորածի համար թուլասրտօրէն ողբում է... Ի՞նչ կ'ասէք զուր ան գիւղի երիտասարդութեանը, որ ուրիշ ժամանակ, քէֆ անելիս, կամ ինճոյք հարսանիք կատարելիս՝ մեծ մեծ բրդել գիտէ իւր քաջութեան, իւր կտրիճութեան մասին, և երբ իսկապէս մի վտանգի համբաւ է լսում, երբ լսում է թէ վալդինի քրդերը արշաւանք են գործում իրանց գիւղի վրայ՝ անքան վախեցում և ինքն իրան կորցնում է, որ չի համարձակուում անդամ ձի նստել և զուրս գնալ գիւղից՝ ստուգելու թէ իրաւ թշնամի կալ անտեղ թէ ոչ: Թուլասրտութիւնը ոչ միայն

Գողթման գաւառի, այլ առհասարակ մեր հայերիս ընդհանուր չափակութիւնն է, և պ. Մանուէլեանցի երգիծաբանութիւնը, որոշ չափով՝ կարելի է ընդհանրացնել մեզ բոլորիս վերայ: Մենք, չափազանց կուլտուրական ազգ լինելով, մոռացել ենք, որ մարդոց գլխաւոր առաքինութիւններից մէկն էլ՝ քաջութիւնը, անվնասելիութիւնը, արիւնքութիւնը և ինքնագոհ, հերոսական կտրիճութիւնն է: Այս հանգամանքի վերայ թող առանձին ուշադրութիւն դարձնեն և մեր դաստիարակ—ուսուցիչները՝ ոչ միայն Գողթման գաւառի, այլ և բոլոր տեղերի հայ մանուկների վերաբերութեամբ:

«Չալաբիների արշաւանքը» զրուած է կարճ, արտապատիւ և բոժ հալկական ոճով ու դարձածքներով: Նրանում համեմատութիւնները, գեղարուեստական պատկերները և մանաւանդ զուրս բերած տիպերը շատ կենդանի, իշխական և աշխուժ բնաւորութիւն ունին: Այդ փոքրիկ պատմութիւնը շատ չարմար է թէ հասակաւոր ժողովրդի և թէ մանուկների ընթերցանութեան համար: Թէ հասակաւոր «չը վարդապետ» ընթերցողը և թէ մանուկը շատ հեշտ կը հասկանան գրւածքի ոգին, նորա երգիծաբանական ուղղութիւնը:

Եր. Ղալ.

ՊԱՐՈՆԵԱՆ.—«Մեծապատիւ մուրացիաների Հրատ. հայոց հրատարակական ընկերութեան: Թիֆլիս, 1891 թ., տպարան Շարաձէի, 8-աճալ, 163 երես, տառ. № 12, զինն է 40 կոպէկ:

Պարոնեանի «Մեծապատիւ մուրացիաները» սատիրա է Կ. Պոլսի ալի շրջանների բարքերի, որոնք ներկայացուցիչ են հասարակական, կամ, ինչպէս ասեալ ընդունած է ասել, ազգային շահերի և միջնորդ են եւրոպական սկզբունքները տեղական կեանքի մէջ մտցնելու համար: Սատիրան ցոյց է առնում, որ ազգային ներկայացուցիչները շատ հեռու են ազգ տեսակ բարձր կոչումից և մինչդեռ ժամանակ գտնում են ալիքի սիրտը ողորակի վիճակի մէջ, ալիքի ծանր կարօտութեան մէջ, որ միայն մուրացիանին վաղէ միջոցներով կարողանում են պահպանել իրանց գոյութիւնը ազգ սուղաբերում, մի կողմ՝ դնելով և անձնական պատիւը և բարոյականութեան տարրական պահանջները:

Սատիրայի ֆարսուկան կազմում է մի շատ սովորական դէպք. Կ. Պոլս է գալիս մի սպասարկողի հարուստ, բազմ բոլորովին անկիրթ վաճառական, որի գլխաւոր նպատակն է ազգ քաղաքում ձեռնառն կերպով ամուսնանալ: Կարծես զխիժական ազգեցութեամբ ալի մարդու զաւր խելուն խմանում են Կ. Պոլսի խմբադիրները, բանաստեղծները, դաստիարակները, հեղինակները, բժիշկները, փաստաբանները, քահանաները և ալի, որոնք, ինչպէս թուում են զակի վերայ:

հաւաքում են ալի մարդու շուրջը, մի որ և իցէ նիւթական օժանդակութիւն կորզելու համար: Ազգ նպատակով չապշտում են ալի գոհիկ մարդուն զիտնականի, լեզուագետի, հայրենասէրի և ալ սրանց նման պատուաբեր տիտղոսներ:

Ընդունելով ալի ամենապարզ ճշմարտութիւնը, որ ոչ մի բան ինքն իրան չի ծագում, ալի ունի իւր պատճառները, մեզ գիտար չի լինիլ ըմբռնել, որ ալի սատիրայում հանդուգնալ Պարոնեանը հարաձուռ է Կ. Պոլսի հասարակութիւնը ամբողջովին, որը գտնում է բարոյալի և մտաւորապէս ալիքի ստոր աստիճանի վերայ, որ անընդունակ է ստեղծել ալիքի սպասմանն, որոնց մէջ հնար լինի մտաւոր և հասարակական իսկական գործիչների գոյութիւնը: Եւ խօսքերով ազգ հասարակութիւնը զուրկ է քաղաքակիրթ հասարակութիւններին չափով պահանջներից և ղեկավարում է զեւր գլխաւորապէս ստոր ձգտումներով:

Սատիրան կարգացում է հետաքրքրութեամբ, հիւմորը երբեմն զօրեղ տպաւորութիւն է գործում, բազմ զուրկ չէ պակասութիւններից, որոնք բաղկանում են չափազանցութիւնների մէջ (утрировка):

ՎԱԼԻՆԵՐ Գ. «Հաւատարիմ Սաւիտրին», հնդկական վէպ գերմաներէնից թանգմանեց Ֆիլիպպոս Վարդանեան: Հրատարակութիւն Թիֆլ. ընկեր. հայերէն գրքերի հրատարակութեան № 32, Թիֆլիզ, տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի 1891 թ., 38 երես, գինն է 10 կ.:

Հաւատարիմ Սաւիտրին մի հնդկական վէպ է, որը գերմաներէնի է փոխադրած Գ. Վալդենբի ձեռքով, որից և այ. Վարդանեանը թարգմանել է հայերէն:

Նախ մի քանի խօսք նւիրենք վէպի բովանդակութեանը, ապա անցնենք իմաստին և նորա նշանակութեանը: Մադրասի Աւաւպարի թագաւորն անգլաակ էր, նորա պալատի սրահները չէին թնդում կաթառ և ուժեղ մանուկների ծիծաղից, զւարթ խաղերից: Աւաւպարին շատ և շատ նւէրներ արաւ աստուածներին, բաղմամբիւ տաճարներ ալցելէց: Մի օր էլ ալցելէց նա Ծագերնատի սրբավայրը և ահա աշտեղ նստած ժամանակ մի անծանօթ ձաղն լալտնեց, որ նա շատով կուճենալ մի օրդիւ Աւաւպարը ստացաւ մի գեղեցիկ և շնորհալի գուստր: Անցան տարիներ՝ մեծացաւ թագաւորի աղջիկը: Թագաւորը մատաանջութեան մէջ էր գտնուում, որ գուստրը՝ գեղեցիկ Սաւիտրին, ամուսնութեան մասին դեռ չի մտածում, նորան տանջում էր այն միտքը, թէ ով պէտք է իւր մահից լիտոյ Մադրասի գտնը բարձրանալ: Աղջկաի մտքերի մէջ խորասուզած, մի գեղեցիկ օր հարցրեց թագաւորը իւր գուստր, աղջկանին էլ լօժարւեց գտնել իւր համար մի ամուսին: Անտառում ծանօթացաւ նա մի ճղգ-

նաւորի հետ, որն և ապրում էր մի աղքատ խրճիթի մէջ իւր հօր և մօր հետ, որոնք ժամանակին թագաւորում են եղել մեր երկրի վերայ, բայց չէտոյ, թշնամուց լաղթւելով, անհետացել են անտառներում, ընտրելով իրանց բնակութեան համար մի հասարակ ու աղքատ խրճիթ: Թագաւորի գուստր Սաւիտրին լալտնեց իւր մտադրութիւնը իւր հօրը, և աղջկանին լալտնեց իւր համաձայնութիւնը: Սակայն աղջկաի խօսակցութեան ժամանակ ընդմիջեց նոյա մի օտար ձաղն, ասելով որ Սաւիտրին չը համարձակւի աղջկաի մի քաղ անելու, քանի որ ճղնաւորը մի տարուց լիտոյ պէտք է վախճանւի: Սաւիտրին չը համաձայնեց և պրակեց: Աղջկանից թողաւ նա իւր հօր արքայական տունը և ապրեց ճղնաւորի աղքատ խրճիթի մէջ: Վերջապէս անցաւ տարին և ճղնաւորը միտնաւեց, սովորեց նորա հաւատարիմ Սաւիտրին ընկաւ հողահանի հետեից, խնդրեց ու աղաչեց, որ իրան էլ իւր ամուսնու հետ առնի, բայց հողահանը, չը համաձայնելով, լալտնեց հաւատարիմ կնոջը, որ նորա ուրիշ ցանկութիւնները, բացի ամուսնու կենդանացնելուց, կը կատարէ: Սաւիտրին ցանկացաւ նախ ունենալ մի եղբայր թագաւորանոյ, ապա իւր ամուսնու հօր գահի վերադարձումն: Հողահանը խղճաւով նո-

րան տեղից նաև նորա ամուսնուն կենդանութիւն: Սաւիտրի ամուսնուն հաղորդ ստացաւ ձեռքից խլած դահը և ընծաւից իւր որդուն: Ահա այս է վէպի բովանդակութիւնը:

Այս կարճաւոտ բովանդակութիւնից անկարելի է դուրս բերել վէպի բնաւորութիւնը: Նա արդիւնք է արեւելեան ազգերի վառւած երեակաւորութեան և հոգեկան կարողութեան և սկիզբ է առել խորերիկական տեմպերամէնտից: Ոչ մի ազգ չի ստեղծել այնպիսի բանաստեղծական և խառնակական վէպէր, ինչպէս արեւելեալ ազգերը՝ զլիսաւորապէս արաբացիք, պարսիկները և հնդկացիք: Բանաստեղծութեան և առասպելների մէջ երեան ևն զալիս վսեմ խմաստներ ու զսղափարներ, որոնք մարդուս մոռացնել են տալիս առասպելը և բանաստեղծի անստնձ երեակաւորութիւնը: Այդ գաղափարներն են՝ աստածալին էութիւն, սէր և պարտաճանաչութիւն: Այս վէպը ուղղում է մեզ տալ իրէալներ, որոնց իրադրութեան անկարելի մի բան է, բաց ունի ժողովրդի վերաջ մեծ կրթական ազդեցութիւն: Գաղափարը ստիպում է մոռանալ արքայական տան փառքը, գեղեցկութիւնը, զարդը: Գաղափարը լառաջացնում է սէր և պարտաճանաչութիւն: Սաւիտրին մի իրէալական և զօրեղ բնաւորութիւն է: Նա գաղափարի համար ամուսնանում է ազգատ ճգնաւորի հետ և թողնում իւր հօր արքայական տունը, նորա թաղը, արքայաւալէկ կեանքը, խօսքերիս աղապարհման համար բերեք մի կտոր ճգնաւորի խօսակցութիւնից:

«Մի վախենար, Սաւիտրի, ասաց ճգնաւորը, ես մի հասարակ ճգնաւոր եմ, որ աշխարհից հեռացած՝ պաշտում եմ աստածներին»:

—«Կար ժամանակ, որ անունս մի պանծալի հռչակ ունէր—այլ ևս չունի: Իմ հալոյնիքը անտառն է, վիճակս է առանձնութիւն. ես անց եմ կացնում օրերս ճգնողների հետ աղօթք անելով աստածներին, խնամում եմ պառաւ մօրս, օգնում եմ կտր հօրս և դո՛ւ եմ այս կեանքից»:

Մի ուրիշ տեղ. «Սատուաան ճգնաւորի համար օթեւան չը կալ թագաւորի ապարանքում: Նս պիտի գնամ ալսօր ծնողներիս մօտ, որոնք սպասում են ինձ կարօտով: Մնաս բարով. լիչիր մենաւորիս, եթէ ալքքեղ հաճոյ թւի: Իմ անտառն ու տունը ամալի և տխուր են, որովհետեւ կեանքիս շաւղի վերաջ ոչ մի լոյս չէ փալում: Այո՛, թէն ևս տեսալ մի լոյս, որ աստղի պէս շողաց ինձ, բաց ափսոս—եւ չեմ կարող բռնել նորան. նա չի ուզիլ մտնել իմ չքաւոր հարկի տակ և կը մարի կարիքից: Բարով մնաս»:

Գաղափարը կապում է Սաւիտրուն սերտ սիրով իւր ամուսնու հետ այն աստիճան, որ նա ճգնաւորի մահից լիտո՛ջ նորան հետեւել է ուղում:

Հայ հասարակութեան համար այս վէպը կարող է մեծ կրթիչ ազդեցութիւն ունենալ: Նա կարող է Սաւիտրիի մէջ մի օրինակ գտնել: Գուցէ շատերը նկատեն, թէ Սաւիտրին մի առասպել է. ալս ևս համաձայն ևս, սակայն ալդ առասպելը մարմնացնում է իւր մէջ գաղափար:

ներ, որոնք ժողովրդի կրթութեան համար մեծ փաստեր են:

Ինչ թարգմանութեան է վերաբերում, պէտք է ավստոսալ, որ լեզուն շատ պարզ է, նամանականդ թարգմանիչը աշխատել է խրթին

խօսքեր գործածել: Այսպիսի մի գրքով, որը ճշմարիտ ժողովրդական կարելի է համարել, պէտք է ունենալ պարզ և սահուն լեզու:

Բար.

Հիփոթո-ից, Վիկտոր.—«ԵՂԵՍՐԸ ԵՂԵՍՐ ԴԵՄ»: Թիֆլիս, տպարան «Արօր» Տ. Նաղարեանցի 1891 թ., 48 երես, թարգ. Յ. Օ., գինն է 7 կ.:

Այս պատմութիւնը վերցրած է Վ. Հիւգոյ լատին վէպից՝ „Quatre vingt treize“. Պատմութեան սկզբում ընթերցողը հանդիպում է անհասկանալի նախադասութիւնների. «Ֆրանսիայում ներքին պատերազմ կար» (առանց ասելու թէ ինչ ներքին պատերազմ էր ալ): «Վանդէ նահանգի բնակիչները փոփոխութիւններ (ինչ փոփոխութիւններ) չէին կամենում: Պարիզեցիները նրանց ապստամբներ անւանեցին»: Այս խօսքերը ոչ թէ ժողովրդի համար, ալ և ինտելիգենտ մարդուն էլ անհասկանալի են, եթէ նա չը գիտէ թէ ինչ «ներքին պատերազմի» մասին է խօսքը: Հարկաւոր էր բացատրել թէ պարիզեցիները աշխատում էին հանրապետական կառավարութիւնը մտցնել բոլոր նահանգներում, բալց վանդէացիները, միապետականների լինելով և չը հասկանալով հանրապետութեան սկզբունքները՝ չ'ընդունեցին փոփոխութիւններ իրանց կառավարութեան մէջ:

Պատմութեանս կարճառօտ բովանդակութիւնը սա է: Ապստամբ

ներն քաջ և անվնէր առաջնորդ մարկիզ Լանտենակը, որի գլուխը շատ թանգ էր գնահատւած պարիզեցիներից, իմանալով, որ պարիզեցիները առանց ղիմադրութեան ընդունւած են զիւղում, լարձակում է ալգ գիւղի վերաջ իւր ընկերներով, կոտորում է պարիզեցիներին և կրակ է աւելի գիւղը: Կոտորածների ժամանակ նա ի միջի ալոց սպանում է մի կնոջ մարդուն, խլում է նրանից նորա երեխաներին, իսկ կնոջը սատիկ վիրաւորում է: Ալգ կինը մի մուրացկանի մօտ բժշկւելուց լետու, խելագարի պէս սկսում է որոնել իւր երեխաներին մեծ վտանգների, ենթարկելով իւր կեանքը: Շատերին հարց ու փորձ անելով, նա վերջապէս իմանում է, որ մի ինչ որ երեք երեխակի Լանտենակը իւր հետ տարել է Տուրգ Բերդը, ուր ամրացել է տառն և ութ ընկերներով: Պովէն հրամանատարը, Լանտենակի քրոջ որդին, և միևնույն ժամանակը նորա թշնամին պաշարել էր բերդը: Լանտենակը, տեսնելով որ տասնութ հոգով չի կարող ղիմադրել մի ամբողջ զուգդի,

առաջարկում է Գովինին, որ նա թողնէ պաշարածներին ապառ և անվնաս անց կենալ նրանց միջից և ստանալ իբրև վարձատրութիւն երեք երեխաներին, հաշտուակ դէպքում կրակ կը տալ բերդը և բռնուն էլ կը ոչնչանան երեխաների հետ միասին, որոնց մեղքը պաշարողներին վրին կը լինի: Պաշարողները չը համաձայնեցին: Պաշարածներին դրութիւնը շատ նեղ էր, նրանցից երկուսը արդէն սպանւած էին: Մի լանկարծակի դէպք աղատեց նրանց բերդից, մարկիդի հաւատարիմ մարդկանցից մէկը բերդի պաղտնի ճանապարհով մտաւ ներս և խորհուրդ աւելց վերկեւէ ալք ճանապարհով, որը տանում էր անտառը: Բերդը կրակ տալով՝ բռնորդ զուգու եկան գնացին, երեխաներին թողնելով մի փակած սենեակում, որի լանալին Լանտեակի մօտ էր: Երեխաների մայրը հասաւ Տուրգ, սեռաւ որ բերդը կրակ է տւած և որ երեխաները պատուհանից դուրսնեղ հանել են: Նա լալիս,

աղաչում պաղատում է, որ աղատեն իւր երեխաներին, քալց ոչնչով չի կարողանում աղատել, որովհետեւ սենեակի երկաթէ դուռը փակւած է: Ալք ժամանակ, երբ բռնորդ լուսահատւած են և սենեակը արդէն ալուում է, միկնոյն դադարի ճանապարհով վերադառնում է Լանտեակը, բանալիով բացում է դուռը և աղատում է երեխաներին, իսկ ինքը ընկնում է թշնամիների ձեռքը: Նրան դատապարտում են մահւան: Գովինը շատ զգացած լինելով Լանտեակի աղնիւ քաջագործութիւնից, գիշերով աղատում է նրան, ինքը նորա տեղ փակւում բանտում: Գովինին գլխատում են:

Ինքն ըստ ինքեան շատ հետաքրքիր պատմութիւն է ակ գրւած քը, քալց որովհետեւ մի քանի կարևոր տեղեր չեն լուսարանւած, ալք պատճառով նա կը մնալ ժողովրդից չը հասկացւած:

Թարգմանութիւնը լաւ է:

Գ. Ս.

ՏՈՒՐԳՆԵՆԻ, ՍԵՐԳԷՅ ԻԻՍՆՈՎԻՉ.— «Նախընթաց օրը» (НАКАВУБ),
 Թարգմ. Եր. Ղազարեանի. «Տարազ» 1891 23—27:

Մեղնում առհասարակ կարծում են թէ թարգմանելուց հետո բան չկալ, բաւական է, որ մարդ փոքր ի շատ է հասկանալ կարողացածը և իմանալ զծագրել իւր մարինի լեզու տառերը, նա թարգմանիչ է ու թարգմանիչ: Թարգմանողից ոչ լուրջ հմտութիւն է պահանջւում, ոչ ընդունակութիւն:

Ալք սխալը շատ ցաւալի հետեանքներ է ունենում: Աչքի անցրէք մեր թարգմանական զրականութիւնը և ապշած կը մնաք ամեն քալափոխում պատահող սխալներից, ճաշակի, գիտութեան, ընդունակութեան և ամենատարրական բարեխղճութեան քաջակալութիւնից: Ոչ մի լարգանք դէպի հեղինակը, ոչ մի լարգանք

դէպի ընթերցողները:

Մասնաւորելով խօսքս պ. Սր. Վաղարեանի թարգմանութեան մասին, պէտք է ամենից առաջ նկատենք, որ ամեն գովասանքի արժանի է վէպի ընտրութիւնը, և հալ ընթերցողներից շատերը, որոնք չեն կարող բնագիրը կարդալ, օրտանց չնօրհալալ կը լինեն թարգմանից, որ հնարաւորութիւն է տալիս նրանց ծանօթանալ տաղանդաւոր փպատանի գաղափարական (идейный) գրածքի հետ:

Դժբախտաբար, նոյնը չի կարելի ասել թարգմանութեան մասին: Որքան լաջող է ընտրութիւնը, աչնքան անլաջող է կատարած թարգմանութիւնը: Իսկ Տուրգենևի գրածքները արժէր լաւ թարգմանել, Շատ քչերը ռուսաց գրականութեան մէջ կարող են մրցել Տուրգենևի հետ գրածքի գեղարեւոտական արժանաւորութիւններով, ոճի աննման գեղեցկութեամբ: Երբ որ մարդ ռուսերէն կարդում է Տուրգենևի վէպերը, աչնպիսի տպաւորութիւն է ստանում ինչպէս ամենաներդաշնակ երաժշտութիւնից, — զուր չէ, որ ռուս մատենախօսները նրա տաղանդը «երաժշտական տաղանդ» են անւանել: Ամենացաւին աչն է, որ թարգմանիչը իւր համար պարտականութիւն չի համարել Տուրգենևին վէպը թարգմանելու ժամանակ հետեւել աչն ընդունւած կանոնին, որ թարգմանիչը պէտք է ասիւաչն բոլորը և մի աչն աչն, ինչ որ հեղինակն է ասում: Անցնենք փաստերին:

Ախսենք աչնպիսի սխալներից,

որոնք լաւաջացել են նրանից, որ թարգմանիչը լաւ չը գիտէ ռուսերէնը և աչդ պատճառով չի հասկացել բնագիրը:

...Имѣние-же было оброчное...

...Մանաւանդ որ հողը կապալով էր տրւած...

Սխալը թարգմանիչն արել է, երեխ, նրանից որ ռուսաց կեանքի հետ լաւ ծանօթ չէ, աչլապէս կիմանար, որ оброчное անւանում էին Ռուսաստանում աչն կալւածները, որոնց տէրերը իրանց գիւղացիներից աշխատանքի տեղ ստանում էին որոշեալ տուրքեր բնութեան արդիւնքներով:

»Павелъ не чувствовалъ никакого расположенія къ медицинѣ, но, по существовавшему въ то время штату студентовъ, ни въ какой факультетъ поступить было невозможно.

Նա ոչ մի հակումն չէր զգում դէպի բժշկականութիւնը, բայց աչն ժամանակաւ ռուսնողական կանոնադրութեան համաձայն՝ ուրիշ բաժին մտնել չէր կարելի...

«Տարաւը» № 25, կրես 370:

Աչնպիսի կանոնադրութիւն, որ ստիպէր բոլոր համալսարան մտնողներին ընտրել մի աչն մի բաժին, երբէք չի եղել: Հեղինակի ասածի միտքն աչն է, որ աչն ժամանակ ամեն բաժին ընդունում էին որոշեալ թուով ռուսնողներ և Շուքինը բժշկական մասն է ստիպւած եղել մտնել երկի աչն պատճառով, որ աչն ժամանակ, երբ որ նա խնդիրը է տուել համալսարան մտնելու, աչդ բաժնումն է

միայն ազատ տեղ եղիլ: Թարգմանիչը չի հասկացել штатъ խօսքը, թարգմանել է կանոնադրութիւն և դուրս է եկել անմիտ բան:

«...Свободный художникъ...»

...Ազատասէր արւեստագէտ...

Պ. Ղազարեանը չի խմանում, որ свободный художникъ մի կոչումն է, որ ստանում են կոնսերվատորիաները, գեղարւեստական ճեմարանները և այլն աւարտողներից մի քանիսը, ինչպէս համալսարանն աւարտողներից մի քանիսը ստանում են կանդիդատի աստիճան: Ազատ արւեստագէտը ինչպէս և ազատ ունենդիրը կարող են և պաշպանողական լինել:

„Дѣвушка всмотрѣлась въ него...”

Աղջիկը մօտեցաւ (1) նրան, տեսնեց (?!)

(№ 27. Երես 400):

...Она чуть не умерла отъ злокачественной анхораки.

...Նա քիչ մնաց, որ մեռնէր չարաբաստիկ տենդից:

(№ 27. Երես 403):

Դժուար է ասել՝ ինչից է լսաջացել սխալը, հալերէնը լաւ չիմանալուց թէ ուսերէնը:

Այս բոլորը կոպիտ սխալներ են, կան ուրիշ, ի դէպ ասել անթիւ, սխալներ էլ, որոնց մեծ մասից կարող էր ազատ լինել թարգմանութիւնը, եթէ թարգմանիչը մի քիչ աւելի ուշադրութեամբ վերաբերէր իւր գործին:

Ամեն լեզու ունի իւր նրբութիւնները: Ամեն լեզուում մի քանի զանազան բառեր միևնույն մտքի առան-

ձին, արտայտ ասենք, գունաւորութիւններն (оттѣнокъ) են արտայայտում և միևնույն բառերը զանազան տեղերում տարբեր իմաստ են ստանում: Պր. Ղազարեանը այդ մասամբ չի հասկանում, իսկ աւելի լաճախ՝ չի ուզում հասկանալ: Ենթադրենք թէ մի ուսերէն բառ զանազան տեղերում հալերէն չորս տարբեր բառերով է թարգմանում,— այ. Ղազարեանը թարգմանութեան մէջ դնում է այդ բառերից մէկը, որ պատահարար գրչի ծայրն է դալիս: Այդպիսի անհոգ, չիերթ (безалаберный) վերաբերութիւն դէպի բառերը դժուար է երևակայել: Ահա օրինակներ.

„Сладкій запахъ съ каждымъ дыханіемъ втѣснялся въ самую глубь груди, но грудь имъ охотно дышетъ“.

Անուշահոտութիւնը լցւում, ծանրանում էր կուրծքի մէջ և գգւում էր շնչառութիւնը:

(№ 23, Երես 338):

Պարզ է, որ ալտեղ ծանրանում էր բառը գործ է ածւած չմարանա (зря):

Посмотрѣлъ на настоящихъ, на стариковъ, на антики, да и разбилъ свою чепуху.

Ես տեսալ իսկական, ծերունի, հին լիշատակները և ջարդ ու փշուր արի իմ անհեթեթ գործը:

Ծերունիներ (ոչ թէ սփերունի վիշատակներ!) ասելով հրաւիրել հասկանում է հին զարերի կլաստիկ արւեստագէտներին:

Իայց դեռ այս բոլորը ոչինչ. այ. Ղազարեանը իւր թարգմանչական աղատաստիքութիւնը աւելի հեռուն է

տանում. վէպի հոգեբանական մասը նրա համար կոպէկ չարժի. Հեղինակը, դիցուք, ասում է. վէպում գործող ալս ինչ մարդը ալս ինչ խօսքերը լսելով բարկացաւ, Ղազարեանը թարգմանում է թէ՛ լուզւեց. հեղինակն ասում է. նա պատասխանեց, դիցուք, ատանմանը կրճտացնելով, Ղազարեանը նրան օտարում է պատասխանել քթի տակին փնփնթացնելով. Ահա անթիւ օրինակներից մի քանիսը:

Шубинъ произнесъ всю эту рѣчь въ ностъ, полу-лѣниво, полушутливо.

Այս բոլոր ճառը Շուբինը արտասանեց քթի տակ՝ կիսալուռ-նած և կիսածիծաղ կերպով... (№ 23 եր. 386).

Ի դէպ նկատենք, չի կարելի ասել բոլոր ճառը, պէտք է ասել ամբողջ ճառը:

Воскликнулъ на распѣвъ Шубинъ...

Դոչեց Շուբինը բարձրաձայն... (№ 23 եր. 338).

Съ жалобною гримасой...

Ցաւակցական ծամածռութեամբ:

Улыбнулась томно и вяло...

Ակամաւ խուլ կերպով սկսեց ժպտալ:

Նոյնը պէտք է նկատել և ալն տեղերի թարգմանութեան մասին, որտեղ հեղինակը նկարագրում է վէպի հերոսներին. Օրինակներ.

Черномазый.

Սևահեր:

Красивыя выпуклыя губы.

Գեղեցիկ ուռած (!) չրթուքներ:

Схватилъ себя за волосы...

Ձեռքերով պոկում էր իւր մազերը:

Немного широкое, но свѣжее лицо.

Իւր ախորժելի քնքոջ դէմքը:

Сѣрые глаза...

Թուխ աչքերը:

Загорѣлая рука...

Ագրած (արևառ) ձեռքեր:

Բաւական չէ որ պ. Ղազարեանը ճիշտ չի թարգմանում գրածը, նա դեռ իրան թող է տալիս տեղ-տեղ մի քանի բառ պակասացնել, տեղ-տեղ էլ աւելացնել:

Հեղինակը ասում է, որ օրիորդի ձեռները գեղեցիկ էին, թարգմանիչը աւելոդ է համարել լինել դորա մասին: Հեղինակն ասում է, որ Զօլեան մի քիչ չիլ էր, թարգմանիչը ալնքան բարի է դռնում դէպի Զօլեան, որ ծածկում է նորա ալդ ֆիզիկական պակասութիւնը: Հեղինակն ասում է, «ինչպէս համարեա բոլոր ռուս աղնականները, նւագում էր չատ անբաջող» և «նա համարեա բոլորոք ին անկախ էր», իսկ թարգմանիչը համարեա բառը երկու նախադասութիւնից էլ դէն է պցում:

Մի քանի տեղ թարգմանիչը իրանից աւելցնում է չտապով, իսկ ոչն, կարծես և ալ բառերը, ուշք չը դարձնելով, որ ալդ բառերը գրածի միտքը փոխում են, օրինակ:

Берсенева тоже прислушивался.

Նա ևս կարծես մի բանի ականջ էր դնում:

Մի տեղ թարգմանիչը իրանից աւելցրել է «տխուր դէմքի արտա-

«Կատարեցի» բառերը (№ 26, երես 385): Մի ուրիշ տեղ աւելցրել է «բոլորը սիրում և գգնում էին նրան» նախադասութիւնը (№ 27, երես 402) և այլն:

Բոլորովին կամայական կերպով է վարւում պ. Ղազարեանը և նախադասութիւնները իրար հետ կապող մասնիկների հետ, — եւ ի տեղ էջ է դնում, եւ ի տեղ եւ, յետոյ ի փոխանակ «եւ» և այլն:

Բայց պ. Ղազարեանը անպիտի դարձածքներ էլ է գործածում, որոնք խորթ են բոլոր լեզուների համար, որ չի ասիլ ոչ մի ուսու, ոչ մի ֆրանսիացի, վերջապէս ոչ մի բուշմէն:

«... Մանր ալիքների» (Մոսկուէ դետի) հանդարտ շառաչիւնը փալիսալում էր լսողութիւնը»:

«... Վախի, սարսափի ազատ դպացմունքներ» (ուսուիւնում դրած է полу-страхъ)

Պր. Ղազարեանը քերականական կանոններ էլ չի ընդունում, մինչև անգամ անպիտի կանոններ, որոնք ընդունւած են բոլոր լեզուներում: Օրինակ.

«Նրա (տիկին Ստախովայի) դուստր Ելենայի ծնունդը քաղաքից մօր (տիկին Ստախովայի) առողջութիւնը... մանաւանդ խիստ ցաւ պատճառից նրան (տիկին Ստախովային) ամուսնի ան վարմունքը, որ Նիկոլայ Արտեմեւիչը (ամուսինը) խաբէութեամբ ընծալից և այլն»:

Իերենք մի կտոր էլ, որի մէջ երևում են պ. Ղազարեանի թարգմանութեան բոլոր պակասութիւնները իրանց ցաւալի փալով:

„Во всемъ ея существѣ, въ выраженіи лица, внимательномъ и немногo пугливомъ, въ ясномъ, но измѣчивомъ взорѣ, въ улыбкѣ, какъ будто напряженномъ, въ голосѣ тихомъ и неровномъ, было что-то нервическое, электрическое, что-то порывистое и торопливое, словомъ, что-то такое, что не могло всѣмъ нравиться, что даже отталкивало иныхъ.“

Նրա բոլոր գոյութեան մէջ, — ու չի մ և երկչոտ դէմքի արտա-կատարեան, պարզ և փոփոխական հայեացքի, լարւած ժպիտի, և հանդարտ ու անհասար ձայնի մէջ կար մի տեսակ էլէքտրական ուժգնութիւն, մի տեսակ շտական ուժգնութիւն, մէկ խօսքով անպիտի մի առանձին բան, որ շատերին կարող էր դուր չը գալ, որից շատերը կարող էին խորշել մինչև անգամ: (№ 27 եր. 400):

Ի՞նչ աւելացնում ասածներիս... պէտք էր աւելի խնամքով ու հմտութեամբ թարգմանել Տուրգենևի «Нагануны»-ն:

1) ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ. — «Պատկերներ թիւրքահայոց կեանքից»: Հատոր Ա. — Հրատար. Արէլ Ապրեսեանցի: Մոսկւա, տպ. Մկրտ. Բարխուդարեանցի, 1891 թ., գրին է 1 ր. 25 կ., ճանապարհածախքով 1 ր. 50 կոպ.:

2) ԵԱՂՈՒԲԵԱՆ, ԿԱՐԱՊԵՏ. — «Հայերէն-ուսերէն բառարան»: — Հրատ. Պետերբ. հայ և վրացի ուսանողների: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1891 թ., գրին է 2 ր.:

3) ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, ՅԱՐ. — «Կնոջ կոչումը և զրութիւնը հասարակութեան մէջ»: — Հրատ. № 53 «Աղբիւր» և «Տարազ» հանդէսների: Թիֆլիս, տպ. Նաղարեանի, 1891 թ., գրին է 10 կոպ.:

4) ԲԱՐՈՒՌԴԱՐԵԱՆՅ. ՅՈՒՀԱՆՆԷՍ. — «Հայերը և նոցա հարեան աղբերը թուրքիայում»: Արտատպւած Ausland շաբաթաթերթից, 1891 թ., 20—22 (գերմաներէն):

5) ՊԱՐՈՆԵԱՆ, ՅԱԿՈԲ. — «Մեծապատիւ մուրադկաններ»: — Հրատար. հայերէն գրքեր տպող Թիֆլիսի Ընկերութեան: Թիֆլիս, տպ. Շարաձէի 1891 թ., գրին է 40 կոպէկ:

6) ՊԱՐՈՆԵԱՆ, ՅԱԿՈԲ. — «Տարեցոյց կամ գուշակութիւնք Խիկարի 1892 թ. համար»: — Թիֆլիս տպ. Ռոտինեանցի, 1891 թ., գրին է 10 կ.:

7) ԼԷՕ. — «Վերջին վերքեր» (Ղարաբաղի անցեալից): Առաջին մաս: Հրատ. «Աղբիւր-Տարազ» հանդ. № 82. Թիֆլիս, տպ. Նաղարեանի, 1891 թ., գրին է 30 կոպ.:

8) ՆԴԻՇԷ, Թարգմանութեամբ Հ. Ղուկասեանի. — «Նշիւի Պատմութիւնը Վարդանի և հայոց պատերազմի համար (?)»: Թիֆլիս, տպ. Արօր Նաղարեանցի, 1891 թ., գրին է 60 կոպ.:

9) ԹՈՒՆԵԱՆ, ԹԱԴԵՈՍ վարդապետ, Վիեննայի Մխիթարեան ուխտէն. — «Հատընտիր ընթերցւածք ի մատենագրութեանց նախնեաց, հանդերձ ծանօթութեամբք ի պիտոս չառաջադէմ աշակերտաց»: — Նրկրորդ տպագրութիւն իւրք իւրք փոփոխութեամբք, Վիեննա, Մխիթար. տպարան, 1891 թ., գրին է?

10) ՏԱՆ, ԴԵՄԵՏՐԻՈՍ. — «Արեւելեան հայք ի Պուքովինա»: Թարգմանեց Հ. Գրիգ. Վ. Գալէմբեարեան, Վիեննայի Մխիթար. ուխտէն: Ազգապիսն գրադարան, գիրք Դ., Վիեննա, Մխիթ. տպ., 1891 թ., գրին է 85 սանտիմ:

11) ԳԱԹՂՐՃԵԱՆ, հ. ՅՈՎԱԷՓ վարդ., Մխիթարեան ուխտէն. — «Հանգանակ հաւատոյ, որով վարի Հալաստանեաց Եկեղեցի. քննութիւն հանգանակին ծագման, հեղինակին և ժամանակին վրայ: Վիեննա, Մխիթ. տպ., 1891 թ., գրին է 1 ֆրանկ 40 սանտիմ:

12) Gulbenkian, Galouste S. — «La Transcaucasie et la péninsule d'Apchéron. Souvenirs de voyage». Paris, Librairie Hachette et C-ie, 1891 թ., գրին է?

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Ֆոն Վենդերիս և դատաւարանական պաշանջները Արվկասում:—Հալկական
թատրոն:

Արվկասեան դատարանական շրջանը նորերս ողջունեց իւր նոր պլանա-
ւորի գալուստը: Պր. Գոնչարովի տեղ, որ Պետական խորհրդի անդամ նշա-
նակեց, Թիֆլիսի Դատարանական Պալատի աւագ նախագահ նշանակւած
էր իսկական պետական խորհրդատու Ֆոն Վենդերիս, որ և ներկայ սեպտեմ-
բերին ստանձնեց իւր պաշտօնը: Մեծ են պարտականութիւնները առհասարակ
պետական որ և է ճիւղի գլուխ կանգնած անձերի. կատարել պար-
տականութիւնները բարեխղճութեամբ և կատարեալ գիտակցութեամբ
ստանձնած գործի նպատակներին ալնպէս, որ ընդհանուրի բարի ողջունե-
ներին արժանանալ կարողանան իրանց գործաւարտութեան վերջում:—ահա
ալն մխիթարանքը, որ միակ կարող է ամօքել գործերի ծանրութիւնը:

Թիֆլիսի Դատարանական Պալատը, ուրեմն և նորա աւագ նախագահը
առանձին զիրք են բռնում Ռուսաստանի միւս դատարանական պալատ-
ների և նախագահների մէջ: Այդ առանձին զիրքը ալն հանդամանքի հե-
տեանքն է, որ ռուսաց դատարանական վերանորոգութիւնը, որ տեղի ու-
նեցաւ Ալեքսանդր II կայսեր 19 փետր. 1864 թւականի հրովարտակով,
չորս տարի չեսող գործադրեց մեր երկրին ոչ նոյնութեամբ, ալ մի քանի
փոփոխութիւններով. իսկ ալ փոփոխութիւններից մի քանիսը մեծապէս
փոփոխում են Թիֆլիսի Դատարանական Պալատի զիրքը:

Յալսելի է, որ նոր դատաստանադրքի հիմնական սկզբունքներից մէկը
ալն է, որ դատաւորը «անփոփոխ» է, ալսինքն նորան չի արձակում պաշ-
տօնից կառավարութիւնը ուղղակի, ալ միալն դատարանի միջոցով: Մինչդեռ
Արվկասում դատաւորներին թէ նշանակում է և թէ հրաժարեցնում է կա-

ուսմանը թիֆլիսի Գատարանական պալատը ներգործական դեր է կատարում:

Յալտին է նաև, որ երդեալ դատարանի հիմնարկութիւնը մեղանում չը կալ, մինչդեռ ալք կալ Ռուսաստանում: Ռուսաստանում ալք, ինչ կատարում է երդեալ դատարանը, մեղանում ալք կատարում են նահանգական դատարանները: Իսկ սոցա վճիռները վերաքննելը և կամ նոր վճիռ կալալնելը պատկանում է Գատարանական Պալատին:

Նաև Ռուսաստանում հաշտարար դատարանը բոլորովին առանձնացած է ընդհանուր դատարանից՝ մինչդեռ Կովկասում նա կենթարկւած է նահանգական դատարանին, որը դործի վերաքննութեան աստիճան է կալ: մում: Իսկ թիֆլիսի դատարանական պալատը կալմում է վերջին և վճալին շատիճան նահանգական դատարանների համար:

Ահա ալն առանձնապատկութիւնները, որոնցով որոշում է թիֆլիսի դատարանական պալատի դիրքը կալսերութեան միւս դատարանական հիմնարկութիւններին մէջ: Գորանով որոշում է նաև թիֆլիսի դատարանական պալատի աւագ նախագահի դիրքը Կովկասի դատարանական շրջանում: Արդէն բաւական է ասւած, որ ալք դիրքը բաւականին բարձր է՝ նոն իսկ երկրի արդարադատութեան գործի ընթացքի վերալ գորեղ աղղեցութիւն ունենալու համար:

Մեղանում դատարանական մի բարձր պաշտօնեալի համար միանգամայն գործին, ալն է արդարադատութեան օրէնքների գործադրութեանը անձնատուր լինելը հեշտացրած է նորանով, որ ալստեղ, գոնէ մամուլի մէջ, դուրսիւն չունին կուսակցութիւններ Ալեքսանդր II կալսեր Գատարանական վերանորոգութեան Ֆկատմամբ: Տեղական մամուլը միշտ ջերմ պաշտպան է հանդիսացել ալն սկզբունքներին և ալն ոգուն, որոնք հիմնաքարերն են նոր Գատարանագրքի: Վերադարձը դէպի նախարէֆորմեան ժամանակները, ալսպէս կոչւած ուշա ստ կ ո վ ը ղ ա ս է դ ա տ է լ ների և «պոսլուխ»-ների ժամանակները—մամուլի մէջ ոչ ոք չի համարձակւել պահանջելու, ալլ, ընդհակառակը, դատարանական վերանորոգութեան գործադրութիւնը մեր երկրում համարւել է որպէս Ռուսաստանի կողմից մեր երկրին արած ամենամեծ բարեարութիւններից մէկը:

Պէտք է ցաւել միայն, որ դատարանական վերանորոգութեան նկատմամբ Ռուսաստանի մամուլի մէջ ծագած լամաւ երկպառակութիւնները, նորա մի աղղեցիկ մասի բռնած իէակցիօնէրական դիրքը դանդաղացրել են վերանորոգութեան մասին լուրջ և անաչաւ կերպով խօսելը, թերութիւնների հրապարակ հանելը: Ալք հանգամանքը անշուշտ արտախալել է նաև մեր տեղական դատարանական գործիչների և գրականութեան ու մամուլի վերալ: մինչդեռ նոր օրէնքների գործադրութիւնը մեր երկրում, որը աղղարական շատ առանձնապատկութիւնների է ներկալացնում, կարող էր լուրջ դիտողութիւնների տեղիք տալ և ամբողջ գրականութիւն ծնեցնել:

Բայց անկախ այդ առիթի ընդհանուր բնաւորութիւն ունեցող ուսումնասիրական պահանջներէր, մեր երկրի դատարանական գրութիւնը կարող է թիֆլիսի դատարանական պալատի աւագ նախագահի ուշադրութիւնը գրաւել երկու կողմերէր. մէկ որ մեր տեղական իրաւաբանական ոլմերը ապարդիւն չը կորչեն, իսկ միւս կողմից որ երկրիս դատարանական պաշտօնները թափուր չը մնան: Այդ երկու պահանջներն էլ իրար հետ սերտ կապ ունեն:

Իսկութիւնը սա է, որ հաշտարար դատարաններում, ինչպէս ալդ վկայում է նաև «Նով. Օբոզրեն.», չաճախ դատաւորի պաշտօնը կատարում են ոչ թէ հաշտարար դատաւորները, ալ նոցա օգնականները, որոնք թէ իրանց աստիճանով և թէ իրանց ուժերով դատաւորներէր և գաւառապետներէր ստոր են, մինչդեռ նաքա իրանց ոլմերից վեր շատ գործեր ունին վճռելու: Եւ բացի այն որ ձեռքերում շատ գործեր ունեն դատաւորները կամ սոցա օգնականները, դեռ դորանից շատ շատերը տեղական լեզուներ չը գիտենալու պատճառով ստիպւած են իրանց սուղ ժամանակը կորցնել՝ թարգմանների միջոցով վիճող կողմերի հետ խօսելու պատճառով: Բայց վկայութիւններ են բերում, որ դատաւարութիւնը թարգմանների միջոցով առանցքը երկու անգամ աւելի ժամանակ է խլում, քան երբ դատաւորը առանց միջնորդի է խօսում երկու վիճող կողմերի հետ:

Հայոց թատրոնը այս տարի ձեռք բերեց մի կազմակերպւած մշտական խումբ և մի հաստատուն բեմ, զոնէ մի սեղոնի համար: Հասարակութիւնը տարիներ շարունակ պահանջում էր այն, ինչ ալժամ իրագործւեց: Անցեալ մալիսի 31-ին Թիֆլիսի ժողովարանի գումարած թատերասերներ ժողովը առաջին դրական քալըն էր նպատակին հասնելու համար: Այդ ժողովը դրական հետեանքներ ունեցաւ. և ալդ հետեանքները այս եղանակով զեկեց, որ մօտապէս սեղոնին խումբ ունենալու համար չը պէտք է լոյս դնել հայոց «Իրամատկական ակումբ» կոչւած իրապէս դեռ գոյութիւն չունեցող հիմնարկութեան վերաբ: Այդ հետեանքը շատ կարևոր էր, որովհետև մասնաւոր ժողովարարութեան գիմելը՝ խումբը ապահովելու համար՝ ալդ համոզմունքի ծնունդ էր: Այդ սկզբնական ժողովի նախաձեռնողն էր դերասան պ. Պետրոսեան, որը ժողովում կարգաց իւր պրօսկտը՝ մշտական խումբ ունենալու մասին: Պրօսկտի հիմնական կէտը այս էր, որ 2,500 բուբլու գումար հաւաքելի, որպէսզի դորանից 2000 բուբլին ծառայել որպէս ապահովութիւն Պոլսից հրաւիրելիք 3—4 դերասաններին և դերասանուհիներին, եթէ թատրոնի մուտքը ծախքերը չը ծածկելու դեպքում: Թատրոնի գլուխ կանգնածները ստիպւած լինեն ներկայացումները դադարեցնել:

Որ ալդ առաջարկը համոզեցուցիչ էր, ալդ իսկույն երեսոյ, քանի որ

նուն ալդ առաջին ժողովում սկսեց ժողովարարութիւնը, որի չարունակելու համար ընտրեց մի լանձնաժողով, բաղկացած այս անձերից՝ պ. Ալ. Թարխանեան, Գ. Տէր-Նիկողոսեան և Գովհ. Գովհաննիսեան: Ալդ լանձնաժողովը լանձն առաւ՝ ժողովարարութիւնը մինչ 2,500 ռուբլին հասցրած լինելուն պէս՝ կրկին ժողովի հրաւիրել ըստը նւիրատուներին՝ թատրոնի գործի մասին վերջնական վճիռ կաշացնելու համար:

Յանձնաժողովի ջանքերը լաջողութեամբ պսակեցին. մի ամիս չանցած՝ 2500 ռուբլու գումարը ստորագրեց՝ մի ռուբլուց սկսած մինչ երկու հարիւր ռուբլի նւիրող անձերից: Հետեապէս նւիրատուներից կազմեցին առաջին (28 լուծիսի) և երկրորդ ու վերջին 11 լուծիսի ժողովները: Ալդ վերջինում, մասնակցութեամբ մօտ 40 հոգու, վճռեց թատրոնական գործը և գումարած 2500 ռուբլին լանձնել հինգ հոգուց բաղկացած մի մասնաժողովի, այս պալմաններով. 1891/92 տարւոյ սեզոնին, մինչ մեծ պատը ամիսը տալ չորս ներկայացում. զորա համար կազմել մի մշտական խումբ, տեղական և Պոլսի գերասաններից և գերասանուհիներից, հաւաքած՝ գումարից 500 ռուբլու չափ լատկացնել Պոլսի մէկին ուղարկելու՝ գերասաններ հրաւիրելու համար, միւս 500 ռուբլին տալ նրանց պալման կապած թուղթից, իսկ մնացած 1500 ռուբլին պահել ապահովութեան համար: Մասնաժողովը պարտաւորուած է սեզոնի վերջը հաշիւ ներկայացնել ընդհանուր ժողովին:

Մասնաժողովը կազմելու համար կատարեցին ընտրութիւններ զաղտնի քէտարկութեամբ: Զաւների առաւելութեամբ ընտրեցին հերթով՝ պպ. իշխ. Նապ. Ամատունի, Ալէքսանդր Թարխանեանց, Գովհ. Գովհաննիսեանց, տիկին իշխանուհի Մ. Բէքթարէզեան, պպ. Գ. Տէր-Նիկողոսեան, Կոնստ. Հեջուբեան և Շիրանդաղէ: Հետեապէս դրցանից առաջին հինգը ճանաչեցին մասնաժողովի անդամներ. իսկ վերջին երկուսը՝ փոխանդամներ: Ընտրեաձներից իշխ. Ամատունի և իշխանուհի Մ. Բէքթարէզեան բացակա էին. առաջինը հրաժարեց, երկրորդը ընդունեց, աչնպէս որ մասնաժողովը ալժամ կազմած է հետեւեալ հինգ անձերից՝ Ալ. Թարխանեան, Գովհ. Գովհաննիսեան, իշխանուհի Մ. Բէքթարէզեան, Գ. Տէր-Նիկողոսեան և Կոնստ. Հեջուբեան. փոխանդամ՝ Շիրանդաղէ:

Այս մասնաժողովի կազմը չափազանց տարբերուած է այն մասնաժողովից կամ կոմիտէից, որ նման նպատակով կազմած էր 1879 թւականին: Դա աչնքան ընտրու է, որ արժէ նկատողութեան առնել: Յամենայն դէպս զա ցոյց է տալիս որ աչս տասը—տասներկու տարիներում ամեն ինչ նոյնը չի մնացել, և որ հասարակական գործերի նկատմամբ շատ ցուղափարներ փոխաշուէլ են: Մի տասնեակ տարի առաջ ամեն մի հասարակական գործ տնպատճառ կապուած էր որոշ անձերի անունների հետ, լինէր դա թատրոն, թէ Բարեգործական ընկերութիւն, Գրքերի հրատարակութեան ընկերութիւն, անդամ մամուլ և աչն: Ալդ վերին աստիճանի

կաշկանդում էր հալի միտքը, հետևապէս և հաշ հասարակութեան դործերի չառաջդիմական ընթացքը: Անուշները պաշտամունքը—հաշ թէ ինչն էր բնաորոշում տառնեակ տարի առաջ ժամանակը՝ ներկալ ժամանակից: Շնորհաւորել պէտք է հասարակութիւնը իրերի ալդ տեսակ փոփոխութեան համար: Քննադատութիւնը հէնց ալդ պատճառով ամենին չի դադարում նաև նորերի համար: Քննադատութեան անթակալ են թէ հները և թէ նորերը, և ինչ չատկապէս վերաբերում է թատրոնական ժողովներին, և թատրոնական ներկալ մասնաժողովին, նոքա ներկալացնում են մի կատարեալ խառնուրդ մեր հասարակութեան ամեն տեսակ, իրար հետ շատ քիչ դադարաւարական չարաբերութիւն ունեցող անձերի: Այս վկայում եմ ալստեղ միայն իրողութիւնը, բոլորովին միտք չունենալով գործով որ և է չառաջդիմութիւն անել ում և իցէ: Այս ալդ ասում եմ քալլ առ քալլ հետեւում համար մեր թատրոնական գործի չառաջդիմութեան ընթացքին: Յառաջդիմական եմ ասում, որովհետեւ, չը նալած որ մասնաժողովի անդամները բոլորովին տարբեր և նոյն իսկ թատրոնական գործին սնծանթ մարդկանցից է կալմած, ալնու ամենալնու նա ծնունդ է մեր հասարակութեան լաւ ձգտումներ և անդամների ընտրութիւնը կատարել է ալատ, առանց կողմնալի ալդեցութիւնների, մասնալցութեամբ ալնալիս անձերի, որոնք միայն հալկական բեմը վերականգնելու դադարաւար են ի նկատի ունեցած: Ով է մեղաւոր, որ հաշ հասարակութիւնը մինչ ալժամ չի կարողացել դուրս բերել թատրոնական գործին քաջամուտ անձեր, բալց անձեր, որոնք գործալարութեանը լիապէս կարողանար հաւատալ հասարակութիւնը:

Ալն, ինչ կամեցել էր ընտրող հասարակութիւնը, լուր ընտրութիւնները կատարելիս, ալս էր, որ մասնաժողովը կարողանալ իրագործել հասարակութեան մի քանի պահանջները: Միանգամալն համոզւած լինելով, որ հալկական բեմի հրապոյրը, ներկալումս դոնէ, կապւած է պոլսական ոլժերի մասնալցութեան հետ, հասարակութեան սպասելիքներից մէկը ալն էր, որ հարկաւոր ոլժերը հրաւիրեն: Մասնաժողովը ալդ կատարեց, առանց արհամարհելու տեղական ոլժերին: Մասնաժողովը գովելու արժանի խոհեմութեամբ սկսեց կալմել բէպէրտուարը, որը թէ պէտք է ոլժերին համեմատ լինէր և թէ ուսանելի լինէր հասարակութեան համար: Մասնաժողովի կողմից դեռ ևս օգոստոսի վերջերքին չալտարաւած պիեսների անուններից պարզ կարելի էր տեսնել, որ մասնաժողովը գիտացել է օգտուել հասարակութեան մէջ հաստատւած մտքերից բէպէրտուարի մասին: Ալ իրօք բէպէրտուարից դուրս են ալնալիսի պիեսների անուններ, որոնք կարող են խաղացել միմիայն բարձր գրամատիքական ոլժերի մասնալցութեամբ: Հանգուցեալ Աղամանի վիշտալը չարգել է, որպէս և պէտք է չարգէր, և որքան նա ընտելացրել է հաշ հասարակութիւնը չէքսպիրեան պիեսներին, նոյնքան էլ մասնաժողովը

խոհեմ է զտեսել, համապատասխան ուժերի պակասութեան պատճառով, ապա տեսակ պիտեսներէց հեռու կանգնել, Գորա փոխարէն բէպերտուարի մէջ եւս զտեսում եւմ ալնպիսի պիտեսների անուններ, որոնց հետ ծանօթութիւնը միանգամայն անհրաժեշտ է հալ հասարակութեան համար: Գոցա թուումն են արդէն խաղացածներից՝ Աւամելիադարդ տիկին, Ալեքսանդր Գիւմա-որդու և Տարտիֆը, Մոլիէրի: Գոցա մէջն են զեռ եւս չը խաղացածներից՝ Վէրաքննիչը Գոգուլի և ուրիշներ, բէպերտուարի մէջ են նաև հալկական նոր գրաւծքներ, որոնք զեռ իրանց առաջին փորձին են սպասում, ինչպիսին է պ. Լեոն Մանուէլեանցի («Տիգրանուհին»): Կան նաև պիտեսներ, որոնց չաջողութիւնը մեր բեմի վերաջ թէև զժար է գուշակել, բայց որոնց փորձելը զոնէ զերասանների համար ուսանելի կարող է լինել, ալգպիսիներիցն են Մարիա Ստիւարտ Շիլլէրի, խելքից պատուհաս Գրիբոեդովի, Աւաղակներ Շիլլէրի, և ուրիշներ, որոյէս նաև խաղացածներից՝ Գիւմուլի «Կամելիադարդը»:

Նս պէտք է ալս մի ընդհանուր նկատողութիւնն անեմ, որ մեր հալկական ալժմեալ թատրոնը ոչ միայն հասարակութեանը չաջող խաղեր պէտք է տալ, ալ և նա պէտք է փորձ ու զպրոց ծառայէ զերասանների համար: Գերասանների մեծագոյն մասի համար ալս սեղոնին տրեւելք պիտեսները նոր են և, եթէ ալ զերասանները նոր չեն բեմ զուրս զալիտ, բայց և ալնպէս լուրջ խմբի մէջ և լուրջ հասարակութեան համար տեսողալէս ալխատած զերասաններ չեն: Բնական է, ուրեմն, որ ոչ միայն հասարակութեանը չալտնի չեն նոցա ուժերը, ալ և իրանց՝ զերասաններին լաւ չալտնի չէ իրանց ուժերի չալիը՝ իրանց զեռ եւս անծանօթ պիտեսներում: Իսկ արեւելք պիտեսների մեծագոյն մասը, կրկնում եւմ, նոյն իսկ իրանց զերասաններին՝ կամ բնաւ ծանօթ չէ կամ միայն թուլ չալիտ չալտնի է: Մեր զերասանական ուժերը զեռ եւս ալսպէս տաւժ՝ կրակից անցած չեն, ալնպէս որ ալժմեալ թատրոնը նոցա համար մի տեսակ վարժոյ է հանգիստանում: Մի պիտեսի արժանաւորութիւն ամեն անգամ զժար է ճանաչել նրանից, թէ նա ինչ չաջողութիւն ունենեցաւ մեր բեմի վերաջ, և զա ալն պարզ պատճառով է, որ ալժմեալ ուժերը զեռ եւս վերջնականապէս չեն զաստորւած և վերջնականապէս էլ չալտնի չէ, թէ խումբը մշտակաւ դարձնելու և երկար տարիներ պահպանելու համար՝ ինչ ուժեր են պակտում: Նրբ մի պիտես, թէկուզ մի նոր պիտես խաղացում է Պարիզի Comédie française թատրոնում և հաւանութիւն չի զտեսում՝ չաա սակաւ կը պատահի որ մեղը զգեն զերասանների վերաջ: Ընդհակառակը չաա սովորական ոճ է թատրոնական բէյլնդիաներում կարդալ ալսպիսի խօսք՝ «ալս ինչ զերասանը իւր բոլոր ճիւղը թալիկի իւր զերը ալգատելու համար, բայց չը չաջողեց» և ալգ հասկացում է ալս մոքով, որ զերը զեր չէր կամ պիտեւր անաջող էր: Ինչու? որովհետեւ փորձով զիտեն խաղացող զերասանների

ուժը, գիտեն, որ եթէ ալդ տեսակ դերասաններ խաղում պիտը լաջողութիւն չունեցաւ—էլ զուր է լաւագոյն խաղ սպասելը: Բնական է, որ թատրոնական վարչութիւնն էլ քաջ գիտէ իւրաքանչիւր դերասանի ամպլուան, և դժար կը պատահի որ փորձեն մի էնժէնիւզ դերասանուհուն՝ զիցուք հերոսուհու դեր տալ, սիրահարականին՝ զրան-պրէմիէ'ի դեր լատկացնել և ալլն:

Ահա ինչու ես ասում եմ, թէ մեր դերասանական ուժերը դեռ ևս փորձի չըջանումն են ալս սեզոնին՝ նոցա ուժերը ոչ հասարակութեանն են լաւ չափնի և ոչ հէնց իրանց դերասաններին: Յալանի է միալն ալս, որ ընդհանրապէս խմբումը կան զնահատելի և հետաքրքրական ուժեր, որոնց ամպլուաները դեռ ևս ժամանակով պէտք է որոշեն: Ալս նկատողութիւնը ես ճիշդ եմ համարում ոչ միալն խմբի աւելի քիչ փորձաւորների համար, թերեւս բացառութեամբ պ. պ. Պետրոսեանի և Տէր-Գաւթեանի, —չնոյն իսկ տիկին Սիրանուշի համար, որը ներկալ խմբի աստղն է: Միալս աւելի պարզելու համար ես կը վերցնեմ իբր օրինակ սիպա. 19-ի ներկալացումը: Ես չը գիտեմ, թէ օր. հէնց տիկին Սիրանուշը խաղացել էր երբէք Մարգարտի դերը Կամելիաղարգում: Բալց ես գտնում եմ, որ նորա խաղը հետաքրքրական էր: Ես մեծ թերահաւատութեամբ զնայի թատրոն ալդ երկու, և առաջին գործողութիւնը կարծես արդարացնում էր իմ թերահաւատութիւնը: Հետեւալ գործողութիւնները եկան ապացուցելու, որ ես իլուր էի ալդքան թերահաւատ, որովհետեւ ես մինչև վերջ հետաքրքրութեամբ հետեցի տիկին Սիրանուշի խաղին: Ալդ ինձ համար ապացուց էր, որ տիկին Սիրանուշը իմ սպասածից չատ աւելի լաւ խաղաց. իսկ ընդհանուր սպաւորութիւնը ալնպէս էր, որ իմ մէջ ցանկութիւն չղացաւ ալդ դերասանուհուն մի երկրորդ անգամ տեսնել նոյն դերում, աւելի որոշ կարծիք կաղմնու համար նորա խաղի մասին, կարծիք, որի կաղմնելուն չատ վեասեց իմ սկզբնական թերահաւատութիւնը, որի աղղեցութիւնից դեռ պէտք էր աղատուել որպէս մի հախաղաղարմունքից. վեասեց թերեւս նաեալն, որ տիկին Սիրանուշի հետ զլխաւոր դեր կատարողը թու էր Արման Գիւլալի դերում: Իսկ եթէ ճշմարիտ է որ ներկալ սեզոնը դերասանների համար զլխաւորապէս նախապատրաստուելու սեզոն է, ապա ուրիմն մատնաժողովը լաւ գործ կատարած կը լինի, եթէ առաջին անգամ ոչ կատարելապէս լաջողւած, բալց լաջողութիւն խոտացող ներկալացումները սեզոնի ընթացքում կրկնէ և թուլ տալ առաջին մեծ փորձը անցկացրած դերասաններին՝ կրկին երկան գալ: Դուրս կը գալ տիկին Սիրանուշը ալդ երկրորդ անգամում չաղթող, ալն ժամանակ հաղկական բեմը լանձին տիկին Սիրանուշի վատակած կը լինի մի նոր ուժ, որովհետեւ մի բան, որ հասարակութեան համար վերջնականապէս հաստատուում է—դա վատակած խնդիր է. և Մարգարտի դերը, եթէ կարողանալ վերջնականապէս հաստատուել տիկին Սիրանուշի վերալ՝ կը լինի մի վատակ թէ իրան դե-

րասանուհու, թէ հասարակութեան և թէ հաշկական ներկայ խմբի համար առհասարակ: Բնական է որ պ. Արէլեանցը, որ աչքքան անտեղի էր Ղիւււալի դերում, դուռ ևս փորձերի և խելացի խորհուրդների կարօտ է՝ իւր ամպլուան որոշելու համար: Ահա այդ մտքով եմ ասում թէ ներկայ սեզոնի թատրոնը մեր խմբի դերասանների համար մի դպրոց է. այս սեզոնում աչք ոչմերը պէտք է իրանց ամպլուաները դրականապէս որոշեն: Վաստակ չէ արդեօք որ «Տարտիւֆ»-ի մէջ մենք ալժմ ունենք Օրգոնի համար պ. Վրոյլին:

Յամենալն դէպս ալժմեալ դերասանական խմբի վերալ մեծ պարտա կանութիւններ ևն դուած: Խումրը պէտք է ի նկատի առնի, որ ալժմեա հաշկական բեմը, երկար տարիներից չեաող նորից չարութիւն է առել չնոր- շիւ մեծամեծ ջանքերի: Ուստի նա, աչք խումրը առնի այս բողէին հասա- րակական կարեոր դեր կատարելու. գալ տարի մեր թատրոնի լինել— չը լինելը մեծ մասամբ կախած կը լինի նորանից թէ ալժմեալ խումրը և մասնաժողովը ինչպէս կը տանեն իրանց գործը մինչ սեզոնի վերջը: Ինչ վերաբերում է մասնաժողովին՝ պէտք է վկալել որ, ընդհանուր ասմամբ, նա ջանք գործ է դրել բէպերտուարի և խմբի կողմից հասարակութեանը որոշ չափով բաւարարութիւն տալու: Թէ ինչպէս կը վարի իւր գործը ալսու- հետե, կը տեսնենք: Խմբին առ ալժմ կ'ուղղեմ մի քանի կարճ խօսքեր՝ թող դերասանները չանձն առնեն դերերը ոչ նոցա կարեորութեան, ալ իրանց ոչմերի համեմատ. և երկրորդ՝ թող որ նոքա իրանց դերերը լաւ սովորեն, միշտ ցուշարարի օգնութեանը չը գիմնելու համար:

ԼՈՒՍԻՆԻ

ՓԱՐԻՍԵՑԻՈՒԹԻՒՆԸ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մեր վաղեմի ծանօթ պ. Նիկ. Քարամանցը մի առանձին արտօնութիւն է ձեռք բերել՝ «Մուրճ»-ի էջերում իւր անունը երբեմնապէս չնաւազանք տեսնելու: Բաղդ, աւաղ, ալդ արտօնութիւնը ծանր մեղքերով է պնւած: Մօտ մի տարի սորանից առաջ պ. Նիկէ Մաղաթեանցն էր նկուրթիւն քաշել ալս ամսագրի էջերում մերկայնել պ. Քարամանցի գիտնականութեան գիմակը, փաստերը ձեռքին ցոյց տալով «Արձագանք»-ի քննադատի ալն մի լատիւթիւնը, որ ալսապէս նա էր կարող անւանել քան աչքակապութիւն: Ալդ մասին ես լղում եմ ընթերցողներին «Մուրճ» 1890 թ. № 6: Անցեալից ուրեմն միայն ալսքան:

Բաղդ պ. Քարամանցը ալդքանով չի գոհանում, ալ նա ուղում է ապացուցել, որ ուսումնական վիճարանութիւնների մէջ՝ նա աւելի ես մեծ հաւանքներ ունի ցոյց տալու, հաւանքներ, որոնք թանկագին եւ հէնց ալն պատճառով. որ մեր գրական շուկայում անգամ հազագիւտ եւ: Կա է՝ փարիսեցիութիւնը քննադատութեան մէջ:

Ինչումն է բանը: Նորերումն ես հրատարակեցի մի գիրք «Արեւելեան աղբերի հին պատմութիւնը» վերնագրով: Գրքի լաւաջարանում ատւած է, թէ ես ալդ գիրքը նշանակում եմ թէ զպրոցների ե թէ ընդհանուր ընթերցանութեան համար: Պարոն Ն. Քարամանցը, սակայն, «Արձագանք» թերթի № 24-ում գրում է իմ ալդ գրքի մասին մի քննադատութիւն կամ գրախօսական մի լողւած, որի մէջ նա ամեն ջանք է գործ դնում համոզեցնելու թէ հասարակութիւնը ե թէ ի հարկէ մեր զպրոցական իշխանութիւնը, թէ իմ ալդ գիրքը, ալնպէս ինչպէս նա կալ, վնասակար գիրք է, հետեալէս չը պէտք է մուտք գործէ մեր զպրոցները:

Ամենքը ինձ հետ կը համաձայնեն, որ մի դասագրքի մասին չի կարելի աւելի ծանր խօսք ասել: Արձագանքի քննադատը իմ դասագրքը գտնում է վնասակար:

Ինչու համար, կը հարցնեն մեզ: Թերեւս որովհետեւ նոյն նիւթի մասին հալոց գրականութիւնը ունի աւելի լուր գրքեր: Այլ ալդ նա չի ասում: Ընդհակառակը, նա գտնում է, որ գրքի պատմական մասը ներկայացնում է պատմական հետադիտութիւնների վերջին խօսքը. նա գտնում է որ

գրքում պատմած աւանդութիւնները կրթիչ նշանակութիւն ունեն. նա գտնում է որ նիւթի գաղափարութիւնը աշակերտների համար ւարմար է և ալլն: Այդ բոլորը նա ասում է. բայց նա ալլ ասում է միանգամայն հարեանցօրէն, իբր կրկնորդական նշանակութիւն ունեցող մի բան: Այդ բանի վերաջ, որ և ամենակարեւորն է, նա չի ծանրանում, որովհետեւ ձեռնառն չի գտնում մի գրքի զլրատու կէտերի վերաջ խօսելը: Աւ ալլն աստիճանի կրկնորդական է «Արձագանք»-ի քննադատի համար գրքի բովանդակութիւնը, որ իւր լօղածի մէջ ոչ մի պատմական սխալ ցոյց չը տալով, նոյն իսկ լալոնելով թէ գրքի պատմական մասը զիտութեան հաստատուն ելլալիցութիւններն է ներկայացնում, ալլնամենալիւ, իւր բոլոր ասածները և զրակացութիւնն անելով, նա հարկ է համարում պնդել, թէ իրանական կրօնը իմ գրքում իբր ճապաղ է և անճիշտ: Բայց մի հաս ապացոյց պատմածի անճշտութեան — բնաւ չը պէտք է որոնել լօղածի մէջ: Աս հասկանում եմ, որ կարելի էր պնդել, թէ գրքի մէջ բոլորը չի ասած, ինչ կարելի էր ասել, եթէ մտադրած լինէի իրանական կրօնի վերաբերմամբ ամեն ինչ քաղել Ռաուլինսոնի, Լէլարդի, Օպպերտի ու Լընորմանիւլանի աշխատութիւններից, բայց մանաւանդ Շպիլգէլից (Eränische Alterthumskunde). բայց զալ ու խորախորհուրդ կերպով ասել թէ իմ գրքում պատմածը անճիշտ է, և մի հաս ապացոյց չը բերել թէկուզ հէնց 'Կարմաշէտէրից վերցնելով ալլ ասացուցը, — ալլ առնալն անբարեխղճութիւն է:

Բայց կրկնում եմ՝ պատմաւորի անճշտութիւնը բնաւ չի ցաւեցնում «Արձագանք»-ի քննադատին. և ոչ էլ ուրախացնում եմ նորան գրքի պատմական մասի արժանաւորութիւնները: Իմ գիրքը նա մեծապար է համարում միանգամայն ալլ պատմաւորներով: Պատմութիւնը նորան չի հետաքրքրում, թէ և նա պատմական գիրք է քննադատում. ալլ, ինչ ալլպիսի քննադատներին հետաքրքրում է՝ հեղինակի անճանաւորութիւնն է. և որովհետեւ ալլ անճանաւորութիւնը թէ Արձագանքին և թէ մատնաւորապէս Քարամանցին շատ լալոնի մարդ է — ուրեմն նրան հարկաւոր է թէկուզ նիւթի կողմից իրան չը հետաքրքրող մի գիրք ալլպիսի կողմերից բռնել, որոնք հալի նետարդերին աւելի հեշտութեամբ կարող են խօսել: Աւ ալլ մարդիկ փորձից զխանոր հալերիս մէջ ամենից զիտունը արդէն նա է, որը ամենից շատ խօսում է ուրիշ գրողների լեզուի սխալներին մասին, թէ կուզ սխալ հռչակելն թէ իսկական սխալները և թէ ոչ սխալները:

Մի ալլպիսի դարձըջանում, որպիսին ալլմ է, կրք հալոյ ալլաւորհիկ լեզուն իւր վերջնական, կամ ալլալս ասած՝ իւր կլաւիկալոն կերպարանքը չի ստացած, ալլ բնդհակառակը, գրականութեան մեծ ալլրատութեան և լեզուի հանճարների կատարեալ բացակայութեան պատճառով մեր լեզուն զեռ. ևս իւր դարպացման շրջանների մէջն է, ոչինչ չկալ աւելի հէշտ, քան քննադատել իրար լեզուն: Ալլ զեռ. ևս ի հարկէ մեղ իրաւունքը

չի տալիս պնդելու, թէ իբր մեր լեզուն ոչ մի կանոն չունի և կամ իբր ալդ պատճառով ամեն մի կամայականութիւն ներելի է. բայց մի բան ինձ համար հաստատ է. և ալդ հաստատ բանը այն է, որ մեր աշխարհիկ լեզւի վերաբերեալ վէճերում նոքա, որոնք բաւականաչափ ուղիղ մտածել, ապա ուրեմն և բաւականաչափ ուղիղ նախադասութիւններով խօսել չը գիտեն, ալդպիսի պարոնները պէտք է լեզուները կարճ պահեն, խօսքը թողնելով նրանց, որոնք աւելի քիչ են մեղանշում ճիշտ մտածողութեան, ուրեմն և լեզւի աւելի մեծ կանոնաւորութեան դէմ: Ալդ ատաջին կարգի մարդկանց չաճախ խառնելը լեզւական վէճերի մէջ աւելի վնաս է բերում լեզւի մշակութեան դործին, քան օգուտ: Բայց որ շատկապէս «Արձագանք»-ի քննադատ պ. Ն. Քարամեանցը ալդ տեսակներէն է, դորա մէջ ես աւելի ես համոզում եմ, կարդալով «Մուրճ»-ի խմբագրութեանը հասցրած մի գրութիւն, որ ես գետեղում եմ ստորեւ. ալդ գրութիւնը ակներև ապացոյցներ է բերում պ. Ն. Ք.-ի չօգածի անգրադէտութեան, աչխնքն այն մարդու, որը ալդքան հեղինակօրէն սիրում է քննել ուրիշների լեզուն և մանաւանդ մի մարդու, որը իւր ամբողջ քննադատական ուժը լեզւի և նոյն խոկ տպագրական սխալների դանելու մէջն է որոնում: Անշուշտ՝ դա ես մի ծառայութիւն է, երբ մասնացոյց են լինում լեզւի կամ գործածած ոճերի թերութիւնների վերաջ: Բայց չի պահանջում, որ հեղինակին մի երկու չնչին ծառայութիւնների անելու պատրւակով գրականութեանը վնասենք, և ես պնդում եմ, որ երբ լեզւի մասին խօսողները Քարամեանցի են, նոքա զու են տալիս իրանց գլխին, և նոյն խոկ զանազան միջոցների են գիմում, որ անպատճառ մի սխալ ցոյց տան: Լեզւի մի սխալ ցոյց տալու համար նոքա հոգի են տալիս. նոքա մինչև անգամ ստիպւած են տեսնում իրանց ակնապանի կերպով տուել: Օրինակներ: Պր. Քարամեանցին դիցուք հարկաւոր է մի օրինակ ես բերել ցոյց տալու համար Արասխանանցի լեզւի սխալները: Եւ դիցուք նա չի գտնում: Եւ ահա նա, զո՞հ զնալով իւր հակումներին, կը սկսի պնդել, թէ իբր քահանայ խօսքը սխալ է գործածւած հեղինակի գրքում և իբր քահանայ խօսքի տեղ անպատճառ պէտք է լինէր քուրմ: Եւ թէ նա ալդքած մեծ եռանդ ցոյց չը տար սխալների որոնելու, նա սառնասրտութիւն կ'ունենար գոնէ Առձևուն բառարանից օգտուելու, ուր նա կը տեսնէր որ քահանայ նշանակում է նաև քուրմ, որ նոյն է թէ հեթանոսների քահանայ: Նա չէր գալ ու պնդի, թէ ժամասածութիւն կարող է լինել միայն քրիստոնէական եկեղեցիներում: Նա չէր պնդի շատ ուրիշ բաներ, որ նա դուրս է բերել իւր չօգածում և մանաւանդ նա չէր լանձն առնի վրիպակների բերել: Եւ քանի որ քահանայ խօսքը փաստ պատմում, Նիպոցանկից օգտուել! Աներևակալելի է, բայց փաստ պատմում: Նիպոցանկից օգտուելով՝ Նուն: Բայց մի հատ տեղ սխալմամբ տպւել է Նունը: Խոկ գիմորոյով՝ Նուն: Բայց մի հատ տեղ սխալմամբ տպւել է Նունը: Վրիպակների ցանկում տպւած է՝ աչխ ինչ երես աչխ ինչ տող տպւած է

Նու՛նը, ուղիղն է՛ Նու՛ն: Այժմ՝ պ. Փարամեանցը, ինձ գործացնելու համար, գալիս ու սովորեցնում է ինձ թէ՛ Նու՛նը անունի մէջ ը տառը աւելորդ է: Ինչպէս էք հաւանում? Սեղեռ. դա միակ օրինակը չէ: Վրիպակների ցանկում կալ նկատւած նաև որ աչս ինչ տեղ տպւած է Միջագէտք, ուղիղն է Միջագէտք: Երևակայեցէք, որ իմ լեզւի սխալների մէջ «Արձագանք»-ի խորիմաստ քննադատը դուրս է բերել աչն, թէ Միջագէտք գրուում է հո-ով և ոչ է-ով:

Ահա աղայիսի հակումներով քննադատների հետ մեզ շատ անգամ վիճակւած է գործ ունենալ: Ինչպէս է, որ ես չեմ կարող մեծ ցանկութիւն ունենալ պ. Փարամեանցից մատնանիչ արած ամեն մի սխալի վերաջ կանգ առնել, որովհետև իմ գլխաւոր նպատակը չէ աչստեղ իմ գիրքը պաշտպանել. աչն, ինչ մղում է ինձ աչս նկատողութիւնը գրելու, աչք ցանկութիւնս է գրքիս մասին լուս տեսած մի քննադատութեան առիթով ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը աչնպիսի գրական գործիչների վերաջ դարձնելու, որոնք գրականութեան մէջ ստիպւած են աւելի որոմներ ցանկելու, քան հողը մաքրելու: Իմ ցանկութիւնս է մի ինքն ըստ ինքեան ոչ բարդ օրինակի վերաջ ցոյց տալ «Արձագանք»-ի նման թերթերի և Փարամեանցի նման կրիտիկոսների մոտաւոր և մանաւանդ բարոյական մթնոլորտը:

Ծանրակշիռ հանգամանքը սա է, որ Փարամեանցի նմանները, ձեզ վնասելու համար լիս չեն քաշւիլ ոչ անվաղել ձևերից, ոչ աչքաւկապութիւնից և ոչ էլ աչքաւկապութիւնից էլ աւելի վատթար քաշիւրից: Իմ խօսքը մի բանի մասին է, որի համար ընթերցողի ուշադրութիւնն եմ խնդրում, որովհետև աչս մի բանը որ պէտք է տեսմ, խոյ որ ծանրակշիռ է և վերաբերում է մարդուս բուն բարոյական արժանաւորութեանը. Բաւց ոչ դուտ անձնական նշանակութիւն ունի աչք, աչ մեծապէս կապ ունի մեր գրականութեան և, եթէ ուղէք, նոյն խոյ մեր քաղաքակրթութեան շաւաղդիմութեան հետ:

Բանը սա է, որ լեզւի մի քանի սխալներ բաւական չեն որ մի գիրք մուտք չը գործի մեր ուսումնարանները: Բաւց որովհետև անպատճառ հարկաւոր է Փարամեանցին իմ գրքի տարածելու դէմն առնել, և կէք ուսուներ թէ Արամիսեանցի գիրքը անասուած է, անկրօն է:

Սե մի աչք տեսակ քաշիւց լիս չի քաշւում «Արձագանք»-ի կրիտիկոսը, որը իւր լօղւածում արտատպում է իմ գրքից մի կտոր, ուր Աստուածաշունչը անւանւած է հրէաների աւանգուծութիւնների գիրք, և աչք խօսքը ահապին տաւերով է տպում:

Սե պ. Փարամեանցը գտնում է, որ իմ գիրքը չը պէտք է ուսումնարաններում ընդունել գլխաւորապէս գրքի մէջ գործածւած աչք մի խօսքի համար: Նա լաւտարարում է, թէ իմ գրքի նման մի գիրք կարելի է գրել աչն աղգերի ուսումնարանների համար, ուր կրօնի դասա-

տւութիւնը խափանւած է: Այլ խօսքերով, Քարամանցը ուղում է նաեւ զրքի վերաջ ոչ թէ պատմական ճշդութեան տեսակետից, այլ կրօնական տեսակետից, և ահա նա զոնում է իմ զիրքը պատասխատելի, որովհետեւ Աստուածաշնչի համար ես ասել եմ, թէ նա հրէից աւանդութիւններն զիրքն է:

Փարսեցիութիւնը քննադատութեան մէջ՝ ահա Քարամանցի ալիք վարմունքի մէջ պէտք է որոնել: Եւ նախ կ'ապացուցեմ, որ այն, ինչ ես հրէից աւանդութիւն եմ անւանել, նաև մեր նոյն խի կրօնական զրականութեան մէջ ընդունւած է աւանդութիւն ասել, և որ ուրեմն Քարամանցը պատմութեան զրքի հեղինակի վերաջ մեղադրանք է դնում մի աղնալիսի խօսքի համար, որ մեր կրօնական զրականութիւնը ամենին մեղք կամ զալթակղեցուցիչ չի համարում, և որ զրականութեան մէջ ալիք խօսքը միակ ձիւղն է ճանաչւած: Ահա ապացուցենք:

Պատմելով իսրայէլացւոց Նիլպոտոս դնալը, Երեմ 63, ես ասում եմ՝ «Այս անցքը պատմւած է նաև Հին Ատակարանի մէջ, որը հրէաների կամ երբայցւոց կեանքի աւանդութիւններն է պարունակում»: Եւ լիտով՝ «Քսոս հրէական աւանդութեան, Յակոբի տասն և երկու որդիքանցից ամենակրտսերը՝ Յովսէփը և ալն»: Հետեւալ Երեմում, Երեմ 64, ես պատմում եմ իսրայէլացւոց Ելքը Նիլպոտոսից, սպալէս՝

«Իսրայէլացւոց դրութիւնը լաւ էր, քանի որ Նիլպոտոսում հիքոտոսներն էին իշխում, բալց, որպէս ալի չուտով պիտի տեսնենք, հիքոտոսների գէմ եղիպտացիք ապստամբեցին և հովիւները (հիքոտոսները) ընկան սորկական վիճակի մէջ: Նոցա դործ էին ածում չիւթիւնների համար, և բոլոր աղէտները, որ նոքա կրեցին սորկութեան ներքոյ, երկար ժամանակ մնացին նոցա վիշտութեան մէջ: Վոցա մասին աղիտդորմ կերպով պատմում է նոցա աւանդութիւնների զրքի, այն է՝ Աստուածաշնչի մէջ:

«Ալիք սորկական դրութիւնից իսրայէլացիք աղատուցին Մոսէսի ձեռքով, որը նոցա դուրս բերեց Նիլպոտոսից և օրէնքներ տուց նրանց Սլի օրէնքները կոչւում են Մոսիսական օրէնքներ, նորա պարունակում են նաև տասն պատգամները:

«Աստուածաշնչի այն մասը, որ պատմում է իսրայէլացւոց Ելքը Նիլպոտոսից, կոչւում է Վիրք ելից»:

Ահա իմ զրքի ալի կտորն է որի վերաջ Քարամանցը հրաւիրում է մեր դպրոցական վարչութեան ուշադրութիւնը: Սրբապղծութիւն է համարում նա, երբ ես, մի պատմական զրքում, Աստուածաշնչի պատմութիւնը իսրայէլացւոց Նիլպոտոս չեւելու և Նիլպոտոսից դուրս գալու մասին՝ աւանդութիւն եմ անւանել:

Աւանդութիւն ես անւանում եմ բերանէ բերակ անցած պատմութիւնը: Այսպէս է հասկացում ալի խօսքը բոլոր լեզուներում, որպէս և հայերէնում: Հրէաների մէջ հնուց մնացած աւանդութիւնները, որպէս

ամենքին չափնի է, Հին Կտակարանի մէջ են ամփոփւած: Իսկ չափապէտ ալն պատմութիւնը, որը խօսում է Իսրայելացւոց Եդիպտոս չեւրեւ և ալք երկրից դուրս գալու մասին, աւանդութիւնից քաղած պատմութիւն է և կամ ձէնց ոչ ալ ինչ է եթէ ոչ աւանդութիւն (մինչդեռ, Քարամեանցի ասեւր, դորան չը պէտք է, աւանդութիւն անւանել): Եւ մեր կրօնական գրականութեան մէջ էլ նա չափնի է որպէս աւանդութիւն: Վերցնում եմ, օրինակ, «Արարատ» ամսագիրը, որ Էջմիածնի Մալր Աթոռի պաշտօնական թերթն է և սոյն տարւալ չուրիս ամսալ տետրակում, երես 491 կարգում եմ հետեւեալը՝

«Բալց սրբազան աւանդութիւնն, որ նկարագրած է Մովսէսի առաջին գրքում (Գիրք ծննդոց, զԼ. ԺԱ.), պատմում է մեզ, որ...»:

Եւ կամ նոյն չօղւած, երես 492՝ «Մենք չատ հեռուն կ'երթալինք, եթէ կամենալինք ալոսեղ աւելի ուշադրութեամբ հետադօտել հին աւանդութիւնն, որ պաշտանել է մեզ համար Ծննդոց գիրքը»:

Բալց անցնենք ուրիշ, աւելի շօրեղ ապացոյցներ: Որոնք օրինակներ կրօնի դասագրքերի մէջ: Պատահամբ իմ ձեռքիս է կրօնի մի դասագիրք Սարգիս Բարսեղեան Գնունու: Գիրքը նւիրւած է Գէորգ IV կաթողիկոսին, տպագրւած է սորա հրամանով և ընդունւած է իւր դասագիրք: Ալք գրքի երես 30 եւ կարդում եմ.

«Հարց. Մովսէսի հինգ գրքի մերալ ինչ գիտելիք կալ:

Պատասխան. Մովսէսը Քրիստոսէն գրեթէ 1500 տարի չառաջ գոյով՝ նորա գրածն ամենալն ազգոց պատմութեանց հնազոյնն է, և բնաւ Մովսէսէն չառաջ պատմալիւ չը կալ, որոց հետեղ կամ նմանող լինէր, ալ միալն Ս. Հոգին է նորա առաջնորդոյն, որոց պատմութեան աղբիւրն էր «Աւանդութիւն»: Եւ նկատեցէք որ Աւանդութիւն խօսքը նօտր տառերով է տպւած բնադրում: Եւ չետոլ՝

Հարց. Մովսէսը ինչ աւանդութիւն ունէր:

Պատասխան. Մովսէսի ծնած ժամանակը տակաւին գձակոք տեսանողներ կալին կենդանի լի: Գիպտոս, որք չատ աւանդութիւններ լսած էին ի Յակոբալ. Յակոբն եւ Արրահամու մեռանէն չառաջ ծնած էր և չատ աւանդութիւնն և լսած լԱրրահամէ, իսկ Արրահամն Սեմալ ժամանակից էր, իւր ծնած ժամանակը. տակաւին կենդանի էր Սեմ, չատ աւանդութիւնն և լսած էր ի Սեմալ...»:

Այս բոլորով չամենալն զէպս ապացուցւում է, որ եւ Աստուածաշնչի նկատմամբ աչնալիս խօսք չեմ գործածել, որ կարողանար գալ իմ. կղեցնել ընթերցողներին: Բալց զժրաղղութիւնը սա է որ եւ համարձակ կարող եմ պնդել թէ պ. Քարամեանցը գիտէր ալք բանը և նա ուղեցել է միալն լի գու. խառնել, սակց կեղծել, միմիալն ալն նպատակով, որ արգելք լինի գրքիս տարածելուն: Իսկ որպէս զի իւր չար նպատակին հասնի, նա աւանդութիւն խօսքին չատկացրել է մի սխալ իմաստ:

Նստացի արդէն որ աւանդութիւն հասկացում է բերանէ բերան անցած պատմութեան մտքով: Մի աւանդութիւն կարող է սխալ պատմութիւն լինել, նա կարող է և բոլորովին ճիշդ պատմութիւն լինել, նորա մէջ կարող են երկուսն էլ խառն լինել: Բայց աւանդութիւն խօսքին անպատճառ սուտ կամ հնարովի պատմութեան իմաստը չատկացնել չի կարելի: Քննադատական հետազոտութիւններին է թողած մի որ և իցէ աւանդութեան խտրութիւնը ճանաչել և կամ խտրութեան ատորձանը որոշել: Բայց, կըրկնում եմ, ամեն պատմութիւն, որ բերանէ բերան է անցկացած ամբողջ սերունդներու ընթացքում—անպատճառ աւանդութիւն է, նրան ալ անուն չեն տալիս:

Բայց «Արձագանք»-ի քննադատներու ողին ալնպէս է, որ մի հեղինակին վնասելու համար նորա պատրաստ են ուրանալ և ծումուել բառերի իմաստը: Փարամեանցը անպատճառ ուզում է որ իմ գրքի ընթերցողները աւանդութիւն խօսքը միայն սուտ պատմութեան մտքով հասկանան: Այդ երևում է նորանից, որ Փարամեանցը «պատմական ստույգ տեղեկութիւնները» հակադրում է «աւանդութիւններին»: Ահա նորա խօսքերը... «և ապացոյց որ նորա (Աստուածաշնչի) մէջ, բացի աւանդութիւններից, և պատմական ստույգ տեղեկութիւնների կան, ինքը Արասխանեանցը և կամ նորա բնագիրը ապացոյցներ են բերում Աստուածաշնչից»: Բայց ախար Արասխանեանցը Աստուածաշնչից հրէից մի աւանդութիւն առաջ է բերում հաստատելու համար ալն, ինչ պատմում է գրքի մէջ իսրաւելացւոց Նդիպտոս զնալու, ալնտեղ մնալու և ալնտեղից դուրս դալու մասին. ուրեմն էլ ինչպէս նոյն Արասխանեանցը կարող էր աւանդութիւն և սուտ կամ հնարովի պատմութիւնը նոյնացնել. և ինչին էր հարկաւոր Փարամեանցին հէնց իմ գրքի առիթով «աւանդութիւններին» հակադրել «ստույգ տեղեկութիւնները»: Պատասխանը չատ հեշտ է գտնել՝ Փարամեանցին հարկաւոր էր ալնպէս վարել՝ իմ գրքի վերաջ սուերից ելու համար, բոլորովին չը նկատելով, որ ինձ համար փոս փորել ցանկացողը հէնց իրա համար է փոս փորում: Պարզեմ ասածս: Եթէ աւանդութիւն և սուտ պատմութիւն խօսքերը համանիշ են, ապա Փարամեանցի պէս փարիսեցին չը պէտք է ասէր, թէ «Բացի աւանդութիւններից (ուրեմն, ըստ Փարամեանցի, բացի սուտ պատմութիւններից) կան Աստուածաշնչում նաև ստույգ տեղեկութիւններ»:

Ա. ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ:

ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐԸ ԼԵԶԻԻ ԽՆԴՐՈՒՄ

Պահպանողականները իրանց համարում են հալոց լեզվի քերականութեան սրբազան կրակը անչէջ պահելու կոչումն ունեցող վեստալուհիներ:

Կան պահպանողականներ, որոնք ամենալն բարեխղճութեամբ կատարում են իրանց պարտականութիւնները: Նրանք աւելի շուտով կերակուրը, բերանները տանելու աղ, քիթները կը տանեն, քան մի որ և է սխալ կ'անեն հստակման կամ խոնարհման մէջ և աւելի ներողամտութեամբ կը վերաբերեն իրանց երիտաներին սպանողին, քան ալն մարդուն, որ հարկ եղած շարժանքով չի վերաբերում Չամչեանի քերականութեանը:

Կարելի է, ի հարկէ, նկատել, որ սեռական հոլովը տրականից դանաղանելու համար ամենեւին անհրաժեշտ չէ Գեօթէի գլուխն ունենալ կամ Հումբոլդտի էրուգիցիան, ալ բաւական է, ինչպէս ասում է դերմանական մի հուշակաւոր հրապարակախօս, նման լինել «մութացկաններին, որոնք գիտեն իրանց իւրաքանչիւր գրոշի գրոշմն ու թւականը»: Բաւց չի կարելի և չը խոստովանել, որ քերականութիւն լաւ իմանալը գովելի բան է:

Ճիշտ է մի երեւելի արժանաւորութիւն չէ ալդ, բաւց ինչ և իցէ, արժանաւորութիւնը արժանաւորութիւն է, և երանի թէ ուրիշների լեզուի վրալ բոլոր չարձակողները իրանք միշտ անարատ լինէին ալդ կողմից: Ամենալրդովեցուցիչն էլ հէնց ալն է, որ հալոց լեզուի մաքրութեան պահպան ալդ վեստալուհիներից շատերը իրանք չը գիտեն հալերէն կանոնաւոր գրել, որ կ'աշխատեմ ապացուցանել ամեն անգամ, երբ սուիթ լինի:

Այս անգամ ես ուղում եմ խօսել ալդ վեստալուհիներից մէկի՝ պ. Ն. Ք. ի մասին, որ համարում է հակաբան, պատմաբան, արեւելաբան և ալն ուրիշ անհամար բաներ:

Պր. Աւետիք Արասխանեանցի «Արեւելեան աղցերի հին պատմութիւնը» վերնագրով գիրքը քննադատելիս («Արձագանք» № 24) պ. Ն. Ք. ի միջի ալոց և գլխաւորապէս չարձակում է հեղինակի լեզուի վրալ: Ես ընդունում եմ պ. Ն. Ք. ի արած նկատողութիւններից մի քանիսի

փորագրած և երկրորդ արձանագրութիւններէց հանած անունները չէ բովանդակում»:

Բաւական տարօրինակ արամարանութիւն է, աչնպէս չէ, ընթերցող, թէ որովհետեւ իսկական տեղերը չալտնի չեն, այդ պատճառով պէտք էր քարտէզի վրայ նշանակել տեղերը: Բայց այդ ոչինչ, ում ինչ տւած է՝ աչն պէտք է պահանջել:

Հաճեցէք, պ. Ն. Ք. տալ ձեր չօղւածը ձեր աշակերտներին, որոնք, խեղճերը, մտաւնում են իրանց երևելի հաղկարան ուսուցիչներին աւանդած քերականական կանոնները՝ հէնց որ ձեռքերն են առնում դանաղան համբալներին աշխատաւիրած զրքերը, և պահանջեցէք, որ նրանք (ձեր աշակերտները) վերլուծեն վերեր բերւած նախադասութիւնները: Ո՞ր է կը մնան բալի անուն բալին (ենթակա), երեւի աշխարհագրական բաժինը.—«Այդ տեղեկագրական անունները».—այդ ինչ աչդ է, վերելում դոք, խօսելով երկրորդ բաժնի մասին, ասել էք միայն «տեղեկագրական և քաղաքակրթական նկարագիրները» և «աշխարհագրական բաժին».—«Անունները շատերը» թէ՛ անուններէց շատերը. թող կը տաք ուրիշներին էլ դործ ա՛նել աղղլիսի ռամկարանութիւններու.—կի՞նք դործ էք ածում «հանած են, դուրս է թողած», ինչու էք ուրիշ տեղերում գործ դնում «չիշատակուած, խախտուած է» և աչն. պէտք է ասել իմ հանած կտորները և կտորները հանւած են.—Ի՞նչ կը նշանակի «տեղեկագրականները պատկերացնել»։ Ինչ բանի հետ էք կապում «այդ նպատակին» խօսքերը. կարելի է արդեօք ասել «զրքի վերջին կցած քարտէզը տեղեկագրականները մի քարտէզի վրայ պատկերացնել չի կարող»:

Ինչ էք կարծում, պ. Ն. Ք., մարդավարի կէտագրութիւնն էլ օտարարանութիւն է: Կը վազելի արդեօք հաղկարանին ինստիտուտի աչի նման կաղել կէտագրութեան մէջ:

«Այդ ծանօթութիւնները թւով շատ քիչ են, հազիւ մի տասնեակ լինի»։ Ասացէք, խնդրեմ. պ. Ն. Ք., եթէ ձեր աշակերտը աղղլիսի սխալ տնէր, ինչ թւանշան կը դնէիք,—ի հարկէ ոչ ճ:

«Հաղկական եկեղեցիների պատերի վրայ եղած մարդագլուխ ձկներին»։ Բնագրութեան որ դասագրքի մէջ էք կարդացել, թէ ձկները ապրում են պատերի վրայ:

«Բայց որ մարդն է անսխալական, որ պ. Արախանեանցը լինի, սխալները միշտ կարելի է ուղղել, ուստի խորհուրդ ենք տալիս և իւր քարտէսն էլ ուղղել և Արախան լճի հարաւարեկեան գաւառն անւանել Զոկղիւնէ և ոչ Սոկղա»:

Բաւական չէ, որ Զոկղիւնէ աւելցնեն, պ. Ն. Ք.-ը պահանջում է, որ Սոկղա չը գրեն, թէև Մասպեթի քարտէսումը աղղպէս է գրւած: Ե, ինչ արած, պէտք է քննել Սոկղա անունը—magister dixit, աչն էլ աչնպիսի

մի հանձարեղ magister, որ Արաբեան լծում գաւառներ է գտել: Իմ կարծիքով, ոչ այս ոչ այն՝ այդ գաւառը պէտք է անւանել Քարամիւսէ, որպէս զի լաւէրժանալ երեւելի գիտնական Ն. Ք.-ի անունը ¹⁾:

«Խորհուրդ ենք տալիս և իւր քարտէսն էլ ուղղել», — Է. ը զնելուց փետոյ էլ ը ինչու էք աւելցնում:

«...Այն ժամանակ լուսթեամբ դործող և ալժամ ազմկալով ժողովներով չալտնի գրքերի տպագրութեան ընկերութեան»:

Առաջին անգամ ենք խմանում, որ զրբերը ժողով են կազմում և այն էլ ազմկալով: Շատ հետաքրքրական կը լինէր տեսնել այդ զրբերը դատարանում ամբաստանած «ВЪ НАРУШЕНИИ ОБЩЕСТВЕННОЙ ТИШИНЫ»:

«Այլ...», — հայերէնի ուսուցիչը այդ Է. ը կը ջնջէր և կը գրէր իսկ:

«Տպագրութեան ընկերութիւն...», տպագրել և հրատարակել տարբեր բաներ են:

«Այնքան» միայն պիտի հաղորդենք...», «գրքի» (այս գրքի) մէջ, — ալք հնաբանութիւն է, պ. Ն. Ք. գրքիս աշխարհարար կը նշանակի իմ գրքի:

«Արդէն իսկ 52 գիտնականների անունները տալով՝ ապացուցանելով...», — տալով՝ ապացուցանելով՝ դերրադիրից կազմած ալք երկու խորկանի շէքր շատ անձուներ է. արդէն իսկ հնաբանութիւն է:

«Մագդէլրդի (ինչու ոչ Մապէրօի) «Արեւելեան աղգերի հին պատմութիւնից» քաղել է իւր նիւթը, որից վերցրել է և գրքի վերնագիրը...»:

Ի՞նչ կը նշանակի իւր նիւթը և փետոյ գրքի վերնագիրը. չէ՞ որ նիւթը և վերնագիրը երկուսն էլ գրքինն են: Ինչիցն է վերցրել պ. Արաքսանեանցը իւր գրքի վերնագիրը՝ նիւթից (նիւթը՝ որից...), թէ՞ Մապէրօի «Արեւելեան աղգերի հին պատմութիւնից»: Վերախանեցի մասին է, բայց ալ ամենին չի արդարացնում պ. Ն. Ք.-ին. պ. Արաքսանեանցի դործ զրած «գրքի բովանդակութիւնը կազմող աղգերի» դարձւածքը նոյնպէս հասկանալի է, բայց չը նաղելով՝ գրան՝ պ. Ն. Ք. ը իրաւունք չի տալիս նրան դործ անել ալպիսի դարձւածք:

¹⁾ Սուղդա կամ Սողեք կամ Սողքը շատ անգամ նոյնացնում են Սաղաստանի և Սողղիտնայի հետ: Արձանադրութիւնների մէջ, սակայն, սակայնք կամ սաղաստանցիք առանձին են յիշուում, սակայնք՝ առանձին: Աս չիմ ասել թէ Սողղիտնան այժմեայ Զոխաստանի տեղումն էր, այլ միայն անկարելի չեմ համարել որ զոհերը սողղիտայիներից լինէին: Այս Էնթաղըութիւնը հաւանականութիւն է դա՛նում՝ նշանով, որ Հին Սաղաստանի անունով, որ Բաղրաթայի Հիւսիսումն էր դասուում, կոչւում էր նաեւ այժմեայ Նուխայ երկիրը (Շաքի, Նաքաստան, Սաղաստան):

«Պէտք է հանգամանքից օգտուել և ցոյց տալ ամեն տեղ, թէ ինչպէս Աստուածանշին համաձայն են բոլոր արձանագրութիւնները՝ թէ եզրատական, թէ բաբելական գիտութեան վերաբերութեամբ...»:

Վերաբերուած թեմայի որ բաղին է վերաբերում՝ «ցոյց տալ» թէ «համաձայն են», — ի հարկէ «ցոյց տալ» իսկ եթէ ալդ ալդպէս է, կը նշանակի ոչ բոլոր նշանն է իւր տեղումը դրած և ոչ էլ «թէ եզրատական, թէ բաբելական գիտութեան վերաբերութեամբ» բառերը:

«...Նախադասութիւնները... հախքէն ան իմանալի են», — պէտք էր գրել՝ անհասկանալի են, որովհետեւ ան իմանալի կը նշանակի անմատչելի մեր գիտակցութեան համար և ոչ թէ անհասկանալի:

«...Նորագոյն աղբիւրներից, ինչպէս Darmsteter-ից քաղել» — Պէտք էր ասել «օրինակի համար»:

«Չը նախելով քիչ վերստ...», — պէտք է ասել «չը նախելով որ...»:

Ալէն բոլոր սխալները, որ մենք մինչև այժմ ցոյց տուցինք, կամ գոնէ նրանց մեծ մասը՝ մեր տեսակէտով՝ չափ մեծ նշանակութիւն չ'ունեն, որովհետեւ հանճարեղ գրածքը կը մնալ հանճարեղ գրածք և վրամարդ — վրամար թէ ալն ղէպքում, եթէ («հախքէն թարգմանել» գրած լինի և թէ ալն ղէպքում, եթէ («հախքէն թարգմանել» գրած լինի (պ. Ն. Ք. գրում է՝ հախքէն թարգմանել...): Կանոնաւոր լեզուն ոչ Որգոնին խելօք մարդ կը դարձնի, ոչ էլ Տարալեֆի մէջից կը հանի ալն, ինչ որ նա մօր կաթի հետ է ձծել, որովհետեւ «կաթի հետ ձծածը հոգու հետ դուրս կը գալ»:

Հապա ինչու էինք մինչև այժմ աչքան բծախնդրութեամբ քննադատում պ. Ն. Ք.-ի լեզուն: Ահա ինչու՝ Ուզում էինք ցոյց տալ, որ պ. Ն. Ք.-ն անբարեխղճութեամբ է վերաբերում ղէպի իւր հակառակորդները:

Բայց մեր ցոյց տւած սխալների մէջ կաղին և աչքախնդրները, որոնք լատաջացել են ոչ թէ նրանից, որ պ. Ն. Ք.-ը քերականական կանոնները Լաւ չի իմանում կամ որ նա անհոգութեամբ է վերաբերւել իւր լօղւածի լեզւին, ալ նրանից, որ պ. Ն. Ք.-ը չի կարողանում տրամաբանօրէն գրել: Նոր փաստեր:

«Գրքիս մէջ բովանդակած պատմական փաստերը (ասում է պ. Ն. Ք.) երեք մասի կարելի է բաժանել. գլխաւոր մասն է արձանագրութիւններից քաղած պատմութիւնը Նգիպոտի, Միջագետքի և Իրանի. աւելի փոքր մասը կաղմում են տեղեկագրական և քաղաքակրթական նկարագրի բնութիւնը, փոքրագոյն բաժինն է աւանդութիւններն ու ծանօթութիւնները: Աւանդին և երկրորդ մասները վերաբերութեամբ ալքաւոս միալն կարելի է ասել, որ ալդ տեղեկութիւնները, որոնք մեծ մասամբ մերկ իրողութիւններ են միալն, եղիպտոգիտութեան և ասորագիտութեան հատուտուն եղրական ցոլութիւններն են»:

Ասացէք, ինչոքմէ, ալ ինչ խառնաշփոթութիւն է, ալ ինչ քաօս է: Միթէ պ. Արասխանեանցի գրքի բովանդակութիւնը միալն պատմական

փաստեր են: Դիցուք թէ աղպէս է, շատ լաւ, բայց, որ աղպէս է, ինչպէս կարելի է պատմական փաստերը ալնպէս բաժանել, որ մասերից մէկը նկարագրեն եր լինի, իսկ միւսը ծանօթութիւններ: Ո՞ր հրաշագործը լանձն կ'առնի պատմական փաստերը ալնպիսի բազմաթիւ լաջորդական մետամորֆոզաների ենթարկել, որ նրանք դառնան քաղաքակրթական նկարագրի ենք, լետու աւանդութիւններ ու ծանօթութիւններ, լետու տեղեկութիւններ, լետու հազուատները հանեն և դառնան մերկ իրողութիւններ և լերջապէս հաստատուն եղրակացութիւններ: Ոչ, ոչ մի սքանչելագործ աղպիսի բան չի կարող անել և աղպիսի մի հատուած գրելու համար կամ պէտք է հեղինակի գլխում գաղափարները աջքակապուի խաղալիս լինեն կամ ինքը հեղինակը պէտք է ցանկութիւն ունենալ ընթերցողներին աչքերը կապել:

Մի ուրիշ ապացույց, որ պ. Ն. Ք.-ը լսուած գրելիս աւելի ուշադրութիւն է դարձնում քերականութեան, ալն էլ քերականութեան միայն մի մասին՝ էտիմոլոգիալին (սինտաքսիսում պ. Ն. Ք.-ը շատ բոբիլ է) քան տրամաբանութեան,—մի ուրիշ ապացույց, ասում եմ, ալն է, որ նախադասութիւնները միմեանց հետ կապող շաղկապները պ. Ն. Ք.-ը գործ է ածում զարմանալի «աղատամտութեամբ», կատարելապէս «առանց իմաստի խտրութեան»: Թէ և, մինչդեռ ուստի, ուրեմն և ալն գործ են ածում բոլորովին անտեղի, մանաւանդ թէ եւր, որի գործածութիւնը պ. Ն. Ք.-ը փառատիկոսութեան է հասցնում:

ՀԱՄԲՍԿ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՊՐ. ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԳԱՋԱՐԵԱՆՑ.— Մենք արդէն զիմել ենք ուր հարկն է թույլտւոթեան խնդիրքով՝ որպէս Վարդապարեանցը հաստատուի «Մուրճ» ամսագրի հրատարակչի կոչումով:

«ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ Խմբագիր պ. Գրիգոր Արծրունին անպատճառ ուզում է, որ մենք իմանանք թէ ոսերէն, գերմաներէն, ֆրանսերէն լեզուներում կա՞յ քաղաքացիական պատկ խօսքը: Նա հարց է տալիս՝ «Բիթէ պ. Արափանեանցը աչդ չը գիտէ»:

Մեր ընթերցողներին «Մուրճ»-ի № 7—8-ի քրոնիկից արդէն չափոնի է, որ եկեղեցում կատարուող ամուսնութեան հանդիսակատարութեան մէջ մենք որոշում ենք ամուսնական զաշնը՝ պատկի արարողութիւնից: Մեր ընթերցողներին չափոնի է նաև ամուսնական զաշնը եկեղեցուց դուրս կատարելու կարելիութիւնը՝ օրէնքով սահմանած եղանակով, ինչպէս աչդ կա՞յ Գերմանիայում, Ֆրանսիայում և այլն, որը և անւանում է քաղաքացիական ամուսնութիւն: Աչդ քաղաքացիական ամուսնութիւնը, ասում է ինք մենք, նոյնքան չարեւի է, որքան և եկեղեցական ամուսնութիւնը: Բայց աչդ դեռ չի խանդարում մեզ պնդել, որ եկեղեցական կամ կրօնական ամուսնութիւնը պատկի արարողութիւնով է կատարւում, իսկ քաղաքացիական ամուսնութիւնը պատկի արարողութիւնով չէ կատարւում: Պատկը զուտ եկեղեցական զաղափար է, որովհետեւ նա ոչ ալ ինչ է, եթէ ոչ օրհնաբանութիւնը ամուսնութեան չանուն Աստուծոյ և կրօնի էլէմէնտները կազմող ալ սրբութիւնները:

Ահա ինչու պետական օրէնքները աչն բոլոր երկիրներում, ուր ընդունւած է քաղաքացիական ամուսնութիւնը, չեն փոխառել պատկի արարողութիւնները, որ միայն եկեղեցուն է վերապահւած: Ահա ինչու կա՞յ քաղաքացիական ամուսնութիւն խօսքը, բայց չը կա՞յ քաղաքացիական պատկ տերմինը. ահա ինչու կարելի է ասել mariage civile ֆրանսերէն, bürgerliche Ehe գերմաներէն, гражданский брак

ոսերէն, բայց զի ոչ ոք չի մտածել ասել՝ bénédiction nuptiale civile ֆրանսերէն, bürgerliche Trauung գերմաներէն, гражданское венчание ռուսերէն: Այդպիսի խօսքեր չը կան:

Եթէ պսակել և ամուսնանալ մեզանում, ժողովրդի բերանում, նոյն միտքն է չալոնում, եթէ պսակ և ամուսնութիւն ժողովրդի բերանում նոյն նշանակութիւնը ունին, դա շատ և շատ հասկանալի է, քանի որ պսակ և ամուսնութիւն անբաժան կերպով է կատարուել, և պսակած մարդը անպատճառ նաև ամուսնացած է: Բայց եթէ ժողովրդի հասկացողութիւններին և նորա բառարանին միայն օգուտ քաղելու լինէր, մենք պէտք է նշեացնէինք ոչ միայն ամուսնութիւն և պսակ գաղափարները, այլ և հարսանիքի գաղափարը, քանի որ փոխանակ ատելու՝ պսակել է, ամուսնացել է, ժողովուրդը շատ լաճախ ստում է՝ սղս ինչը հարսանիք է արել: Լե բնական է՝ հարսանիք պնում է միայն ամուսնացածը. բայց այդ զի ու իրաւունք չի տալիս մեզ հարսանիքը (ամուսնութեան առիթով կատարուող ճաշկերպիւր, ուրախութիւնը, խաղացուող պարերը և այլն) նշեացնել ամուսնութեան հետ, որպէս չը պէտք է ամուսնութիւնը նշեացնել պսակի հետ: Կարելի է ամուսնանալ նաև առանց պսակի և կարելի է ամուսնանալ և պսակել առանց հարսանիքի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ, ժամանակի սղութեան պատճառով, չետաձգեցինք: Բայց և աճպէս հարկ ենք համարում հաղորդել՝ գեներալ Բուլանովի և իրլանդական կուսակցութեան պարագլուխ Պարնէլի մահաւան լուրը:

ՀԱՅՍ ՏԵՍԱՐ

Ա. Արաւսիսանեանցի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

Հին ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Զարգարած Հին եգիպտական, փրնիկական և ասորական գրու-
թիւններով և Արեւելքի Հին պետութիւնների քարտէզով):

281 երես, յառաջարան եւ նիւթերի ցանկ

պայած է 800 ռիւբլ, փայլուն թղթի վերայ

Գինն է ճանապարհածախսով միասին 1 ռուբլի

Պէտք է ղիմել կամ Հեղինակին՝ Тифлисъ, въ редакцію журнала
„МУРЧЪ“, և կամ՝ Въ центральный книжный магазинъ. Առաջնական
ներին անուամ է 20% ղիջում:

1892 թ. յունւարից ընդ կը տեսնէ Մոսկուայում պ. Մ. Բարխուդա-
րեանի տպարանից

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ“

Բաժանորդագինն է երկու հատորին միասին 2 ռուբլի, իսկ իւրաքան-
չիւր հատորի գինն է 1 ռ. 50 կոպէկ:

Հրատարակիչ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱՆՆԵՐ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՅ

	Բ.	Կ.
1. «ՄՈՒՐՃ» տնտեսագիր, 1889 թ., երկու հատորով . . .	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7	—
2. «ՄՈՒՐՃ» տնտեսագիր 1890 թվականի, երկու կազմած հատորներով . . .	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7	—
3. ՊՈՇԵՆԱՆՅ, ՊԵՐՃ.— ՅԵՅԵՐ (վէպ) . . .	1	—
4. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (Ղ. Ղարսցի)՝ «Մանուկների մարտադուլի ման գործարանների մի քանի հիւանդու- թիւները» . . .	—	05
5. ԱՏԲԵՏԵԱՆՅ, ՍԱՐԳԻՍ.— «ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կա- թիկներին կեանքից . . .	1	—
6. ԼԵՑ.— «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ) . . .	—	50
7. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, ՍՈՂՈՄՈՆ.— «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ» (կեանքից պատկեր) . . .	—	40
8. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.— «ԱՅՅ ԹԻՐԻՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» . . .	—	60
9. ՊՈՇԵՆԱՆՅ, ՊԵՐՃ.— «ԲՂԴԵ», վէպ . . .	1	20
10. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.— «ԽԱԹ-ՍԱՐԱ» (հայ բոշան. կեանքից . . .	—	15
11. ՄԱՐԻՍԵԱՆ, ԽԻԿԻՆ Մ.— «ՀԵՂԻՆԵ» (մեծ վէպ), ա. մասը . . .	—	50
12. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, ՅԱՐՈՒԹԻՒՆ.— «ՍԵՒ-ԼԵՈՆՅԻՔ» (առհ- մազրական պատկեր) . . .	—	15
13. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.— «ՀԱՐԵՒԱՆՆԵՐ» . . .	—	03
14. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.— «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ» . . .	—	03
15. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ.— «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ» . . .	—	05
16. ՆՈՅՆԸ.— «ԾԱՆՐ ՔԱՐԸ» . . .	—	03
17. ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ.— «ԲՈՅՍԵՐԻ ՄԵՐԱՐԱՆՔԸ» . . .	—	15
18. ԲԱԼԱԴԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.— «ՄԻԿՐՈՐԵՆԵՐԸ» . . .	—	10
19. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.— «ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐԵԱՆԱՆՔԸ» (պատկերներ ռուս-առաձկական պատերազմի ժամանակից) . . .	—	10
Գլխի՝ ВЪ Редакцію журнала „МУРЧЪ“. Վճարել կարելի է նաև պոստի մարկաներով:		

«Թիֆլիզի Բնկերութեան Հայոց գրքերի հրատարակութեան»
խմբագրական մասնաժողովը սրանով յայտարարում է, որ տպագրու-
թեան համար ընդունում են հետեւեալ բովանդակութեան ինքնու-
րոյն և թարգմանական գրւածքներ:

1. Գեղարւեստական:

2. Գիտնական. զուտ գիտնական գրւածքներից կը տպագրուեն
միայն այնպիսիները, որոնք վերաբերում են հայոց կեանքի հետա-
զօտութեան, իսկ դիտութեան միւս ձիւղերից միայն ժողովրդակա-
նացրած գրքեր:

3. Գասազրքեր, նամանաւանդ ընդհանուր գրականութեան,
ընդհանուր պատմութեան, հայոց գրականութեան, բնական պատ-
մութեան և ֆիզիկայի ձեռնարկներ, կազմած մեր թեմական զրպ-
րոցների համար:

4. Մանկական ընթերցանութեան համար:

5. Նիւթեր մեր ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան վե-
րաբերեալ (աւանդութիւններ, երգեր, սովորութիւններ և այլն):

Մանօթոյթիւն. մանրամասն ծրագիր վերոյիշեալ նիւթերի
ժողովելու համար կը տպագրուի յետոյ: Բնկերութեան խմբ. մասնա-
ժողովը իրան է վերապահում ներկայացրած նիւթերից ընտրութիւն
և քաղւածք անել, եթէ ուղարկողը նախօրօք որոշ պայմաններ չէ
դնում:

Տպագրւած գրքերի համար վարձատրութիւն տրւում է մի
տպագրական թերթին՝ ինքնուրոյն գրւածքների համար՝ 20 — 25 ռ.,
իսկ թարգմանական գրւածքի համար՝ 15 — 20 ռուբլի:

Բացառիկ դէպքերում վարձատրութիւնը կարող է և աւելի
լինել խմբ. մասնաժողովի հայեցողութեամբ:

Հասցէն՝ Тифлисъ, Правленію Тифлискаго Общества изданія ар-
мянскихъ книгъ.

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը յայտնում է
սրանով, որ ընկերութեանս 1891 թ. անդամները կարող են ստանալ
Կենտրոնական գրադաճառանոցից Ընկերութեան հետեւեալ հրատա-
րակութիւնները.

1. Տղտոյ. — «Աստուած զիտէ արդարն ու մեղաւորը»:

2. Վարդէր — «Հաւատարիմ Սուխորին»:

3. Պատաշրջի. — «Լինհարգ և Դէրորուդ»:

4. «Նալ և Դամայեանտի»:

5. Ռողընհայն. — «Նաւի փոքրաւորը»:

6. Սպիրի. — «Ուսենց Յովսէփ» թարգմ. Ի. 2. զինն է 15 կ.:

7. Պարոնեան՝ «Մեծապատիւ Մուրացկանները». զինն է 40 կ.:

Ընկերութեանս անդամներն այդ գրքերը կարող են ստանալ
Կենտրոնական գրադաճառանոցից, ներկայացնելով իրանց անդորրա-
գրերը:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՐՁՈՒ-
ԹԻՒՆԸ ստանով յայտարարում է, որ այսուհետեւ ընկերութեանս հետ
գործ ունեցողները կարող են գիմել ընկերութեանս գրասենեակը
(Բարոնակալիա փողոց տուն Սահակիանի) որ բաց է ամէն օր առ.
12—2 ժամը:

ՏԵԽՆԻԿՈՒՄ ՄԻՏՎԱՅԴԷ

Սաքսոնիայում (Գերմանիա)

ԴԻՐԵԿՏՈՐ՝ ՎԷՅՑԵԼ

ՄԵԲԵՆԱՆԵՐԻ ԻՆՃԵՆԵՐԱԿԱՆ-ԴՊՐՈՅ.-ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ
ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՅ

23-ԵՐՈՐԴԻ ՏԱՐԻ

Այս դպրոցը, որը գտանում է Միտլադել քաղաքում, Գերմանիայում, (թաղապետություն Սաքսոնիա), տալիս է մի ամբողջացրած կրթություն ՄԵԲԵՆԱՆԵՐԻ շինելու և զորա ամենամօտ առարկաների հետ ծանոթացնելու համար. որպիսիք են՝ ելեքտրո-տեխնիկ և ջրաղացների շինությունը:

Միտումական ուսումով այդ հիմնարկությունը պատրաստում է հետևելու մասնագիտություններին համար.

1. Ինժեներներ և կոնստրուկտորներ՝ մեքենաներ շինելու, ելեքտրո-տեխնիկի և ջրաղացների շինելու համար:

2. Ապագա մեքենաների գործարանների տեխնիկ, որոնք իրանց ստորադրեալների չափ պետք է հասկացողություն ունենան, այդ դպրոցը տալիս է պատշաճաւոր կրթություն:

3. Ամեն ուրիշ տեսակ գործարանների ունենալու համար, ուր հարկաւորում է մեքենաների սարք ու կարգ, որպէս՝ թղթի, փայտենիների գործարաններ, շոգի և ջրի աղացներ, մանելու, դորժելու, ապակու, կրախմովի, չաքարի, ասեղների, պողպատեղրիչների, կահ-կարասիների, քիմիական գործարանների, դադի, լուցկիի գործարաններ և այլն և այլն:

4. Գիրեկտորներ և կառավարիչներ պատրաստելու համար զիջւած գործարանների համար:

Արհեստանոցների վարպետների դպրոցը պատրաստում է վարպետներ՝ այդ բոլոր տեսակ մեքենաները շինելու համար:

Ընդունելությունը լինում է ամեն տարւալ ապրիլի և հոկտեմբերի կէսին:

ՏԵԽՆՈՂՈՒԹԻՒՆԸ ուսման առաջին դպրոցում, նալւած աշակերտի նախապատրաստություններին, լինում է $2\frac{1}{2}$ կամ 3 տարի, երկրորդ զըպրոցում $1\frac{1}{2}$ տարի:

ՏԱՐԻՔԸ բնդունողի պէտք է լինի 16 տարեկանից ոչ պակաս:

Սույն 18⁸⁹/₉₀ թւականին բոլոր աշակերտողների թիւն է 886, որոնցից Ռուսաստանից՝ 66 հոգի:

Դպրոցի բոլոր միւս մանրամասնությունների համար կարելի է դիմել՝ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ, ուր ի միջի ալլոց կարելի է իմանալ ծրագրի, ամեն տեսակ ծախքերի և Միտլադելի կիւանքի և զըպրոցի վարչություն պահանջումների մասին:

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՅՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՅԱԾ

աշխարհի մէջ կարեմեքեաների թուր ցուցանողներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

կարծար ընկերներ տան ախիկներ և աղել օգնականներ
թուր արհեստաւորների համար

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թեֆլետում: Զենգերի ընկերութեան կեղծո՞ւնական պարհատում, Գո-
լովենսի պրօպերտի վերայ, Կերիմանովի տան և երաւ աճանաւոր-
ները մէջ:


Բազում: Կեղայեղեան ժողովում,
Կերլա Աւաղեանի ու
Քոլմայիտում: Բաւլարի գէտ
Չերեկովի ու

Բաւլումում: Պոլեցեանի ժողո-
ւում, Թեղլի օղլու ու
Թեղլումում: Կարշ-Կեղլանի
գէտ, բուլվարի վերայ:

և նրանց ճանապարհորդող Գործաւորներին հօր

ԿԻՉԻՆ ԵՒ ՀԻՍԻՍՏՅՈՒՆ, ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ,
ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱՆԻ ՄՈՏ

Գ. ՆԵՅԳԻԼԻՆԳԵՐ



արտաւորվել են ստացած



Գ. ՆԵՅԳԻԼԻՆԳԵՐ

Գնողները կարող են, եթէ կամենում են, զրամը հետգնաւ վճարել սակաւ քանակութեամբ, աղել է՝ չարախով կամ
ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւակաւով զրամը վճարելու համար:
Յ. Գ. Զինգերի և ընկ. թուր պահեստներում գտնւում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են,
առեղներ, թել, մատար և ալ մեքենային պատկանելի իրեղէններ ամենաշափատար գներով:



„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲՄԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՅԻԱՆ Է

Հրատէր ենք կարդում հայ հասարակութեանը՝ բաժա-
նորդ գրել մեր միակ քաղաքական-հասարակական-
գրական տնտօղրին և միջոց տալ նրան դալ **1892 թ.**
թւականին ցանկալի ճոխութեամբ հրատարակել:

Տարեկան գինն է 10 ռ.

Գալ № 10-ում կը յայտարարենք «Մուրճ»-ի գործա-
կայների տնտնները:

Խմբագրութիւնը գտանում է Վելիամինեան փողոց, առան-
ժանդօցեանի, պրօզիննօղի դիմաց:

Արիշ տեղերից պէտք է ղխմէ՝ Тифлисъ. Въ редакцію
журнала „МУРՃЪ“

Արտատահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue MOURTCH